# ՏԱՐԵՐՔ

## ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԴՊՐԱՏԱՆՑ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

# ՏԱՐԵՐՔ

## ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԴՊՐԱՏԱՆՑ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ՅՕՐԻՆԵՑ

Հ. ԱՐՍԷՆ ԿՈՄԻՏԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1846 — ՌՄՂԵ

ԱՌ ԱԶՆԻՒ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

ԴԵՌԱՔՈՅՍ ՈՐԴԻ

# ՎԱՀՐԱՄԱՅՆ ՅԱԿՈԲԱՅ ՏԻՒԶԵԱՆ

## ՆՈՒԷՐ

ԱՅԴՊԻՍՄԻՈՑ հօր պայազատ և նազելի շառաւիղ
Որ մըտաց և սըրտի մըտեր մաքըլից 'ի շաւիղ,
Աստա մեծ ելցէ յիս՝ գըթոյն թէ զոյգ հայրական
Ինձ սովլին տացի տառիւք լինել փութոյդ օգնական
Յըմբըռնել ըղձայկլին և զհայրենեացըդ լեզու,
Անդուստ՝ ըզգօնութեան պէսպէս ձայնից գող հասու,
Զի կեցցես միւս պարծանք տան քում և հօր արժանի.
Աղէ սիրով ընդունիցիս՝ լիցիմ խինք պիտանի։
Շնորհիւ քով վայելեալք 'ի սոյն մանկունք Աստղոմայ
Որ 'ի ԱՐէն պարգևաւուք զաւանեսցին 'ի սըմայ։

ԶՏԱՐԵՐՍ ՀԱՅԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Տեառն Հ. ԱՐՍԵՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ, *յառաջ մասանցն գեղեցիկ դասաւորութեան, ոճոյն պարզութեան, և կանոնացն ճշգրտութեան, և վասն բազմահմուտ և սուր դիտողութեանցն պատկանաւոր գոլոյ 'ի հարազատ իմացուած մատենից մերոցն Նախնեաց, արժանաւոր համարիմք տպագրութեամբ 'ի լոյս ընծայել 'ի պէտս ուսման մերոյ ազգիս դպրոցաց։*

ՔՆՆԻՉՔ ԳՐՈՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՍ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր օրերը ազգիս իր լեզուն աղէկ սորվելու մեծ փոյթը տեսնելով մենք, աս համառօտ քերականութիւնս հանեցինք մեր նոր կարգով աւելի զարգացելոց համար շինած ընդարձակ գրաբար քերականութենէն ։ Վասն զի տեսանք որ մինչև հիմայ ունեցած համառօտ քերականութիւններնիս կամ տղոց յարմար չէին, կամ հարկաւոր բաները պէտք եղածին չափ բաւական չէին սորվեցըներ ։

Ոմանք յարմար չէին, ինչու որ դիւրին ու կարճ ճամբայ չունէին, լեզուին գիտելիքը խստակ ու վայլած կարգով չէին սորվեցըներ, ու տղոց կարողութենէ վեր մանր մունր ու շատը փուճ կամ աւելորդ ու բառգրքի վայլելու բաներու կ'իյնային, կամ պարզ ըլլանք ըսելով վարպետին ընելու երկայն ձգձգած մեկնութիւններն ալ իրենք կ'ընէին, որ քերականութիւն գրողին պարտքը չէ, և շատ անգամ տղոց աւելի մութ կ'իյնայ ։ Ոմանք ալ համառօտ ըլլայ ըսելով, լեզուին խիստ պէտքի բաներն ալ ու կանոնը լուսաւորելու չափ պէտք

եղած օրինակներն ալ դուրս ձգեր էին, ու գրեթէ բոլոր երկրորդ կարգի գիտելիքները, որ թէ և տղուն իր շարադրելուն համար ալ պէտք չըլլան նէ, գոնէ չափաւոր պարզ ու ընտիր գրքերը հասկընալու հարկաւոր են։ Թող որ տեղ տեղ քանի մը սխալ ալ մտեր էր, որ շտկելու էր։

Մենք աս նոր համառօտ քերականութեանս առջի մասին մէջ՝ ութը մասանց բանին խիստ հարկաւոր գիտելիքը կարճ կարճ դրինք. քիչ մը խրթին կամ բարձրագոյն բաները մանր գրով զատեցինք կարգին մէջ, որ վարժապետը տղոց ընդունակութեանը յարմար չտեսնէ նէ առջի բերանը, երկրորդ անգամ դառնալուն կարդացընէ։

Իսկ շարադրութեան կանոնները երկու դասի բաժնեցինք, ինչպէս որ սովորութիւն է ամէն կարգաւորեալ դպրոցները։ Երկրորդ մասին մէջ՝ պարզ շարադրութեան խիստ պէտքի և առաջին կարգի գիտելիքը միայն համառօտ ու խտակ ճամբով ու ընտիր օրինակներով դրինք առաջին դասի ուսանողաց համար։

Երրորդ մասին մէջ՝ ձևաւոր շարադրութեան խիստ շատ կամ երբեմն երբեմն պարզ ու միջակ շարադրութեանց մէջ գործածուած բաները նոյնպէս համառօտ ու խտակ ոճով ու ընտիր օրինակներով դրինք՝ երկրորդ դասի ուսանողաց համար, որ առջի դասին մէջ աղէկ մը վարժելէն ետքը պիտի կարդացընէ վարժապետը, ու անոնց վրայ ալ կրթութիւն ընել տայ, թէ որ ինչուք հոն երթալու միտք ու ատեն ունենան նէ։ Թէ որ մէկուն շատ երևնայ աս ձևաւոր շարադրութեան բաները, ընդարձակ քերականութիւններս որ տեսնէ նէ՝ աս անոր քովը ոչինչ պիտի երևնայ։ Ու գիտնայ որ և ոչ

իսկ ամենէն յայտնի ու ընդունելի գիրքին՝ Աստուածաշնչին մէջ գտնուած ձեւերը ամէնը դրած ենք հոս. ինչու որ ամէն խրթին բաները դուրս ձգեցինք :

Ուրիշ մանր մունր կարգի կամ բանի փոփոխութիւն որ ըրեր ենք նէ, չիտակութեան ու դիւրութեան համար ըրեր ենք՝ տարիներով մտածելէն ու քննելէն ու փորձելէն ետքը, որ ընդարձակին մէջ բաւականապէս պատճառն ալ տուած ենք, ու հոս համառօտիս մէջն ալ կարճ ակնարկութեամբ մը իմացուցեր ենք ուզողին ու կրցողին հասկընալու չափ :

Բայց միայն ուղղականին վրայ մինակ հինգ հոլով գնելնուս ու ինը չգնելնուս պատճառը՝ քիչ մը աւելի որոշ հասկըցընել կ'ուզենք հոս տեղս : Հինգ գնելնուս պատճառն ան է, որ նշանակութեան դիէն ալ, շէնքի դիէն ալ հինգ հոլով միայն ունի հայու լեզուն, և ոչ աւելի : — Նշանակութեան դիէն, վասն զի հոլով ըսուած բանը՝ անանկ մէկ պարզ որոշ միտք մը միայն տալու է բառին ինքնիրեն իր մէջը, որ ալ ուրիշ կերպով չկարենայ զրուցուիլ, ու ալ ուրիշ կերպ կերպ մտքի չառնուի : Անանկ են միայն հինգ հոլովնիս, որ ուրիշ կերպով մ'ալ չեն կրնար զրուցուիլ՝ ամենեւին նոյն մտքով, և առանց աս հինգ հոլովին մէկուն կարօտ ըլլալու. ու միշտ մէկ միտք մը միայն կուտան. սեռականը միշտ որուն (ինչին) կը նշանակէ, տրականը որու (ինչի), գործիականը որով, բացառականը որմէ, հայցականը որը (ինչը) : Կամ թէ և ուրիշ մտքով մ'ալ առնուին նէ, նոյնպէս պարզ հոլովի մը մտքով է. ինչպէս երբեմն բացառականը ու հայցականը գործիականի ու նախդրիւ-տրականի մտքով. ան ալ ուրիշ շատ կերպ մեկնութիւն ալ կը վերցընէ : — Իսկ շէնքի դիէն, վասն զի աս հինգ

հոլովը միայն զատ զատ վերջ ունին, պարզ վերջահոլով են։ Ու թէպէտ անուանց մէկ երկու հոլովը նման են մէկմէկու կամ ուղղականին, բայց ես, դու դերանուանցը՝ հինգն ալ, ու միայն հինգը, զատ են իրարմէ։

— Աս երկու պատճառիս համար՝ հինգէն ոչ աւելի և ոչ ալ պակաս կրնար գրուիլ։

Աս ըսածէս կը հասկցուի ինչ չդնենուս պատճառն ալ։ Վասն զի մէկալ իրեքը, տրական, բացառական, ներգործական հոլովները՝ նշանակութեան զլխէն անանկ մէկ իրենք իրենց պարզ որոշ միտք մը չեն տար որ ուրիշ կերպով չկարենայ զրուցուիլ. առանց իրենց կարօտ ըլլալու՝ ուրիշ շատ կերպով ալ կը զրուցուին նոյնպէս նախդրով ու հոլովառու բառերով. ինչպէս աշխարհաբառին մէջն ալ անոնց հոլովը չունինք, վրան կամ համար, չորս դին, մէջը ըսելով կը բացատրենք։ Ու մէկ միտք մը միայն չեն տար, հապա զանազան մտքեր, ինչպէս կը տեսնես նախդրաց մէջ, մանաւանդ ընդարձակ քերականութեան ու բառգրքի մէջը։ Հէնքի զլխէն ալ մէկ նոր վերջահոլով մը չեն. նոյն պարզ վերջահոլովներուն վրայ զ կամ 'ի դրուած է. գործիականին վրայ զ դրեր՝ պարառական են ըսեր, բացառականին վրայ զ դրեր՝ պատմական են ըսեր, եզակի վերջահոլով տրականին վրայ 'ի դրեր՝ ներգոյական են ըսեր։ Իսկ թէ որ ամէն պարզ հոլովի վրայ նախդիր մը դրուելով միտքը փոխուիլը՝ զատ հոլով սեպելու ըլլանք նէ, ան ատենը չէ թէ ինը տասը, հապա քսան հոլովի երկան բարակ անհամանում շարոց մը չինելու կախելու է։ Վասն զի ամէն պարզ նախդիր ալ, զ, 'ի, յ, ց, առ, առ 'ի, ընդ, ըստ, որ հոլովակերտ ալ ըսուեր են, ամէն հոլովի վրայ կը դրուի խիստ շատ անգամ, ու կերպ կերպ մտքեր կու-

տայ բառին, ինչպէս կը տեսնուի ընդարձակ քերակա-
նութեան ու բառգրքի մէջ. բայց անով հոլով սեպուած
ու հոլովի կարգ անցած չեն, նախդիրներուն կամ նա-
խադրութիւններուն մէջ մնացեր են։ Ինչպէս ասոնք
հոն պիտի սորվի նէ տղան, ան իրեքն ալ աւելի աղէկ
ու լման կը սորվի հոն՝ իրենց այլեայլ նշանակութեամ-
բը։ Նիւթապէս սերտելը դիւրին է տղոց, կ'ըսուի.
իրաւ է. բայց նախդիրներուն մէկալ առմունքներն ալ
նիւթապէս օրինակներով կը սորվի տղան, և ոչ վերա-
ցեալ վարդապետութեամբ։ Ինչուան հոլովի տեղ չդը-
րուին նէ, միթէ նիւթական չե՞ն ըլլար. անանկ է նէ,
ընտոր ըսինք, մէկալ նախդիրներն ալ ամէնը առնենք
շարենք հոլովի տեղ. ինչ կը մնայ, անոնց ալ մէյմէկ
աղուոր աղուոր անուններ դնելը բա՞ն մըն է։ Ու տղաք-
նիս ատանկ առանց խելքերնին բանալու կրթելու՝ բո-
լորովին նիւթապէս սորվեցընելն ալ աղէկ բա՞ն մըն է,
թող իմաստունք մտածեն։

Իսկ նոյնչափ ըսուած հոլովը՝ մեր յատուկ լեզուին
մէջ ամենևին փոփոխութիւն մը չունի. ուղղականը ինչ
է նէ, անանկ ալ կանչելու կը բանի, ինչպէս աշխար-
հաբառին մէջն ալ։ Ասկից անանկ է նէ հոլով կ'ըլլայ.

Ու չորս հոլովի տեղ դրուածները՝ մեր բուն հին լե-
զուագէտ նախնիքն ալ ամենևին չեն ճանչնար իրենց
քերականութեան մէջ, ու կ'ըսեն ալ յայտնապէս՝ թէ
հոլովները վեց են, ուղղականը մէկտեղ առնելով, ու
անանկ ալ կը դնեն։ Նորերը տգիտութեան դարու մէջ
օտարազգիներէն ստեղծուած, ու առանց քննելու մեր
գիտնոց քերականութեան մէջ ալ մտած են։ Ու օգուտ
մը չունենալէն 'ի զատ, վնաս ունին. մէյմը՝ սխալ բան
սորվեցընելով, մէյմ'ալ՝ հոլովմունքը երկնցընելովը տը-

ղոյ սերտողութեան աշխատանքը աւելցընելով ու յի-շողութիւններն ու բերաններն փուճ տեղը յոգնեցընելով։

Անանկ է նէ՝ հինգ հոլով միայն ընդունիլը բուն խելքի և մեր լեզուագէտ նախնեաց համաձայն է, ու տղոց դիւրութիւն։ Ու երեկուան ասօրուան ալ բան չէ աս փոփոխութիւնս. 1815էն 'ի վեր եղած ու պատ-ճառներն ալ համառօտ հասկըցուցած է մեր Աւետի-քեան վարդապետին ընդարձակ քերականութեան մէ-ջը։ Բայց ինչ օգուտ որ դէշ սովորութեան նախապա-շարումը ու աչառութիւնը միտքերը կապեր են, թող չեն տար որ շիտակը, աղէկը, օգտակարը տիրէ։ Բայց այսուհետեւ ով որ շիտակին, աղէկին ու օգտակարին ազգային նախանձով անաչառ փոյթ և սէր ունի նէ, ինչ ընելուքին տարակուսելու չէ։

Ամէն կտոր մը նոր բան առջի բերանը քիչ մը դը-ժուար կուգայ, մանաւանդ վարժապետաց. վասն զի տղան դեռ բան մը չիտէ որ ընտրէ. ճերմակ թուղթ մըն է, ինչ որ գրես՝ ան կ'առնէ։ Ալ մնայ որ անանկ է նէ վարժապետները նոր բան մը տեսածնուն պէս՝ մէ-կէն չարհամարհեն. խելքով քննեն բանին իրաւունքը ու յարգը, փորձով ալ աղէկ մը հասկընալ ուզեն դիւ-րութիւնն ու օգուտը. անկէ ետքը կ'ուզեն նէ թող մէկդի նետեն. չէ նէ ծուռ հինը ձգեն, շիտակ նորին հետեւին ու սովորութիւն ընեն։ Մէկն որ իրաւացի պատճառներէ ետքը՝ գիտցածէն չուզեր շարժիլ ու նոր բան մը ընդունիլ նէ, ոչ երբէք կը լուսաւորուի, ոչ եր-բէք առաջ կ'երթայ։

Բայց մէկ բանին օգուտն ալ տեսնելու համար՝ պէտք է սրտով ու գործքով փոյթ ու ջանք ունենալ աղէկ առաջնորդելու տղոց, ու չափաւոր երկայնամիտ ալ ըլ-

լաւ՝ պտուղը տեսնելու ։ Ապա թէ ոչ, տղոց յարմար քերականութիւն ընելը՝ մէկ երևակայութիւն մը կ՚ըլլայ. ու ինչ քերականութիւն որ շինուի տղոց, անկարելի է որ ամենևին ու կատարեալ յարմար ըլլայ անոնց մտքին ու հասկացողութեանը, որ դեռ ոչինչ է, ու աս դունէն պիտի մտնէ խելքի ու մտածութեան ճամբան, ու հասնի իմաստութեան տաճարը ։ Սէրն ու ջանքը ամէն բան կը դիւրացնէ, ու առանց անոնց բան մը չըլլար ։ Ազգիս լեզուին կատարելութեան ու տղոցը օգտին փոյթը չըլլար սրտերնուս մէջը նէ, բան չունէինք որ այնչափ քերականութիւններէն ետև ելլէինք նորէն տղոց համար սիրտ ու գրիչ մաշեցնելու ։

Գրաբառը դիմացը մեկնել պէտք եղած տեղերը՝ աշխարհաբառ միայն մեկնեցինք, տաճկերէն չդրինք՝ բաց ՚ի քանի մը բառէ ։ Վասն զի չեմ հասկընար թէ աշխարհաբառ քերականութիւն գրողները տաճկերէն որ կը դնեն՝ ինչ կ՚ուզեն ըսել ։ Թէ որ բոլոր աշխարհաբառ գրուած քերականութիւնը կարդացողը կը հասկընայ նէ, ան աշխարհաբառ մեկնութիւններն ալ կը հասկընայ. չէ՝ թէ որ ան մեկնութիւնները չհասկընար նէ, քերականութիւնը ինչպէս պիտի հասկընայ, ու ինչո՞ւն պէտք է ան ատենը ան քերականութիւնը ։

# ԳԼՈՒԽՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ


**ԲԱՌԵՐՈՒՆ ՎՐԱՅ** . . . . . . . . 1

ԳԼՈՒԽ Ա. *Անուն* . . . . . . . . 3
*Անուններուն հոլովմունքը* . . . . . 5
*Զարտուղի հոլովմունք* . . . . . . 19
*Հոլովներու վրայ դիտելիք* . . . . . 23
*Միջակ անուններուն հոլովմունքը* . . . 28
ԳԼՈՒԽ Բ. *Դերանուն* . . . . . . . 38
*Էական կամ գոյական դերանուններ* . . . —
*Ածական դերանուններ* . . . . . . 41
ԳԼՈՒԽ Գ. *Նախդիր* . . . . . . . 47
ԳԼՈՒԽ Դ. *Բայ* . . . . . . . . 56
*Էական բայերուն խոնարհումը* . . . . 59
*Առաջին Լծորդութիւն, ամ* . . . . . 65
*Երկրորդ Լծորդութիւն, եմ* . . . . . 73
*Երրորդ Լծորդութիւն, իմ* . . . . . 79
*Չորրորդ Լծորդութիւն, ում* . . . . . 88
*Արտուղի բայեր* . . . . . . . 94
*Պակասաւոր բայեր* . . . . . . . 102
*Անդէմ բայեր* . . . . . . . . 107
*Խոնարհումներու վրայ դիտելիք* . . . . 108
ԳԼՈՒԽ Ե. *Դերբայ* . . . . . . . 111
ԳԼՈՒԽ Զ. *Մակբայ* . . . . . . . 121
ԳԼՈՒԽ Է. *Շաղկապ* . . . . . . . 124
ԳԼՈՒԽ Ը. *Ձայնարկութիւն* . . . . . . 215

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### ՊԱՐԶ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ . . . . . . 127

ԳԼՈՒԽ Ա. *Անուն բայի ու բայ* . . . . . 131
ԳԼՈՒԽ Բ. *Բայերու և անուններու խնդիրներ* . . 137
ԳԼՈՒԽ Գ. *Յատկացուցիչ ու Բացայայտիչ* . . . 154
ԳԼՈՒԽ Դ. *Ածական անուն գոյականի հետ* . . . 158
ԳԼՈՒԽ Ե. *Յարաբերական դերանուն որ* . . . 173
ԳԼՈՒԽ Զ. *Դիմորոշ յօդեր ս, դ, ն* . . . . 177
ԳԼՈՒԽ Է. *Նախդիրներ* . . . . . . . 194
ԳԼՈՒԽ Ը. *Ուղղագրութիւն* . . . . . . 202

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

### ԶԵՒԱՒՈՐ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ . . . . . . 207

ԳԼՈՒԽ Ա. *Զեղչում* . . . . . . . 208
ԳԼՈՒԽ Բ. *Աւելադրութիւն* . . . . . . 223
ԳԼՈՒԽ Գ. *Բակառութիւն* . . . . . . 237
ԳԼՈՒԽ Դ. *Փոխադրութիւն* . . . . . . 253
ԳԼՈՒԽ Ե. *Արտուղութիւն* . . . . . . 283

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ . . . . . . . 302

# ՏԱՐԵՐՔ

## ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԲԱՌԵՐՈՒՆ ՎՐԱՅ

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ շիտակ խօսելու և գրելու արուեստն ու կանոնն է։

2. Խօսքը, որ բերնով կ'ըսուի, բառերով կ'ըլլայ, բառը վանկով, վանկը տառով որ գրով կը գրուի։ Լուր, որդեակ, խրատու հօր քոյ. հինգ բառով խօսք մըն է. լուր, հօր, քոյ, մէյմէկ վանկ ու բառ են. որդեակ, խրատու, երկու վանկով բառեր են։

3. Գրերէն ութը հատը, ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ, ձայնաւոր են, ինքիրեն ձայն կը հանեն. մնացած երսունը բաղաձայն են, ձայնաւորի մը հետ ձայն կը հանեն. զոնէ ը ձայնաւորը դնելու է քովերնին որ ձայն հանեն. ինչպէս բը, գը, դը կամ ըղ, ըթ։

4. Օ գիրը ետքէն մնած է, որ հիները աւ երկբարբառ կը գրէին։ Երկբարբառ կ'ըսուի երկու ձայնաւոր մէկ ձայն՝ մէկ վանկ որ ըլլայ. ինչպէս աւ, եա, եւ, իւ, ոյ։

5. Բառը ութը տեսակ է. Անուն, Դերանուն, Նախդիր, Բայ, Դերբայ, Մակբայ, Շաղկապ, Ձայնարկութիւն, որ կ'ըսուին մասունք բանի:

6. Շիտակ խօսելու համար՝ առաջ ասոնց ինչ ըլլալը ու պէտք եղածին պէս կերպ կերպ փոխուիլը սորվելու է, ետքն ալ ասոնք կարգով շարելը, որ խօսք ըլլայ:

7. Ասոնցմէ չորսը միայն կը փոփոխի. անունը, դերանունը, բայը, դերբայը. մէկալ չորսը ամենեւին չեն փոխուիր:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՆՈՒՆ

8. Անունը կամ յատուկ է մարդու մը, տեղի մը, ինչպէս Հայկ, Աթէնք. կամ հասարակ անուն է բանի մը, ու կը նշանակէ ինչ ըլլալը կամ ինչպիսի ըլլալը:

9. Ինչ ըլլալը նշանակող անունը՝ գոյական կ'ըսուի, ինչպիսի ըլլալը նշանակողը՝ ածական. բան, մարդ, ծառ գոյական են. բարի, չար, մեծ ածական են. վասն զի կ'ըսուի բան բարի, մարդ չար, մեծ ծառ:

10. Անունը մէկու մը վրայ ըսուի նէ, եզակի կ'ըսուի. շատի վրայ ըսուի նէ, յոգնակի կ'ըսուի. մէկ մարդ մը ուզենք ըսել նէ, կ'ըսենք մարդ. շատ մարդ որ ուզենք ըսել, ք կամ ս կը դնենք ծայրը, կ'ըսենք մարդք, մարդս: Աս եզակի ու յոգնակի ըլլալը՝ անունին թիւը կ'ըսուի:

11. Բայց կայ անուն որ եզակի չունի. ինչպէս աղք, ժամք, որ եզակի աղ, ժամ չըլլար: Կայ ալ որ յոգնակի չունի. ինչպէս խաւար, հարաւ, որ յոգնակի խաւարք, հարաւք չըլլար:

12. Անունը՝ խօսքին մէջին նայելով՝ կը փոխուի իր վերջը եզակի ու յոգնակի. ինչպէս մարդ՝ կ'ըլլայ մարդոյ, մարդով, 'ի մարդոյ. մարդք՝ մարդոց, մարդովք, 'ի մարդոց: Աս փոփոխմունքս կ'ըսուի անունին հոլովը կամ վերջահո-լովքը. ու հինգ են, որ անուններուն ու իրենց պարզ և որոշ՝ վերջահոլովի շէնքին կարգովը վարը կը տեսնես:

1 Պարզ ըսելով կը հասկընանք առանց նախդրի ըլլալը ու նոյն տառով ձեւանալը. ինչպէս են ամէն հոլովմանց մէջ միայն սեռականը, տրականը ու գործիականը: Իսկ որոշ ըսելով կ'իմանանք որ անով մէկէն որոշուի բառը մէկալ հոլովմունքներէն. ինչպէս են գործեալ ամէն հոլովմանց համար սեռական կամ տրականն ու գործիականը: Զոր օրինակ, Բան, բանի, 'ի բանէ, կամ Քաղաք, քաղաքի, 'ի քաղաքէ

13. Կայ հոլով ալ որ սկիզբը տառ մը կամ վանկ մը կ'առնէ, որ նախդիր կ'ըսուի. ինչպէս, զմարդ, 'ի մարդ։ Բառը ձայնաւորով սկսի նէ՝ իին տեղը յ կամ 'ի յ կ'առնէ. ինչպէս յազգ, յերեսս, 'ի յերկինս։

14. Բայց կայ անուն որ վերջահոլով չունի եզակին. ինչպէս, արքայք, երկինք. կայ ալ որ յոգնակին չունի վերջահոլով. ինչպէս, սէր, խաղ։ Ասոնք նախդրիւ հոլով միայն ունին կ'ըսուի. այսինքն եզակին՝ կամ քէով սէով յոգնակինին կը բանի միայն՝ նախդիրով. ինչպէս, զարքայք, յերկինս, զխաղս, 'ի սէր։

15. Մէկ անուն մէկ կերպ չհոլովեր. Հայր՝ կ'ըլլայ հայրոյ, հայրմէ. Մարդ՝ կ'ըլլայ մարդոյ, մարդով։ Աս այլ և այլ կերպս կ'ըսուի անուանին հոլովմունք։

16. Հոլովմունքը եօթն են. հինգը պարզ, որ կու գան ա, ե, է, ո, ու ձայնաւորներուն մէկովը միայն կ'ըլլան. երկուքը խառն, որ է և ա, ո և ա ձայնաւորներով կ'ըլլան։ Պարզ՝ ա, ու, և խառն՝ է և ա ձայնաւորներով եղողները՝ երկերկու կերպ են. ուստի հոլովմունքներու օրինակն է տասը։ Ասածներս բոլոր կը տեսնես վարը օրինակներուն վրայ։

Աս ձայնաւորներուն կանոնն որ ըսինս նէ, շուտով կը սորվիս հոլովները, ու չես սխալիր, չես ալ մոռնար։

17. Միայն աս ալ գիտնալու է շիտակ հոլովելու համար, որ բառին ետքի բաղաձայնէն առաջ եղած ձայնաւորներուն ու երկբարբառներուն մէկ քանին կը փոխուի հոլովելու ատեն, ալ այնուհետեւ վերջին վանկ չըլլալուն համար։

| | | |
|---|---|---|
| Է | կը փոխուի | Ի, Ե. Սէր, սիրոյ. էգ, իգի. եղէգն, եղեգան. |
| Ի, ՈՒ | կը փոխուին | Ը, չգրուած. Գիր, գրոյ. Ջուր, ջրոյ. |

ըսես նէ, չես իմանար մէկէն թէ որ հոլովման տակ կ'երթայ, երրորդին թէ վեցերորդին. իսկ բան, բանի, բանէ. թագաւ, թագաւի, թագաւո- րածիդ պէս կ'իմանաս որը որ հոլովման տակ կ'երթայ։ Ասհա աս պատճառներուն համար աս կարգով պէտք է շարել վերջահոլովմունքը։ Ուղղականը հոլով չէ. իսկ հայցականը վերջահոլով չունի, ու նախդրիւ հոլովներուն առաջինն ու գլխաւորն է։

| | | |
|---|---|---|
| Իւ միայն, | կը փոխուի ՈՒ, ԸՒ · | Հովիւ, հովուի · Թիւ, Թուոյ կամ Թըւոյ · |
| ԵԱ | կը փոխուի Ե, Է · | Կեանք, կենաց · Հրեայ, Հրէի · |
| ՈՅ | կը փոխուի ՈՒ · | Լոյս, լուսոյ · Կոյր, կուրի : |

18 · Իսկ ա, է, ո, օ, ու՝ բաղաձայնով մը[1], չեն փոխուիր սովորաբար :

# ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԸ.

## 19 · ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

*պարզ ա ·*

### ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

**Եզակի**

| | | |
|---|---|---|
| Ուղղական, | Տիտան · | Տիտան · |
| Սեռական, | Տիտանայ · | Տիտանին · |
| Տրական, | Տիտանայ, 'ի Տիտան · | Տիտանին · |
| Գործիական, | Տիտանաւ · | Տիտանով · |
| Բացառական, | 'ի Տիտանայ · | Տիտանէն · |
| Հայցական, | զՏիտան · | Տիտանը · |

**Յոգնակի**

| | | |
|---|---|---|
| Ուղղական, | Տիտանք · | Տիտաններ · |
| Սեռական, | Տիտանաց · | Տիտաններուն · |
| Տրական, | Տիտանաց, 'ի Տիտանս · | Տիտաններուն · |
| Գործիական, | Տիտանօք[2] · | Տիտաններով · |
| Բացառական, | 'ի Տիտանաց · | Տիտաններէն · |
| Հայցական, | զՏիտանս · | Տիտանները : |

1 Աս ետքի բաղաձայնէ մը առաջ ու-ն՝ հիները շատ տեղ իւ կը գրէին, ու կը փոխուէր ու · ինչպէս, իւղ, ուղոյ · բիւր, բուրոյ · ձիւ, ձուոյ · հիմա կը գրուի ուղ, բուր, ձու, ու չփոխուիր : Միայն երկրորդ հոլովման տակ ուր կ'ըլլայ էր · աւուր, աւէր · աղբիւր, աղբէր :

2 Հիները օք չէին գրեր, աք կը գրէին · որով հոլովին ա գիրը կը պահուի (4, 16) :

20. Այսպէս կը հոլովին յատուկ անունները (8), ու սովորաբար յոգնակի չունին.

| | |
|---|---|
| Հայկ, Հայկայ, Հայկաւ, 'ի Հայկայ. | Հայկ, մեր ազգին նախահայրը. |
| Արարատ, այրարատայ, այրարատաւ, յայրարատայ. | Արարատ գաւառը։ |
| Նանէ[1], Նանեայ, Նանեաւ, 'ի Նանեայ. | Նանէ, Հայոց կուռքը։ |
| Տիգրանուհի, տիգրանուհեայ, տիգրանուհեաւ. | Տիգրանայ քոյրը։ |
| Մարիամ, մարիամայ կամ մարեմայ, մարեմաւ. | Մարիամ։ |
| Աթէնք, աթենայ, աթենաւ, յաթէնս. | Աթէնք քաղաքը։ |
| Գուրգէն, գուրգենայ կ՟մ գուրգինայ. | Գուրգէն։ |
| Անահիտ, անահտայ, անահտաւ, յանահտայ. | Անահիտ, Հայոց կուռքը։ |
| Գամիրք, գամրաց, գամրօք, 'ի գամրաց. | Գամերիի երկիրը։ |
| Յուդա կամ Յուդաս, յուդայ, 'ի յուդայ. | Յուդա։ |
| Սափիրա, սափիրայ, սափիրաւ. | Սափիրայ։ |
| Աբդիաս, աբդիայ, աբդիաւ. | Աբդիաս։ |
| Սամարիա, սամարիայ կամ սամարեայ. | Սամարիա գաւառը։ |
| Սին կամ Սինա, սինայ կամ սինեայ. | Սինա անապատը կամ լեռը։ |
| Յասոն, յասոնեայ. | Յասոն։ |
| Անդրէաս, անդրեայ. | Անդրէաս։ |
| Զաքարիաս, զաքարիայ կամ զաքարեայ. | Զաքարիա։ |
| Սոկրատէս, սոկրատեայ կ՟մ սոկրատայ. | Սոկրատէս։ |
| Դիոս, դիայ, դիաւ. | Դիոս կուռք կամ մարդ։ |

1 Է ու Ի վերջացած բառերուն ան է ու ի տառերը այբին քով ե կը փոխուին հոլովելին նէ։ Անկից մէկը ե երբեմն անանկ տառ չունեցողներուն ալ։

Աւգոստոս, աւգոստեայ, աւգոստեաւ. Օգոստոս կայսրը:
Կոռնելիոս, կոռնելեայ, կոռնելեաւ. Կոռնելիոս:

21. Յատուկ անունները երբեմն ուրիշ հոլովմանց պէս ալ կը հոլովին. Հայկ, հայկի. Մովսէս, մովսեսի կամ մովսիսի. Գալիլիա կամ Գալիլեայ, գալիլէի. Այրարատ, այրարատոյ կամ այրարատու. Սամարիա, սամարիոյ կամ սամարւոյ. Մարիամ, մարիամու. Աբգիաս, աբգիու. Կոռնելիոս, կոռնելիու:

22. Ոմանք ալ ոս, ոս վերջացածներէն՝ կանչուելով ցուցուին նէ, հոռմի կերպով երբեմն է, ո կը վերջանան. Պետրոս, պետրէ. Կոռնելիոս, կոռնելիէ. Ագրիպպաս, ագրիպպա:

23. Իսկ բուն հայերէն, ամէն անուն՝ ուղղականը ինչ է նէ՝ կանչուելու ալ անանկ կը բանի, ով գրեր ես չես գրեր. Պետրոս կամ ով Պետրոս. Գրիգորիոս կամ ով Գրիգորիոս. Ագրիպպաս կամ ով Ագրիպպաս:

## 24. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Սերմն, սերմ. | հունտ. |
| Սեռ. | Սերման. | հունտի. |
| Տրա. | Սերման, 'ի սերմն. | հունտի. |
| Գործ. | Սերմամբ. | հունտով. |
| Բաց. | 'ի Սերմանէ. | հունտէ. |
| Հայց. | զՍերմն. | հունտը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Սերմանք, սերմունք. | հունտեր. |
| Սեռ. | Սերմանց. | հունտերու. |
| Տրա. | Սերմանց, 'ի սերմանս. | հունտերու. |
| Գործ. | Սերմամբք. | հունտերով. |
| Բաց. | 'ի Սերմանց. | հունտերէ. |
| Հայց. | զՍերմանս. | հունտերը: |

25. Ասանկ կը հոլովին ըն, էան վերջացած բառերը՝ նոյն առաջ առնելով ո, և քանի մը ուրիշ ալ.

Ակն, ական, ականք, ակունք. — Ակ. Ջրի աղբեւր. ազնիւ քար:

| | |
|---|---|
| Կողմն, կողմ, կողման, մանք, մունք · | դէ, կողմ։ |
| Ամառն, ամարան, ամարունք · | ամառ։ |
| Ձմեռն, ձմերան, ձմերունք · | ձմեռ։ |
| Գեղարդն, գեղարդան կամ գեղար-դեան, գեղարդունք · | տէգ, մըզրախ։ |
| Անուն, անուան, անուանք, անունք, անուանց · | անուն։ |
| Ձեղուն, ձեղուան, ձեղունք, ձե-ղուանց · | տան ծածք, առիք։ |
| Մահ, մահուան, մահուանք, մահունք · | մահ։ |
| Պաշտօն, պաշտաման, պաշտամունք, պաշտօնք · | պաշտօն, ծառայու-թիւն։ |
| Ձիւն, ձեան, 'ի ձեանէ, ձիւնք · | ձիւն։ |
| Սիւն, սեան, 'ի սեանէ, սիւնք · | սիւն, դիրեկ։ |
| Արիւն, արեան, յարենէ ', արիւնք · | արիւն։ |
| Զօրութիւն, զօրութեան, 'ի զօրու-թենէ, զօրութիւնք · | ոյժ, զօրութիւն։ |
| Ստին, ստեան, 'ի ստենէ, ստինք · | ծիծ։ |
| Ադամանք, ադամանց, ադամամբք · | Ադամին սօյ մար-դիկը։ |
| Խրատունք, խրատուանց, խրատուամբք · | խրատանք։ |
| Սրունք, սրուանց կամ սրանց · | ձաներ, պաճախներ։ |
| Եղէգն, եղեգան, եղեգունք · | եղէգ, խամիշ։ |
| Սկիզբն, սկզբան, սկզբունք · | սկիզբ, ծայր։ |
| Դուռն, դրան, դրունք · կամ դուրք, դրաց (39) · | դուռ։ |
| Նուռն, նռան, նռունք · | նուռ։ |
| Պաշտումն, պաշտման, պաշտմունք · | ծառայութիւն, պաշ-տելը։ |
| Եղեամն, եղեման, եղեմունք · | եղեմ, խրաղը։ |

1 Սեռական ու տրականը էան եղող բառերը թէ որ մէկ վանկով բառեր են նէ՝ բացառականը էնէ կ'ըլլայ · իսկ աւելի վանկովներունը սովորաբար ենէ կ'ըլլայ, է-ն փոխուելով 'ի է ըստ 17 · ու աս մէկ պըզ-տիկ բանովս զատ հոլովում չեն ըլլար։

| | |
|---|---|
| Աղջիկ, աղջկան, աղջկունք, աղջկանց կամ աղջկաց. | աղջիկ: |
| Մարդիկ, մարդկան, մարդկամբ կամ մարդկաւ[1]. | մարդեր, մարդիկ: |
| Մանուկ, մանկան, մանկունք. | տղայ, մանչ: |
| Գարուն, գարնան, գարունք. | գարուն, առջի ա-մառ: |
| Տուն, տան, տունք. | տուն: |
| Տեսիլ, տեսլեան, տեսիլք. | տեսիլ: |
| Հանգիստ, հանգստեան, հանգիստք. | հանգիստ: |
| Գալուստ, գալստեան, գալուստք. | գալուստ, գալը: |
| Ժողովուրդ, ժողովրդեան, ժողո-վուրդք, ժողովրդոց. | ժողովուրդ: |
| Ծնունդ, ծննդեան, ծնունդք, ծննդ-դոց. | ծնունդ, ծնանիլը: |
| Վաղիւ, վաղուեան, 'ի վաղուենէ. | վաղը, վաղուան օրը: |
| Տիւ, տուընջեան, տուընջեամբ, տիւք. | ցորեկ: |

## 26. ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

պարզ է.

### Նշանէ

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Համր. | մունջ, տխլեղ. |
| Սեռ. | Համեր. | մունջի. |
| Տրա. | Համեր, 'ի համր. | մունջի. |
| Գործ. | Համերբ. | մունջով. |
| Բաց. | 'ի Համերէ. | մունջէ. |
| Հայց. | զՀամր. | մունջը. |

1 Ձայնով յոգնակի չունի սովորաբար. բայց կը գտուի մարդկօք, մարդկամբք, բազում մարդիկս:

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Համերք. | Մանչէր. |
| Սեռ. | համերց. | Մանչէրու. |
| Տր. | համերց, 'ի համերս. | Մանչէրու. |
| Հայց. | համերքք. | Մանչէրով. |
| Բաց. | 'ի համերց. | Մանչէրէ. |
| Գործ. | զհամերս. | Մանչէրը ։ |

27. Ասանկ կը հոլովին եր, եղ վերջացած բառերը՝ րէէն ու ղատէն առաջ առնելով է, ու մէկ քանի եւր.

| | | |
|---|---|---|
| Տարր, | տարեր, տարերց. | Մանր մասունք, սկզբունք ։ |
| Ոսկր, | ոսկեր, ոսկերց. | ոսկոր ։ |
| Ուստր, | ուստեր, ուստերց. | Մանչ զաւակ, որդի ։ |
| Դուստր, | դստեր, դստերց. | աղջիկ զաւակ ։ |
| Ալիւր, | ալեր. | ալուր ։ |
| Աղբիւր, | աղբեր, աղբերց. | աղբեւր ։ |
| Եղջիւր, | եղջեր, եղջերց. | եղջուր, պոյնուզ ։ |
| Աստղ, | աստեղ, աստեղց. | աստղ, եըլտըզ ։ |
| Ետղ, | ետեղ. | տեղ ։ |
| Շիգղ, | շգեղ. | պատառայ ճարդ մը ։ |

28. Եզակի գործիականը ու յոգնակի հոլովները շատ անգամ կ'ըլլայ նաև Համերաւ, համերաց, համերօք. ոսկերաց, ոսկերօք. ուստերաց, ուստերօք. աղբերաց կամ աղբիւրաց, աղբերօք, զաղբիւրս. աստեղաց, աստեղօք ։ Ասանկ է սովորաբար՝ անեզականը

Տիեզերք, տիեզերաց, տիեզերօք. աշխարհք, բոլոր աշխարհքս ։

## 29. ԵՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

պարզ է.

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Այր. | քարայր, մաղարա. |
| Սեռ. | Այրի. | քարայրի. |
| Տրա. | Այրի, այր. | քարայրի. |
| Գործ. | Այրիւ. | քարայրով. |
| Բաց. | յԱյրէ. | քարայրէ. |
| Հայց. | զԱյր. | քարայրը. |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Այրք. | քարայրներ. |
| Սեռ. | Այրից. | քարայրներու. |
| Տրա. | Այրից, այրս. | քարայրներու. |
| Գործ. | Այրիւք. | քարայրներով. |
| Բաց. | յԱյրից. | քարայրներէ. |
| Հայց. | զԱյրս. | քարայրները: |

30. Այսպէս կը հոլովին շատ անուններ.

| | | | |
|---|---|---|---|
| Արքայ, | արքայի, | արքայիւ. | արքայ, թագաւոր: |
| Մայր, | մայրի, | մայրիւ. | մայր ծառ, չամ: |
| Իժ, | իժի, | իժիւ. | իժ օձ, էնկերէք: |
| Ուխտ, | ուխտի, | ուխտիւ. | ուխտ: |
| Մարգարէ, | մարգարէի, | մարգարէիւ. | մարգարէ: |
| Աղօթք, | աղօթից, | աղօթիւք. | աղօթք: |
| Ընչք, | ընչից, | ընչիւք. | ստացուածք, ըաղակ: |
| Սիրտ, | սրտի, | սրտիւ. | սիրտ: |
| Շէն, | շինի, | շինիւ. | շէնք, գեղ: |
| Խուլ, | խլի, | խլիւ. | խուլ: |
| Ատեան, | ատենի, | ատենիւ. | ատեան, ատենան: |
| Հրեայ, | հրէի, | հրէիւ. | հրէայ: |
| Համբոյր, | համբուրի, | համբուրիւ. | պագնելը, պաչելը: |
| Վաղիւ, | վաղուի, | 'ի վաղուէ. | վաղը, վաղուան օրը: |

## 31. ՉՈՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

պարզ ա.

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Մարդ. | մարդ. |
| Սեռ. | Մարդոյ. | մարդու. |
| Տրա. | Մարդոյ, 'ի մարդ. | մարդու. |
| Գործ. | Մարդով. | մարդով. |
| Բաց. | 'ի Մարդոյ. | մարդէ. |
| Հայց. | զՄարդ. | մարդը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Մարդք. | մարդեր, մարդիկ. |
| Սեռ. | Մարդոց. | մարդերու. |
| Տրա. | Մարդոց, 'ի մարդս. | մարդերու. |
| Գործ. | Մարդովք, մարդօք. | մարդերով. |
| Բաց. | 'ի Մարդոց. | մարդերէ. |
| Հայց. | զՄարդս. | մարդերը: |

32. Նման կը հոլովին շատ անուններ.

| | | | |
|---|---|---|---|
| Աստուած, | աստուծոյ, | աստուծով. | ճշմարիտ աստուած: |
| Աստուած, | աստուածոյ, | աստուածով. | սուտ ած, կուռք: |
| Հարաւ, | հարաւոյ, | հարաւով. | հարաւ, լոտոս: |
| Ծեր, | ծերոյ, | ծերով. | ծեր, հալւոր: |
| Ձի, | ձիոյ, | ձիով. | ձի: |
| Ուս, | ուսոյ, | ուսով. | ուս, օմուզ: |
| Ձու, | ձուոյ, | ձուով. | հաւկիթ: |
| Պահք, | պահոց, | պահովք. | պաս: |
| Դժոխք, | դժոխոց, | դժոխովք. | դժոխք: |
| Սէր, | սիրոյ, | սիրով. | սէր: |
| Վէրն, | վէրնոյ, | վէրնով. | վէրք: |
| Ջուր, | ջրոյ, | ջրով. | ջուր: |
| Հուր, | հրոյ, | հրով. | կրակ: |
| Սեաւ, | սեւոյ, | սեւով. | սև: |

| | | | |
|---|---|---|---|
| Թիւ, | Թուոյ, | Թուով. | թիւ, համրանք : |
| Լոյս, | լուսոյ, | լուսով. | լոյս : |

33. Այս հոլովման բառերը երբեմն ում ալ կ'ըլլան եզակի սեռականը ու մանաւանդ տրականը, ու անկից մէկ քանիին բացառականն ալ մէ կ'ըլլայ: Սովորականները ասոնք են.

| | | |
|---|---|---|
| Մարդ, | մարդում. | մարդ : |
| Սուրբ, | սրբում. | սուրբ : |
| Պիղծ, | պղծում. | պիղծ, [illegible] : |
| Հին, | հնում. | հին : |
| Նոր, | նորում. | նոր : |
| Անցեալ, | անցելում. | անցած : |
| Առաջին, | առաջնում, յառաջնմէ. | առջի : |
| Աջ, | աջում, յաջմէ. | աջ, սաղ : |
| Ձախ, | ձախում, 'ի ձախմէ. | ձախ, սոլ : |

34. Քիչ անգամ ուրիշ հոլովմանց ալ կ'ըլլայ ասանկ, աւելի եօթնե_րորդինը՝ որ ասոր նման է :

## 35. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

պարզ ու.

### ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

#### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | Զարդ. | զարտ. |
| Սեռ. | Զարդու. | զարտէ. |
| Տրա. | Զարդու, 'ի զարդ. | զարտէ. |
| Գործ. | Զարդու. | զարտով. |
| Բաց. | 'ի Զարդուէ, 'ի զարդէ, 'ի զարդու. | զարտէ. |
| Հայց. | զԶարդ. | զարտը. |

#### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | Զարդք. | զարտեր. |
| Սեռ. | Զարդուց. | զարտերու. |
| Տրա. | Զարդուց, 'ի զարդս. | զարտերու. |
| Գործ. | Զարդուք. | զարտերով. |
| Բաց. | 'ի Զարդուց. | զարտերէ. |
| Հայց. | զԶարդս. | զարտերը: |

36. Նման կը հոլովին.

| | |
|---|---|
| Այգ, այգու, յայգուէ. | առաւօտ, վաղը առաւօտ։ |
| Գանձ, գանձու, 'ի գանձուէ, 'ի գանձէ. | գանձ։ |
| Դաս, դասու, 'ի դասու, 'ի դասէ. | դաս, խումբ, կարգ։ |
| Զգեստ, զգեստու, 'ի զգեստուէ, 'ի զգեստէ. | հագուստ, լաթ։ |
| Զօր, զօրու, 'ի զօրուէ, 'ի զօրէ. | զօրք։ |
| Առաւօտ, առաւօտու, յառաւօտէ. | առաւօտ։ |
| Արև, արևու, յարևէ. | արև։ |
| Ժամ, ժամու, 'ի ժամէ. | ժամ, սահաթ։ |
| Ծով, ծովու, 'ի ծովէ. | ծով։ |
| Մահ, մահու, մահու. | մահ։ |
| Վարք, վարուց, վարուք. | վարք։ |
| Պարտք, պարտուց, պարտուք. | պարտք։ |
| Զէն, զինու, 'ի զինէ, 'ի զինուէ. | զէնք, սիլահ։ |
| Ցուլ, ցլու, 'ի ցլէ. | ցուլ, պուղա։ |

37. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Փոքր. | պզտիկ. |
| Սեռ. | Փոքու. | պզտիկին. |
| Տր. | Փոքու, 'ի փոքր. | պզտիկին. |
| Գործ. | Փոքումբ, փոքու. | պզտիկով. |
| Բաց. | 'ի Փոքուէ, 'ի փոքու. | պզտիկէ. |
| Հայց. | զՓոքր. | պզտիկը. |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Փոքունք. | պզտիկներ. |
| Սեռ. | Փոքունց. | պզտիկներուն. |
| Տր. | Փոքունց, 'ի փոքունս. | պզտիկներուն. |
| Գործ. | Փոքումբք, փոքուք. | պզտիկներով. |
| Բաց. | 'ի Փոքունց. | պզտիկներէ. |
| Հայց. | զՓոքունս. | պզտիկները։ |

38. Այսպէս կը հոլովին քանի մը ըր վերջացած բառեր, մէկ երկու ուրիշ ալ. ու տեղ տեղ կը խոտորին քիչ մը.

Այր, առն, յառնէ. էրիկ։
Ծաղր, ծաղու, 'ի ծաղուէ. ծիծաղ, խնդալը։
Մեղր, մեղու, 'ի մեղուէ. մեղր, պալ։
Թանձր, թանձու, ձունք, ձունց. թանձր, հաստ։
Ծանր, ծանու, նունք, նունց, նուք. ծանր։
Մանր, մանու, նունք, նունց, նումբք. մանր։
Քաղցր, քաղցու, ցունք, ցունց, ցուք. անուշ։
Բարձր, բարձու, բարձու կամ բարձամբ, ձունք, ձանց, ձամբք. բարձր։
Յոգն, յոգունք, յոգունց, յոգումբք. շատ։
Երէց, երիցու, երիցու կամ երիցամբ, երիցունք, երիցանց, երիցամբք. տարիքով մեծ, կարգով մեծ։

## 39. ՎԵՑԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

խառն է և ա.

### ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

#### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ազգ. | ազգ. |
| Սեռ. | Ազգի. | ազգի. |
| Տրա. | Ազգի, յազգ. | ազգի. |
| Գործ. | Ազգաւ. | ազգով. |
| Բաց. | յԱզգէ. | ազգէ. |
| Հայց. | զԱզգ. | ազգը. |

#### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ազգք. | ազգեր. |
| Սեռ. | Ազգաց. | ազգերու. |
| Տրա. | Ազգաց, յազգս. | ազգերու. |
| Գործ. | Ազգօք, ազգովք. | ազգերով. |
| Բաց. | յԱզգաց. | ազգերէ. |
| Հայց. | զԱզգս. | ազգերը։ |

40. Ասանկ կը հոլովին շատ մը բառեր .

| | | | |
|---|---|---|---|
| Կարգ, | կարգի, | կարգաւ . | Կարգ : |
| Քաղաք, | քաղաքի, | քաղաքաւ . | Քաղաք : |
| Իր, | իրի, | իրաւ . | Բան, եղած բան մը : |
| Լեզու, | լեզուի, | լեզուաւ . | Լեզու : |
| Խաւար, | խաւարի, | խաւարաւ . | Մութ : |
| Աչք, | աչաց, | աչօք . | Աչք : |
| Փառք, | փառաց, | փառօք . | Փառք : |
| Աղաչանք, | աղաչանաց, | աղաչանօք . | Աղաչանք : |
| Իգ, | իգի, | իգաւ . | Էգ, դիշի : |
| Բժիշկ, | բժշկի, | բժշկաւ . | Բժիշկ, հէքիմ : |
| Բազում, | բազմի, | բազմաւ . | Շատ : |
| Կեանք, | կենաց, | կենօք . | Կեանք : |
| Հովիւ, | հովուի, | հովուաւ . | Հովիւ, չօպան : |
| Վարագոյր, | վարագուրի, | վարագուրաւ . | Վարագոյր, փէրտէ : |

41. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Անձն . | անձ, հոգի, ինք . |
| Սեռ. | Անձին . | անձի . |
| Տր. | Անձին, յանձն . | անձի . |
| Գործ. | Անձամբ . | անձով . |
| Բաց. | յԱնձնէ . | անձէ . |
| Հայց. | զԱնձն . | անձը . |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Անձինք . | անձեր . |
| Սեռ. | Անձանց . | անձերու . |
| Տր. | Անձանց, յանձինս . | անձերու . |
| Գործ. | Անձամբք . | անձերով . |
| Բաց. | յԱնձանց . | անձերէ . |
| Հայց. | զԱնձինս . | անձերը : |

42. Այսպէս կը հոլովին ըն վերջացած բառերուն մէկ քանին։ Ասոնցմէ ասոր զատ հոլովները՝ առջի հոլովման երկրորդ օրինակին պէս կ'ըլլան, անոր ալ ասոր պէս.

Ազն, ազին, յազնէ, ազինք. ադէ, ջէղ։
Դաշն, դաշին, 'ի դաշնէ, դաշինք. դաշն, պայման, խավըլ։
Գառն, գառին, 'ի գառնէ, գառինք. ղէղէ։
Բեռն, բեռին, 'ի բեռանէ, 'ի բեռնէ, բեռինք. բէա։
Գառն, գառին, 'ի գառանէ, 'ի գառնէ, գառինք. գառ, խառղէ։
Թոռն, թոռին, 'ի թոռնէ, 'ի թոռանէ, թոռունք. Թոռ։
Հարսն, հարսին, 'ի հարսնէ, 'ի հարսանէ, հարսունք. հարս։
Մասն, մասին, 'ի մասնէ, 'ի մասանէ, մասունք. Տաւ, բաժին։
Մատն, մատին, 'ի մատանէ, 'ի մատնէ, մատունք. Տաւ։
Լեառն, լերին, 'ի լեռնէ, լերինք. ւէա։
Ձեռն, ձեռին, 'ի ձեռանէ, ձեռք, ձեռաց, ձեռօք. յէաւ։
Ոտն, ոտին, յոտանէ, ոտք, ոտից, ոտիւք. աաա։

## 43. ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

խառն . և . .

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Բարի. | աղէկ. |
| Սեռ. | Բարւոյ[1]. | աղէկին. |
| Տրա. | Բարւոյ, 'ի բարի. | աղէկին. |
| Գործ. | Բարեաւ. | աղէկով. |
| Բաց. | 'ի Բարւոյ. | աղէկէ. |
| Հայց. | զԲարի. | աղէկը. |

1 Ուղղականին խնին ոյն քովը - կը փոխուի, այրին քովը՝ է։



ՀԱՅՌ ԳԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Բարիք . | աղէկնէր . |
| Սեռ . | Բարեաց . | աղէկնէրու . |
| Տր . | Բարեաց , 'ի բարիս . | աղէկնէրու . |
| Գործ . | Բարեօք . | աղէկնէրով . |
| Բաց . | 'ի Բարեաց . | աղէկնէրէ . |
| Հայց . | զԲարիս . | աղէկնէրը : |

44 . Ասանկ կը հոլովին մէկ վանկէն աւելի ի վերջացող բառերը : Ոմանց եզակի գործիականը ու բոլոր յոգնակին՝ աւելի չորրորդ հոլովման պէս կ'ըլլայ . երբեմն մէկալնոնցն ալ անանկ կ'ըլլայ :

| | | | |
|---|---|---|---|
| Այգի , | այգւոյ , | այգեաւ . | էգի : |
| Գինի , | գինւոյ , | գինեաւ . | գինի : |
| Եկեղեցի , | եկեղեցւոյ , | եկեղեցեաւ . | էկէղէցի , ժամ : |
| Սիրելի , | սիրելւոյ , | սիրելեաւ . | սիրէլի : |
| Տարի , | տարւոյ , | տարեաւ . | տարի : |
| Տեղի , | տեղւոյ , | տեղեաւ . | տէղ : |
| Ոսկի , | ոսկւոյ , | ոսկւով . | ոսկի : |
| Փոշի , | փոշւոյ , | փոշւով . | փոշի , թօզ : |
| Որդի , | որդւոյ , | որդւով , որդւոց . | որդի : |
| Հոգի , | հոգւոյ , | հոգւով , հոգւոց . | հոգի : |
| Աւետիք , | աւետեաց , | աւետեօք . | աւէտիս , մուժդէ : |
| Կարծիք , | կարծեաց , | կարծեօք . | կարծիք : |

45 . Ասոր հոլովները շատ տեղ առանց ւ-ին ալ կ'ըլլան . Բարոյ , բարւով կամ բարով , 'ի բարոյ . Գինոյ , գինւով կամ գինով . Սիրելոյ , սիրելւով կամ սիրելով . Ոսկոյ , ոսկով . Որդոյ , որդով , որդոց , որդովք :

46 . Աս հոլովման բառերը երբեմն ոջ ալ կ'ըլլան եզակի սեռականն ու տրականը , ու անկէց մէկ քանիին բացառականն ալ ոջէ կ'ըլլայ .

| | | |
|---|---|---|
| Բարի , | բարւոջ . | բարի , աղէկ : |
| Այգի , | այգւոջ . | էգի : |
| Գինի , | գինւոջ . | գինի : |
| Եկեղեցի , | եկեղեցւոջ . | էկէղէցի , ժամ : |
| Տարի , | տարւոջ , 'ի տարւոջէ . | տարի : |
| Տեղի , | տեղւոջ , 'ի տեղւոջէ . | տէղ : |

47. Քիչ անգամ ուրիշ հոլովմանց ալ կ՚ըլլայ ասանկ, աւելի չորրորդինը՝ որ ասոր նման է։

## ԶԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

48. Քանի մը բառ կայ որ հոլովմունքնին եօթը հոլովմունքէն դուրս է, թէպէտ տեղ տեղ կը նմանի մէկուն կամ մէկալին. ու ասոնք են.

### 49. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Այր. | Էրիկ մարդ, էրիկ, մարդ. |
| Սեռ. | Առն[1]. | Էրիկ մարդու. |
| Տրա. | Առն, յայր. | Էրիկ մարդու. |
| Գործ. | Արամբ. | Էրիկ մարդով. |
| Բաց. | յԱռնէ. | Էրիկ մարդէ. |
| Հայց. | զԱյր. | Էրիկ մարդը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Արք. | Էրիկ մարդիկ. |
| Սեռ. | Արանց. | Էրիկ մարդոց. |
| Տրա. | Արանց, յարս. | Էրիկ մարդոց. |
| Գործ. | Արամբք. | Էրիկ մարդերով. |
| Բաց. | յԱրանց. | Էրիկ մարդերէ. |
| Հայց. | զԱրս. | Էրիկ մարդերը։ |

Ասանկ կը հոլովի Տէր, որ է տէ այր, այս ինքն մեծ կամ հզօր այր, տէր.
Տէր, տեառն, տեառն, 'ի տէր, տերամբ, 'ի տեառնէ կամ 'ի տեռնէ, զտէր.

---

1 Մեր լեզուին մէջ՝ բառին բնական եղօղ նուէ առաջ՝ ամենևին ր չկայ. անոր համար աս բառիս ու Տէր բառին մէջն ալ րէն ռ կը փոխուի երբոր քովը ն գայ։ Ընդ հակառակն այն քովի նուն հոլովով որ հեռանայ նէ, երբեմն ռան ր կը փոխուի. ինչպէս տեսանք ամառն, ձմեռն, [illegible] բառերուն վրայ (25, 42)։ Աս երկու բանս բայերուն վրայ ալ կ'երևնայ։

Տեարք, տերանց կամ տեարց, 'ի տեարս, տերամբք, 'ի տերանց կամ 'ի տեարց, զտեարս։

## 50. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Հայր. | հար. |
| Սեռ. | Հօր[1]. | հօր. |
| Տրա. | Հօր, 'ի հայր. | հօր. |
| Գործ. | Հարբ, հարամբ. | հարով. |
| Բաց. | 'ի Հօրէ. | հօրմէ. |
| Կոչ. | զՀայր. | հարը. |

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Հարք. | հարեր. |
| Սեռ. | Հարց, հարանց. | հարերու. |
| Տրա. | Հարց, հարանց, 'ի հարս. | հարերու. |
| Գործ. | Հարբք, հարամբք. | հարերով. |
| Բաց. | 'ի Հարց, 'ի հարանց. | հարերէ. |
| Կոչ. | զՀարս. | հարերը։ |

Մայր, մօր, մարբ. մարք, մարց. — մար։

Եղբայր, եղբօր, եղբարբ, եղբարք, եղբարց. — եղբար, աղբար։

## 51. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Կին. | կնիկ. |
| Սեռ. | Կնոջ. | կնկան. |
| Տրա. | Կնոջ, 'ի կին. | կնկան. |
| Գործ. | Կնաւ, կանամբ. | կնիկով. |
| Բաց. | 'ի Կնոջէ. | կնիկէ. |
| Կոչ. | զԿին. | կնիկը. |

---

1 Հիներուն գրուածքովը Հայր, հաւր, 'ի հաւրէ (4)։

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Կանայք. | կնիկներ, կնկտիք. |
| Սեռ. | Կանանց. | կնիկներու. |
| Տրա. | Կանանց, 'ի կանայս. | կնիկներու. |
| Գործ. | Կանամբք. | կնիկներով. |
| Բաց. | 'ի Կանանց. | կնիկներէ. |
| Հայց. | զԿանայս. | կնիկները: |

Տիկին, տիկնոջ, տիկնաւ կամ տիկնամբ, 'ի տիկնոջէ, զտիկին.
Տիկնայք, տիկնանց կամ տիկնայց, տիկնօք կամ տիկնամբք, 'ի տիկնանց կամ 'ի տիկնայց, զտիկնայս. Ռմկ. կին, խաթուն:

### 52. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քոյր. | քուր. |
| Սեռ. | Քեռ. | քրոջ. |
| Տրա. | Քեռ, 'ի քոյր. | քրոջ. |
| Գործ. | Քերբ, քեռբ. | քուրով. |
| Բաց. | 'ի Քեռէ. | քուրէ. |
| Հայց. | զՔոյր. | քուրը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քորք. | քուրեր. |
| Սեռ. | Քերց, քեռց. | քուրերու. |
| Տրա. | Քերց, քեռց, 'ի քորս. | քուրերու. |
| Գործ. | Քերբք, քեռբք. | քուրերով. |
| Բաց. | 'ի Քերց, 'ի քեռց. | քուրերէ. |
| Հայց. | զՔորս. | քուրերը: |

## 53. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Գիւղ, գեօղ. | գեղ. |
| Սեռ. | Գեղջ. | գեղի. |
| Տր. | Գեղջ, 'ի գիւղ. | գեղի. |
| Գործ. | Գիւղիւ. | գեղով. |
| Բաց. | 'ի Գեղջէ. | գեղէ. |
| Հայց. | զԳիւղ, զգեօղ. | գեղը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Գիւղք, գեօղք. | գեղեր. |
| Սեռ. | Գիւղից, գեօղից. | գեղերու. |
| Տր. | Գիւղից, գեօղից, 'ի գիւղս. | գեղերու. |
| Գործ. | Գիւղիւք, գեօղիւք, գիւղօք. | գեղերով. |
| Բաց. | 'ի Գիւղից, 'ի գեօղից. | գեղերէ. |
| Հայց. | զԳիւղս, զգեօղս. | գեղերը։ |

## 54. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Օր[1]. | օր. |
| Սեռ. | Աւուր. | օրի. |
| Տր. | Աւուր, յօր. | օրի. |
| Գործ. | Աւուրբ. | օրով. |
| Բաց. | յՕրէ. | օրէ. |
| Հայց. | զՕր. | օրը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Աւուրք. | օրեր. |
| Սեռ. | Աւուրց. | օրերու. |
| Տր. | Աւուրց, յաւուրս. | օրերու. |
| Գործ. | Աւուրբք. | օրերով. |
| Բաց. | յԱւուրց. | օրերէ. |
| Հայց. | զԱւուրս. | օրերը։ |

---

1 Հինգերորդ գրուածքումը Աւր, աւուր, յաւրէ, զաւր (4)։

# ՀՈԼՈՎՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

55. Ձայնաւորով մը ը, ը վերջացած բառերը՝ գործիական կ'ըլլան երբեմն մինակ ք մը առնելով ծայրը. ու նոյն բենին քովը մ կը փոխուի. ինչպէս,

| | | | |
|---|---|---|---|
| Վեցթեւեան, | վեցթեւեամբ, | վեցթեւեամբք. | վէց թեւ ունեցող: |
| Բնաւին, | բնաւիմբ. | | բոլոր, բոլորովին: |
| Սուսեր, | սուսերբ, | սուսերբք. | թուր: |
| Հուր, | հուրբ. | | կրակ: |
| Ջուր, | ջուրբ, | ջուրբք. | ջուր: |
| Հանուր, | հանուրբ, | հանուրբք. | ամէն, բոլոր: |

56. Բացառական հոլով կ'ըլլայ երբեմն ուստ վերջով ալ. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Երկինք, | յերկնուստ. | երկնքէն: |
| Ամէն, | յամենուստ, յամենուստ ծառայութենէ. | ամէնէն, ամէն տեղէն, ամէն ծառայութենէ: |
| Աստուած, | յաստուածուստ. | Աստուծմէ: |
| Բուն, | 'ի բնուստ. | 'ի բնէ, ամբողջական: |
| Արքունիք, | յարքունուստ, յարքունուստ հրամանէ. | արքունիքէն, միրիէն, արքունի հրամանէն: |

Երբեմն առանց նախդիրի ալ. Այլուստ կողմանէ, ուրիշ տեղէն. մօտուստ, մօտէն:

57. Անձայն յ, կամ որ նոյն է՝ պարզ ձայնաւոր վերջացած, ու ձայնաւորով մը ը, ը վերջացած բառերը յոգնակի սեռական կ'ըլլան երբեմն մինակ յ առնելով ծայրը. ու անկից բացառական ալ կ'ըլլան բառ օրինի. ինչպէս,

| | |
|---|---|
| Արեւելեայ, արեւելեայք, արեւելեայց կամ արեւելեաց, արեւելեօք.(եօթներորդ հոլովման պէս). | արեւելցի: |
| Դուզնաքեայ, դուզնաքեայք, դուզնաքեայց կամ դուզնաքեաց, դուզնաքեօք. | դզուկ, քիչ, չնչին: |
| Հայաստանեայ, հայաստանեայք, հայաստանեայց կամ հայաստանեաց, հայաստանեօք. | հայաստանցի: |
| Հայկազնեայ, հայկազնեայք, հայկազնեայց կամ հայկազնեաց, հայկազնեօք. | Հայկայ ազգէն, հայ: |
| Առհաւատչեայ, առհաւատչեայք, առհաւատչեայց կամ առհաւատչեաց, առհաւատչեօք. | գրաւ, քէյ: |
| Աղախնեայք, աղախնեայց կամ աղախնեաց, աղախնեօք. Աղախնայք, աղախնայց կամ աղախնաց, աղախնօք. | աղախիններ, հալայըքներ: |
| Կանայք, կանայց կամ կանանց. | կիներ: |
| Սարոյ, սարոյք, սարոյց. | չամ ծառեր: |
| Արտոյտ, արտոյտք, արտոյտց. | դինք, կարծր: |

| | |
|---|---|
| Դիպուածոյ, դիպուածոյք, դիպուածոյց. | Տիպուածական: |
| Գրեան, գրեանք, գրեանց. | Գրքէր: |
| Յաւիտեան, յաւիտեանք, յաւիտեանց. | Էրկան ատէն, շատ տար: |
| Վեցթեւեան, վեցթեւեանք, վեցթեւեանց. | Վէց թեւ ունեցող: |
| Արամեան, արամեանք, արամեանց. | Արամայ ազգէն, Հայ: |
| Աղախին, աղախնանք, աղախնանց. | աղախին, հալայըք: |
| Ամենայն, ամենայնք, ամենայնց. | ամէն: |
| Դառն, դառինք, դառինց. | Լեղի: |
| Արքուն, արքունք, արքունց. | Խարիճ հասաք: |
| Պատկեր, պատկերք, պատկերց. | պատկէր: |
| Ջուր, ջուրք, ջուրց. | Ջուր: |
| Հանուր, հանուրք, հանուրց. | ամէն, բոլոր: |
| Քոյր, քորք, քորց. | քոյր: |

58. Երբեմն ալ սեռականի մը նման վերջ ունեցող ուղղական ա-նունները՝ ան հոլովին սեռականը կամ տրականը կը սեպուին, ու ըստ այնմ ուրիշ հոլովն ալ կը շինուի. ինչպէս, Հրաշեայ, սարբեստանեայ, չորեքօրեայ. Սատեր, սկտեղ կամ սկուտեղ. Շամնի, Սեմէի, Եւլոմի, սարի, Նամականի, ամէհի, յոռի, ամարանի. Բրգիշտ, այժմու, հինաւուրց, որ ուղղական են, իւրաքանչիւր իրեն նման սեռականի կամ տրականի տեղ ալ առնուած կան գրոց մէջ։ Եւ անկէց ան վերջին նմանութեամբը գործիական շինուած է. Եղջերեայ, եղջերեաւ. Եղե-նեայ, եղենեաւ. Սկտեղ, սկտեղբ. Նամականի, Նամականիւ. — Բացառական, Շափիղայ, 'ի շափիղայ. Երեկորեայ, յերեկորեայ. — Յոգնակի սեռական, Ամէհի, ամէհից. Յոռի, յոռից. Ամարանի, ամարանից. Այժմու, այժմուց։ Վերի գրած (57) եայ, եայք, եան վերջացած բառերուն յոգնակի հոլովները՝ աս կերպիս ալ նման են, ասոր յոգնակիներն ալ՝ անոր։

59. Յոգնակի ուղղականը երբեմն սեռլ կ'ըլլայ՝ մանաւանդ անեզա-կան անուններունը. ինչպէս, Ոչ գոյր ընդ նոսա աստուածս օտարս. փոխանակ ըսելու՝ աստուածք օտարք. Չկար անոնց հետ օտար աստուածներ: Օրէնս արդարութեան բանութիւն մեր եղիցի. փոխանակ ըսելու՝ օրէնք. արդարութեան օրէնք՝ մեր բաժինը ըլլայ: Ոչ է ինձ պէտս և ոչինչ. փոխանակ ըսելու՝ պէտք. Բան մը պէտք չէ ինծի: Տիեզերս լցաւ. փոխա-նակ ըսելու՝ տիեզերք լցաւ. Բոլոր աշխարհքս լեցուեցաւ:

60. Հայցականն ու ուրիշ նախդրիւ հոլովներն ալ երբեմն քեռլ կ'ըլլան. ինչպէս, Զլեզուք, զհրեշտակք, զիրքն, զկեանքն, զցիրքն. փոխանակ ըսելու՝ զլեզուս, զհրեշտակս, զիրսն, զկեանսն, զցիրսն: Հեղին արտասուք. Ետուն նմա խրատունք. փոխանակ ըսելու՝ հեղին արտասուս, ետուն խրատունս: Ի գժոխքն, 'ի զօրքն, յարքունիքն, փոխանակ ըսելու՝ 'ի գժոխսն, 'ի զօրսն, յարքունիսն. Ասանկ գիտցիր ամէն տեսակ բառի համար:

61. Յոգնակի ուղղական ու անկէց հայցական ալ կ'ըլլայ երբեմն աս յոգնակի վերջերովս ալ.

այք, եայք · աղախին, աղախնայք կամ աղախնեայք · աղախիններ ։
անք · նու, նուանք · հարսներ · աղախին, աղախնանք · աղախիններ ։
իք, ինք · պարոնք, պարոնայք · պարոններ · սերմանք, սերմանիք · հունտեր ·
այծ, այծիք · այծեր · դաշտ, դաշտիք · դաշտեր, դաշտավայրներ ։
այք · գահ, գահոյք · աթոռներ · բարք, բարոյք · բարքեր ։
ունք · հողմ, հողմունք · հովեր · ճրագ, ճրագունք · մոմեր · անուշ, անուշունք · անոյշներ ։

62 · Այլև չորրը այք կամ եայք, անք, իք, այք վերջահոլով ալ ունին, այց կամ եայց, անց, եաց, այից կամ այց ։ Իսկ ունք չունի սովորաբար · զի չըլլար հողմունք, հողմանց · բայց 'ի քանի մը բառէ · ինչպէս, պատիւ, պատուունք, պատուանց · ծիրան, ծիրանունք, ծիրանանց, ծիրանամբք · կոչունք, կոչնոց ։

63 · Երբեմն ալ յոգնակի ուղղական ու անկից հայցական կ'ըլլայ սա եզակի վերջերովս, որ սովորաբար՝ եզակի կը հոլովին ամէն հոլով ալ ·
ան · էշ, իշան · էշեր · ձի, ձիան · ձիեր ։
անի · ուսադ, ուսադանի · ձագեր · նամակ, նամականի · նամակներ · կանայք, կանանի · կիներ ։
եան · գիրք, գրեան · գրքեր · խոզ, խոզեան · խոզեր · էշ, իշեան · էշեր ։
եար, եր · էշ, իշեար · էշեր · վանք, վանեար կամ վաներ · վանքեր · բան, բանեար կամ բաներ · բաներ, խօսքեր ։
կան · զօր, զօրական · զօրք, զինուորներ · բազմական · նստողներ ։
նեար · բարձիկ, բարձկնեար · պզտիկ բարձեր, բարձիկներ · քաղաքիկ, քաղաքիկնեար · պզտիկ քաղաքներ, քաղաքիկներ ։
որայ, որեայ · կալ, կալորայ · կալեր, հարմաններ · արտ, արտորայ կամ արտորեայ · արտեր · վանք, վանորայ կամ վանորեայ, վանորեայ · վանքեր · գեղ, գեղորեայք կամ գեղորէք · գիւղեր ։
ստան · անդ, անդաստան · արտեր · տանիք, տանեստան · տանիքներ ։
տի, ոտի · մանուկ, մանկտի · տղաքներ · ոսկր, ոսկրտի · ոսկորներ ։

64 · Այս եզակիներս երբեմն նորէն յոգնակի կ'ըլլան քեով ու սեով, ոմանք վերջահոլովով ալ · ինչպէս, գրեանք, զգրեանս, գրենաց, գրենոք (57) · արտորայք կամ արտորեայք · զարտորայս, արտորայից կամ արտորէից · անդաստանք, յանդաստանս, անդաստանաց · զմանկտիս, մանկտւոյ, մանկտւովք կամ մանկտեամբք ։

65 · Շատ անգամ ալ յոգնակիի տեղ նոյն անունը կը կրկնուի · որ շատ տեղ ալ կը նշանակէ ամէն մէկ, ամէն, հեր · ինչպէս, ազգ ազգ, ազգեր · այր այր, տուն տուն, ամէն մէկ մարդ, ամէն մէկ մարդու · քաղաքի քաղաքի, ամէն քաղքի · աւուր աւուր, ամէն օրուան · զբարի բարին, աղէկները · զչարի չարին, գէշերը · զծանր ծանր, ծանրերը · ազգք ազգք, ազգեր, հեր ազգեր · լեզուք լեզուք, լեզուներ, հեր լեզուներ · ազգաց ազգաց, քաղաքաց քաղաքաց, հեր ազգերու, հեր քաղքըներու · 'ի տեղեաց տեղեաց, հեր տեղերէ · 'ի տունս տունս, հեր տներու, հեր տներ կամ հեր տներու մէջ ։

66 · Իսկ ածականն որ յայտնի գոյականի քով կրկնուի նէ, անոր

շատը կամ սաստիկը կը նշանակէ. ինչպէս, ծանր ծանր երգմանքը, ըսել է չօք կամ խէօք ծօնր. մանր մանր մասունք, չօք կամ խէօք մօնր. ընտիր ընտիր երկիրն, խէօք ընտէր. բազում բազում ինչ իրս, խէօք չօք. նման նման, խէօք նմօն:

Նմանկ ալ ձեւին յոգնակիին տեղը Մեծամեծ կ՚ըսուի սովորաբար. մեծամեծ դատաստանօք, քաղաքք մեծամեծք. — որ թէ որ եզակի հետ ըսուի նէ, խիստ մեծ կը նշանակէ. մեծամեծ տագնապ, մեծամեծ մարտն:

67. Եզակի յատուկ անունները յոգնակի չունին ըսինք սովորաբար (20). բայց երբեմն նոյն անունը ունեցողները կամ նմանները ըսել պէտք ըլլայ նէ, յոգնակի կ՚ըլլան քէով, սէով, կամ էան վերջով (63), ու կը հոլովին ալ. Տիգրանք, Քրիստոսք, Յուդայք, Յուդայից. Սիմոնք, Սիմոնից. Անտոնք, Անտոնից. Անտիոքոսք կամ Անտիոքք, Անտիոքօք. երկուս Քրիստոսս: — Տիտանեանք, տիտանեանց, տիտաններ. Անտիոքեանք, անտիոքոսներ. Գրիգորեանք, գրիգորներ:

68. Յոգնակի ք, ս կը դրուի երբեմն մէկ բառին սեռականին, տրականին, բացառականին ու նախդրիւ հոլովներուն վրայ ալ. ու կը նշանակէ անոնք որ անոր են, անով են, անկէ են, և այլն. ու նորէն ալ կը հոլովին երբեմն. ինչպէս, Քրիստոսիք, զքրիստոսիսն. Աստուծոյք, աստուծոյց, զաստուծոյսն. Մարմնոյք, զմարմնոյսն. Երկրիք, զերկրիսն. Սիրելեաց, սիրելեացքն: — Մարմնովքն, զմարմնովսն: — Ի յարենէք, ՚ի յարենէց. Յերկրէքս, յերկրէցս. Առ ՚ի յերկրէք, զառ ՚ի յերկրէսն: — Յերկրիքս. Առ ՚ի ներքոյք, զառ ՚ի ներքոյս. Առ ՚ի տորեք, զառ ՚ի տորեսն. Ընդ մէջքն, զընդ մէջսն. Ըստ մասինքն, ըստ մասինցն (57). Մի ըստ միոջէքն, մի ըստ միոջէցն, զմի ըստ միոջէսն:

Նմանկ գերանուններուն ալ կ՚ըլլայ, ուրիշ անսովոր հոլովներով ալ: Հոս գրածներուն մէջն ալ գխաէ բացառականին անսովոր հոլովումը, ՚ի յարէնէց, յէրկրէց, ըստ միօջէց, որ ալ ուրիշ տեղ չկայ, ու կը նմանի 57 թուին:

69. Մէկ հոլովման անունները երբեմն ուրիշ հոլովման պէս ալ կը հոլովին, մանաւանդ երրորդ, չորրորդ, հինգերորդ ու վեցերորդ հոլովումներուն մէկմէկու պէս. ամէն հոլովին պէս ալ չէ նէ, մէկ քանիին պէս: Աւջևի օրինակներէդ՝ քիչէն շատը հասկցիր.

Ծաղիկ, ծաղկան. ծաղկի, ծաղկաւ. ծաղկոյ, ծաղկով. ծօղիկ:
Ընկէւն, ընկեան. ընկիւնի, յընկիւնէ. ընկիւն, ֆընտըք:
Ժողովուրդ, ժողովրդեան. ժողովրդոյ, ժողովրդով.
ժողովրդի, ժողովրդիւ. ժողովուրդ:
Խորհուրդ, խորհրդոյ կամ խորհրդեան. խորհրդի,
խորհրդիւ. խորհուրդ:
Սանձ, սանձի, սանձիւ, սանձից. սանձաւ, սանձաց,
սանձուց. սանջ, կէմ:
Լուսադոյն, լուսադունի, լուսադունիւ, լուսադունից.
լուսադունաւ, լուսադունաց. ադէմ, ադ ադէմ:

Թուղթ, թղթոյ · թղթի, 'ի թղթէ · — Թուղթ :

Թև, թևոյ · թևի, 'ի թևէ · — Թեւ :

Չափ, չափոյ, չափոց · չափու, չափուց · չափի, չա-
փաւ, չափից · — Չափ :

Զգեստ, զգեստու, զգեստուց, զգեստով · զգեստի,
զգեստիւ, զգեստից, զգեստիւք · — Հագուստ, լաթ :

Զէն, զինու, զինուց, զինուք · զինով, զինաւ, զինից, զինօք · — Զէնք, սիլահ :

Ասր, ասու · ասրու, ասրոյ, ասրով, ասերբ · — Բուրդ :

Մեղր, մեղու · մեղեր, մեղերբ · մեղրոյ, մեղրով, մեղրի · — Մեղր, պալ :

Նաւ, նաւի, նաւաւ, նաւաց · նաւով, նաւու, նաւուց · — Նաւ :

Վանք, վանաց · վանից, վանիւք, վանուց · — Վանք, բնակարան :

Ամիս, ամսոյ · ամսեան · — Ամիս :

Բաժին, բաժնի, բաժնից · բաժեան, բաժեանց · — Մաս, բաժին :

Ժամանակ, ժամանակի · ժամանակեան · — Ատեն :

Բազուկ, բազկի, բազկաւ · բազկամբ · — Թեւ, բազուկ :

Կող, կողի, կողիւ, կողիւք · կողամբք · — Կող :

Գօտի, գօտւոյ, գօտւով կամ գօտեաւ · գօտեամբ · — Գօտի :

Բլուր, բլրոյ կամ բլրի · բլեր, բլերբ · — Բլուր, պզտիկ լեռ :

Ձեռն, ձեռին, ձեռամբ · ձեռք, ձեռաց, ձեռօք ·
ձերբ կամ ձեռք, ձեռինք, ձեռամբք : — Ձեռք :

Յեսան, յեսանի · յեսանայ · — Սրելու քար :

Շեփոր, շեփորի · շեփորայ · — Փող, զուռնայ :

Քրմանոյշ, քրմանուշի · քրմանուշայ · — Քրմ կին, կին քուրմ ·

Աստուածուհի, աստուածուհւոյ, աստուածուհեայ · — Կնիկ աստուած :

70 · Ոմանց ալ եզակին մէկ կերպ, յոգնակին մէկալ կերպ կ'ըլլայ սովորաբար · ինչպէս,

Ժողովուրդ, ժողովրդեան · — ժողովուրդք, ժողո-
վրդոց · — Ժողովուրդ :

Խորհուրդ, խորհրդոյ կ̃ խորհրդեան · — խորհուրդք,
խորհրդոց · — Խորհուրդ :

Ծնունդ, ծննդեան կ̃ ծննդոյ · — ծնունդք, ծննդոց · — Ծնունդ, ծնանիլը :

Շնորհ, շնորհի, շնորհիւ · — շնորհք, շնորհաց, շնորհօք · — Շնորք :

Երկին, երկնի, երկնաւ · — երկինք, երկնից, երկնիւք · — Երկինք :

Քար, քարի, քարիւ կամ քարամբ · — քարինք, քա-
րանց, քարամբք կամ քարիւք · — Քար :

Պառաւ, պառաւոյ · — պառաւունք, պառաւանց · — Պառաւ :

Աղախին, աղախնոյ կամ աղախնի, աղախնով, աղախ-
նաւ, աղախնիւ · աղախնայք, և այլն (57.61) · քիչ
տեղ, աղախինք, զաղախինս · — Աղախին, հալայըկ :

71 · Նոյն բառը ուրիշ ուրիշ բան որ նշանակէ նէ, հոլովը կը փոխուի սովորաբար · ինչպէս,

Այր · մաղարա · այրի, այրիւ · Այր · էրիկ մարդ · առն, արամբ :

Մայր · չամ ծառ · մայրի, մայրիւ · Մայր · մայր · մօր, մարբ :

| | |
|---|---|
| Գեղ․ գիւղ․ գեղի, գեղիւ․ | Գեղ․ գեղեցկութիւն․ գեղոյ, գեղով։ |
| Փող․ պօղազ․ փողի, փողիւ․ | Փող․ փարա, դրամ․ փողոյ, փողով։ |
| Օդ․ ոտքի աման․ օդի, օդից․ | Օդ․ օդ, հաւայ․ օդոյ, օդոց։ |
| Որթ․ ասմա․ որթոյ, որթով․ | Որթ․ հորթ, տաւար․ որթու, որթուց։ |

72․ Անուն մը մասնիկի մը հետ միացած կամ ուրիշ անուան հետ բարդած որ ըլլայ նէ, անեզականը եզական ալ կ՚ըլլայ, վերջահոլով չունեցողը վերջահոլով ալ կ՚առնէ, ու սովորաբար հոլովը կը փոխէ, մանաւանդ չորրորդ ու հինգերորդ հոլովմանց բառերը․ ինչպէս,

| | |
|---|---|
| Միտք, մտաց․ | Անմիտ, անմտի, անմտից կամ անմտաց։ |
| Փառք, փառաց․ | Վեհափառ, վեհափառի, վեհափառից։ |
| Յոյս, յուսոյ․ | Անյոյս, անյուսի, անյոյսք, անյուսից, անյուսաց։ |
| Սէր, սիրոյ․ | Բարեսէր, բարեսիրի․ բարեսէրք, բարեսիրաց։ |
| Աստուած, աստուծոյ, աստուծոց․ | Անաստուած, անաստուածի, անաստուածից։ |
| Գործ, գործոյ, գործոց․ | Այգեգործ, այգեգործի, այգեգործաց։ |
| Զէն, զինու, զինուց․ | Սպառազէն, սպառազինի, սպառազինաց։ |
| Խրատ, խրատու, խրատուց․ | Անխրատ, անխրատի, անխրատից։ |
| Կիրք, կրից, կրիւք․ | Զինակիր, զինակրի, զինակրաց, զինակրօք։ |
| Սիրտ, սրտի, սրտից․ | Խստասիրտ, խստասրտի, խստասրտաց։ |

## ՄԻՋԱԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔԸ

73․ Միջակ ու անորոշ կ՚ըսուին քանի մը գոյական ու ածական անուններ, որ որոշ բան մը կամ ինչութիւն մը չեն ցուցըներ, ու հասարակ անուան ու դերանուան մէջ տեղը կը սեպուին։ Ասոնցմէ մէկ քանին ալ զատ հոլովում ունի, որ գիտնալու է։

74․ Մի․ միոյ կամ միոջ, միում, միով,
՚ի միոյ կամ ՚ի միոջէ, զմի․ — Մէկ։
Երկու, երկուք․ երկուց, երկուք, զերկուս․ — Երկու, երկուք։
Երեք․ երից, երիւք, զերիս․ — Երեք։
Չորք․ չորից, չորիւք, զչորս․ — Չորս։
Հինգ․ հնգի, հնգիւ, հինգք, հնգից,
հնգիւք․ հնգաւ, հնգայ, հնգօք․ — Հինգ։
Վեց․ վեցի, վեցիւ․ վեցք, վեցից, վեցիւք․ — Վեց։

Եօթն[1]. եօթան, եօթեան, եօթին, եօ-
թանք, եօթեանք, եօթունք. կամ
եօթնի, եօթնից. — Եօթը։

Ութ. ութի, ութիւ. ութք, ութից, ու-
թիւք. — Ութը։

Ինն. ըննի, ըննիւ. ինունք կամ իննունք,
ինունց, ինանց, ինամբք, իննուք. կամ
ըննից, ըննիւք. — Ինը։

Տասն. տասին, տասամբ. տասունք, տա-
սանց, տասամբք. կմ̃ տասնից, տասնիւք. — Տասը։

Մետասան, երկոտասան, և այլն. մետա-
սանի, մետասանից. — Տասնըմէկ, և այլն։

Եօթն և տասն, եօթն և տասին. եօթն
և տասունք, եօթն և տասանց, եօթն
և տասնից կամ եօթանց և տասանց. — Տասնըեօթը։

Եօթնուտասն, եօթնուտասին. եօթնու-
տասանք, եօթնուտասանից, եօթնու-
տասնից. — Տասնըեօթը։

Քսան, երեսուն, և այլն. քսանի, քսա-
նից. երեսնի, երեսնից. — Քսան, Երեսուն, և այլն։

Քսան և մի, քսան և երկու. քսան և
միոյ, քսան և երկուց. կամ քսանից և
միոյ, քսանից և երկուց. — Քսանըմէկ, և այլն։

Հարիւր, երկու հարիւր կամ երկերիւր,
երեք հարիւր կամ երեքարիւր, չորեք
հարիւր կմ̃ չորեքարիւր, հինգ հարիւր,
և այլն. հարիւրոյ, հարիւրոց. հարիւ-
րի, հարիւրից. երկու հարիւրոյ կմ̃ եր-
կուց հարիւրոց, երեք հարիւրոյ կամ
երից հարիւրոց, չորեք հարիւրոյ կամ
չորից հարիւրոց. հինգ հարիւրոյ, հինգ

---

1 Հիներուն գրուածքովը Եւթն, Իւթան (18. ծան.) կամ Եւթան. երբեմն ալ Եաւթն։

հարիւրոց է՛ հնգից հարիւրոց, և այլն. հարուր, երկու հարուր, և այլն։

կամ Հարիւրք երկու, հարիւրոց երկուց, և այլն. երկու հարուր, և այլն։

Հարիւր և մի, հարիւր և երկու, հարիւր և տասն կամ հարիւր տասն. հարիւր և միոյ, հարիւր և երկուց, հարիւր և տասանց, հարիւր տասանց. կամ հարիւրոց և երկուց, հարիւրոց և տասանց. հարուր մէկ, ևն։

Հազար, երկու հազար, և այլն. հազարի, հազարաւ, հազարաց. հազարիւ, հազարից. երկու հազարի կամ երկուց հազարաց. հազար, երկու հազար, և այլն։

կամ Հազարք երկու, հազարաց երկուց, և այլն. երկու հազար, և այլն։

Հազար և մի, հազար և երկու, հազար և տասն, հազար և եօթն և տասն կամ հազար եօթն և տասն. հազար և միոյ, հազար և երկուց, հազար և տասանց. կամ հազարաց և երկուց, հազարաց և տասանց. հազար մէկ, ևն։

Բիւր, որ Տասն հազար ալ կ՚ըսուի. բիւրու, բիւրուց. բիւրոյ, բիւրոց. բիւրի, բիւրաւ, բիւրիւ. բեւր, տասը հազար։

Հարիւր բիւր, հազար հազարք կամ հազարք հազարաց. մէկ միլիօն։

Բիւր բիւրք կամ բիւրք բիւրուց. հարուր միլիօն։

75. Երկոքեան կամ երկոքին, երեքեան կամ երեքին, չորեքեան կամ չորեքին, և այլն. երկուքն ալ, երկուքը, երեքն ալ, երեքը, չորսն ալ, չորսը, ևն. ասանկ կը հոլովին.

## 76. Յոգնակի

Ուղ. Երկոքեան, երկոքին. երկուքն ալ, երկուքը:
Սեռ. Երկոցուն, երկոցունց. երկուքին ալ, երկուքին:
Տր. Երկոցուն, երկոցունց,
յերկոսեան, յերկոսին. երկուքին ալ, երկուքին:
Գործ. Երկոքումբ, երկոքումբք. երկուքովն ալ, երկուքովը:
Բաց. յԵրկոցունց. երկուքէն ալ, երկուքէն:
Հայց. զԵրկոսեան, զերկոսին. երկուքն ալ, երկուքը:

77. Նման կը հոլովին

Ամենեքեան, ամենեքին, ամենեցուն. ամէնն ալ, ամէնը:
Բոլորեքեան, բոլորեքին, բոլորեցուն. բոլորն ալ, բոլորը:

78. Բացառականը գոյականի հետ կ'ըսուի եւ Յերկոցունց կողմանց. 'ի ձէնջ երկոցուն. Յայլոցն ամե-նեցուն. 'ի մէնջ ամենեցուն:

79. Երկաքանչիւր, երկուքն ալ. կը հոլովի ըստ 31. երկաքանչիւրոյ, երկաքանչիւրում, երկաքանչիւրով, յեր-կաքանչիւրոյ կամ յերկաքանչիւրմէ, զերկաքանչիւր. — Երկաքանչիւրք, երկաքանչիւրոց կամ երկաքանչիւրց (57), երկաքանչիւրովք, յերկաքանչիւրոց, զերկաքան-չիւրս:

80. Հարցական անյօդնական, գոյական ու ածական.

Ուղ. Ո՞ ի, զինչ, ինչ. ինչ բան, ինչ, ինչ որ, որ.
Սեռ. Ո՞յր, եր. ինչ բանի, ինչու.
Տր. Ո՞ւմ, հիմ, էրում, երում.
յինչ. ինչ բանի, ինչու.
Գործ. Իւ. ինչ բանով, ինչով, որով.
Բաց. առ Իմէ. ինչ բանէ, ինչէ.
Հայց. Ո՞ ի, զինչ, ինչ. ինչ բան, ինչ, ինչ որ, որ:

81. Ասի առանց հարցմունքի ալ կ'ըսուի, հարցմունքով ալ: Տրա-կանը հիմ, էրում, ու բացառականը առ իմէ, ինչո՞, աւելի հարցական

կը բանին [1]։ Սովորաբար գոյական է. ինչ, յինչ ածական ալ կը բանին շատ, մէկալ հոլովները խիստ քիչ. ու իրաց կ'ըսուին աւելի սովորաբար։

82. Նշակի անյոգնական, գոյական ու ածական.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Ոմն. | Ոք. | Ինչ. | բան մը, էք մը, մը, մըն, քանի մը. |
| Սեռ. | | Ուրուք. | | բանի մը, մը. |
| Տր. | Ումեմն. | Ումեք. յ | Ինչ. | բանի մը, մը. |
| Գործ. | | Ուիք. | | բանով մը, մը. |
| Բաց. | յՈւմեմնէ. | յՈւմեքէ. | | բանէ մը, մը. |
| Հայց. | Ոմն. | | Ինչ. | բան մը, մը։ |

83. Իք ուղղականը չգործածուիր։ Իմն բնաւ նախդիր չառներ, ոչ զ, ոչ յ. մինակ ալ չբանիր հայցական, հապա ածականի կամ գոյականի հետ. Այլ իմն աղաղակել. Մի իմն շնորհել. Մեծ իմն անուն փառաց ժառանգել։ — Ինչ կ'առնէ միայն յ նախդիր. ամենևին զ չառներ։ — Ածական՝ իրաց կ'ըսուին շատ, անձանց քիչ։

84. Մերթ ինչը աս ձևին հետ ալ կը բանի՝ հարցական ու առանց հարցականի, ու երկուքն ալ մէյտեղ կը հոլովին.

Ինչ ինչ, եր իրիք, իմ իմիք, իւ իւիք, — ինչ բան, որ
զինչ ինչ, յինչ ինչ. — բան։

85. Ոմն, ինչ կրկնութեամբ կրկնած ալ կը բանին, ու կը հոլովին ասանկ.

Ոմն իմն } իրիք իրիք, իմիք իմիք, իւիք — քանի մը բան,
Ինչ ինչ } իւիք, իմն իմն, ինչ ինչ. — քանի մը։

Իմն իմն հայցական ալ կը բանի. Իմն իմն խոստանամ տալ։

86. Ոչ ինչ, ոչ իրիք, ոչ իմիք, ոչ յիմեքէ, ոչ ինչ, ոչ յինչ. ոչինչ, հիչ բան մը։ Աստ նախդրիւ հոլովները

---

1 Ասոր զ նախդրով բացառականը ըլլալու է զմէ, որպէս Թէ զիմէ. որ սովորաբար հարցական կը բանի զմէ, ու կը նշանակէ ինչու համար, ինչ բանի համար։

չըսուիր [illegible], [illegible]՝, հապա ընտր տեսար [illegible], [illegible] [illegible]։

### 87. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ո, ով. | [illegible] |
| Սեռ. | Ոյր. | [illegible] |
| Տրա. | Ում, յո, յով. | [illegible] |
| Կոչ. | — | — — |
| Բաց. | յՈւմէ, յումմէ. | [illegible] |
| Գործ. | զՈ, զով. | [illegible] |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ովք. | [illegible] |
| Սեռ. | Ոյց. | [illegible] |
| Տրա. | Ոյց, յոյս. | [illegible] |
| Կոչ. | — | — — |
| Բաց. | յՈյց. | [illegible] |
| Գործ. | զՈյս. | [illegible] |

88. Գործիականին տեղը կ՚ըսուի խ, ոլով, ոլովք։ — Սովորաբար գոյական է. հարցական ու առանց հարցականի ալ շատ կը բանի. ինչպէս,

Ով զայս արարեր, քերովբէինմանի. [illegible]

Ամենայն տուն կազմի՝ յումէ կազմի. [illegible]

Զի զով սիրէ ոք՝ նմին և ողորմի. [illegible]

Քիչ տեղ ածական ալ կը բանի։

89. Եզակի ուղղականը յոգնակի ալ կընշանակէ երբեմն. Ո՞վ են ժողովուրդս այս. ո՞վ են սոքա. ո՞վ էաք. ո՞վ էիք. ես և դու ո՞վ լինիմք. ո՛վ և ո՛վ լինին՝ որ երթայցեն. ո՛ լինի. ո՛ այնոքիկ լինին։

90. Նախդրիւ տրականը յո, յով. [illegible] ալ ըսել է. Յո՞վ երթաս. [illegible] Գնացին յո և գնացին. [illegible]։

91. Որ, [illegible]. հոլովման պէս կը հոլովի,

1 Խոկ Ոչինչ, ոչընչի, ոչինչք, ոչընչից, ուրիշ բառ է գոյական ու ածական, ու ըսել է [illegible], որ ըման սմէն հոլովը ունի բառ 29, ուսուի ոչինչ, ոչինչ ալ կ՚ըլլայ։ Շինած է հասարակ գոյական անունէն ինչ. ընչի, ընչիւ, ինչք, ընչից, որ [illegible] ըսել է։

Որ, որոյ, որում, որով, յորմէ կամ յորոյ, զոր, յոր.
Որք, որոց, որոց, որովք, յորոց, զորս, յորս։

Աս որս ալ առանց հարցընելու ալ կը բանի՝ հարցընելով ալ, գոյական ու ածական։

92. Կրկնուած՝ ոմանք ալ ըսել է. ինչպէս,
Ժողովեցին որ շատ և որ սակաւ. Ժողվեցին որը շատ որը քիչ, ոմանք շատ ոմանք քիչ։
Որ ՚ի ներքս որ արտաքս թօթափէին. որը ներս որը դուրս կը թափթփէին։
Կոտորել զորս ՚ի դաշտս զորս ՚ի լերինս. Ջարդել որը դաշտերը որը լեռները։

93. Որ ինչ, որ զինչ, ինչ որ, զինչ որ. ինչ որ, ինչ բան որ, որ բան որ, մը։
Առջինը միայն կը հոլովի, ու եզակի միայն.
Որոյ իրիք կամ ոյր իրիք, որում իմիք կմ ում իմիք, որով իւիք, յորմէ իմեքէ, որ ինչ, ինչ որ կամ ինչ զոր, զոր ինչ, որ զինչ, յոր ինչ։

Սովորաբար գոյական է ու առանց հարցընելու կը բանի. երբեմն ածական կամ հարցական։

## 94. Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Ոմն. | Ոք. | Մէկը, մէկ մը, մը։ |
| Սեռ. | Ուրումն, որումն. | Ուրուք. | Մէկու մը, մը. |
| Տր. | Ումեմն, յումն. | Ումեք, յոք. | Մէկու մը, մը. |
| Գործ. | Ոմամբ. | — | Մէկով մը, մը. |
| Բաց. | յՈւմեմնէ. | յՈւմեքէ. | Մէկէ մը, մը. |
| Հայց. | զՈմն. | զՈք. | Մէկը, մէկ մը, մը. |

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ոմանք, ոք. | Մէկ քանի. |
| Սեռ. | Ոմանց. | Մէկ քանիի. |
| Տր. | Ոմանց, յոմանս. | Մէկ քանիի. |
| Գործ. | Ոմամբք. | Մէկ քանիով. |
| Բաց. | յՈմանց. | Մէկ քանիէ. |
| Հայց. | զՈմանս. | Մէկ քանին։ |

95. Գոյական է և ածական. մարդու ալ կ՚ըսուի, իրաց ալ. Այր ոմն, այր ոք, կանայք ոմանք. լերին ուրուք, կնօք ոմամբք։

96. Ոչ զատ յոգնական չունենալուն՝ յոգնակի ալ կը բանի տեղ տեղ. Ոք պիտանիք, ոք ալք անօրէնք, գուշակքեալք ոք, երկու ոք միաբանք. զերկուս ոք, զհպարտս ոք. բազմաց ումեք։

97. Հոլովները կրկնելով ալ կ՚ըսուի,
Ուրուք ուրուք, ումեք ումեք, ոմանք ոմանք, ոմանց ոմանց, զոմանս ոմանս. պէյ ֆանէէն, պէյ ֆանէն։

98. Ո՞վ մին ու մյուսին հետ ալ կը բանի, ու երկուքն ալ կը հոլովին.
Ո ոք, ով ոք, ոյր ուրուք, ում ումեք, յումէ կամ յումմէ ումեքէ, զո ոք, զով ոք.
Ո ոք կամ ոյք ոմանք, ոյց ոմանց, յոյց ոմանց, զոյս ոմանս.
ոՀ, ոՀ որ, որը, որ։

99. Որ ոք, որոյ ուրուք, որում ումեք, որով ոմամբ, յորմէ ումեքէ, զոր ոք.
Որ ոք, որոց ոմանց, որովք ոմամբք, յորոց ոմանց, զորս ոմանս. որն որ, ոՀ որ։

100. Ոչ ոք, ոչ ուրուք, ոչ ումեք, ոչ յումեքէ, ոչ զոք, ոչ յոք. հէչ պէր, պէր Է. հէչ պէյ։ — Անունին չըսուիր ըՀ ոփ, յոՀ ոփ. բայց ըսած կայ յոՀ ոՀպէփէ։ — Սովորաբար գոյական է, երբեմն ածական. Ոչ ոք ծառայ։

101. Մ՚իմեանց, պէյ պէյոն. եզակի չունի և ոչ ուղղական. կը հոլովի ըստ 24.
Մ՚իմեանց, ՚ի միմեանս, միմեամբք, ՚ի միմեանց, զմիմեանս. պէյպէյոն, պէյպէյոՀ, և այլն։

102. Իրերաց, իրարու. եզակի չունի և ոչ ուղղական. կը հոլովի ըստ 19 կամ 39.
Իրերաց, յիրեարս կամ յիրեար, յիրար. իրերօք, յիրերաց, զիրեարս կամ զիրեար, զիրար. իրարու, իրարոՀ իրարմէ, իրար։

103. Մի, մը. ածական է. Նան մի, բան մը. Այր մի,

Տարդ ձը․ առն միջ կամ միում, Տարդա ձը․ կը հոլովի համա-րանքի Մէկն պէս (74) ըստ 31․

Մի, միոյ կամ միոջ, միում, միով, 'ի միոյ կամ 'ի միջէ․ ձը։

104․ Մի մի, Մէն մի․ ադըն ֆէը, ֆէյֆէ․ առջինը միայն կը հոլովի երկուքն ալ․

Մի մի, միոյ միոյ, միում միում, միով միով, 'ի միոյ միոյ կամ 'ի միջէ միջէ, զմի մի։

105․ Միւս, ֆէկալ․ կը հոլովի ըստ 31․

Միւս, միւսոյ, միւսում, միւսով, 'ի միւսոյ կամ 'ի միւ-սմէ, զմիւս․

Միւսք (որ քիչ կը բանի), միւսոց, միւսովք, 'ի միւսոց։

106․ Այլ, օտէր, ֆէկալ․ նոյնպէս կը հոլովի․

Այլ, այլոյ, այլում, յայլ, այլով, յայլոյ կամ յայլմէ, զայլ․

Այլք, այլոց, այլոց, յայլս, այլովք, յայլոց, զայլս։

107․ Քանի, քանէ․ Այսքանի, ալքանէ․ կը հոլովին ըստ 43․

Քանի, քանւոյ կամ քանոյ, քանեաց․ Այսքանի, այս-քանւոյ կամ այսքանոյ, այսքանեաց։

Իսկ Այսքան, Այսչափ, կը հոլովին ըստ 29․ այսքա-նի, այսքանիւ․ այսչափի, այսչափիւ։

108․ Իւրաքանչիւր, Անձնիւր կամ անձնիւր․ ադըն ֆէկա, ադըն ֆէկտ, ադըն ֆէկը․ ադըն ֆէկէրնէա, ադըն ֆէկէրնէտ, ադըն ֆէկէրնէն․ կը հոլովին ըստ 31․

Իւրաքանչիւր, իւրաքանչիւրոյ, իւրաքանչիւրում, իւրա-քանչիւրով, յիւրաքանչիւրոյ կամ յիւրաքանչիւրմէ, զիւ-րաքանչիւր․

Իւրաքանչիւրք, իւրաքանչիւրոց կամ իւրաքանչիւրց (57), իւրաքանչիւրովք, յիւրաքանչիւրոց, զիւրաքանչիւրս։ — Անձնիւրոց, անձնիւրց կամ անձնէրց (27)։

109․ Բայց Իւրաքանչիւր, անձնիւր, ինչպէս Երկա-քանչիւրն ալ (79), անփոփոխ մնալով ալ սեռականի ու տրականի տեղ ալ կը բանին, եզակի և յոգնակի։ — Յոգնակի ալ են ամէն դէմք․ Մեք իւրաքանչիւր, դուք իւրաքանչիւր, նոքա իւրաքանչիւր։

110. Ամէն կամ Ամեն, Ամենայն. ամէն, ամէնը. կը հոլովին ըստ 29.

Ամէն, ամենի, ամենի կամ ամենում (34), ամենիւ, յամենէ, զամէն.

Ամէնք, ամենից, ամենիւք, յամենից։

Ամենայն, ամենայնի, ամենայնի կամ ամենայնում, ամենայնիւ, յամենայնէ, զամենայն.

Ամենայնք, ամենայնից կամ ամենայնց (57), ամենայնիւք, յամենայնից, զամենայնս։ — Բայց ամէն քիչ կը բանի. յոգնակի ամենայն* ըսելու տեղն ալ աւելի ամենեքեան կ՚ըսուի (77), երբեմն ալ ամենայն։

111. Իմն, ինչ, ոմն, ոք, աս վերջիններուն հետ ալ մէյտեղ կը բանին. Մի իմն, մի ինչ, այլ իմն, այլ ինչ, իւրաքանչիւր ինչ, ամենայն ինչ։ — Մի ոմն, մի ոք, այլ ոմն, այլ ոք, իւրաքանչիւր ոք, ամենայն ոք։

Մի, Այլ, սովորաբար իրենց ալ մէյտեղ կը հոլովին. Միոյ իրիք, միով իւիք, զմի ինչ. Այլում իմիք, այլով իւիք. Միոյ ուրումն կամ ուրուք, միում ումեք. Այլով ոմամբ, յայլմէ ումեմնէ կամ ումեքէ, զայլ ոք. այլք ոմանք. այլոց ոմանց։ — Ինչ տեղ մինակ ետքինը. Այլ իրիք. այլ իւիք. այլ ուրուք, այլ ումեք, յայլ ումեքէ. այլ ոմանք, այլ ոմանց։

Իսկ Իւրաքանչիւր, ամենայն, սովորաբար չեն հոլովիր. Իւրաքանչիւր իրիք կամ իմիք. ամենայն իրիք կամ իմիք, ամենայն իւիք, յամենայն իմեքէ կամ յամենայնէ իմեքէ, զամենայն ինչ։ Իւրաքանչիւր ուրուք կամ ումեք, յիւրաքանչիւր ումեքէ. Ամենայն ուրուք կմ ումեք, յամենայն ումեքէ։ — Զրուցիր ամենայն ոմամբ. և ոչ յոգնակի կը բանի։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԴԵՐԱՆՈՒՆ

**112.** Դերանունը բառ մըն է որ դէմք մը կամ դէմ-քերուն համեմատ կարգ մը կցցունէ. ու անունի տեղ կը գրուի չկրկնելու համար։ Որը գոյական է որը ածա-կան։ Անունին պէս կը հոլովի, մէկ քանին ալ յատուկ հոլովում ունին։

### ԽԱԿԱՆ ԿԱՄ ԳՈՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

#### 113. ԱՌԱՋԻՆ ԴԷՄՔ

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Ես. | ես. | Մենք. | մենք. |
| Սեռ. | Իմ. | իմ. | Մեր. | մեր. |
| Տրա. | Ինձ, յիս. | ինծի. | Մեզ, 'ի մեզ. | մեզի. |
| Գործ. | Ինեւ. | ինծմով. | Մեւք[1]. | մեզմով. |
| Բաց. | յԻնէն. | ինծմէ. | 'ի Մէնջ. | մեզմէ. |
| Հայց. | զԻս. | իս. | զՄեզ. | մեզ։ |

1 Մեօք, ձեօք կը կարդանք հիմայ ռամկօրէն. բայց շիտակ գրուածքն է մեւք, ձեւք, և ոչ մեաւք, ձեաւք։

## 114. ԵՐԿՐՈՐԴ ԴԷՄՔ

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Դու. | դուն. | Դուք. | դուք. |
| Սեռ. | Քո. | քու. | Ձեր. | ձեր. |
| Տրա. | Քեզ, 'ի քեզ. | քեզի. | Ձեզ, 'ի ձեզ. | ձեզի. |
| Գործ. | Քեւ. | քեզմով. | Ձեւք. | ձեզմով. |
| Բաց. | 'ի Քէն. | քեզմէ. | 'ի Ձէնջ. | ձեզմէ. |
| Հայց. | զՔեզ. | քեզ. | զՁեզ. | ձեզ: |

ԵՐՐՈՐԴ ԴԷՄՔ

115. Ինքն, առջի հոլովման երկրորդ օրինակին պէս կը հոլովի.

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ինքն. | ինք, ինքը. |
| Սեռ. | Ինքեան. | ինքիրեն. |
| Տրա. | Ինքեան, յինքն. | ինքիրեն. |
| Գործ. | Ինքեամբ. | ինքիրմով. |
| Բաց. | յԻնքենէ. | ինքիրմէ. |
| Հայց. | զԻնքն. | ինքը, ինքզինք. |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ինքեանք. | իրենք, ինք իրենք. |
| Սեռ. | Ինքեանց. | իրենց. |
| Տրա. | Ինքեանց, յինքեանս. | իրենց. |
| Գործ. | Ինքեամբք. | իրենցմով. |
| Բաց. | յԻնքեանց. | իրենցմէ. |
| Հայց. | զԻնքեանս. | իրենք, ինքզիրենք: |

116. Ածականի պէս ալ կը բանի. Ինքն տէր. բուն ինքը տէրը. Ինքն ամուսինն. բուն ինքը էրիկը. Ինքն մարմինս. բուն ինքը մարմինը. Թագաւորն ինքն. բուն ինքը թագաւորը կամ թագաւորն ալ. Տեղին ինքն. բուն ինքը տեղը:

117. Ասանկ մէկալներուն հետ ալ կ'ըլլայ, Ես ինքն, իմ ինքեան, զիս ինքն. Դու ինքն, քեզ ինքեան, զքեզ ինքն. Մեք ինքեանք, մեզ ինքեանց, զմեզ ինքեանս. Դուք ինքեանք, ձեզ ինքեանց, 'ի ձեզ ինքեանս:

118. Երբեմն մնակ ու առջի կամ երկրորդ դէմք կըցուցնէ բայէն հետ. ինքեանք 'ի նմին կասոյ եմք. ըսել է մեք ինքեանք։

119. Իւր, նոյնպէս կը հոլովի եզակին տեղ տեղ ու բոլոր յոգնակին։ Եզակի ուղղական ու հայցական չունի, "անոնց տեղը ինքն կը բանի. բայց նախդրիւ տրական ունի յիւր՝, որ կընշանակէ ինչպէս յինքն, իրէն։

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | — | — |
| Սեռ. | Իւր, իւրեան. | իրէն, իր. |
| Տր. | Իւր, իւրեան, յիւր. | իրէն. |
| Գործ. | Իւրև, իւրեաւ, իւրեամբ. | իրմով. |
| Բաց. | յԻւրմէ. | իրմէ. |
| Հայց. | — | — |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Իւրեանք. | իրենք. |
| Սեռ. | Իւրեանց. | իրենց. |
| Տր. | Իւրեանց, յիւրեանս. | իրենց. |
| Գործ. | Իւրեամբք. | իրենցմով. |
| Բաց. | յԻւրեանց. | իրենցմէ. |
| Հայց. | զԻւրեանս. | իրենք զիրենք։ |

120. Ինքն մէյտեղ կ'ըսուի իր ինքեան, և այլն։

121. Սա, աս. Դա, ատ. Նա, ան։

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նա. | ան. |
| Սեռ. | Նորա. | անոր. |
| Տր. | Նմա, 'ի նա. | անոր. |
| Գործ. | Նովաւ. | անով. |
| Բաց. | 'ի Նմանէ, 'ի նմանէն. | անկէ. |
| Հայց. | զՆա. | ան. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նոքա. | անոնք. |
| Սեռ. | Նոցա. | անոնց. |
| Տրա. | Նոցա, 'ի նոսա. | անոնց. |
| Կործ. | Նոքօք. | անոնցմով. |
| Բաց. | 'ի Նոցանէ, 'ի նոցանէն. | անոնցմէ. |
| Հայց. | զՆոսա. | անոնք: |

122. Ասանկ կը հոլովին Սա, Դա: Յոգնակին երբեմն կ'ըլլայ Նայք, նայց. Սայք, սայց, 'ի սայս (57): Կ'ըսուին մարդու ալ իրաց ալ:

123. Ինքն մէյտեղ կ'ըսուի Սա ինքն, դա ինքն, նա ինքն. սորա ինքեան, դորա ինքեանք, նոցա ինքեանց, զնա ինքն կամ զնա զինքն:

124. Որ, ո. որ. յարաբերական դերանուն կ'ըսուի, որ անուն մը կամ դերանուն մը մէջ կը բերէ. Նա որ խօսիմ. դու որ լսես, նա կամ ծառայ որ գործէ: Հոլովները նոյն է որ, ո միջակ անուններուն հետ որ տեսար վերը (91, 87):

125. Երբոր որ, ո կը նշանակեն ով որ, որն որ, ան որ, յարաբերական դերանուն չեն, հապա միջակ անուն՝ որ վերը տեսար: Իսկ երբոր նշանակեն միայն որ, որ խօսքին մէջի եղած մէկ բանը յարաբերելով ու բան բանի հետ կապելով մը կ'ըլլայ, ան ատենը յարաբերական դերանուն են, ինչպէս օրինակներուդ մէջ տեսար:

## ԱԾԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

126. Այս, աս. Այդ, ադ. Այն, ան:

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Այն. | ան. |
| Սեռ. | Այնր, այնորիկ. | անոր. |
| Տրա. | Այնմ, այնմիկ, այն. | անոր. |
| Կործ. | Այնու, այնուիկ. | անով. |
| Բաց. | յԱյնմանէ. | անկէ. |
| Հայց. | զԱյն. | ան. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նոյնք, այնոքիկ. | անոնք. |
| Սեռ. | Նոյնց, այնոցիկ. | անոնց. |
| Տր. | Նոյնց, այնոցիկ, յայնս, յայնոսիկ. | անոնց. |
| Գործ. | Նոյնոքիւք, այնոքիմբք. | անոնցմով. |
| Բաց. | յՆոյնց, յայնցանէ, յայնոցիկ. | անոնցմէ. |
| Հայց. | զՆոյնս, զայնոսիկ. | անոնք. |

127. Ասանկ կը հոլովին Այս, Այդ. միայն ասոնք չեն ըսուիր զայս, զայդս։ Գործիականը երբեմն կ'ըլլայ այսիւ, այդիւ, այնիւ։ Մէկալ հոլովներն ալ ուրիշ անսովոր կերպով կըգտուին։ Յոգնակին բացառականը միակ ալ կայ, բայց աւելի գոյականի հետ կը բանի։ — Մարդու ալ կ'ըսուին՝ իրաց ալ, թէ գոյականի հետ և թէ առանձին։

128. Գոյականէ առաջ սովորաբար կարճ վերջահոլովները կը բանին, ու եզակի բացառականի հետ յ-ն ալ կ'ըսուի. Այնր բանի, այնմ բանի, այնու բանիւ, յայնմ բանէ. այնց բանից, յայնց բանից։ Գոյականէ ետև սովորաբար մէկալ հոլովները կը բանին. Բանին այնորիկ. բանին այնմիկ, բանիւն այնուիկ, 'ի բանէն յայնմանէ. բանիցն այնոցիկ, 'ի բանիցն յայնցանէ կամ յայնոցիկ։

129. Եզակի ձայնով շատ բան մէկտեղ ալ կը ցուցընեն իբրև Այս ամենայն, այդ ամենայն, այն ամենայն. ինչպէս. Այս են ծնունդք Նոյի. այս են բանք Թղթոյն. որոյ անուանքն են այս. այս որք աստ ցանս. քեզ լիցին այդ։ Հինգ նկանակ և երկուս ձկունս, այլ այն զինչ է, [illegible] բերէք այսր զայն. չարք են այն են. այն որ 'ի ներքս անդ էին. այն որ ընդ նմայն էին։ Ձեռն տեառն արար զայս. Զայդ վկայեմք. Զայն մի ուսիցէք որ որոշեն. զայն ահա 'ի լսելոյ գիտեմք։

130. Երրորդ դէմքի դերանուանց հետ կ'ըսուին, Այս ինքն, այդ ինքն, այն ինքն. Սա այս, դա այդ, նա այն. ու երկուքն ալ կը հոլովին։

### 131. Սոյն. աս. Դոյն, ատ. Նոյն, ան.

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նոյն. | ան, նոյն. |
| Սեռ. | Նորին, նորուն. | անոր. |
| Տր. | Նմին, 'ի նոյն. | անոր. |
| Գործ. | Նովին, նովիմբ. | անով. |
| Բաց. | — | — |
| Հայց. | զՆոյն. | ան. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | Նոյնք, նոքին. | անոնք. |
| Սեռ. | Նոցին, նոցուն, նոցունց. | անոնց. |
| Տր. | Նոցին, նոցուն, նոցունց, 'ի նոյնս, 'ի նոսին. | անոնց. |
| Գործ. | Նովիմբք, նոքիմբք, նոքումբք. | անոնցմով. |
| Բաց. | 'ի Նոցունց. | անոնցմէ. |
| Հայց. | զՆոյնս, զնոսին. | անոնք: |

132. Ասանկ կը հոլովին Սոյն, Դոյն: Եզակի բացառականին տեղը 'ի սմանէ, 'ի դմանէ, 'ի նմանէ (121) կ'ըսուի սովորաբար մինակ. իսկ գոյականի հետ կ'ըսուի ի սոյն օրէ կամ 'ի սմին տեղւոջէ, 'ի նմին բերանոյ. Նոյնպէս յոգնակին ալ՝ 'ի նոցին գաւառաց, 'ի նոցուն գանձուցն: — Քանի մը անսովոր հոլովներն ալ կը գտուին:

133. Ինքն, սա, այս ասոնց հետ միատեղ շատ կը բանին. Սոյն ինքն, դոյն ինքն, նոյն ինքն, նոյն ինքեան կամ նորին ինքեան, նմին ինքեան, զնոյն ինքն կամ զնոյն զինքն. նոյն ինքեանք կամ նոքին ինքեանք, զնոյն ինքեանս կամ զնոսին ինքեանս:

Սոյն սա, դոյն դա, նոյն նա, նոյն սա. նախդրիւ կը հոլովին:

Սոյն այս, դոյն այդ, նոյն այն, նոյն այս. երկուքն ալ կը հոլովին սովորաբար. երբեմն ալ մէկը միայն. սոյն այսր, սոյն այսմ:

Երբեմն Սոյն ինքն այս կամ սա, դոյն ինքն այդ կամ դա, նոյն ինքն այն կամ նա ալ կ'ըսուին:

134. Իմ, քո, քոյ, մեր, ձեր, իւր, սորա, սոցա, դորա, դոցա, նորա, նոցա, դերանուանական ածականներ են, որոնցմէ միայն Քո զատ կերպ հոլովում մը ունի:

### 135. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | Քո. | քուկինդ. |
| Սեռ. | Քոյ, քում. | քուկինիդ. |
| Տր. | Քոյ, քում, 'ի քո. | քուկինիդ. |
| Գործ. | Քով. | քուկինովդ. |
| Բաց. | 'ի Քոյ, 'ի քումմէ. | քուկինէդ. |
| Հայց. | զՔո. | քուկինդ. |

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քոյք. | քուկիններդ. |
| Սեռ. | Քոց. | քուկիններուդ. |
| Տրա. | Քոց, 'ի քոյս. | քուկիններուդ. |
| Գործ. | Քովք. | քուկիններովդ. |
| Բաց. | 'ի Քոց. | քուկիններէդ. |
| Հայց. | զՔոյս. | քուկիններդ։ |

136. Այսր վերջահոլովները սովորաբար գոյականի հետ կը բանին. հրամանի քոյ կամ քում, քուկին հրամանիդ. ձեռամբ քով, քուկին ձեռքովդ. 'ի բանից քոց, քուկին բաներէդ։

137. Անկանները չորրորդ հոլովման պէս կը հոլովին.
Իմ. իմին. իմոյ, իմում, իմով, յիմոյ կամ յիմմէ. իմք, իմոց, իմովք։
Քո. քուկին. քոյոյ, քոյում, քոյով, 'ի քոյոյ կամ 'ի քումմէ. քոյք, քոյոց, քոյովք։
Մեր. մերին. մերոյ, մերում, մերով, 'ի մերոյ կամ 'ի մերմէ. մերք, մերոց, մերովք։
Ձեր. ձերին. ձերոյ, ձերում, ձերով, 'ի ձերոյ կամ 'ի ձերմէ. ձերք, ձերոց, ձերովք։
Իւր. իրեն. իւրոյ, իւրում, իւրով, յիւրոյ կամ յիւրմէ. իւրք, իւրոց, իւրովք։
Սորա. ասոր. սորայոյ, սորայում, սորայով, 'ի սորայոյ. սորայք, սորայոց կամ սորայց։
Սոցա. ասոնց. սոցայոյ, սոցայում, սոցայով, 'ի սոցայոյ. սոցայք, սոցայոց կամ սոցայց։
Դորա. ատոր. դորայոյ, դորայում, դորայով, 'ի դորայոյ. դորայք, դորայոց կամ դորայց։
Դոցա. ատոնց. դոցայոյ, դոցայում, դոցայով, 'ի դոցայոյ. դոցայք, դոցայոց կամ դոցայց։
Նորա. անոր. նորայոյ, նորայում, նորայով, 'ի նորայոյ. նորայք, նորայոց կամ նորայից, նորայց։
Նոցա. անոնց. նոցայոյ, նոցայում, նոցայով, 'ի նոցայոյ.

նոցայք, նոցայոց կամ նոցայից, նոցայց. նոցայովք կամ նոցայիւք, 'ի նոցայոց կամ 'ի նոցայց, զնոցայս։

138. Բայանք կը հոլովին ստացմէ ին մասնիկով շինուածներն ալ. որ են ասոնք.

Իմային. ԻՄԻՆ. իմայոյ կամ իմայնոյ, իմայով կամ իմայնով, իմայինք, իմայոց կամ իմայնոց, իմայովք կմ իմայնովք, իմայիւք։

Մերային. ՄԵՐԻՆ. մերայոյ կամ մերայնոյ, մերայով կամ մերայնով. մերայինք։

Ձերային. ՁԵՐԻՆ. ձերայոյ կամ ձերայնոյ, ձերայով կամ ձերայնով. ձերայինք։

Իւրային. ԻՐԻՆ. իւրայոյ կամ իւրայնոյ, իւրայով կամ իւրայնով. իւրայինք։

Իւրեանցային. ԻՐԵՆՑ. իւրեանցայոյ կամ իւրեանցայնոյ. իւրեանցայինք։

139. Բայց իմային, իմովին. քոյին, քովին. մերոյին, մերովին. ձերոյին, ձերովին. իւրոյին, իւրովին, վերջահոլով չունին, նախդրիւ միայն կը բանին եզակի ու յոգնակի (14)։

140. Երեք պարզ դերանուններուն արմատ տառերը Ս, Դ, Ն, ԴԻՄՈՐԻՇ յօդ կ'ըսուին, որ շատ հեղ բառերու ծայրը փակչելով՝ անոնց ուժը ունին. ինչպէս,

Տէրս՝ ըսել է ես տէրս, իմ տէրս, այս տէր կմ սա՝ տէրս։

Տէրդ՝ ըսել է դու տէրդ, քո տէրդ, այդ տէր կամ դա՝ տէրդ։

Տէրն՝ ըսել է ինքն տէրն, իւր տէրն, այն տէր կամ նա՝ տէրն. ՏԷՐԸ։

Իմս, իմդ, իմն, ԻՄԻՆՍ, ԻՄԻՆԴ, ԻՄԻՆԸ, կմ ՍՍ, ՍԴ, ՍՆ որ ԻՄՍ է։

Քոյս, մերդ, ձերն, իւրն, ՍՍ որ ՔՈՒԿԴ է, ՍՍ որ ՄԵՐՆ է, ՍՆ որ ՁԵՐՆ է, ԻՐՆ է, ԻՐԵՆԸ։

---

1 Աւելի սաանց նուի կը բանի լաւ գրոց մէջ, իմայոյ տեղ իմայնոյ, և այլն. ինչպէս երբեմն ուրիշ բառերն ալ կ'ըլլան. Մեղացային, մեղացոյց. փոխանակ ըսելու մեղացայնոյ, ինչպէս երկնային, երկնայնոյ։

Սորայս, դորայդ, նորայն, աս որ ասորն է, ադ որ ադորն է, ան որ անորն է, անորը:

Սոցայս, դոցայդ, նոցայն, աս որ ասոնցն է, ադ որ ադոնցն է, ան որ անոնցն է, անոնցը:

141. Ինչպէս տեսար՝ ս վերջացած բառերը յիով կ'առնեն յոգնը. սորայս. ասանկ գիտցիր ուրիշ ամէն բառի ալ. Շաղխտայս, Եղիայն, սայս, դայդ, նայն, 'ի նըմայն, 'ի նոսայն:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՆԱԽԴԻՐ

142. Նախդիրը՝ անուան ու դերանուան մէկ կտորն է, որ միայն անոնց հետ կը բանի՝ անոնց հոլովները շինելու և ուրիշ այլ և այլ մտքեր տալու։

143. Ասոնք Նախդիր են զ, ի, յ, ց, առ, ընդ, ըստ, որ բառին ու անոր հոլովներուն առջևը դրուելով՝ տեսակ տեսակ նշանակութիւն կուտան, ինչպէս տեսանք որ ըրին զ և ի կամ յ նախդիրները։ Հիմայ տեսնենք օրինակի համար մնացածներուն մէկ քանին՝ գլխաւորները։

### 144. Զ.

| | |
|---|---|
| Զ քարի, զգետնի (զարկանել). | Քարէ, գետնէ (զարնել)։ |
| Զ ահի զամօթի (հարկանել). | Ահէ ամօթէ մէջ (իյնալ)։ |
| Զ տամբ, զինև. | Տանը դուրս դէն, էն դուրս դէ- կամ էն վրայ։ |
| Զ գլխով, զմիջաւուրբ. | Գլխուն վրայ, կէս օրուան մօտ։ |
| Զ բանիւ, զօրինօք, զնովաւ (անցանել). | Խօսքէն անցնիլ, օրէնքը [illegible], ան անցնիլ։ |
| Զ իւիք, զնովաւ (ծիծաղել). | Անոր մը վրայ, անոր վրայ (խնդալ)։ |
| Զ աստուծոյ (խօսել, գոհանալ). | Աստուծոյ վրայ (խօսիլ), Աստուծմէ (շնորհակալ ըլլալ)։ |
| Զ ձեռանէ, զլեզուէ (ունել). | Ձեռքէն, լեզուէն ([illegible])։ |

| | |
|---|---|
| Զծառոյն (կախել)․ | Ծառէն կամ ծառէն վար (կախել)։ |
| Զջրոյ, զգինւոյ (գալ)․ | Ջուրի համար, գինիի մը համար (գալ)։ |
| Զայս օրինակ (գրել, խօսել)․ | Այս չափով, այս կերպով (գրել, խօսել)։ |
| Զտիւ և զգիշեր (աշխատ լինել)․ | Գիշերը ու ցորեկը, գիշեր ցորեկ (աշխատիլ)։ |

## 145․ Ի, Յ․

| | |
|---|---|
| Ի սերման, 'ի տան, յաղբեր․ | Հունտի մէջ, տան մէջ, աղբիւրի մէջ։ |
| Յայրի, 'ի սրտի, 'ի ծովու․ | Քարայրի մէջ, սրտի մէջ, ծովու մէջ։ |
| Յազգի, 'ի տաճարի, յերկրի․ | Ազգի մէջ, տաճարի մէջ, երկրի մէջ կամ վրան։ |
| Յանձին իւրում, 'ի լերին, 'ի հօր իմում․ | Ինք իր մէջ կամ վրան, լեռան վրան, հօրս մէջը կամ վրան։ |
| Ի թղթի, 'ի ծոցի, 'ի բերանի[1]․ | Թուղթի մէջ, ծոցի մէջ, բերնի մէջ։ |
| Ի մարդում, 'ի սրբում, յառջնում։ | Մարդուն մէջ, սուրբին մէջ, առջինին մէջ։ |
| Ի համոյ քում, 'ի ճշմարտի որդւոյ նորա․ | Համովդ մէջ կամ վրան, անոր ճշմարիտ որդւոյն մէջ։ |
| Ի տեղւոջ, 'ի տարւոջ, 'ի բարւոջ, յոգւոջ․ | Տեղի մէջ, տարուան մէջ, աղէկի մէջ, հոգիին մէջ։ |
| Յիս, 'ի քեզ, 'ի մեզ, 'ի ձեզ, 'ի նմա, յայնմ․ | Իմ, քու, մեր, ձեր, անոր մէջը կամ վրան։ |

1 Ինչպէս տեսար 'ի 69 որ չորրորդ հոլովման բառերը երբեմն երրորդին պէս ալ կը հոլովին, գիտցիր որ երբոր վերջահոլով տրականին վրայ է, չ ակի առնեն նէ՝ սովորաբար երրորդին պէս կ՚ըլլայ տրականին, ինչպէս կը տեսնես Ի թղթի, 'ի ծոցի, 'ի բերանի, որպէս զի բացառականէն որոշուի։ Նայց ամէն բառի ալ չըլլար․ 'Ի մարդի չըսուիր։

| | |
|---|---|
| Յերկոցունց ձեռացն (աջողակ). | Երկու ձեռքին ալ (աջող)։ |
| 'Ի ցայգ (շրջել), 'ի բանից (պատմել), յանձնէ (փոքր). | Գիշերուանով (ճամբայ գալ), խօսքով (պատմել), մարմնով (պզտիկ)։ |
| Յաջմէ, 'ի ձախմէ, 'ի հիւսիսոյ. | Աջ դին, ձախ դին, հիւսիսային դին։ |
| Յայգուէ, 'ի տուէ. | Առաւօտուն, ցորեկը։ |
| Յամէ ևս. | Տարիէ մը ետքը, տարիէ մը։ |
| 'Ի տուն, 'ի քաղաքս (դառնալ). | Տուն, քաղաքները (դառնալ)։ |
| 'Ի մարդն, 'ի ծոց իւր, յոգի իւր. | Մարդուն մէջ, ծոցին մէջ, հոգիին մէջ։ |
| 'Ի տուն, յայր, 'ի սիրտ, 'ի տաճար, յանձն իւր. | Տան մէջ, քարայրի մէջ, սրտի մէջ, տաճարի մէջ, ինք իր մէջ կամ վրան։ |
| 'Ի տունս, յայրս, 'ի սիրտս, 'ի տաճարս, յանձինս. | Տուներու մէջ, քարայրներու մէջ, սրտերու մէջ, տաճարներու մէջ, իրենց մէջ։ |
| 'Ի խրատ, 'ի փրկութիւն. | Խրատի համար կամ տեղ, փրկութեան համար։ |
| 'Ի ձայն մեծ (աղաղակել). | Մեծ ձայնով (պոռալ)։ |
| 'Ի սուր (կոտորել). | Սուրով (զարնել)։ |

146. Յ նախդիրը երբեմն բաղաձայնով սկսող բառի ալ կը դրուի, որն որ ըթով կ'ըսուի նէ. ինչպէս, յսկիզբըն, յշտեմարանս. որ կը կարդացուի յըսկիզըն, յըշտեմարանս։

147. Յ

| | |
|---|---|
| Յարքայ, ցծերս, ցիս (ասել). | Արքային, ծերերուն, ինծի (ըսել)։ |
| Յայդ վայր, ցերեկոյ. | Մինչեւ աս տեղը, մինչեւ իրիկուն։ |

| | |
|---|---|
| *Յաւուրսն յայնոսիկ .* | Ինչուան ան օրերը։ |
| *Յագ (ուտել), յարբե- նալ.* | Կշտանալու չափ (ուտել), խմ- ելու գինովնալու չափ։ |

## 148. ՈՒՐ, ՈՒՐ 'Ի

| | |
|---|---|
| *Ուր աչին, ուր ամօթոյ .* | Աչքին համար կամ ձախէն, ամօթի համար։ |
| *Ուր արքայի, ուր դատողին .* | Արքային քովը, դատաւորին քովը կամ առջին։ |
| *Ուր լերամբն, ուր Ասիս .* | Լեռանը քով կամ մօտ, Ասիային ատենը։ |
| *Ուր նովաւ, ուր ցորենով.* | Անոր քով, ցորենին քով, այս ինքն՝ անոր կից ցորենին նայե- լով, համեմատելով։ |
| *Ուր ճանապարհաւն .* | Ճամբուն վրայ կամ մէջը։ |
| *Ուր բարոյիւք .* | Բարոյէջը համար։ |
| *Ուր երկիւղէ, ուր հարկէ .* | Վախի համար կամ վախէն, հարկի համար։ |
| *Ուր առակէ .* | Խաղաղութեան համար։ |
| *Ուր 'ի մարդկանէ, ուր 'ի յԱստուծոյ .* | Մարդիկներէ, Աստուծմէ։ |
| *Ուր 'ի վկայութենէ, ուր 'ի չգոյէ .* | Վկայութեան համար, չըլլալուն համար։ |
| *Ուր արքայ, ուր ոք (եր- թալ) .* | Արքային, մէկու մը (երթալ)։ |
| *Ուր իս, ուր մեզ (գալ) .* | Ինծի, մեզի, դէպ ինծի՝ մեզի (գալ)։ |
| *Ուր սէր ընչիցն, ուր 'ի խըր- րատ .* | Ստակին սիրուն համար, խրատի համար։ |
| *Ուր օր, ուր այր .* | Մէկն մէկ օրուան, ամէն մէկ մար- դու կամ մարդ գլուխ։ |
| *Ուր ոտն (հարկանել, կո- խել) .* | Ոտքի տակ (նետել, կոխել)։ |

| | |
|---|---|
| Որպէս լոյս առ խաւար. | Ինչպէս լոյսը մութին քով, մութին բաղդատելով: |
| Ըստ յանցանս, առ լաւս (ունել). | Աղէկ տեղ, լաւ տեղ (դնել): |

## 149. ԸՆԴ

| | |
|---|---|
| Ընդ իմ և ընդ քո. | Իմ ու քու տեղը, էնծի ու քեղի համար: |
| Ընդ ամենայն դատարկ բանի (համարս տալ). | Ամէն փուճ խօսքի համար (համար տալ): |
| Ընդ ական, սէր ընդ սիրոյ. | Աչքի տեղ աչք, սիրոյ դէմ սէր: |
| Ընդ ում. ընդ նմա, ընդ մարդկան. | Որու հետ. անոր հետ, մարդկանց հետ: |
| Ընդ դմա (ասել), ընդ բանին (խռովել), ընդ նմա (նախանձել). | Ատոր (ըսել), ան խօսքին կամ ան խօսքին վրայ (խռովիլ), անոր (նախանձիլ): |
| Ընդ սնկոյն (նստել), ընդ թուոյ (մտանել), ընդ կարգաց (նուաճիլ). | Սեղանին տակ (նստիլ), համբարքի տակ (մտնել), կարգերու տակ (իյնալ): |
| Ընդ ծառով, ընդ հողով. | Ծառի տակ, հողի տակ: |
| Ընդ ինև (կան). | Իմ հետս (էն, կան): |
| Ընդ աջմէ, ընդ ձախմէ. | Աջ դին, ձախ դին: |
| Ընդ երկիւղէն, ընդ կորստենէն. | Վախէն, վախին համար, կորսուածին համար: |
| Ընդ կողմանէ քումմէ. | Քու դիէդ: |
| Ընդ արքայ, ընդ մարդ (նայել). | Արքային, մարդու (նայիլ): |
| Ընդ իս, ընդ քեզ. | Ինծի, քեզի, կամ իմ՝ քու հետ: |
| Ընդ հրեշտակս, ընդ նոսա. | Հրեշտակներու հետ, անոնց հետ: |
| Ընդ դուռն, ընդ բերան (անցանել, մտանել). | Դռնէն, բերնէն ներս (անցնիլ, մտնել): |
| Ընդ ճանապարհ (գնալ). | Ճամբայ մը (ելլալ): |

| | |
|---|---|
| Ընդ քաղաքս, ընդ երկայ-նութեն դաշտին (շրջել). | Քաղաքները (պտըտիլ), դաշ-տին երկայնքին (ծայրէ ծայր)։ |
| Ընդ մէջ (կտրել). | Մէջքէն կամ մէջ տեղայէն (կտրել)։ |
| Ընդ երկինս և ընդ երկիր. | Երկնքի ու երկրի մէջ տեղը։ |
| Ընդ իս և ընդ քեզ. | Իմ ու քու մէջը։ |
| Ընդ բազումս և ընդ սա-կաւս. | Շատին ու քիչին մէջ։ |
| Ընդ ամս տասն. | Տասը տարուան մէջ։ |
| Ընդ ամէնն, ընդ ամենայն. | Ամէնը մէկտեղ, ամէնը մէկէն առ-նելով։ |
| Ընդ այր և ընդ կին և ընդ մանկտի. | Էրիկ մարդ՝ կնիկ մարդ ու տը-ղայ մէկտեղ առնելով։ |
| Ընդ արևելս, ընդ երեկս. | Արևելքի դին, դէպ ՚ի արևելք, իրիկուան դէմ։ |
| Ընդ խաղ, ընդ քէն. | Խաղի (շաղայի) համար, քէնի համար, քէնով։ |
| Ընդ մի բերան (ասել, գո-վել). | Մէկ բերան, մէկ բերնով (ըսել, գովել)։ |
| Ընդ երևումն, ընդ անյա-նելն. | Երևնալուն պէս, անյայտնալուն պէս։ |

## 150. ԸՍՏ

| | |
|---|---|
| Ըստ բանի քում: | Քու խօսքիդ պէս, քու խօս-քիդ նայելով։ |
| Ըստ հրամանին, ըստ գոր-ծոց. | Հրամանին պէս՝ նման, գործ-քին պէս, համեմատ։ |
| Ըստ ինքեան. | Ինք իրեն, ինք իրմէ, ինքիրմով։ |
| Ըստ անձին (սիրել, բառ-նալ). | Իրեն պէս, իրեն չափ (սիրել), իր վրան (վերցնել)։ |
| Ըստ յանցանացն, ըստ նա-խանձու. | Յանցանքին համար, նախանձի համար։ |
| Ըստ ճանապարհին. | Ճամբուն վրայ։ |
| Ըստ նմանէ, ըստ նոյանէ. | Անոր եղանէն, անոնց եղանէն։ |

| | |
|---|---|
| Մի ըստ միոջէ, այլ ըստ առնէ. | Մէկմէկու ըրէ, մարդ մարդու ըրէ: |
| Օր ըստ օրէ, ամ ըստ ամէ. | Օրէ օր, տարուէ տարի: |
| Ըստ հիւսիսոյ. | Հիւսիսի դին, դէպ 'ի հիւսիս: |
| Ըստ գործս, ըստ միտս, ըստ պէտս. | Գործքին պէս, մտքին յարմար, պէտքին չափ կամ համեմատ: |
| Ըստ կազդուրել մանկանց. | Տղոց կերակրելուն չափ: |
| Ըստ վարել հալածչաց. | Հալածողներուն քշելուն չափ: |
| Ըստ աճել, ըստ պակասել. | Աճելուն չափ, պակսելուն չափ: |
| Ըստ գլուխ, ըստ բերան. ըստ երդ. | Մարդ գլուխ. տուն գլուխ: |
| Ըստ չափ, ըստ քաղաքն, ըստ դուռն, ըստ միտս (անցանել, ելանել). | Չափէ դուրս, քաղքէն դուրս, դռնէն դուրս, մտքէ դուրս (անցնիլ, ելլել): |
| Ըստ օրէնս, ըստ երդումն (անցանել). | Օրէնքէ, երդումէ դուրս (ելլել): |

151. Ըստ նախդիրները ուրիշ հոլովներ ալ կ'առնեն, և ուրիշ մտքեր ալ կուտան, որ բառգրքէն սորվելու է:

152. Կան շատ հոլովառու բառեր ալ՝ որ հոլով մը կը բռնեն, ու բառին մէկ միտք մը կուտան. որը առաջ միայն՝ որ նախադրութիւն ալ կ'ըսուին, որը ետքը, որն ալ առաջ ու ետքը. ինչպէս,

153. ԱՌԱՋ

| | |
|---|---|
| Յերե կամ առջեւ զմարդ, մարդ, մարդոյ, 'ի մարդ, մարդով, 'ի մարդոյ. | Առջեւ մարդ, մարդու, մարդուն, մարդէ: |
| Ընդ զմարդ, մարդոյ, 'ի մարդ, մարդով, 'ի մարդոյ. | Մարդէ առաջ կամ վեր, քան մարդը, քան մարդուն, քան մարդէ: |
| Ընդ զհատն մանանխոյ. | Մանանեխի հատի չափ կամ պէս: |
| Մինչ 'ի գետին, մինչև յերկինս. | Մինչեւ գետին, մինչեւ երկինք: |

Յետ մահու, յետ այսորիկ · Մահուանէ ետքը, ասկէ ետքը :
Առանց իմ, առանց մեզաց · Առանց ինծի, առանց մեզի :
Ներքոյ 'ի քէն, ներքոյ 'ի սոցանէ · Քեզմէ վար, ասոնցմէ վար :

## 154 · ԵՏՔԸ

Ի սկզբանէ հետէ, յԱռաջա-մայ հետէ · Առաջուց 'ի վեր, Սկիզբէն 'ի վեր :
Մինչև ցժամ, մահու ժամ · Ինչուան մէջը, ինչուան 'ի մահ կամ մեռնելու ժամ :
Ոգւոյ ժամ, ձեռք ժամ · Հոգիին ժամ, յեղի ժամ :
Ի կենն կողմն, 'ի թիկունս կոյս · Դէպ 'ի կոնկը, դէպ 'ի կռնակը, ետեւի դին :

## 155 · ԱՌԱՋ ՈՒ ԵՏՔԸ

Վասն սիրոյ, օրինակի վասն · Սիրոյ համար, օրինակի համար :
Սակս, 'ի սակս ձեր, 'ի ձեր սակս · Ձեզի համար, ձեր պատճառաւ :
Հանդերձ մարբն, ոտիւքն հանդերձ · Մօրը հետ միատեղ, ոտքերովը միատեղ :
Հանդերձ առանձինն մտից և ռոճկաց · Յատուկ եկամուտով ու ապրանքով :
Առաջի աչաց, իմ առաջի · Աչքի առջին, իմ առջիս :
Ի վերայ երկրի · Գետնի կամ երկրի վրայ :
Ի ճշմարտութեան վերայ · Ճշմարտութեան վրայ :
Յէ՞ր վերայ, յո՞ր վերայ · Ինչ բանի վրայ, որո՞ւն վրայ :
Ի վերայ բազմաց · Շատերու վրայ, շատերու համար :
Զկնի մեր, չարին զկնի · Մեր ետևէն, չարին ետևէն :
Զհետ նորա, որոյ զհետ · Անոր ետևէն, որուն ետևէն :
Ընթեր խաչին, ո՞ր ընթեր · Խաչին քով, որո՞ւ քով :
Առ ընթեր սորին, առ որ ընթեր · Անոր քովը, որուն քովն որ :
Քո պէս, ձերոյ պէս · Քեզի պէս, ձեզի պէս :

Պէս գունով Տրդատայ. — Տրդատին դէմ :
Դէմ ձեզ, հանդէպ տանն, իմ հանդէպ. — Դէմ 'ի ձեզ, տանը դիմացը, իմ դիմացը :
Յանդիման դրախտին, ինձ. — Դրախտին դիմացը, իմ դիմացը :
Յանդիման ձեր, ձեզ. — Ձեր դիմացը :
Արտաքոյ քաղաքին. — Քաղքէն դուրս :
Աստուծոյ կամացն արտաքոյ. — Աստուծոյ կամքէն դուրս, առանց Աստուծոյ կամքին :
Յետոյ դրանն. — Դռանն ետին :
Երկոտասան աւուրբք յետոյ. — Տասնըերկու օր ետքը :
Ամսու յառաջ, յառաջ երկու աւուրբք. — Տարիով կամ ամիս մը առաջ, երկու օր առաջ :
Շուրջ զքաղաքաւն, զգետովն. — Քաղքին՝ գետին չորս դին :
Զսրահիւն շուրջ, զմեւք շուրջ. — Սրահէն՝ մեր չորս դին :
Շուրջ ծովուն, սեղանոյն շուրջ. — Ծովուն՝ սեղանէն չորս դին :
Ներքոյ, 'ի ներքոյ իմ,քո, երկնից, կաթսային. նորա 'ի ներքոյ. — Իմ՝ քու՝ երկնքին՝ կաթսային տակը, անոր տակը :
Ներքոյ վարագուրին. — Վարագուրին տակը, ետին :
Ի յետ Մովսիսի, 'ի յետ հրեշտակաց (խօսել, տալ). — Մովսէսով, հրեշտակներով (խօսիլ, տալ) :
Ի յետ գաւազանի, 'ի յետ հաւատոց. — Գաւազանով, հաւատքով :

156. Ասոնք ուրիշ կերպ կերպ մտքեր ալ կուտան, և ուրիշ շատ ասանկ հոլովառու բառեր ալ կան, որ կարդալով ու բառգրքէ սորվելու է :

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԲԱՅ

157. Բայը բառ մըն է՝ որ կընշանակէ ըլլալ կամ ընել կամ ըլլուիլ. ինչպէս, Ես եմ կամ լինիմ, ես եմ կամ կ'ըլլամ. գնամ, կ'երթամ. սիրեմ, կսիրեմ. սիրիմ, կսիրուիմ. քաղցնում, կ'անօթենամ։

158. Բային աս նշանակութիւնը՝ դերանուան իրեք դէմքովը կ'ըլլայ, ես, դու, ինքն կամ նա. ուստի աս իրեք դէմքը ունի բայը, ու ասոնց պէս երկու թիւ՝ եզակի ու յոգնակի. ինչպէս, ես եմ, դու ես, նա է. մեք եմք, դուք էք, նոքա են։

159. Եւ որովհետեւ բան մը ժամանակի մէջ կ'ըլլայ ու կ'ըլլուի, ու եղանակով մը, բայն ալ իրեք ժամանակ ունի. — Ներկայ, որ հիմայ է. ինչպէս, սիրեմ, կսիրեմ, կսիրեմ կոր. — Անցեալ, որ անցած բանի վրայ կը խօսի. որ եթէ չլմնցած է նէ՝ անկատար կ'ըսուի. ինչպէս, սիրէի, կսիրէի, կսիրէի կոր. լմնցած է նէ՝ կատարեալ կ'ըսուի. ինչպէս, սիրեցի, սիրեցի. — Ապառնի, որ դեռ ըլլալու է. ինչպէս, սիրեցից, սիրեմ, պիտի սիրեմ։

160. Եղանակն ալ իրեք կերպ է. — Սահմանական, որ բանը կըզրուցէ միայն. ինչպէս, գնամ, կ'երթամ, կ'երթամ կոր. — Հրամայական, որ կը հրամմէ կամ կ'արգելէ. ինչպէս, գնա, մի գնար, գնա, մ'երթար. — Ստորադասական, որ պայմանով մը ուրիշ եղանակի հետ կախուած կը յայտնէ բանը. ինչպէս, (զի, թէ) գնայցեմ, (որ, թէ որ) երթամ, երթամ (նէ)։

161. Բայը աս ամէն բանը կը ցուցնէ իր փոփոխմունքներովը, որ խոնարհում կ'ըսուին։

162․ Կան իրեք դերբայ ալ, այս ինքն բայի տեղ դրուողներ։

Անորոշ դերբայ, որ ինքնիրեն դէմք, ժամանակ կամ եղանակ չյայտներ, հապա միայն ըլլալ կամ ընել կամ ըլլուիլ մը կը ցուցնէ, ու բայի տեղ կը դրուի՝ ամէն ժամանակի ու եղանակի ու դէմքի յարմարուելով․ ինչպէս, լինել, ըլլալ․ գնալ, երթալ․ սիրել, սիրել․ սիրիլ, սիրուիլ․ քաղցնուլ, անօթենալ։

Անցեալ դերբայ, որ եղած կամ ըրած անցածը կը ցուցնէ․ ինչպէս, լեալ, եղած․ գնացեալ, գացած․ սիրեցեալ, սիրած կամ սիրուած։

Ապառնի դերբայ, որ ըլլալիքը կամ ընելիքը կը ցուցնէ․ ինչպէս, լինելոց, ըլլալու․ գնալոց, երթալու․ սիրելոց, սիրելու կամ սիրուելու, որ պիտի սիրէ կամ պիտի սիրուի։

163․ Նշանակութեան դիմէն՝ չորս տեսակ բայ կայ․ Էական, որ ըլլալ կը նշանակէն․ Եմ, լինիմ, ես եմ, կ'ըլլամ։

Ներգործական, որ ուրիշին բան մը ընել կը նշանակէն․ Սիրեմ, կը սիրեմ։

Կրաւորական, որ ուրիշմէ ըլլուիլ կը նշանակէն․ Սիրիմ, կը սիրուիմ։

Այս իրեք տեսակը զատ զատ խոնարհում ունի։

164․ Չորրորդ տեսակ է Չէզոք բայերը, որ ընել մը ու ըլլալ մը ինքնիրեն միայն կը նշանակէն, առանց ուրիշին բան մը ընելու կամ ուրիշէ մը ըլլուելու․ Դառնամ, կը դառնամ․ ամաչեմ, կ'ամչնամ։ Ասոնք ներգործականներու կամ կրաւորականներու պէս կը խոնարհին, ուստի կ'ըսուին ներգործաձեւերը կամ կրաւորաձեւերը չէզոք։

165․ Ամէն ներգործական ունի իր կրաւորականը․ բայց կան բայեր ալ, որ մէկ ձայնով՝ ընել ալ ըլլուիլ ալ կը նշանակեն, ներգործական են ու կրաւորական, ու անոր համար կ'ըսուին Հասարակ․ ինչպէս, Ծնանիմ, կը ծնանիմ ուրիշը ու կը ծնանիմ ուրիշէն․ ընթեռնում, կը կար-

դամ ու կը կարդացուեմ։ Ասոնք ալ զատ խոնարհում չեն ըներ, կրաւորականներու պէս կը խոնարհին։

166. Բայց շատ ներգործական, կրաւորական ու հասարակ բայեր կան, որ չէզոք ալ կը բանին. ինչպէս, Լամ, լսեմ. — Կանգնիմ, շարժիմ. — Համբերիմ, սկըսանիմ։

167. Բայերուն խոնարհմունքը չորս կանոնաւոր լծորդութեան կը բաժնուի, բոլոր բայերուն չորս կերպ վերջին պէս, որ ձայնաւոր տառերուն կարգովը ասոնք են, ամ, եմ, իմ, ում. Ամամ, կը հաթեմ. Սիրեմ, կը սիրեմ. Սիրիմ. կը սիրուեմ. Զենում, կը մորթեմ։ Ամէն տեսակ բայերէն կըգտուի աս վերջերովս, միայն կրաւորական ու հասարակ չկայ ում վերջով։

168. Խոնարհմունքներուն մէկ մեծ զանազանութիւնն ալ իրենց կատարեալէն կ՚առնուի, որ կամ աց, եաց, ոյց ածանցեալ արմատով կ՚ըլլայ, կամ Սահմանականի ներկային պարզ արմատովը, եւքի ձայնաւորը փոխուելով միշտ հոլովներուն պէս (17), ու արմատին ու ամ, եմ, իմ, ում վերջերուն մէջ տեղը գտուած ան, են, ն, ու, նու ածանցական կտորները ձգուելով միշտ։ Եւ աս արմատները՝ ներգործական ու ներգործակերպ չէզոք բայերուն կատարեալին եզակի երրորդ դէմքն են. ու եզակի հրամայական ալ են՝ միայն բաղմավանկներուն եաևի ցոն ձգուելով։

Առջի լծորդութեան ամ բայերուն կատարեալը՝ գրեթէ ամենն ալ՝ աց կամ եաց ածանցեալ արմատով կ՚ըլլայ. Ամամ, ամացի, ամաց, ամա. Կեամ, կեցի, կեաց. Ամամ, ամացայ։ — Չորրորդ լծորդութեան ում բայերունը՝ բոլորն ալ պարզ արմատով. Զենում, զենի, զեն. Զենում, զենայ։

Իսկ երկրորդ ու երրորդ լծորդութեան եմ, իմ բայերունը՝ երկու կերպով կ՚ըլլայ. կամ եաց ածանցեալ արմատով. Սիրեմ, սիրեցի, սիրեաց, սիրեա. Սիրիմ, սիրեցայ. կամ պարզ արմատով, ու անոր պէս ոյց արմատով ալ. Տեսանեմ, տեսի, տես. Տեսանիմ, տեսայ. Դարձուցանեմ, դարձուցի, դարձոյց, դարձո. Դարձուցանիմ, դարձուցայ։ Ասոր համար աս երկու լծորդութիւնը երկերկու օրինակ ունին. ուստի խոնարհումներու օրինակն է ութը։

Աս արմատներուն կանոնն որ բռնես, խոնարհմունքներուն չէնքը աղէկ կը հասկընաս, գիւրաւ միտք կ՚առնես ու կը պահես, ու լծորդութեանց օրինակները շատցընելու հարկ չըլլար. և ոչ ալ որդուղի ըսուած՝ այսինքն կանոնէ դուրս ելլող բայերը։

169. Ամէն բային Ապառնին ալ իր կատարեալէն կ'ելլէ, բազմավանկ անցեալ արմատներուն ետքի ցը սց փոխելով. Ամացի, ամաց. Ամասցից կամ ամասցեմ, ամասցես. Սիրեցի, սիրեաց. Սիրեսցից կամ սիրեսցեմ, սիրեսցես.

170. Անցեալ դերբայներն ալ սովորաբար կատարեալէն կ'ելլեն. Ամացի, ամացեալ. Սիրեցի, սիրեցեալ կամ սիրեալ. Տեսի, տեսեալ:

171. Իսկ բային մնկալ ամէն կտորները, Անկատարը, Ստորադասականը, Անորոշ ու Ապառնի դերբայները՝ Սահմանականի ներկայէն կ'ելլեն:

## ԷԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

172. **Եմ.** *արմատ է:*

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| Եզական | | Յոգնական | |
|---|---|---|---|
| Եմ. | ես եմ, ես կամ. | Եմք. | մենք ենք, մենք կանք. |
| Ես. | դուն ես. | Էք. | դուք էք. |
| Է. | ան է. | Են. | անոնք են: |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Էի. | ես էի. | Էաք. | մենք էինք. |
| Էիր. | դուն էիր. | Էիք. | դուք էիք. |
| Էր. | ան էր. | Էին. | անոնք էին: |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եր. եղիր. Էք, *երուք*. եղէք:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Իցեմ. ես ըլլամ՝, պիտի ըլլամ. Իցեմք. մենք ըլլանք, պիտի ըլլանք.
Իցես. դուն ըլլաս, պիտի ըլլաս. Իցէք. դուք ըլլաք, պիտի ըլլաք.
Իցէ. ան ըլլայ, պիտի ըլլայ. Իցեն. անոնք ըլլան, պիտի ըլլան:

| | | |
|---|---|---|
| ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. | Գոլ. | ըլլալ: |
| ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. | Գեալ. | եղած, ըլլալը: |
| ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. | Գոլոց. | ըլլալու, որ պիտի ըլլայ: |

**173.** *Հրամայականները, մանաւանդ էքը, մինակ չեն բանիր.*
*Ողջ բառին հետ կ'ըսուին Ողջ եր, ողջ էք, ողջ երուք:*
*Նոր դերբաններն ալ շատ չեն բանիր:*

**174. ԵՂԱՆԻՄ.** *արմատ եղ:*

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Եղանիմ. | կ'ըլլամ. | Եղանիմք. | կ'ըլլանք. |
| Եղանիս. | կ'ըլլաս. | Եղանիք. | կ'ըլլաք. |
| Եղանի. | կ'ըլլայ. | Եղանին. | կ'ըլլան: |

---

1 Ստորադասականները ինքիրեննուն մինակ չեն նշանակեր ըլլամ նէ, կարենամ նէ, ուզեմ նէ, փնտռեմ նէ, մտնեմ նէ, և այլն. Հապա՝ յորժամ, եթէ, ու թէև, ու կամ ոչ, որ բառերուն հետ, որոնց ամենուն մէջն ալ յորժամի. եթէի միտք կ'իմացուի զօրութեամբ. ու նէն ալ ան կը նշանակէ. Յորժամ իցեմ, եթէ իցեմ. Երբոր, թէ որ ըլլամ, ըլլամ նէ. Զինչ իցէ. Զոր իցէ, որ իցէ, ինչ որ ըլլայ նէ, որուն որ ըլլայ նէ, որ կամ որն որ ըլլայ նէ, կ'իմացուի միշտ երբոր կամ թէ որ ըլլայ:

### Անցեալ անկատար․

| | | | |
|---|---|---|---|
| Եղանէի․ | կ'ըլլայի․ | Եղանէաք․ | կ'ըլլայինք․ |
| Եղանէիր․ | կ'ըլլայիր․ | Եղանէիք․ | կ'ըլլայիք․ |
| Եղանէր, եղանիւր․ | կ'ըլլար․ | Եղանէին․ | կ'ըլլային։ |

### Անցեալ կատարեալ․

| | | | |
|---|---|---|---|
| Եղէ․ | եղայ․ | Եղաք․ | եղանք․ |
| Եղեր․ | եղար․ | Եղէք, եղերուք․ | եղաք․ |
| Եղեւ․ | եղաւ․ | Եղեն․ | եղան։ |

### Ուրիշ անցեալ կատարեալ․

| | | | |
|---|---|---|---|
| Եղայ, եղեայ․ | եղայ․ | Եղաք, եղեաք․ | եղանք․ |
| Եղար․ | եղար․ | Եղայք, եղեայք․ | եղաք․ |
| Եղաւ․ | եղաւ․ | Եղան․ | եղան։ |

### Ապառնի․

| | |
|---|---|
| Եղէց, եղիցիմ․ | ըլլամ, պիտի ըլլամ․ |
| Եղիցիս, եղիցես․ | ըլլաս, պիտի ըլլաս․ |
| Եղիցի․ | ըլլայ, պիտի ըլլայ․ |
| Եղիցուք, եղիցիմք․ | ըլլանք, պիտի ըլլանք․ |
| Եղիջիք, եղիցիք․ | ըլլաք, պիտի ըլլաք․ |
| Եղիցին․ | ըլլան, պիտի ըլլան։ |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| —— | | Եղերուք․ | եղէք․ |
| Եղիջիր, եղանիջիր․ | եղիր, ըլլաս․ | ․ ․ | ․ ․ |
| Մի եղանիր․ | մ'ըլլար․ | Մի եղանիք․ | մ'ըլլաք։ |

| | |
|---|---|
| *Եղանիցիմ·* | ըլլամ, պիտի ըլլամ· |
| *Եղանիցիս·* | ըլլաս, պիտի ըլլաս· |
| *Եղանիցի·* | ըլլայ, պիտի ըլլայ· |
| *Եղանիցիմք·* | ըլլանք, պիտի ըլլանք· |
| *Եղանիցիք, եղանիջիք·* | ըլլաք, պիտի ըլլաք· |
| *Եղանիցին·* | ըլլան, պիտի ըլլան։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ· *Եղանել, եղանիլ·* ըլլալ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ· *Եղեալ·* եղած, ըլլալն։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ· *Եղանելոց·* ըլլալու, որ պիտի ըլլայ։

175. *Եզակի հրամայական Եղիր որ կ'ըսենք աշխարհաբառ, գրաբառ կընմանի, բայց գրոց մէջ չկայ, անոր համար տեղը պարապ թողուած է։*

176. *Երկրորդ* Եղիջիր, եղանիջիր *հրամայականին յոգնակին՝ ապառնիէն ու ստորադասականէն կ'առնէ,* Եղիջիք, եղանիջիք։ *Նման գիտցիր ամէն բայերուն ալ։*

## 177. ԼԻՆԻՄ· *արմատ լի։*

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ·

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| *Լինիմ·* | կ'ըլլամ· | *Լինիմք·* | կ'ըլլանք· |
| *Լինիս·* | կ'ըլլաս· | *Լինիք·* | կ'ըլլաք· |
| *Լինի·* | կ'ըլլայ· | *Լինին·* | կ'ըլլան։ |

Անցեալ անկատար·

| | | | |
|---|---|---|---|
| *Լինէի·* | կ'ըլլայի· | *Լինէաք·* | կ'ըլլայինք· |
| *Լինէիր·* | կ'ըլլայիր· | *Լինէիք·* | կ'ըլլայիք· |
| *Լինէր·* | կ'ըլլար· | *Լինէին·* | կ'ըլլային։ |

## Ապառնի·

| | |
|---|---|
| Լիցիմ· | ըլլամ, պիտի ըլլամ· |
| Լիցիս, լիցես· | ըլլաս, պիտի ըլլաս· |
| Լիցի· | ըլլայ, պիտի ըլլայ· |
| Լիցուք, լիցիմք· | ըլլանք, պիտի ըլլանք· |
| Լիջիք, լիցիք· | ըլլաք, պիտի ըլլաք· |
| Լիցին· | ըլլան, պիտի ըլլան։ |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Լեր· | եղիր· | Լերուք, լէք· | եղէք· |
| Լիջիր, լինիջիր· | եղիր, ըլլաս· | · · · · | |
| Մի՛ լինիր· | մ'ըլլար· | Մի՛ լինիք· | մ'ըլլաք։ |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Լինիցիմ· | ըլլամ, պիտի ըլլամ· |
| Լինիցիս· | ըլլաս, պիտի ըլլաս· |
| Լինիցի· | ըլլայ, պիտի ըլլայ· |
| Լինիցիմք· | ըլլանք, պիտի ըլլանք· |
| Լինիցիք, լինիջիք· | ըլլաք, պիտի ըլլաք· |
| Լինիցին | ըլլան, պիտի ըլլան։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ· Լինել· ըլլալ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ· Լեալ, լեալ· եղած, ըլլալն։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ· Լինելոց· ըլլալու, որ պիտի ըլլայ։

178. Անցեալ կատարեալը Եղանիմէն կ'առնէ· Եղէ, եղեր, եղև, և այլն։

## 179. ԳՈԼ. արմատ գոյ.

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Գոմ. | կամ, եմ. | Գոմք. | կանք, ենք. |
| Գոս. | կաս, ես. | Գոյք. | կաք, էք. |
| Գոյ. | կայ, է. | Գոն. | կան, են. |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Գոյի. | կայի, էի. | Գոյաք. | կայինք, էինք. |
| Գոյիր. | կայիր, էիր. | Գոյիք. | կայիք, էիք. |
| Գոյր. | կար, էր. | Գոյին. | կային, էին. |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Գուցեմ. | գտնուիմ, ըլլամ. | Գուցեմք. | գտնուինք, ըլլանք. |
| Գուցես. | գտնուիս, ըլլաս. | Գուցէք. | գտնուիք, ըլլաք. |
| Գուցէ. | գտնուի, ըլլայ. | Գուցեն. | գտնուին, ըլլան. |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Գոլ. ըլլալ։

180. Այս էր բայն ալ, երրորդ դէմք, որ ըսել է կայ, է. բայց հիմայ մինակ չըսուիր, հապա չ մակբայով. Չիք, չկայ, չէ. չիք հնար, ճար չկայ. չիք սատ, հաս չըկայ, հաս չէ։

## ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ, [illegible]:

### 181. Ներգործական [illegible]. *արմատ* [illegible], [illegible][1]:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ.

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Մ*նամ.* | կը [illegible], կը [illegible]. | Մ*նամք.* | կը [illegible]. |
| Մ*նաս.* | կը [illegible]. | Մ*նայք.* | կը [illegible]. |
| Մ*նայ.* | կը [illegible]. | Մ*նան.* | կը [illegible]: |

#### Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Մ*նայի.* | կը [illegible]. | Մ*նայաք.* | կը [illegible]. |
| Մ*նայիր.* | կը [illegible]. | Մ*նայիք.* | կը [illegible]. |
| Մ*նայր.* | կը [illegible]. | Մ*նային.* | կը [illegible]: |

#### Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Մ*նացի.* | [illegible]. | Մ*նացաք.* | [illegible]. |
| Մ*նացեր.* | [illegible]. | Մ*նացէք, ամնացիք.* | [illegible]. |
| Մ*նաց.* | [illegible]. | Մ*նացին.* | [illegible]: |

1 Այս պարզ արմատէն շինուած են ածանցեալ բառերը [illegible], [illegible], [illegible], ու բարդը [illegible]: Իսկ [illegible] ածանցեալ արմատէն շինուած է [illegible]: Աստնիկ գիտցիր ուրիշ ամէն բայերուն արմատներուն համար ալ, որ թէ և առանձին չգտուին նէ ալ, ածանցմանց կամ բարդութեանց մէջ կան. ոմանք չգտուին նէ ալ, մեկալներուն պէս կըսեպուի որ ըլլալու է: Աստնիկ գիտցիր մեկալ լծորդութեանց վրայ ալ:

### Ապառնի.

| | |
|---|---|
| Մնացից, մնասցեմ. | ղալըէմ, պէտք ղալըէմ. |
| Մնասցես. | ղալըէս, պէտք ղալըէս. |
| Մնասցէ. | ղալըէ, պէտք ղալըէ. |
| Մնասցուք, մնասցեմք. | ղալըէնք, պէտք ղալըէնք. |
| Մնասջիք, մնասցէք. | ղալըէք, պէտք ղալըէք. |
| Մնասցեն. | ղալըէն, պէտք ղալըէն։ |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Մնա. | ղալըէ. | Մնացէք. | ղալըէջէք. |
| Մնասջիր, մնայջիր. | ղալըէ, ղալըէս. | . . . . | |
| Մի մնար. | մի ղալըէր. | Մի մնայք. | մի ղալըէք։ |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Մնայցեմ. | ղալըէմ, պէտք ղալըէմ. |
| Մնայցես. | ղալըէս, պէտք ղալըէս. |
| Մնայցէ. | ղալըէ, պէտք ղալըէ. |
| Մնայցեմք. | ղալըէնք, պէտք ղալըէնք. |
| Մնայցէք, մնայջիք. | ղալըէք, պէտք ղալըէք. |
| Մնայցեն. | ղալըէն, պէտք ղալըէն։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Մնալ. ղալըէլ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Մնացեալ. ղալըած, ղալըէլըղ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Մնալոց. ղալըէլըա, որ պէտք ղալըէ։

182. Ասանկ կը խոնարհին

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Կարդամ, կարդացի, կարդաց, կարդա. կանչէմ, կարդամ։
Հաւատամ, հաւատացի, հաւատաց, հաւատա. հաւտամ։
Լուանամ, լուացի, լուաց, լուա. լուամ։

| | |
|---|---|
| Լամ, լացի, լաց կամ ելաց, լաց · | լամ։ |
| Բանամ, բացի, բաց կամ եբաց, բաց · | բանամ։ |
| Բառնամ, բարձի՛, բարձ կամ եբարձ, բարձ · | վերցնեմ։ |

### 183 · ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| Գնամ, գնացի, գնաց, գնա · | երթամ։ |
| Խաղամ, խաղացի, խաղաց, խաղա · | խաղամ, շարժեմ։ |
| Կամ, կացի, կաց կամ եկաց, կաց · | կենամ, կայնեմ։ |
| Մնամ, մնացի, մնաց, մնա · | մնամ, սպասեմ։ |

184 · Ասոր տակն է Կեամ, որուն եա երբոր վերջի վանկ չէ նէ՝ է կմ է կը փոխուի հոլովներուն պէս (17)· ստորադասականը երկու կերպ ալ կ՚ըլլայ · Ամբողջ դընենք որ տեսնես ·

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Սահմ · Ներկ · | Կեամ · կ՚ապրեմ · | Կեամք · կ՚ապրենք · |
| | Կեաս · | Կեայք · |
| | Կեայ · | Կեան · |
| Անց · | Կէի · | Կէաք · |
| | Կէիր · | Կէիք · |
| | Կեայր · | Կէին · |
| Կատ · | Կեցի · | Կեցաք · |
| | Կեցեր · | Կեցէք, կեցիք · |
| | Կեաց, եկեաց · | Կեցին · |
| Ապա · | Կեցից, կեցցեմ · | Կեցցուք, կեցցեմք · |
| | Կեցցես · | Կեցջիք, կեցցէք · |
| | Կեցցէ · | Կեցցեն · |
| Հրամ · | Կեաց · | Կեցէք · |
| | Կեցջիր · | · · · |
| | Մի կեար · | Մի կեայք · |

1 Տես 49 · Ծանօթութիւն ։

ՍՏՈՐ. Կեայցեմ, կեցեմ[1]. Կեայցեմք, կեցեմք.
Կեայցես, կեցես. Կեայցէք, կեցէք.
Կեայցէ, կեցէ. Կեայցեն, կեցեն.
ԴԵՐԲ. Կեալ. — Կեցեալ. — Կելոց։

185. Ասանկ ալ Ատեամ, կ'ատեմ. ատէի, ատեցի, ատեցիր կամ ատեցեր, ատեա, ատեսջիր. բայց ստորադասական՝ ատիցեմ. անցեալ դերբայ՝ ատեալ կամ ատել. վասն զի Ատեմ, ատեցի, ատել ալ կ'ըսուի, և Ատիմ, ատիլ, երկրորդ ու երրորդ լծորդութեանց պէս։

186. Տեսար որ Լամ, բանամ, բառնամ, կամ, կեամ բայերուն կատարեալ եզակի երրորդ դէմքը, որ միավանկ արմատն է բային (168), ե առնու սկիզբը, ելաց, եբաց, եբարձ, եկաց, եկեաց։ Այսանկ գիտցիր երկրորդ լծորդութեան երկրորդ օրինակին ու չորրորդ լծորդութեան համար ալ։ — Եին տեղ՝ է ալ կ'ըլլայ բաղաձայններուն, Էլաց, Էբաց, Էբարձ. իսկ ձայնաւորներուն՝ միայն այբին կը դրուի, ան ալ միշտ է. Էարկ, Էանց, Էառ, որ վարը պիտի տեսնես։

## 187. Կրաւորական, ՄՆԱՄ.

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ.

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Մնամ. | կը սպասեմ. | Մնամք. | կը սպասենք. |
| Մնաս. | կը սպասես. | Մնայք. | կը սպասէք. |
| Մնայ. | կը սպասէ. | Մնան. | կը սպասեն։ |

1 Այսանկ մէկ ցով կը գրուի ստորադասականը կեցեմ, ու անով կը զատուի ապառնիէն կեցցեմ։

## Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Մնայի. | կը [illegible] | Մնայաք. | կը [illegible] |
| Մնայիր. | կը [illegible] | Մնայիք. | կը [illegible] |
| Մնայր. | կը [illegible] | Մնային. | կը [illegible] |

## Անցեալ կատարեալ.

| | |
|---|---|
| Մնացայ. | [illegible] |
| Մնացար. | [illegible] |
| Մնացաւ. | [illegible] |
| Մնացաք. | [illegible] |
| Մնացայք, ամնացարուք. | [illegible] |
| Մնացան. | [illegible] |

## Ապառնի.

| | |
|---|---|
| Մնացայց, ամնասցիմ. | [illegible], պիտի [illegible] |
| Մնասցիս. | [illegible], պիտի [illegible] |
| Մնասցի. | [illegible], պիտի [illegible] |
| Մնասցուք, ամնասցիմք. | [illegible], պիտի [illegible] |
| Մնասջիք, ամնասցիք. | [illegible], պիտի [illegible] |
| Մնասցին. | [illegible], պիտի [illegible] |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Մնացիր. | [illegible] |
| Մնասջիր, ամնայջիր. | [illegible], [illegible] |
| Մի՛ ամնար. | դ [illegible] |
| Մնացարուք, ամնացիք, ամնացայք. | [illegible] |
| . . . . | |
| Մի՛ ամնայք. | դ [illegible] |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Սնայցիմ. | սնուիմ, պիտի սնուիմ. |
| Սնայցիս. | սնուիս, պիտի սնուիս. |
| Սնայցի. | սնուի, պիտի սնուի. |
| Սնայցիմք. | սնուինք, պիտի սնուինք. |
| Սնայցիք, սնայջիք. | սնուիք, պիտի սնուիք. |
| Սնայցին. | սնուին, պիտի սնուին։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Սնանել. սնուիլ։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Սնուցեալ. սնուած, սնուելով։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Սնանելոց. սնուելու, որ պիտի սնուի։

188. Կը տեսնես որ կրաւորականին քանի մը տեղը ներգործականին պէս է։ Ասոնք աւելի որոշ հասկցուելու համար՝ անցեալ դերբայով ու լինիմ էականով ալ կ'ըլլան. Սնուցեալ լինիմ, լինէի, եղայ, լիցուք կամ եղիցուք, լիջիք կամ եղիջիք, սնուցեալ լինել։ Ասանկ գիտցիր մէկալ ամէն լծորդութեանց և ուրիշ կրաւորական խոնարհմանց վրայ ալ։

189. Ասոնց ալ սահմանական ներկան ու ստորադասականը իմ կ'ըլլայ երբեմն՝ երրորդ լծորդութեան պէս. Լուանիմ, լուանիցիմ, լուանիլ. բանիմ, բանիլ. բառնիմ, բառնիլ. խմանիմ, խմանիլ. մոռանիմ։

190. Ասանկ կը խոնարհին ներգործականներուն կրաւորականները,

| | |
|---|---|
| Կարդամ, կարդացայ, կարդացիր. | կանչուիմ, կարդացուիմ։ |
| Հաստատամ, հաստատացայ, հաստատացիր. | հաստատուիմ։ |
| Լուանամ, լուացայ, լուացիր. | լուացուիմ։ |
| Լամ, լացայ, լացիր. | լացուիմ։ |
| Բանամ, բացայ, բացիր. | բացուիմ։ |
| Բառնամ, բարձայ, բարձիր. | վերցուիմ, չեզոքաբար՝ վերնամ։ |

## ՀԱՍԱՐԱԿ ՈՒ ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

191 · Հասարակ բայերն որ ներգործական մօքով առնուին, ու կրաւորակերպ չէզոք բայերուն յատուկ տարբեր տեղերը, ինչպէս կատարեալը ու հրամայականը, երբեմն ներգործականին պէս ալ կ'ըլլան. Մոռանամ, մոռացայ կամ մոռաց, մոռացիր կամ մոռա. Որսամ, որսացայ կամ որսացի, որսացիր կամ որսա. Խմանամ, խմացիր կամ խմա, խմայ. — Ընթանամ, ընթացիր կամ ընթա, ընթաց. Զղջանամ. զղջամ, զղջացայ կամ զղջացի, զղջացիր կամ զղջա: Ասանկ ալ Լուանամ կրաւորականը չէզոքաբար առնելով (166), ջէւ-ջ-էՏ ...., կ'ըլլայ՝ լուացիր կամ լուա:

192 · Նոյնպէս ներգործական մօքով առնուած հասարակ բայերուն ու կրաւորակերպ չէզոք բայերուն ապառնին ալ շատ հեղ ներգործականին պէս կ'ըլլայ ջէՏ, ջէ-, ջէ, ջէՏ+, ջէ+, ջէՆ. Խմացես, խմացէ, խմացեն. Գոհացես, գոհացէ, գոհացեն: Ասանկ գիտցիր երրորդ լծորդութեան նոյնպիսի հասարակ ու չէզոք բայերուն ապառնիին համար ալ, ու ստորադասականին համար ալ, որ երբեմն ան ալ ներգործականին պէս ջէՏ, ջէ-, ջէ, ջէՏ+, ջէ+, ջէՆ կը վերջանայ:

193 · Նոյն լծորդութեանս հասարակ բայերն երբոր ներգործաբար առնուին, ու չէզոք բայերուն ստորադասականը՝ ամենեւին կրաւորականին պէս ջէՏ չվերջանար, թէ և աս խոնարհմանը տակը կ'երթան, հապա միշտ ներգործականին պէս կ'ըլլայ ջէՏ, ևն. Խմանամ, խմանայցեմ. Մոռանամ, մոռանայցես. Գոհանամ, գոհանայցէ. Դառնամ, դառնայցեմք. Ընթանամ, ընթանայցէք. Յուսամ, յուսայցեն: Ասանկ ալ Բանամ, բառնամ, չէզոքաբար, կը ...-ջ--էՏ, կը ...-Տ, կ'ըլլան՝ բանայցեմ, բառնայցեմ, ...-ջ--էՏ, ...-Տ:

### 194 · ՀԱՍԱՐԱԿ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| Ամանամ, ամացայ, ամացիր · | ...էՏ, ...ջէ...էՏ. ...-էՏ, ...ջ--էՏ: |
| Խմանամ, խմացայ, խմացիր կամ խմաց կամ խմա: | ...Տ. ...ջ--էՏ: |
| Մարգարէանամ, մարգարէացայ, մարգարէացիր կամ մարգա_ | |

| | |
|---|---|
| գարեաց կամ մարգարեա. | մարգարէանամ. մարգարէացուիմ։ |
| Մոռանամ, մոռացայ, մոռացու կ̃ մոռաց, մոռացիր կ̃ մոռա. | մոռնամ. մոռցուիմ։ |
| Ստանամ, ստացայ, ստացիր. | առնենամ, առնեմ. առնեցուիմ։ |
| Հոգամ, հոգացայ, հոգացիր. | հոգամ. հոգացուիմ։ |
| Որսամ, որսացայ կամ որսացի, որսացիր կամ որսա. | որս բռնեմ. բռնուիմ։ |

## 195. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| Գոհանամ, գոհացայ, գոհացիր, գոհանայցեմ. | շնորհակալ ըլլամ։ |
| Դառնամ, դարձայ, դարձիր կմ դարձ, դառնայցեմ. | դառնամ։ |
| Ընթանամ, ընթացայ, ընթացիր կամ ընթաց կամ ընթա, ընթանայցեմ. | քալեմ։ |
| Զղջանամ / Զղջամ } զղջացայ կ̃ զղջացի, զղջացիր կ̃ զղջա, զղջանայցեմ. | զղջամ։ |
| Հոգամ, հոգացայ կամ հոգացի, հոգացիր կամ հոգա, հոգայցեմ. | հոգ ընեմ։ |
| Յուսամ, յուսացայ կամ յուսացի, յուսացիր կամ յուսա, յուսայցեմ. | յուսամ։ |
| Ցնծամ, ցնծացայ կամ ցնծացի, ցնծացիր կամ ցնծա, ցնծայցեմ. | ուրախանամ։ |
| Արբենամ, արբեցայ, արբեցիր, արբենայցեմ. | գինովնամ։ |
| Մերձենամ, մերձեցայ, մերձեցիր, մերձենայցեմ. | մօտենամ։ |
| Յագենամ, յագեցայ, յագեցիր, յագենայցեմ. | կշտանամ։ |
| Քաղցենամ, քաղցեցայ, քաղցեցիր, քաղցենայցեմ. | անօթենամ։ |

## ԵՐԿՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ, Ե՛.

### 196. ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

Ներգործական ՍԻՐԵԼ. արմատ սէր, սիրել:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ.

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Սիրեմ. | կը սիրեմ. | Սիրեմք. | կը սիրենք. |
| Սիրես. | կը սիրես. | Սիրէք. | կը սիրէք. |
| Սիրէ. | կը սիրէ. | Սիրեն. | կը սիրեն: |

#### Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Սիրէի. | կը սիրէի. | Սիրէաք. | կը սիրէինք. |
| Սիրէիր. | կը սիրէիր. | Սիրէիք. | կը սիրէիք. |
| Սիրէր. | կը սիրէր. | Սիրէին. | կը սիրէին: |

#### Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեցի. | սիրեցի. | Սիրեցաք. | սիրեցինք. |
| Սիրեցեր. | սիրեցիր. | Սիրեցէք, սիրեցիք. | սիրեցիք. |
| Սիրեաց. | սիրեց. | Սիրեցին. | սիրեցին: |

#### Ապառնի.

| | |
|---|---|
| Սիրեցից, սիրեսցեմ. | սիրեմ, պիտի սիրեմ. |
| Սիրեսցես. | սիրես, պիտի սիրես. |
| Սիրեսցէ. | սիրէ, պիտի սիրէ. |
| Սիրեսցուք, սիրեսցեմք. | սիրենք, պիտի սիրենք. |
| Սիրեսջիք, սիրեսցէք. | սիրէք, պիտի սիրէք. |
| Սիրեսցեն. | սիրեն, պիտի սիրեն: |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեա · | սիրէ · | Սիրեցէք · | սիրեցէք · |
| Սիրեսջի՛ր, սիրիջի՛ր · | սիրէ, սիրես · | · · · | |
| Մի՛ սիրեր · | մի՛ սիրեր · | Մի՛ սիրէք · | մի՛ սիրէք ։ |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Սիրիցեմ · | սիրեմ, պիտի սիրեմ · |
| Սիրիցես · | սիրես, պիտի սիրես · |
| Սիրիցէ · | սիրէ, պիտի սիրէ · |
| Սիրիցեմք · | սիրենք, պիտի սիրենք · |
| Սիրիցէք, սիրիջիք · | սիրէք, պիտի սիրէք · |
| Սիրիցեն · | սիրեն, պիտի սիրեն ։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ · Սիրել · սիրել ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ · Սիրեցեալ, սիրեալ · սիրած, սիրելով ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ · Սիրելոց · սիրելու, որ պիտի սիրէ ։

197 · Նման կը խոնարհին

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Գրեմ, | գրեցի, | գրեա · | գրեմ ։ |
| Ըմբռնեմ, | ըմբռնեցի, | ըմբռնեա · | բռնեմ ։ |
| Կարեմ, | կարեցի, | կարեա · | կարեմ, կար կարեմ ։ |
| Շինեմ, | շինեցի, | շինեա · | շինեմ ։ |
| Փրկեմ, | փրկեցի, | փրկեա · | ազատեմ, փրկեմ ։ |
| Նմանեմ, | նմանեցի, | նմանեա · | նման ըլլամ ։ |
| Սերմանեմ, | սերմանեցի, | սերմանեա · | ցանեմ ։ |
| Վանեմ, | վանեցի, | վանեա · | վռնտեմ ։ |

198 · Նաեւ ի չորս բային արմատը այս ըլլալուն (168), կատարեալը ու ապառնին կ'ըլլայ այէ, այէց ։

| | |
|---|---|
| Ասեմ, ասացի, ասացից, ասա · | ըսեմ: |
| Գիտեմ, գիտացի, գիտացից, գիտա կ՟մ գիտեա · | գիտեմ: |
| Կարեմ, կարացի, կարացից, կարացիր · | կրնամ: |
| Մարթեմ, մարթացի, մարթացից, մարթացիր · | կրնամ: |

199 · ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Ամաչեմ, | ամաչեցի, | ամաչեա · | ամչնամ: |
| Դիմեմ, | դիմեցի, | դիմեա · | վազեմ: |
| Թագաւորեմ, | թագաւորեցի, | թագաւորեա · | թագաւորեմ: |
| Տիրեմ, | տիրեցի · | տիրեա · | տիրեմ: |
| Ժամանեմ, | ժամանեցի, | ժամանեա · | հասնիմ: |
| Մռնչեմ, | մռնչեցի, | մռնչեա · | մռմռամ: |

200 · ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Ներգործական ՏԵՍԱՆԵՄ · արմատ տես:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ ·

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Տեսանեմ · | կըտեսնեմ · | Տեսանեմք · | կըտեսնենք · |
| Տեսանես · | կըտեսնես · | Տեսանէք · | կըտեսնէք · |
| Տեսանէ · | կըտեսնէ · | Տեսանեն · | կըտեսնեն : |

Անցեալ անկատար ·

| | | | |
|---|---|---|---|
| Տեսանէի · | կըտեսնէի · | Տեսանէաք · | կըտեսնէինք · |
| Տեսանէիր · | կըտեսնէիր · | Տեսանէիք · | կըտեսնէիք · |
| Տեսանէր · | կըտեսնէր · | Տեսանէին · | կըտեսնէին : |

### Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Տեսի. | տեսայ. | Տեսաք, | տեսանք. |
| Տեսեր. | տեսար. | Տեսէք, տեսիք. | տեսաք. |
| Տես, ետես. | տեսաւ. | Տեսին. | տեսան։ |

### Ըղձական.

| | |
|---|---|
| Տեսից, տեսցեմ. | տեսնեմ, պիտի տեսնեմ. |
| Տեսցես. | տեսնես, պիտի տեսնես. |
| Տեսցէ. | տեսնէ, պիտի տեսնէ. |
| Տեսցուք, տեսցեմք. | տեսնենք, պիտի տեսնենք. |
| Տեսջիք, տեսցէք. | տեսնէք, պիտի տեսնէք. |
| Տեսցեն. | տեսնեն, պիտի տեսնեն։ |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Տես. | տես. | Տեսէք. | տեսէք. |
| Տեսջիր, տեսանիջիր. | տես, տեսնես. | | |
| Մի տեսաներ. | մի տեսներ. | Մի տեսանէք. | մի տեսնէք։ |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսանիցեմ. | տեսնեմ, պիտի տեսնեմ. |
| Տեսանիցես. | տեսնես, պիտի տեսնես. |
| Տեսանիցէ. | տեսնէ, պիտի տեսնէ. |
| Տեսանիցեմք. | տեսնենք, պիտի տեսնենք. |
| Տեսանիցէք, տեսանիջիք. | տեսնէք, պիտի տեսնէք. |
| Տեսանիցեն. | տեսնեն, պիտի տեսնեն։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Տեսանել. տեսնել։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Տեսեալ. տեսած, տեսնելով։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Տեսանելոց. տեսնելու, որ պիտի տեսնէ։

201. Ասանկ կը խոնարհին

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

| | | |
|---|---|---|
| Անիծանեմ, անիծի, անէծ. | | անիծեմ: |
| Արկանեմ, | արկի, արկ, էարկ. | ձգեմ, նետեմ: |
| Գտանեմ, | գտի, գիտ, եգիտ. | գտնեմ: |
| Դիզանեմ, | դիզի, դէզ, եդէզ. | դիզեմ: |
| Կլանեմ, | կլի, կուլ, եկուլ. | կլլեմ: |
| Հատանեմ, | հատի, հատ, եհատ. | կտրեմ: |
| Հարցանեմ, | հարցի, հարց, եհարց. | հարցնեմ: |
| Սպանանեմ, | սպանի, սպան, եսպան. | սպաննեմ, մեռցնեմ: |
| Ցուցանեմ, | ցուցի, ցոյց, եցոյց. | ցուցնեմ: |
| Հարկանեմ, | հարի, հար, եհար. | զարնեմ: |

202. Ասանկ կը խոնարհին նաեւ չորս բայն ալ պարզ արմատովը (168).

| | | | |
|---|---|---|---|
| Ածեմ, | ածի, | ած, էած. | բերեմ: |
| Բերեմ, | բերի, | բեր, եբեր. | բերեմ: |
| Հանեմ, | հանի, | հան, եհան. | հանեմ: |
| Հեղուսեմ, | հեղուսի, | հեղոյս. | թափեմ: |

203. Ասանկ կը խոնարհին ուցանեմ վերջացած ներգործական բայերն ալ՝ իրենց ոյց ածանցեալ արմատովը (168) ուսկից որ կ'ելլեն[1], որ ոյս, ոյզ ալ կ'ըլլայ.

Դարձուցանեմ, դարձուցի, դարձոյց, դարձո. — դարձնեմ:

Զեկուցանեմ, զեկուցի, զեկոյց, զեկո. իմացնեմ, իմաց տամ:

---

1 Ասոնց ոյց վերջացած արմատէն շինուած ըլլալուն ապացոյցն է, մէյ մը՝ օրինակ իմն Զեկուցանեմ բայը, որ ուրիշ մէկ բայէ մը չելլեր, հապա զեկոյց արմատէն. ասանկ ըսելու է մնացելոց ամենուն համար ալ: Մէյ մ'ալ որ, նոյն արմատը կատարեալին եզակի երրորդ դէմքն է, ինչպէս ամէն ուրիշ բայերունն ալ:

Մատուցանեմ, մատուցի, մատոյց, մատո. տամ, մօտ բերեմ:
Ամրացուցանեմ, ամրացուցի, ամրացոյց, ամրացո. ամրըցընեմ:
Ապրեցուցանեմ, ապրեցուցի, ապրեցոյց, ապրեցո. ապրեցընեմ:
Կորուսանեմ, կորուսի, կորոյս, կորո. կորսնցընեմ:
Փլուզանեմ, փլուզի, փլոյզ, փլո. փլըցընեմ:

204. Որովհետեւ այսպիսի բայերուն շատին նշանակութիւնը ընել տալ կամ ըլլալ տալ է, նոյն մտքով շատ տեղ Տամ ու Առնեմ բայերը կը բանին ամէն պարզ բայի հետ. Իմացուցանեմ ըսելու տեղը՝ կ՚ըսուի Տամ կամ Առնեմ քեզ իմանալ, առնեմ զքեզ՝ իմանալ, առնեմ՝ զի իմասցիս կամ իմանայցես. Գնացուցանեմ ըսելու տեղը՝ Տամ կամ Առնեմ գնալ, առնեմ զի գնասցես կամ գնայցես: Այսանկ ալ կ՚ըսուի Անցուցանեմ կամ Տամ անցանել. Խաղացուցանեմ կամ Տամ խաղալ. բայց ասոնցմէ չունեցողներուն հետ՝ հարկաւ ըսելու է Տամ ածել, տամ բերել, տամ տանել, և այլն. Նմանապէս Տամ անցուցանել, տամ խաղացուցանել, ուրիշի մը անցընել կուտամ, ուրիշի մը խաղցընել կուտամ: Տամ կամ Առնեմ լինել, առնեմ զի լինիցիս. ըլլալ կուտամ, կ՚ընեմ որ ըլլաս: Առնեմ զի ընթերցցի. կ՚ընեմ որ կարդայ կամ կարդացուի:

## 205. ՉԻԶՈՔ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Անցանեմ, | անցի, | անց, էանց. | անցնիմ: |
| Ելանեմ, | ելի, | ել. | ելլեմ: |
| Իջանեմ, | իջի, | էջ. | իջնամ: |
| Հասանեմ, | հասի, | հաս, եհաս. | հասնիմ: |
| Մտանեմ, | մտի, | մուտ, եմուտ. | մտնեմ: |
| Համբերեմ, | համբերի, | համբեր. | համբերեմ: |

206. Աս ետքինը Համբերեմ, համբերեցի ալ կ՚ըլլայ առջի օրինակին պէս: Նմանապէս ուրիշ բայերը՝ որ մէջին ան ձգուած է ներկային. Անտեսեմ, անտեսեցի. լրտեսեմ, լրտեսեցի. անիծեմ, անիծեցի. ձեռնարկեմ, ձեռնարկեցի. դիզեմ, դիզեցի. յուսահատեմ, յուսահատեցի. բռնահարեմ, բռնահարեցի: Այսանկ ալ Երկիր պագանեմ, կ՚ըլլայ երկիր պագի. իսկ Երկրպագեմ, երկրպագեցի. Վերածեմ կ՚ըլլայ վերածեցի կամ վերածի. Ակնածեմ, ակնածեցի. ակն ածեմ, ակն ածի:

# ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ, ԻՄ:

## 207· ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

### Կրաւորական, ՍԻՐԻՄ·

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ·

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Սիրիմ· | կը սիրուիմ· | Սիրիմք· | կը սիրուինք· |
| Սիրիս· | կը սիրուիս· | Սիրիք· | կը սիրուիք· |
| Սիրի· | կը սիրուի· | Սիրին· | կը սիրուին: |

#### Անցեալ անկատար·

| | | | |
|---|---|---|---|
| Սիրէի· | կը սիրուէի· | Սիրէաք· | կը սիրուէինք· |
| Սիրէիր· | կը սիրուէիր· | Սիրէիք· | կը սիրուէիք· |
| Սիրէր, սիրիւր· | կը սիրուէր· | Սիրէին· | կը սիրուէին: |

#### Անցեալ կատարեալ·

| | |
|---|---|
| Սիրեցայ· | սիրուեցայ· |
| Սիրեցար· | սիրուեցար· |
| Սիրեցաւ· | սիրուեցաւ· |
| Սիրեցաք· | սիրուեցանք· |
| Սիրեցայք, սիրեցարուք· | սիրուեցաք· |
| Սիրեցան· | սիրուեցան: |

#### Ապառնի·

| | |
|---|---|
| Սիրեցայց, սիրեսցիմ· | սիրուիմ, պիտի սիրուիմ· |
| Սիրեսցիս· | սիրուիս, պիտի սիրուիս· |
| Սիրեսցի· | սիրուի, պիտի սիրուի· |

| | |
|---|---|
| *Սիրեսցուք, սիրեսցիմք.* | սէրո–էնք, պէտք սէրո–էնք. |
| *Սիրեսջիք, սիրեսցիք.* | սէրո–էք, պէտք սէրո–էք. |
| *Սիրեսցին.* | սէրո–էն, պէտք սէրո–էն: |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| *Սիրեաց, սիրեցիր.* | սէրո–է. |
| *Սիրեսջիր, սիրիջիր.* | սէրո–է, սէրո–էս. |
| *Մի՛ սիրեր.* | Դ սէրո–էր. |
| *Սիրեցարուք, սիրեցայք.* | սէրո–էցէք. |
| . . . . | |
| *Մի՛ սիրէք.* | Դ սէրո–էք: |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| *Սիրիցիմ.* | սէրո–էմ, պէտք սէրո–էմ. |
| *Սիրիցիս.* | սէրո–էս, պէտք սէրո–էս. |
| *Սիրիցի.* | սէրո–է, պէտք սէրո–է. |
| *Սիրիցիմք.* | սէրո–էնք, պէտք սէրո–էնք. |
| *Սիրիցիք, սիրիջիք.* | սէրո–էք, պէտք սէրո–էք. |
| *Սիրիցին.* | սէրո–էն, պէտք սէրո–էն: |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. *Սիրել, սիրիլ.* սէրո–էլ:
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. *Սիրեցեալ, սիրեալ.* սէրո–ած, սէ–րո–էլու:
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. *Սիրելոց.* սէրէլո–, որ պէտք սէրո–է:

208. *Տես բաժնին 'ի* 188: *Նման կը խոնարհին ներգործականներուն կրաւորականները,*

| | | |
|---|---|---|
| *Գրիմ,* | *գրեցայ.* | գրո–էմ: |
| *Ընթեռնիմ,* | *ընթեռնեցայ.* | ըոնո–էմ: |
| *Կարիմ,* | *կարեցայ.* | կարո–էմ: |
| *Շինիմ,* | *շինեցայ.* | շէնո–էմ: |

| | | |
|---|---|---|
| Փրկիմ, | փրկեցայ · | ազատուիմ, ճրկուիմ, չե-գըք՝ ազատիմ։ |
| Ամաչիմ, | ամաչեցայ · | ամանը լեցուիմ։ |
| Սերմանիմ, | սերմանեցայ · | ցանուիմ։ |
| Վանիմ, | վանեցայ · | հանդուիմ։ |
| Սնիմ, | սնացայ · | սնուիմ։ |
| Գխտիմ, | գխտացայ · | ծեծցուիմ։ |

209 · Կարեմ, Մարթեմ, կրաւորական չեն ըլլար, սովորաբար չէզոքի պէս բանեցնուն համար։

ՀԱՍԱՐԱԿ ՈՒ ՉԵԶՈՔ ԲԱՅԵՐ

210 · Հասարակ բայերն որ ներգործաբար առնուին, հրամայականին միայն եա կ'ըլլայ, շատ անգամ ալ ներգործականին պէս եա · Խօսեաց, նայեաց, ողորմեաց · Դատեա, խօսեա, նայեա, ողորմեա ։ Խօսեցիր, նայեցիր, ողորմեցիր չըլլար ներգործական մօքով։

211 · Ասանկ երկու տեղ՝ եա կ'ըլլայ երբեմն աս օրինակիս չէզոք բայերուն ու չէզոքաբար առնուած կրաւորականներուն հրամայականն ալ · Աշխատեա, երկեա, ձեմեա ։ — Յայտնեա, լուսաւորեա, քաջալերեա ։

212 · Ներգործաբար առնուած հասարակ բայերուն ու կրաւորակերպ չէզոք բայերուն անորոշ դերբայն աւելի էլ կ'ըլլայ · Խօսել, նայել, ողորմել · — Աշխատել, երկել · որ իլ ալ կ'ըլլան · բայց ասոնք միայն էլ կ'ըլլան · Գտանել, կագել, ձեմել, վիճել ։ — Ասանկ ալ երկրորդ օրինակին · Ծնանել կամ ծնանիլ · Մեռանել կամ մեռանիլ ։

213 · ՀԱՍԱՐԱԿ ԲԱՅԵՐ

| | | |
|---|---|---|
| Բարբառիմ, | բարբառեցայ · | խօսիմ, ըսեմ · խօսուիմ, ըսուիմ։ |
| Գտանիմ, | գտեցայ · | գտնեմ · գտնուիմ։ |
| Խոստովանիմ, | խոստովանեցայ · | խոստովանեմ · խոստովանուիմ։ |
| Խօսիմ, | խօսեցայ · | խօսիմ · խօսուիմ։ |

| | | |
|---|---|---|
| Կամիմ, | կամեցայ · | կամիմ, ուզեմ· կամեցուեմ, ուզուեմ։ |
| Համարիմ, | համարեցայ · | սեպեմ, համրեմ· սեպուեմ, համրուեմ։ |
| Նայիմ, | նայեցայ · | Նայեմ· Նայուեմ։ |
| Ողորմիմ, | ողորմեցայ · | ողորմիմ· ողորմուեմ։ |

## 214· ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

| | | |
|---|---|---|
| Աշխատիմ, | աշխատեցայ · | աշխատեմ, յոգնեմ։ |
| Երևիմ, | երևեցայ · | երևնամ։ |
| Կաղիմ, | կաղեցայ · | կաղամ։ |
| Ճեմիմ, | ճեմեցայ · | ծանր գամ, վեր վար քալեմ։ |
| Մխճիմ, | մխճեցայ · | հաճախաուութեան ընեմ։ |
| Ապրիմ, | ապրեցայ · | ապրեմ։ |
| Բնակիմ, | բնակեցայ · | բնակեմ։ |
| Դադարիմ, | դադարեցայ · | դադրեմ, կենամ։ |

215· Հասարակ բայերէն մէկ քանին ներգործաբար, ու չէզոքներէն ալ աւելին, իմ վերջը էմ կը փոխեն ու ներգործականի պէս կը խոնարհին երբեմն· Դատեմ, դատեցի· Խոստովանիմ, խոստովանեցի· Համարեմ, համարեցի ։ — Ապրեմ, ապրեցի · Բնակեմ, բնակեցի · Դադարեմ, դադարեցի ։

216· Բայց չէզոքներէն մէկ քանին ալ՝ էմ փոխելին նէ, ներգործական կ'ըլլան · ինչպէս, Աշխատեմ, աշխատցնեմ, յոգնեցնեմ ըսել է · Խոնարհեմ, խոնարհեցնեմ· Բերկրեմ, ուրախացնեմ· Հնազանդեմ, հնազանդեցնեմ· Յիմարեմ, խենթեցնեմ։

### 217. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

## Կրաւորական, ՏԵՍԱՆԵԼ.

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ.

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| *Տեսանիմ.* | կըտեսնուիմ. | *Տեսանիմք.* | կըտեսնուինք. |
| *Տեսանիս.* | կըտեսնուիս. | *Տեսանիք.* | կըտեսնուիք. |
| *Տեսանի.* | կըտեսնուի. | *Տեսանին.* | կըտեսնուին։ |

#### Անցեալ անկատար.

| | |
|---|---|
| *Տեսանէի.* | կըտեսնուէի. |
| *Տեսանէիր.* | կըտեսնուէիր. |
| *Տեսանէր, տեսանիւր.* | կըտեսնուէր. |
| *Տեսանէաք.* | կըտեսնուէինք. |
| *Տեսանէիք.* | կըտեսնուէիք. |
| *Տեսանէին.* | կըտեսնուէին։ |

#### Անցեալ կատարեալ.

| | |
|---|---|
| *Տեսայ.* | տեսնուեցայ. |
| *Տեսար.* | տեսնուեցար. |
| *Տեսաւ.* | տեսնուեցաւ. |
| *Տեսաք.* | տեսնուեցանք. |
| *Տեսայք, տեսարուք.* | տեսնուեցաք. |
| *Տեսան.* | տեսնուեցան։ |

## Ըղձական.

| | |
|---|---|
| Տեսայց, տեսցիմ. | տեսնեմ, պիտի տեսնեմ. |
| Տեսցես. | տեսնես, պիտի տեսնես. |
| Տեսցէ. | տեսնէ, պիտի տեսնէ. |
| Տեսցուք, տեսցիմք. | տեսնենք, պիտի տեսնենք. |
| Տեսջիք, տեսցիք. | տեսնէք, պիտի տեսնէք. |
| Տեսցեն. | տեսնեն, պիտի տեսնեն։ |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսիր. | տեսնէ. |
| Տեսջիր, տեսանիջիր. | տեսնէ, տեսնես. |
| Մի՛ տեսանիր. | մի տեսներ. |
| Տեսարուք, տեսայք. | տեսնեցէք. |
| . . . . | |
| Մի՛ տեսանէք. | մի տեսնէք։ |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսանիցիմ. | տեսնեմ, պիտի տեսնեմ. |
| Տեսանիցես. | տեսնես, պիտի տեսնես. |
| Տեսանիցէ. | տեսնէ, պիտի տեսնէ. |
| Տեսանիցիմք. | տեսնենք, պիտի տեսնենք. |
| Տեսանիցէք, տեսանիջիք. | տեսնէք, պիտի տեսնէք. |
| Տեսանիցեն. | տեսնեն, պիտի տեսնեն։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Տեսանել, տեսանիլ. տեսնել։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Տեսեալ. տեսած, տեսնելով։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Տեսանելոց. տեսնելու, որ պիտի տեսնուի։

218 · Տես ըսածնիս 'ի 188 : Ասանկ կը խոնարհին ներգործականներուն կրաւորականները ,

Անիծանիմ, անիծայ · անիծուիմ :
Արկանիմ, արկայ · ձգուիմ, նետուիմ :
Գտանիմ, գտայ · գտուիմ, գտնուիմ :
Դիզանիմ, դիզայ · դիզուիմ :
Կլանիմ, կլայ · կլլուիմ :
Հատանիմ, հատայ · կտրուիմ, չէզոքաբար՝ փրթիմ :
Հարցանիմ, հարցայ · հարցուիմ :
Սպանանիմ, սպանայ · սպաննուիմ, մեռցուիմ :
Ցուցանիմ, ցուցայ · ցուցուիմ :
Հարկանիմ, հարայ · զարնուիմ :

Ածիմ, ածայ · բերուիմ :
Բերիմ, բերայ · բերուիմ :
Հանիմ, հանայ · հանուիմ (դուրս) :
Հեղուսիմ, հեղուսայ · թափուիմ :

Պարծուցանիմ, պարծուցայ · պարծուիմ :
Զեկուցանիմ, զեկուցայ · իմացուիմ, իմաց տրուիմ :
Մատուցանիմ, մատուցայ · տրուիմ, մօտ բերուիմ :
Կորուսանիմ, կորուսայ · կորսնցուիմ, կորուսուիմ, չէզոք՝ կորսուիմ :
Փլուզանիմ, փլուզայ · փլցուիմ, չէզոքաբար՝ փլիմ :

219 · Աս ուցանեմ բայերուն երկամները , որ ույց ածանցեն 'ի զատ՝ այ , եայ ալ ունին մէջերնին , սովոր չեն կրաւորական ըլլալու · անոնց տեղը չէզոքները կը բանին · Ամրացուցանիմ, ապրեցուցանիմ ըսելու տեղը՝ ամրանամ, ապրիմ կ'ըսուի :

## 220. ՀԱՍԱՐԱԿ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| Ագանիմ, ագայ, ագիր, ագուցեալ, ագեալ. | հագնիլ. հագնուիլ։ |
| Ծնանիմ, ծնայ, ծնիր, ծնեալ. | ծնանիլ, ծնիլ կամ ծնուիլ։ |
| Ուսանիմ, ուսայ, ուսիր, ուսարուք կամ ուսիք, ուսեալ. | սորվիլ. սորվուիլ։ |
| Սկսանիմ, սկսայ, սկսիր, սկսարուք, սկսեալ. | սկսիլ. սկսուիլ։ |
| Տանիմ, տարայ, տար՝ ներգործական. տարայք, տարերուք, տարեալ. | տանիլ. տարուիլ։ |

## 221. ՉԵԶՈՔ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| Ագանիմ, ագայ, ագիր, ագարուք կամ ա- գերուք. ագուցեալ. | տեղ մը իջնալ, գիշեր իջնալ։ |
| Անկանիմ, անկայ, անկիր, անկերուք, անկեալ. | իյնալ։ |
| Հեծանիմ, հեծայ, հեծիր, հեծարուք, հեծեալ. | հեծնալ։ |
| Մեռանիմ, մեռայ, մեռիր, մեռարուք, մեռեալ. | մեռնիլ։ |
| Նստիմ, նստայ, նիստ (211), նստարուք, նստեալ. | նստիլ։ |

222. Ասանկ կը խոնարհին՝ չիլ, նչիլ ու մէկ երկու նչիլ, անիլ վերջացած չեզոք բայերն ալ։ Բայց քանի մը տեղ սովորաբար կոր մը տարբերութիւն ունենալուն՝ ամբողջ դնենք օրինակ մը.

223. Եզական Յոգնական

ՍՀՄ.

ներկ. Թաքչիմ. կը պահուըտիմ. Թաքչիմք. կը պահուըտինք.
Թաքչիս. Թաքչիք.
Թաքչի. Թաքչին.
անց. Թաքչէի. Թաքչէաք.
Թաքչէիր. Թաքչէիք.
Թաքչէր. Թաքչէին.
կատ. Թաքեայ. Թաքեաք.
Թաքեար. Թաքեայք, Թաքերուք.
Թաքեաւ. Թաքեան.
ապա. Թաքեայց, Թաքիցեմ. Թաքիցուք, Թաքիցեմք.
Թաքիցես. Թաքիջիք, Թաքիցէք.
Թաքիցէ. Թաքիցեն.
ՀՐԱՄ. Թաքիր. Թաքերուք, Թաքեայք.
Թաքիջիր, Թաքչիջիր. . . . .
Մի՛ թաքչիր. Մի՛ թաքչիք.
ՍՏՈՐ. Թաքչիցիմ. Թաքչիցիմք.
Թաքչիցիս. Թաքչիցիք, Թաքչիջիք.
Թաքչիցի. Թաքչիցին.
ԴԵՐԲ. Թաքչել.— Թաքուցեալ, երբեմն Թաքեալ.— Թաքչելոց։

Թռչիմ, Թռեայ, Թռիր, Թռուցեալ. թռչիմ։
Հանգչիմ, հանգեայ, հանգիր, հանգուցեալ. հանգչիմ։
Մատչիմ, մատեայ, մատիր, մատուցեալ. մօտենամ, մօտենամ։
Փախչիմ, փախեայ, փախիր, փախուցեալ. փախչիմ։
Երկնչիմ, երկեայ, երկիր, երկուցեալ. վախնամ։
Կորնչիմ, կորեայ, կորիր, կորուսեալ. կորսուիմ։
Մարտնչիմ, մարտեայ, մարտիր, մարտուցեալ. կռուիմ։
Յարնչիմ, յարեայ, յարիր, յարուցեալ. ելլեմ, կանգնամ, յարձակիմ։

Մեղանչեմ, մեղայ, մեղիր, մեղարուք, մե-ղանչիցեմ, մեղուցեալ. մեղանչէմ։
Յանցանեմ, յանցեայ կամ յանցայ, յանցիր, յանցանիցեմ, յանցուցեալ, յանցեալ. ախալէմ։
— Մարտնչիմ, մարտնչեցայ. Մեղանչեմ, մեղանչեցի ալ կ'ըլլայ երբեմն։

## ԶՈՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

224. Ներգործական ԶԵՆՈՒՄ. արմատ զէն։

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Զենում. | հըմօրթէմ. | Զենումք. | հըմօրթէնք. |
| Զենուս. | հըմօրթէս. | Զենուք. | հըմօրթէք. |
| Զենու. | հըմօրթէ. | Զենուն. | հըմօրթէն։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Զենուի[1]. | հըմօրթէի. | Զենուաք. | հըմօրթէինք. |
| Զենուիր. | հըմօրթէիր. | Զենուիք. | հըմօրթէիք. |
| Զենոյր. | հըմօրթէր. | Զենուին. | հըմօրթէին։ |

Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Զենի. | մօրթեցի. | Զենաք. | մօրթեցինք. |
| Զեներ. | մօրթեցիր. | Զենէք, զենիք. | մօրթեցիք. |
| Զեն, եզեն. | մօրթեց. | Զենին. | մօրթեցին։ |

1 Շատ անգամ զենոյի, զենոյիր, զենոյաք, զենոյիք, զենոյին ալ կը գրուի։

## Ըղձական.

| | |
|---|---|
| Օ ենից, զենցեմ. | Սորվէմ, պէտք սորվէմ. |
| Օ ենցես. | Սորվէս, պէտք սորվէս. |
| Օ ենցէ. | Սորվէ, պէտք սորվէ. |
| Օ ենցուք, զենցեմք. | Սորվէնք, պէտք սորվէնք. |
| Օ ենջիք, զենցէք. | Սորվէք, պէտք սորվէք. |
| Օ ենցեն. | Սորվէն, պէտք սորվէն։ |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Օ են. | Սորվէ. | Օ ենէք. | Սորվեցէք. |
| Օ ենջիր. | Սորվէ, սորվէս. | . . . | |
| Մի զենուր. | Մի սորվէր. | Մի զենուք. | Մի սորվէք։ |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Օ ենուցում. | Սորվէմ, պէտք սորվէմ. |
| Օ ենուցուս. | Սորվէս, պէտք սորվէս. |
| Օ ենուցու. | Սորվէ, պէտք սորվէ. |
| Օ ենուցումք. | Սորվէնք, պէտք սորվէնք. |
| Օ ենուցուք. | Սորվէք, պէտք սորվէք. |
| Օ ենուցուն. | Սորվէն, պէտք սորվէն։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Օ ենուլ. Սորվէլ։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Օ ենեալ. Սորված, սորվելուն։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Օ ենլոց. Սորվելու, որ պէտք սորվէ։

225. Նման կը խոնարհին

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Արգելում, | արգելի, | արգել. | արգելեմ, թող չտամ։ |
| Թողում, | թողի, | թող, եթող. | թողամ, թող տամ։ |
| Կիզում, | կիզի, | կէզ, եկէզ. | էրեմ։ |
| Հեղում, | հեղի, | հեղ, եհեղ. | թափեմ։ |
| Յաւելում, | յաւելի, | յաւել. | աւելցընեմ։ |
| Առնում, | առի, | առ, էառ. | առնում, առնեմ։ |
| Ընկենում, | ընկեցի, | ընկեաց կամ ընկէց. | նետեմ, ձգեմ։ |
| Լնում, | լցի, | լից, ելից. | լեցնեմ։ |
| Խնում, | խցի, | խից, եխից. | թխեմ, գոցեմ։ |

226. Սա խոնարհմանս տակը չեզոք չկայ, ըսել է որ աս ծորդութիւնս ներգործակերպ չեզոք չունի։

227. Կրաւորական, ՕԾԵՆՈՒՄ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Օծենում. | կըսրբուեմ. | Օծենումք. | կըսրբուինք. |
| Օծենուս. | կըսրբուես. | Օծենուք. | կըսրբուիք. |
| Օծենու. | կըսրբուի. | Օծենուն. | կըսրբուին։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Օծենուի. | կըսրբուէի. | Օծենուաք. | կըսրբուէինք. |
| Օծենուիր. | կըսրբուէիր. | Օծենուիք. | կըսրբուէիք. |
| Օծենոյր. | կըսրբուէր. | Օծենուին. | կըսրբուէին։ |

## [illegible]

| | |
|---|---|
| Օ ենայ · | [illegible] · |
| Օ ենար · | [illegible] · |
| Օ ենաւ · | [illegible] · |
| Օ ենաք · | [illegible] · |
| Օ ենայք , զենարուք · | [illegible] · |
| Օ ենան · | [illegible] : |

## [illegible]

| | |
|---|---|
| Օ ենայց , զենցիմ : | [illegible] , [illegible] [illegible] · |
| Օ ենցիս · | [illegible] , [illegible] [illegible] · |
| Օ ենցի · | [illegible] , [illegible] [illegible] · |
| Օ ենցուք , զենցիմք · | [illegible] , [illegible] [illegible] · |
| Օ ենջիք , զենցիք · | [illegible] , [illegible] [illegible] · |
| Օ ենցին · | [illegible] , [illegible] [illegible] : |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Օ ենիր · | [illegible] · |
| Օ ենջիր · | [illegible] , [illegible] · |
| Մի զենուր · | [illegible] [illegible] · |
| Օ ենարուք , զենայք · | [illegible] · |
| · · · · | |
| Մի զենուք · | [illegible] [illegible] : |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Օ ենուցում · | [illegible] , [illegible] [illegible] · |
| Օ ենուցուս · | [illegible] , [illegible] [illegible] · |
| Օ ենուցու · | [illegible] , [illegible] [illegible] · |

Զենուցումք · մորթուինք, պէտք մորթուինք ·
Զենուցուք · մորթուիք, պէտք մորթուիք ·
Զենուցուն · մորթուին, պէտք մորթուին ։

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ · Զենուլ · մորթուիլ ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ · Զենեալ · մորթուած, մորթուելով ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ · Զենլոց · մորթուելու, որ պէտք մոր-
թուի ։

228 · Տես ըստ ծնխս 'ի 188 ։ Ինչպէս կը տեսնես, աս ըծորդութեան կատարեալը, ապառնին ու հրամայականը նոյն է ամենեւին երկրորդ ու երրորդ ըծորդութեան երկրորդ օրինակներուն հետ ։

229 · Ոմանց սահմանական ներկան ու ստորադասականը իմ ալ կ'ըլլայ երբեմն · Զենանիմ, զենանիցիմ, զենանիլ · Թողանիմ, թողանիլ · Հեղանիմ, հեղանիլ · Ըմանիմ, ըմանիլ ։

230 · Ասանկ կը խոնարհին ներգործականներուն կրաւորականները,

| | | |
|---|---|---|
| Արգելում, | արգելայ · | արգիլուիմ ։ |
| Թողում, | թողայ · | թողուիմ, չէզոք՝ մնամ ։ |
| Կիզում, | կիզայ · | էրուիմ, — էրիմ ։ |
| Հեղում, | հեղայ · | թափուիմ, — թափիմ ։ |
| Յաւելում, | յաւելայ · | աւելցուիմ, — աւելնամ ։ |
| Առնում, | առայ · | առնուիմ ։ |
| Ընկենում, | ընկեցայ · | նետուիմ, ձգուիմ, — իյնամ ։ |
| Լնում, | լցայ · | լեցուիմ ։ |
| Խնում, | խցայ · | թխուիմ, գոցուիմ ։ |

## 231. ՀԱՄԱՌԱԿ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| Զգենում, զգեցայ, զգեցիր. | հագնըյըմ. հագընտըմ։ |
| Ընթեռնում, ընթերցայ, ընթերցիր. | օքուրում. օքուտում։ |
| Կալում / Կալնում } կալայ, կալ կամ կա, կա-լէք՝ ներգործական. կա-լուք, կալայք. | թութէմ. թութտըմ։ |
| Կլնում, կլայ, կլեր. | յուտէմ. յուտտըմ։ |
| Հեծնում, հեծայ, հեծիր. | բինէմ. բինտիմ։ |

## 232. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

Ասոնցմէ որոնց կատարեալը եալ է, չէմ բայերուն պէս կը խոնարհին (223), շատը չէմ ալ կ'ըլլան. մէկ քանին ալ տեղ տեղ քիչ մը կը խոտորին.

| | |
|---|---|
| Զբօսնում, զբօսայ, զբօսեալ. | կէզմէք (սէֆա) ընէմ։ |
| Յենում, յեցայ, յեցեալ. | դայանըրըմ։ |
| Ջեռնում, ջեռայ, ջեռեալ. | ըսընըմ։ |
| Երդնում, երդուայ, երդուեալ. | եմին ընէմ։ |
| Քաղցնում, քաղցեայ, քաղցեալ. | աճըքընըմ։ |
| Զարթնում, զարթեայ, զար-թուցեալ. | ույանըրըմ։ |
| Թաքնում, թաքեայ, թաքուցեալ. | սագլանըրըմ։ |
| Պակնում, պակեայ, պակուցեալ. | քորքարըմ։ |
| Ցածնում, ցածեայ, ցածուցեալ. | ալչագըմ, էնիյորըմ։ |
| Ցասնում, ցասեայ, ցասուցեալ. | գըզըյորըմ։ |
| Փախնում, փախեայ, փախուցեալ. | քաչարըմ։ |

## ԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ

233. Քանի մը բայ կայ, որ տեղ տեղ կը խոտորին կանոնաւոր խոնարհմունքէ, կամ թէ ըսենք՝ երկու անկատար բայէ մէկ լման բայ մը կ՚ըլլան. ու ասոնք են.

### ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ

234. Ներգործական ՏԱԼ. արմատ տու-, տուր.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. ներկ. | Տամ. կուտամ. | Տամք. կուտանք. |
| | Տաս. | Տայք |
| | Տայ. | Տան. |
| անց. | Տայի. | Տայաք. |
| | Տայիր. | Տայիք. |
| | Տայր. | Տային. |
| կտր. | Ետու. | Տուաք. |
| | Ետուր. | Ետուք. |
| | Ետ. | Ետուն. |
| ապռ. | Տաց, տացեմ. | Տացուք, տացեմք. |
| | Տացես. | Տաջիք, տացէք. |
| | Տացէ. | Տացեն. |
| ՀՐԱՄ. | Տուր. | Տուք. |
| | Տաջիր, տայջիր. | . . . |
| | Մի տար. | Մի տայք. |
| ՍՏՈՐ. | Տայցեմ. | Տայցեմք. |
| | Տայցես. | Տայցէք, տայջիք. |
| | Տայցէ. | Տայցեն. |

ԴԵՐԲ. Տալ. — Տուեալ. — Տալոց.

### 235. Կրաւորական.

| | Եզական | Յոգնական |
|---|---|---|
| ՍՀՄ. կատ. | Տուայ. տրուեցայ. | Տուաք. տրուեցանք. |
| | Տուար. | Տուայք. |
| | Տուաւ. | Տուան. |
| ապա. | Տացիմ, տուայց. | Տացիմք. |
| | Տացիս. | Տացիք. |
| | Տացի. | Տացին. |
| ՍՏՈՐ. | Տայցիմ. | Տայցիմք. |
| | Տայցիս. | Տայցիք, տայջիք. |
| | Տայցի. | Տայցին. |

ԴԵՐԲ. ԱՆՑԵԱԼ. Տուեալ, տուեցեալ։

236. Պակաս տեղերը սովորաբար կ՚ըլլայ Տուեալ լինիմ, լինէի, լեր, լինել։ Բայց կայ աւ Տուիմ, տուիս, տուի. տուիմք, տուիք, տուին։

### 237. Չէզոք ԳՆԱՄ. արմատ էկ։

| | Եզական | Յոգնական |
|---|---|---|
| ՍՀՄ. Ներկ. | Գնամ. երթամ. | Գնամք. երթանք. |
| | Գնաս. | Գնայք. |
| | Գնայ. | Գնան. |
| անկ. | Գնայի. | Գնայաք. |
| | Գնայիր. | Գնայիք. |
| | Գնայր. | Գնային. |
| կատ. | Եկի. | Եկաք. |
| | Եկիր. | Եկիք[1]. |
| | Եկն. | Եկին. |

---

1 Եկէք կամ Եկայք չըլլար ամենեւին կատարեալին յոգնակի երկրորդ դէմքը։

| | | |
|---|---|---|
| ապա. | Ելից, ելեսցեմ. | Ելեսցուք, ելեսցեմք. |
| | Ելեսցես. | Ելեսջիք, ելեսցէք. |
| | Ելեսցէ. | Ելեսցեն. |
| ՀՐԱՄ. | Ել. | Ելայք. |
| | Ելեսջիր, գայջիր. | . . . |
| | Մի՛ գար. | Մի՛ գայք. |
| ՍՏՈՐ. | Գայցեմ. | Գայցեմք. |
| | Գայցես. | Գայցէք, գայջիք. |
| | Գայցէ. | Գայցեն. |

ԴԵՐԲ. Գալ. — Ելեալ. — Գալոց:

238. Չէզոք ԵՐԹԱԼ. արմատ երթ, չեք[1]:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. Ներկ. | Երթամ. չ'երթամ. | Երթամք. չ'երթանք. |
| | Երթաս. | Երթայք. |
| | Երթայ. | Երթան. |
| Անկ. | Երթայի. | Երթայաք. |
| | Երթայիր. | Երթայիք. |
| | Երթայր. | Երթային. |
| Կտր. | Չոգայ, չոքայ. | Չոգաք. |
| | Չոգար. | Չոգայք. |
| | Չոգաւ. | Չոգան. |
| ապա. | Երթայց, երթիցեմ. | Երթիցուք, երթիցեմք. |
| | Երթիցես. | Երթիջիք, երթիցէք. |
| | Երթիցէ. | Երթիցեն. |
| ՀՐԱՄ. | Երթ, չոգ. | Երթայք. |
| | Երթիջիր, երթայջիր. | . . . |
| | Մի՛ երթար. | Մի՛ երթայք. |

1 Չեք արմատէն կայ Չոգամ, չոգաս, չոգայ, չոգայի, չոգային, չոգալ. որ անսովոր են. միայն կատարեալը չեքոյ սովորական եղեր է. ու չեք հրամայականը լաւ գրոց մէջ կայ:

| | | |
|---|---|---|
| ՍՏՈՐ. | Երթայցեմ. | Երթայցեմք. |
| | Երթայցես. | Երթայցէք, երթայջիք. |
| | Երթայցէ. | Երթայցեն. |

ԴԵՐԲ. Երթալ. — Երթեալ. — Երթալոց:

## ԵՐԿՐՈՐԴ ՈՒ ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ

239. Ներգործական ԱՌՆԵԼ. առնում, արար:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. | | |
| Ներկ. | Առնեմ. կ'ընեմ, կըշինեմ. | Առնեմք. կ'ընենք, կըշինենք: |
| | Առնես. | Առնէք. |
| | Առնէ. | Առնեն. |
| Անց. | Առնէի. | Առնէաք. |
| | Առնէիր. | Առնէիք. |
| | Առնէր. | Առնէին. |
| Կատ. | Արարի. | Արարաք. |
| | Արարեր. | Արարէք, արարիք. |
| | Արար. | Արարին. |
| Ապա. | Արարից, արասցեմ. | Արասցուք, արասցեմք. |
| | Արասցես. | Արասջիք, արասցէք. |
| | Արասցէ. | Արասցեն. |
| ՀՐԱՄ. | Արա. | Արարէք. |
| | Արասջիր, առնիջիր. | . . . |
| | Մի առներ. | Մի առնէք. |
| ՍՏՈՐ. | Առնիցեմ. | Առնիցեմք. |
| | Առնիցես. | Առնիցէք, առնիջիք. |
| | Առնիցէ. | Առնիցեն. |

ԴԵՐԲ. Առնել. — Արարեալ. — Առնելոց:

### 240. Կրաւորական, ԸՆԿՆԻԼ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. | | |
| ՆԵՐԿ. | Ընկնիմ. կ'իյնեմ, կ'իյնամ. | Ընկնիմք. կ'իյնենք, կ'իյնանք. |
| | Ընկնիս. | Ընկնիք. |
| | Ընկնի. | Ընկնին. |
| ԱՆՑ. | Ընկնէի. | Ընկնէաք. |
| | Ընկնէիր. | Ընկնէիք. |
| | Ընկնէր. | Ընկնէին. |
| ԿՏՐ. | Անկայ. | Անկաք. |
| | Անկար. | Անկայք. |
| | Անկաւ. | Անկան. |
| ԱՊԱ. | Անկայց, անկցիմ. | Անկցուք, անկցիմք. |
| | Անկցիս. | Անկջիք, անկցիք. |
| | Անկցի. | Անկցին. |
| ՀՐԱՄ. | —— | —— |
| | Անկջիր, անկնիջիր. | . . . . |
| | Մի՛ անկնիր. | Մի՛ անկնիք. |
| ՍՏՈՐ. | Ընկնիցիմ. | Ընկնիցիմք. |
| | Ընկնիցիս. | Ընկնիցիք, անկնիջիք. |
| | Ընկնիցի. | Ընկնիցին. |

ԴԵՐԲ. Ընկնել, անկնիլ. — Անկեալ. — Ընկնելոյ:

### 241. Ներգործական ԳՆԵԼ. արմատ գն:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. ՆԵՐԿ. | Գնեմ. կը գնեմ. | Գնեմք. կը գնենք. |
| | Գնես. | Գնէք. |
| | Գնէ. | Գնեն. |
| ԱՆՑ. | Գնէի. | Գնէաք. |
| | Գնէիր. | Գնէիք. |
| | Գնէր. | Գնէին. |

| | | |
|---|---|---|
| Կատ․ | Եդի․ | Եդաք․ |
| | Եդիր, եդեր․ | Եդիք․ |
| | Եդ․ | Եդին․ |
| Ապա․ | Եդից, դիցեմ․ | Դիցուք, դիցեմք․ |
| | Դիցես․ | Դիջիք, դիցէք․ |
| | Դիցէ․ | Դիցեն․ |
| ՀՐԱՄ․ | Դիր․ | Դիք․ |
| | Դիջիր, դնիջիր․ | ․ ․ ․ |
| | Մի՛ դներ․ | Մի՛ դնէք․ |
| ՍՏՈՐ․ | Դնիցեմ․ | Դնիցեմք․ |
| | Դնիցես․ | Դնիցէք, դնիջիք․ |
| | Դնիցէ․ | Դնիցեն․ |

ԴԵՐԲ․ Դնել․ — Եդեալ․ — Դնելոց։

## 242․ Կրաւորական, ԴՆԻՄ․

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ․ ՆԵՐԿ․ | Դնիմ․ կը դրուիմ, կամ․ | Դնիմք․ կը դրուինք, կանք․ |
| | Դնիս․ | Դնիք․ |
| | Դնի․ | Դնին․ |
| Անկ․ | Դնէի․ | Դնէաք․ |
| | Դնէիր․ | Դնէիք․ |
| | Դնէր, դնիւր․ | Դնէին․ |
| Կատ․ | Եդայ․ | Եդաք․ |
| | Եդար․ | Եդայք, եդարուք․ |
| | Եդաւ․ | Եդան․ |
| Ապա․ | Եդայց, դիցիմ․ | Դիցուք, դիցիմք․ |
| | Դիցիս․ | Դիջիք, դիցիք․ |
| | Դիցի․ | Դիցին․ |
| ՀՐԱՄ․ | —— | Եդարուք, եդայք․ |
| | Դիջիր, դնիջիր․ | ․ ․ ․ |
| | Մի՛ դնիր․ | Մի՛ դնիք․ |

| | | |
|---|---|---|
| ՍՏՈՐ. | Գնիցիմ: | Գնիցիմք. |
| | Գնիցիս. | Գնիցիք, գնիջիք. |
| | Գնիցի. | Գնիցին. |

ԴԵՐԲ. Գնել, գնիլ. — Եղեալ. — Գնելոյ:

243. ՝Ներգործական ՈՒՏԵԼ. արմատ (ուտ), կեր:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. Ներկ. | Ուտեմ. կ'ուտեմ. | Ուտեմք. կ'ուտենք. |
| | Ուտես. | Ուտէք. |
| | Ուտէ. | Ուտեն. |
| Անկ. | Ուտէի. | Ուտէաք. |
| | Ուտէիր. | Ուտէիք. |
| | Ուտէր. | Ուտէին. |
| Կատ. | Կերայ[1]. | Կերաք. |
| | Կերար. | Կերայք. |
| | Կերաւ, եկեր. | Կերան. |
| Ապառ. | Կերայց, կերիցեմ. | Կերիցուք, կերիցեմք. |
| | Կերիցես. | Կերիջիք, կերիցէք. |
| | Կերիցէ. | Կերիցեն. |
| ՀՐԱՄ. | Կեր. | Կերայք, կերէք. |
| | Կերիջիր, ուտիջիր. | . . . |
| | Մի՛ ուտեր. | Մի՛ ուտէք. |
| ՍՏՈՐ. | Ուտիցեմ. | Ուտիցեմք. |
| | Ուտիցես. | Ուտիցէք, ուտիջիք. |
| | Ուտիցէ. | Ուտիցեն. |

ԴԵՐԲ. Ուտել. — Կերեալ. — Ուտելոյ:

---

1 Կերի, կերեր, կերիւ, կերին, ապառնի կերից, չգտուեցաւ բուն Նախնեաց գրոց մէջ:

## 244. Կրաւորական, ՈՒՏԻԼ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. Ներկ. | Ուտիմ. Կ'ուտուիմ. | Ուտիմք. Կ'ուտուինք. |
| | Ուտիս | Ուտիք. |
| | Ուտի. | Ուտին. |
| Անկ. | Ուտէի. | Ուտէաք. |
| | Ուտէիր. | Ուտէիք. |
| | Ուտէր. | Ուտէին. |
| Անց. | Կերայ. | Կերաք. |
| | Կերար. | Կերայք. |
| | Կերաւ. | Կերան. |
| Ապա. | Կերայց, կերիցիմ. | Կերիցուք, կերիցիմք. |
| | Կերիցիս. | Կերիջիք, կերիցիք. |
| | Կերիցի. | Կերիցին. |
| ՀՐԱՄ. | — | — |
| | Կերիջիր, ուտիջիր. | . . . |
| | Մ՛ի ուտիր. | Մ՛ի ուտիք. |
| ՍՏՈՐ. | Ուտիցիմ. | Ուտիցիմք. |
| | Ուտիցիս. | Ուտիցիք, ուտիջիք. |
| | Ուտիցի. | Ուտիցին. |

ԴԵՐԲ. Ուտել, ուտիլ. — Կերեալ. — Ուտելոց:

## 245. Չեզոք ՅԱՌՆԵԼ. արմատ յար ՝ կամ յարեր:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. | | |
| Ներկ. | Յառնեմ. որ է կ'ելլեմ. | Յառնեմք. որ է կ'ելլենք. |
| | Յառնես. | Յառնէք. |
| | Յառնէ. | Յառնեն. |

---

1 Այս բային ու Յառնչիմ բային (223) արմատը մէկ ըլլալուն, խոնարհումին ալ նման է:

| | | |
|---|---|---|
| անկ. | Յառնէի. | Յառնէաք. |
| | Յառնէիր. | Յառնէիք. |
| | Յառնէր. | Յառնէին. |
| կտր. | Յարեայ. | Յարեաք. |
| | Յարեար. | Յարեայք, յարերուք. |
| | Յարեաւ. | Յարեան. |
| ապռ. | Յարեայց, յարիցեմ. | Յարիցուք, յարիցեմք. |
| | Յարիցես. | Յարիջիք, յարիցէք. |
| | Յարիցէ. | Յարիցեն. |
| ՀՐԱՄ. | Արի, յարիր. | Արիք, յարիք, յարերուք. |
| | Յարիջիր՝ յառնիջիր. | . . . |
| | Մի յառներ. | Մի յառնէք. |
| ՍՏՈՐ. | Յառնիցեմ. | Յառնիցեմք. |
| | Յառնիցես. | Յառնիցէք, յառնիջիք. |
| | Յառնիցէ. | Յառնիցեն. |

ԴԵՐԲ. Յառնել. — Յարուցեալ. — Յառնելոց։

246. Արտաքին բայերուն տեղ տեղ անսովոր կերպերն ալ կայ, որ չգրինք։

## ՊԱԿԱՍԱՒՈՐ ԲԱՅԵՐ

247. Քանի մը բայեր ալ կան, որ տեղ տեղ կը պակսին, և ուրիշ ամբողջ բայէ կը լեցուին. և ասոնք են.

### ԵՐԿՐՈՐԴ ՈՒ ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ

### ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿԻՆ ՊԷՍ

248. Ներգործական ԸՄՊԵԼ. արմատ արբ։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. կտր. | Արբի. խմեցի. | Արբաք. խմեցինք. |
| | Արբեր. | Արբէք, արբիք. |
| | Արբ, էարբ. | Արբին. |

| | | |
|---|---|---|
| ԱՊԱ. | Արբից, արբցեմ. | Արբցուք, արբցեմք. |
| | Արբցես. | Արբջիք, արբցէք. |
| | Արբցէ. | Արբցեն. |
| ՀՐԱՄ. | Արբ. | Արբէք. |
| | Արբջիր. | . . . |
| ԴԵՐԲ. ԱՆՑԵԱԼ. | Արբեալ։ | |

249. Մնացածը կը լեցընէ Ըմպեմ, ըմպեցի, ամբողջ բայէն. ինչպէս կրաւորականն ալ, որ կ'ըլլայ նաև Արբեալ լինիմ, եղէ, և այլն։

250. Աներգործական ԼՈՒԱՅ. արմատ ԼՍ, ԼՍԵԼ։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. ԿԱՏ. | Լուայ. ԼՍԵՑԻ. | Լուաք. ԼՍԵՑԻՆՔ. |
| | Լուար. | Լուայք, լուարուք. |
| | Լուաւ. | Լուան. |
| ԱՊԱ. | Լուայց, լուիցեմ. | Լուիցուք, լուիցեմք. |
| | Լուիցես. | Լուիջիք, լուիցէք. |
| | Լուիցէ. | Լուիցեն. |
| ՀՐԱՄ. | Լուր. | Լուարուք. |
| | Լուիջիր. | . . . |
| ԴԵՐԲ. ԱՆՑԵԱԼ. | Լուեալ։ | |

251. Պակասը կ'առնէ Լսեմ, լսեցի ամբողջ բայէն, ինչպէս կրաւորականն ալ, որ կ'ըլլայ նաև Լուեալ լինիմ, լուր կամ լու լինիմ, լսելի լինիմ, եղէ, և այլն։

Կրաւորական ապառնին կ'ըլլայ նաև

| | |
|---|---|
| Լուիցիմ. | Լուիցիմք. |
| Լուիցիս. | Լուիջիք, լուիցիք. |
| Լուիցի. | Լուիցին։ |

252. Ներգործական ԾԱՆԵԱՅ. արմատ ծան։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. կտր. | Ծանեայ. ճանչցայ. | Ծանեաք. ճանչցանք. |
| | Ծանեար. | Ծանեայք, ծաներուք. |
| | Ծանեաւ. | Ծանեան. |
| ապա. | Ծանեայց, ծանիցեմ. | Ծանիցուք, ծանիցեմք. |
| | Ծանիցես. | Ծանիջիք, ծանիցէք. |
| | Ծանիցէ. | Ծանիցեն. |
| ՀՐԱՄ. | Ծանիր. | Ծանիք, ծաներուք. |
| | Ծանիջիր. | . . . |

ԴԵՐԲ. ԱՆՑԵԱԼ. Ծանուցեալ։

253. Պակասը կը լեցուի Ճանաչեմ, ճանաչեցի ամբողջ բայէն, ինչպէս կրաւորականն ալ, որ կ'ըլլայ նաև Ծանուցեալ լինիմ, եղէ, և այլն. կամ Ծանուցանիմ, ծանուցայ, ըստ 218։

Կրաւորական ապառնին կ'ըլլայ նաև

| | |
|---|---|
| Ծանիցիմ. | Ծանիցիմք. |
| Ծանիցիս. | Ծանիջիք, ծանիցիք. |
| Ծանիցի. | Ծանիցին։ |

254. Հասարակ ՈՒՆԻՄ. արմատ ուն, կալ։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| ՍՀՄ. ներ. | Ունիմ. ունեմ, կը բռնեմ, կը բռնաւորեմ։ | Ունիմք. ունենք, կը բռնենք, կը բռնաւորենք. |
| | Ունիս. | Ունիք. |
| | Ունի. | Ունին. |

| | | |
|---|---|---|
| անկ. | Առնէի. | Առնէաք. |
| | Առնէիր. | Առնէիք. |
| | Առնէր. | Առնէին. |
| կտր. | Կալայ. | Կալաք. |
| | Կալար. | Կալայք, կալարուք. |
| | Կալաւ. | Կալան. |
| ապա. | Կալայց, կալցիմ: կալ-ցեմ, Ներգ. | Կալցուք, կալցիմք. կալ-ցեմք, Ներգործ. |
| | Կալցիս. կալցես. | Կալջիք, կալցիք. կալցէք. |
| | Կալցի. կալցէ. | Կալցին. կալցեն. |
| ՀՐԱՄ. | Կալ, կա. | Կալարուք, կալայք. կա-լէք, Ներգործ. |
| | Կալջիր, ունիջիր. | . . . |
| | Մի՛ ունիր. | Մի՛ ունիք. |
| ՍՏՈՐ. | Ունիցիմ: | Ունիցիմք. |
| | Ունիցիս. | Ունիցիք, ունիջիք. |
| | Ունիցի. | Ունիցին. |

ԴԵՐԲ. Առնել. — Կալեալ. — Առնելոց:

255. Կալում, կալնում ամբողջ բայ է, ինչպէս տեսանք վերը (231). Ունիմ պակասաւորը անոր խառնուեցաւ. ու աւելի ասանկ խառն կը բանի, ինչպէս մէկալ ամէն պակասաւորներն ալ:

256. Նմանն կը խոնարհի Ընդունիմ. միայն կենին բոլը դան կը կորսնցընէ. Ընկալայ, ընկալայց, ընկալ, ընկալեալ: Երբեմն ալ կ'ըլլայ ընդունեցայ կամ ընդունեցի, ընդունեա, ընդունեալ:

257. Պակասաւոր են եսւի բայերն ալ, որ տեղէ մ'ալ չեն լեցըներ պակասնին, հապա այսչափ միայն կը բանին.

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. Ներկ. | Պարտիմ. | պէտք է ինծի որ. |
| | Պարտիս. | պէտք է քեզի որ. |
| | Պարտի. | պէտք է անոր որ. |
| | Պարտիմք. | պէտք է մեզի որ. |
| | Պարտիք. | պէտք է ձեզի որ. |
| | Պարտին. | պէտք է անոնց որ. |
| Անկ. | Պարտէի. | պէտք էր ինծի որ. |
| | Պարտէիր. | պէտք էր քեզի որ. |
| | Պարտէր. | պէտք էր անոր որ. |
| | Պարտէաք. | պէտք էր մեզի որ. |
| | Պարտէիք. | պէտք էր ձեզի որ. |
| | Պարտէին. | պէտք էր անոնց որ. |
| ՍՏՈՐ. | Պարտիցիմ. | պէտք ըլլայ ինծի որ. |
| | Պարտիցիս. | պէտք ըլլայ քեզի որ. |
| | Պարտիցի. | պէտք ըլլայ անոր որ. |
| | Պարտիցիմք. | պէտք ըլլայ մեզի որ. |
| | Պարտիցիք. | պէտք ըլլայ ձեզի որ. |
| | Պարտիցին. | պէտք ըլլայ անոնց որ. |
| ԴԵՐԲ. | Պարտել. | պէտք ըլլալ։ |

258. Իսկ Պարտիմ, պարտեցայ, պարտեցայց, կը նշանակէ պարտական եմ, պարտք ունիմ տալու։ Ուրիշ է Պարտեմ, պարտիմ ալ, որ յաղթեմ, յաղթուիմ ըսել է։

| | | |
|---|---|---|
| 259. ՍՀՄ. ապա. | —— | —— |
| | Կոզցես. | ըսես, սեպես. |
| | Կոզցէ. | ըսէ, սեպէ. |
| | Կոզցուք. | ըսենք, սեպենք. |
| | Կոզջիք. | ըսէք, սեպէք. |
| | Կոզցեն. | ըսեն, սեպեն. |
| ՀՐԱՄ. | Կոզ. | ըսէ, սեպէ. |
| | Կոզջիր. | ըսէ, ըսես, իմա. |
| | Կոզէք. | ըսէք, սեպեցէք. |
| | . . . | . . . . |
| ԴԵՐԲ. | Կոզել. | ըսել, սեպել։ |

## ԱՆԴԷՄ ԲԱՅԵՐ

260. Քանի մը բայ ալ կայ խիստ պակասաւոր, որ միայն մէկ քանի եզակի երրորդ դէմքերնին կը բանի, ան ալ առանց ուղղական անունի մը որ գործող դէմք մը յայտնէ: Եւ ասանկ դէմք յայտնող ուղղական անուն մը չունենալնուն՝ անդէմ ըսուած են. ու ասոնք են.

261. Մարթի. կարելի է որ. Մարթի այդմ լինել. կարելի է որ այդ ըլլայ. Մարթի լինել. կարելի է որ ըլլայ. Մարթի ինձ ասել, գալ. կարելի է որ ըսեմ, գամ. կրնամ ըսել, գալ. Մարթի ասել, գալ. կարելի է ըսել, գալ:

Մարթէր. կարելի էր որ. Մարթէր քեզ ասել, գալ. կարելի էր որ ըսէիր, գայիր:

Մարթիցի. կարելի ըլլայ որ. Մարթիցի նմա ասել, գալ. կարելի ըլլայ որ ըսէ, գայ:

262. Պիտի. պէտք է. Պիտի ասել, գալ. պէտք է ըսել, գալ:

Պիտէր. պէտք էր. Պիտէր ասել, գալ. պէտք էր ըսել, գալ. Ո՞ն պիտէր. մարդ պէտք էր:

Պիտեցաւ. պէտք եղաւ. Պիտեցաւ ժամանակի. ատենի պէտք եղաւ, ատեն պէտք եղաւ:

Պիտեսցի }
Պիտիցի } պէտք ըլլայ. { Պիտիցի ասել, գալ. պէտք ըլլայ ըսել, գալ. պէտք ըլլայ որ ըսեմ, ըսես, ըսէ, ևն:

263. Ցաւէ ինձ, քեզ, նմա. վայ կ'ըլլայ ինծի, քեզի, անոր:

Ցաւէր ինձ, քեզ, նմա. վայ կ'ըլլար ինծի, քեզի, անոր:

Ցաւեաց ինձ, քեզ, նմա. վայ եղաւ ինծի, քեզի, անոր:

Ցաւեսցէ կամ ցաւեսցի }
Ցաւիցէ կամ ցաւիցի } ինձ, քեզ, նմա. { վայ ըլլայ ինծի, քեզի, անոր:

264 · Բայց Մարթեմ (198) որ Մարթանամ ալ կ'ըսուի, կրնամ, Ցաւիմ, կը ցաւիմ, ամբողջ ու դիմաւոր են. ու Պիտի, երբոր նշանակէ պարտք (257) կամ բան մը պէտք է, դիմաւոր է ու յոգնակի ալ կը բանի · Նա՛մ ոչ պիտի ծածկել զգլուխ իւր · երէկ մարդը ծածկելու չէ գլուխը : Պիտի ինչ · պիտէր կեալն · բազմութիւք պիտին :

265 · Ուրիշ դիմաւոր ու ամբողջ բայերու եզակի երրորդ դէմքն ալ երբեմն անդէմի պէս կը բանի ·
Կխպեսցի մեզ Թողուլ զաշխարհ · ըլլայ որ Թողունք աշխարհս :
Ի կղզի ինչ հասանէ մեզ անկանել · կղզի մը պիտի իյնանք :
Այհաս նմա Թագաւորել · եղաւ որ Թագաւորեց :
Մէ և մեռանել հասանիցէ · մեռնիլ ալ ըլլայ նէ :
Նման անդէմի պէս կ'ըսուի, Դիպի, լինի, երևի, Թուի, կարծի ինձ, սմանց :

## ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

266 · Բայեր կան որ կրաւորական խոնարհումնին չեզոքի փոխուելով ամենին ուրիշ բան կը նշանակէ · ինչպես,
Փառեմ, խնդրել · փառիմ, յանդգնիլ, համարձակիլ:
Կրեմ, կրել, տանիլ · Կրիմ, ըլլալ, գտնուիլ:
Պաշտեմ, ծառայել · Պաշտիմ, բանեցընել, բանի գալ, ըլլալ:
267 · Երբոր բան մը ինք իր վրան ընել նշանակուի, ներգործականի տեղ կրաւորական խոնարհում կը բանի, հասարակ բայի պէս : Այսպէս կ'ըսուի Լուացայց զձեռս իմ · ձեռքերս լուամ կամ ձեռքերնիս լուացուիմ :
Բաժանեցան զաւար · Բաժանեցան զհանդերձս իմ յիւրեանս · աւարը մէջերնին բաժնեցին, լաթերս մէջերնին բաժնեցին :
Գօտի ընդ մէջ իւր ածաւ · իր մէջքը գօտի կապեց :
Արկայ համդերձ · լաթ հագայ · Արկաւ անձ և զարդարեցաւ · լաւ կամ նոր հագաւ ու զարդարուեցաւ :
Եգաւ զԹագ · հագաւ կամ իր գլուխը դրաւ Թագը :
268 · Երբեմն ուրիշ ներգործական ու ներգործակերպ չեզոք բայերն ալ կրաւորակերպ խոնարհումով կ'ըսուին, Տեսանեմ, տեսայ · Գտանեմ, գտայ · Հարցանեմ, հարցաւ զնոյն բան · Յարկանեմ, յարկար զվերնայարկս նորա · — Ելանեմ, ելայ · Հասանեմ, հասանիմ, հասայ · Անցանեմ, անցանիմ, անցայ · փոխանակ ըսելու Տեսի, գտի, եհարց

ռնոյն բան, յարկեր զվերնայարկս նորա, փանէրը կամ ճէրէ յարէնէրը յէրէօրը. եղի, հասի, անցի։

269. Ամէն բայերու ապառնին ու ստորադասականը մէկմէկու տեղ ալ կը բանին, ու հրամայականի տեղ ալ։ Վրանին մ' ալ կը դրուի. մի սիրեսցես, մի սիրեսջիք, մի սիրեսցեն. մի սիրիցես, մի տեսանիցես, մի տեսանիցէք, մի համարիցիք կամ մի համարիջիք։ Երկրորդ կերպ եղանակ հրամայականին ալ կը դրուի երբեմն մ. Կերիցես և մի յագեսջիր. մի կեցջիր, զի սուտ խօսեցար. մի յագեսցիս, մի կեցցես ըսելու տեղը։

270. Ապառնիները տեսար որ երկու կերպ են. իշ, ասս կամ ըշէմ, ըշիմ. — իշ, ասս, ըսսէ, ջիէ վերջացածները՝ սովորական են. ըշէմ, ըշէմք, ըշէք, ըշիմ, ըշիմք, ըշիք վերջացածները շատ չեն գործածուիր ամէն բայի անխափր։ Որոնց մէջ որ բային արմատին ցոյն սէ փոխուած չկայ նէ (169). անոնք աւելի կը գործածուին. ինչպէս, կեցցեմ, տեսցեմ, հանցեմ, Թաքիցեմ, զենցեմ, առցեմ, երթիցեմ, դիցեմ, կերիցեմ, յարիցեմ, և այլն. եղիցիմ, ծնցիմ, ուսցիմ, առցիմ, լուիցիմ, ծանիցիմ, և այլն. որ ամէնն ալ ապառնի են, և ոչ ստորադասական, ինչպէս ցոյն սէ փոխուածներն ալ։

271. Ջիէ վերջացած երրորդ կերպ հրամայականը՝ ապառնիի ու ստորադասականի եղակիի պէս ալ կը նշանակէ, չէ թէ միայն ըլլա, ընէ, ըսար տեսար տեղը, հապա նաև պիտի ըլլաս, պիտի ընէս. ինչպէս, Լու աշա յղասջիր և ծնցես որդի. սա կա պիտի գըպէս սա պիտի տըղէ ծնանիս։

Դու մանուկ մարգարէ բարձրելոյ կոչեսջիր. զի երթիցես առաջի երեսաց տեառն. սէն չօճուգ՝ Ալլահըն փէյղամպէրի պիտի ըսսլըս. չիւնքի Տէրին էօնինճէ պիտի երթաս։

Այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասջիր. շիմտի պիլմէզ. պաշքա պիլիրսին պիտի գիտնաս։

Բայց ալ ուրիշ կերպ ապառնիի կամ ստորադասականի պէս՝ պայմանով մը ուրիշ բայէ կախուած չբանիր. օրինակ իմն՝ չըսուիր Եթէ յղասջիր, թէ կամ զի կոչեսջիր. որպէս զի գիտասջիր։

272. Սահմանական ներկան ու անկատարը՝ ապառնիի ու ստորադասականի պէս պայմանով ուրիշ բայէ կախուած ալ կը բանին. ինչպէս, Եկ առաքեմ զքեզ. էկէլ իրսալ էտէյ. Եկ առաքեցից զի առաքիցեմ ըսելու տեղը։

Աղաչեմ հրամայես բանալ. Կաղաչեմ որ հրամէս բանալ. Աղաչեմ զի հրամայեսցես կամ հրամայիցես ըսելու տեղը։

Թող անիծանէ. Թող գրեմ և ցուցանեմ. Բօղ անիծէ. Բօղ գրեմ սա ցուցնեմ։

Զարմանամ իմ խնդրես, թէ փարձուոր՝ որ երթայ ընդ որդւոյդ քում։
Լաւ է ձեզ եթէ ես երթամ։
Արա թէ այն անհամի, իւ յաղեցի.
Կամիս զի ծածկես։
Զի որ ընթեռնուցուն, համարձակ ընթեռնու։

Երանի թէ էի կամ լինէի · [illegible] կամ [illegible] :
Մարդ չէր՝ որ գործէր զերկիր · [illegible] :
Եթէ եաք, ոչ հաղորդէաք · [illegible] :
Արժան էր՝ զի վկայէին · [illegible] :
Որպէս զի արժանի լինէին · [illegible] :
Թող ինքն նախ ընթայր առնոյր · [illegible] :

273 · Առանձ ալ կ'ըսուի երբեմն · խնամս և այլս պատահականս · Բարկանայք և մի մեղանչէք · փոխանակ ըսելու, խնամոցն կամ խնամքին, և այլս պատահականացն կամ պատահականքին · Բարկանաջիք կամ բարկանայցէք, բարկացարուք կամ բարկացիք և մի մեղանչէք : Մի լինիս, [illegible] · մի լար, [illegible] · մի որ ջանայ, [illegible] · մի պատմես, [illegible] · մի դատիս, [illegible], մի առնես, [illegible] · մի անցանէ, [illegible] · մի վաճառեմք, [illegible] · մի զայրացուցանեն, [illegible] :

274 · Սահմանադրականն ու ապառնին՝ երբեմն սահմանականի ներկայի տեղ ալ կը բանին · ինչպէս
Գիտեմ թէ այդ այդպէս իցէ · [illegible] :
Եթէ հարցից ինչ զձեզ, չասէք ինձ պատասխանի կամ արձակիցէք · [illegible] :
Գիտիցես արդեօք զոր ընթեռնուցուս · [illegible] :
— Ո՞ր իցեն որ գեհենին չհաւատասցեն · [illegible] :
Ո՞յր վնաս է, սորա՞ թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնցի · [illegible] :

275 · Երբեմն ալ սահմանականի անկատարի տեղ՝ սահմանադրական անկատարի տեղ կը բանին · ինչպէս, փութայր, եթէ հնար ինչ իցէ նմա · փոխանակ ըսելու՝ եթէ հնար ինչ էր · [illegible] :
Որոյ չգոյր տեղի ուր զգլուխն դնիցէ · [illegible] :
Եթէ արամէր, թագաւորդ ողջէր մինչև սթափեցուցէ զնա · [illegible] :

276 . Նախնիք երբեմն երկրորդ լծորդութեան առաջին օրինակի բայերը՝ երկրորդ օրինակին պէս ալ կը խոնարհեն, երկրորդինն ալ՝ առաջինին պէս · զոր օրինակ կ'ըսեն կատարեալը՝ Բժշկեր, քեցին՝ ձուլար, գիտաւ, կռուաւ, հերքեաւ, պարտեաւ, փոխանակ ըսելու՝ Բժշկեցեր, քեցեցին, ձուլեցար, գիտեցաւ, կռուեցաւ, հերքեցաւ, պարտեցաւ : Կ'ըսեն հրամայական՝ Խնդրէք, լսէք, ասէք, փոխանակ ըսելու՝ խնդրեցէք, լսեցէք կամ լուարուք, ասացէք : — Կ'ըսեն՝ Հանեցի, հանեալ, տարածանեցեր, անիծանեսցես, տեսանեսջիք, տեսիցեմ, տեսիցես, ափածիցիմ, նստեցայ, նստեցան, լուծանեալ, տեսեալ, սպանեցէք, սպանանեալ · փոխանակ ըսելու՝ հանի, հան կամ եհան, տարածեցեր, անիծցես, տեսջիք, տեսանիցեմ, տեսանիցես, ափածանիցիմ, նստայ, նստան, լուծեալ, տեսեալ, սպանէք, սպանեալ:

Աւելի կերպ կերպ անսովոր բաներ ալ կ'ըլլան, որ ընդարձակ քերականութենէ կամ բառգրքէ սորվելու է :

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ԴԵՐԲԱՅ

277. Այս բառերս, ինչպէս ըսինք (162), դերբայ կ'ըսուին իրաւամբք, վասն զի շատ անգամ բայի տեղ կը բռնեն, ինչպէս որ անուան տեղ դրուած բառերն ալ դերանուն կ'ըսուին։

278. Անորոշ դերբայն շատ անգամ, մանաւանդ ինչպէս որ է, ուրիշ բայի քով կը դրուի՝ ապառնիի կամ ստորադասականի տեղ. ինչպէս

Ինձ տացէ Աստուած ասել. Աստուած տայ ինձի որ ըսեմ։

Պատուիրեցի քեզ չուտել. պատուիրեցի քեզի որ չուտես։

Հրամայեաց առ բարեկամսն երթալ և զայրն գտանել. հրամմեց որ բարեկամներուն երթայ ու տղան գտնէ կամ երթան ու տղան գտնեն, թէ որ շատի վրայ ըլլայ։

Ակնարկեցին ընկերացն՝ գալ օգնել նոցա. աչք կ'ընէին իրենց ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց։

Սրբեսցես զնոսա՝ քահանայանալ նոցա ինձ կամ զի քահանայասցեն ինձ։

Ոչ ապաքէն զի քննեսցեն զքաղաքս և դիտել զերկիրս եկին։

Այն ոք որ չար իցէ, յուսացի անպարտ լինել. Ան որ չար է՝ կյուսայ որ անպարտ ըլլայ կամ որ անպարտ պիտի ըլլայ. փոխանակ ըսելու՝ Այն յուսացի թէ անպարտ լինիցի։

279. Շատ հեղ ալ սահմանական եղանակին ժամանակներուն տեղը կը դրուի. ինչպէս,

Օ Հայկակ ասեն լինել առ Ներսէսի. Հայկակ կ'ըսեն թէ Ներսէսին քովն էր։

Ասելին որոտումն լինել · կ'ըսէին թէ որոտում է կամ որո-տում կ'ըլլայ նոր կամ որոտում եղաւ ։

Պատասխանի ետուն չգիտել · պատասխան տուին թէ չգի-տենք կամ թէ չգիտեն ։

Արծէին կարել կարկատել · կը կարծէին թէ կրնան կար-կըտել, կամ թէ պէտք կարենան կարկտել (278)։

280 · Շատ անգամ ալ գոյական անուան պէս կը-բանի, ու կը հոլովի եզակի ըստ 31, ածական ալ կ'առնէ · Լինել, լինելոյ, լինելով, 'ի լինելոյ, զլինել, 'ի լինել · առ 'ի լինել, 'ի լինելն, ընդ լինելն · Գալ, գալոյ, գալով, 'ի գալոյ, զգալն, 'ի գալ · Սիրել կամ Սիրիլ, սիրելոյ, սիրելով, 'ի սիրելոյ, զսիրել, 'ի սիրել, առ 'ի սիրել, 'ի սիրելն, ընդ սիրելն · Տեսանել, տեսանելոյ, տեսանելով, 'ի տեսանելոյ, զտեսանելն, 'ի տեսանելն · Առնուլ, առ-նլոյ, զառնուլն, յառնուլն, ևն ։ Իւ ասանկ հոլոված ալ բայի տեղ կը բանի երբեմն ։

Ածականով ալ կ'ըսուի, Մեծաւ գոչելով, մեծաւ պատուիրելով, 'ի մեծ խրոխտալոյն, 'ի խօսել իմում, 'ի չուել քում, յաղաչել քում, յառնելն իւրում։

281 · Ի, առ, առ 'ի նախդրիւ տրականը շատ տեղ կը բանի՝ ալ, որպէս ալ ըսելու տեղը ապառնիով կամ ստորադասականով · ինչպէս,

Ի լսել կամ առ 'ի լսել եկեալ եմ · եկեր եմ լսելու, որ լսեմ ։

Ոչ առ ատել · չէ ատելու համար, որ ատեմ կամ ատես կա-տէ, և այլն ։

Մտանեմք անդր առ 'ի խուզելոյ զմեզ · հոն կը մտնենք կոր որ փնտռեն կամ փնտռելու համար (148)։

282 · Այն մտքով ուղղական ալ կ'ըսուի շատ տեղ · Սկսեաց հարցանել · սկսեց հարցնելու համար կամ որ հարցնէ ։

Եկիր կորուսանել · եկար կորսնցնելու համար, որ կորսնցնես ։

Եդ զնոսա՝ լուսատու լինել յերկիր · դրաւ անոնք լոյս տալու համար, որ լոյս տան ։

Նոյն էր թէ ըսէիր, առ 'ի հարցանել, առ 'ի կորուսա-նել, առ 'ի լուսատու լինել:

283. Ի, ընդ նախդրիւ տրականը ու գործիականը շատ տեղ կը բանի՝ յորժամ, եթէ, որովհետեւ, վասն զի, թէ-պէտ ու ըսելու տեղը դիմաւոր բայով. Ինչպէս,
Ի տեսանելն զքեզ՝ բերկրեցայ. երբոր տեսնէ քեզ, պէտի ուրախանայ:
Յերթալդ քո և 'ի դառնալդ. երբոր երթաս ու դառնաս կամ երթալուդ ու դառնալուդ:
Ի խօսել իմում, յառնելն իւրում. երբոր խօսիմ կամ կը-խօսէի, երբոր ելնէ կամ կ'ելնէր:
Ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա. երբոր կ'երթար նէ կամ երթալնին ժողովուրդները նեղութիւն կու-տային անոր:
Ի դառնալ մեղաւորին՝ կեցցէ. թէ որ դառնայ նէ մեղա-ւորը՝ ապրի:
Ի Պաւղոսի բողոքելն՝ հրամայեցի պահել զնա. որով-հետեւ բողոքեց Պօղոս՝ հրամմեցի որ պահեն ան:
Ասելով նոցա զայս. երբոր աս բանս ըսին նէ անոնք:
Ի զմեծատունն պատուել՝ անպատիւ գոլով. ու մեծա-տունը կը պատուէ՝ երբոր կամ թէ որ անպատիւ է նէ:
Բարեգործ ծնողաց գոլով որդիք՝ բարի գործոյն նոցա պարտին նմանել. որովհետեւ կամ վասն զի բարեգործ ծնո-ղաց զաւակ են՝ պէտք է որ անոնց բարի գործքերուն նմանին:
Անկարօտք գոլով ըստ բնական պիտոյից, սակայն ան-յագ են. թէպէտ անկարօտ են բնութեան պէտքի դէմ, բայց անյագ են:

284. Անցեալ դերբայն շատ հեղ ուրիշ բայի մը հետ կը բանի՝ առաջ կամ ետև, ու անորիշ դերբայի գոր-ծիականի պէս կ'առնուի կամ քովի բային պէս. Ինչպէս,
Ելեալ գնաց. մտեալ բազմեցաւ. հայեցեալ ընդ իս զարմանայք. ըսել է՝ ելլելով գնաց, մտնելով նստաւ, ինծի

նայելով կը շարժմանը, կամ ելաւ գնաց, մտաւ նստաւ, ինծի կը նայէր կը շարժմանը։

Կալեալ կորուսանել. բռնելով կորսնցնել կամ բռնել կորսնցնել։

Ա՛տցէ դիմեալ. վազելով մտնէ։

Փախեան զարհուրեալք. վախնալով փախան։

285. Շատ տեղ ալ՝ թէ, չէ շաղկապով դիմաւոր բայի տեղ կ'դրուի. ինչպէս,

Հաւատարմանայ ասացեալն յամենայն, ապաշխարեալ Սողոմոնի զյանցուածն. այս ինքն՝ թէ ապաշխարեալ է կամ ապաշխարեաց. կը ստուգուի ոմանց ըսածը, թէ Սողոմոն մեղքը ապաշխարեր է կամ ապաշխարեց։

Տեսի՛ անզգամաց արմատս ձգեալ. այս ինքն՝ զի ձգեալ են կամ էին. տեսայ որ անզգամները արմատ ձգեր են կամ ձգեր էին։

Յարեաւ Նաթեր երթեալ 'ի սենեակն արքայի. այս ինքն՝ զի երթիցէ. ելաւ Նաթեր որ երթայ արքային սենեակը։

286. Շատ հեղ ալ իբրև, յորժամ մակբային ու եթէ, որովհետեւ, թէպէտ և շաղկապներուն ու դիմաւոր բայի տեղ կ'դրուի. ինչպէս,

Նա հրամայեալ Փեստոսի՝ ածին զՊաւղոս. այս ինքն՝ իբրև հրամայեաց, յետ հրամայելոյն. ու երբոր հրամմեց Փեստոս՝ բերին Պօղոսը։

Սպանին զՅովաս յԵրուսաղէմ, թագաւորեալ ամս քառասուն. այս ինքն՝ իբրև թագաւորեաց, յետ թագաւորելոյն. սպաննեցին Յովասը Երուսաղէմ, երբոր քառասուն տարի թագաւորեց, քառասուն տարի թագաւորելէն ետքը։

Հիւանդացեալ, և մի ակն կալցի ողջանալոյ. այս ինքն՝ յորժամ կամ եթէ հիւանդասցի. հիւանդնայ նէ, յոյս չունենայ ողջնալու։

Մ՛ի վհատիցիս՝ յանդիմանեալ 'ի նմանէ. այս ինքն՝ յորժամ կամ եթէ յանդիմանիցիս. սիրտդ չկոտրէ՝ անկէ յանդիմանուիս նէ։

Յորոց պահեալ զանձինս՝ բարւոք գործիցէք. այս ինքն՝ եթէ պահիցէք. որոնցմէ զգուշանաք նէ՝ աղէկ կ'ընէք։

Նա գորա ինքնին բողոք կալեալ առ քաջ արանցն, խորհեցայ յղել. այս ինքն՝ որովհետև բողոք կալաւ դա. ու որովհետև ինքը կայսեր բողոքեց, միտքս դրի որ խաւրեմ:

Կարօտին Թագաւորին, այլ ումեք 'ի ծառայիցն ոչ կարացեալ. այս ինքն՝ որովհետև այլ ոք ոչ կարաց. Թագաւորին կը կարօտնան, որովհետև ծառաներէն ուրիշ մէկը չկըրցաւ:

Նախնեաց զգործ բաժանեալ. բայց սկիզբն և կատարածն շինուածոյն 'ի բուն Ճարտարապետ անդր հայի. այս ինքն՝ Թէպէտ և բազմաց բաժանեալ է. Թէպէտ գործքը շատ վրայ բաժնուած է, բայց շէնքին սկիզբը ու լմնցը բուն Ճարտարապետին կը նայի:

Որ մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող. այս ինքն՝ Թէպէտ և մահկանացու ծնեալ էր. որ Թէպէտ մահկանացու ծներ էր, իր յիշատակը անմահ թողուց:

287. Անցեալ դերբայն շատ հեղ ըլնիմ, եմ էական բայերով միյատեղ կը բանի, ու ինչ տեսակ բայի դերբայ է նէ, անոր նշանակութիւնը կը պահէ: Ու որովհետև ներգործական ու կրաւորական բային անցեալ դերբայն մէկ է, անոր էականով շինուածն ալ հասարակ բայ կ'ըլլայ, այս ինքն ներգործական ու կրաւորական (165): Համառօտ օրինակ մը դնենք.

288. Սիրեալ լինիմ. կը սիրեմ, կը սիրուիմ. սիրած կ'ըլլամ, սիրուած կ'ըլլամ.

Սիրեալ լինիմք. կը սիրենք, կը սիրուինք, սիրած կ'ըլլանք, սիրուած կ'ըլլանք:

Սիրեալ լինէի. կը սիրէի, կը սիրուէի. սիրած կ'ըլլայի, սիրուած կ'ըլլայի.

Սիրեալ լինէաք. կը սիրէինք, կը սիրուէինք. սիրած կ'ըլլայինք, սիրուած կ'ըլլայինք:

Սիրեալ եղէ. սիրեցի, սիրուեցայ. սիրած եղայ, սիրուած եղայ.

Սիրեալ եղաք · սիրեցինք, սիրուեցանք · սիրած եղանք, սիրուած եղանք ։

Սիրեալ եմ · սիրեր եմ, սիրուեր եմ · սիրած եմ, սիրուած եմ ·

Սիրեալ եմք · սիրեր ենք, սիրուեր ենք · սիրած ենք, սիրուած ենք ։

Սիրեալ էի · սիրեր էի, սիրուեր էի · սիրած էի, սիրուած էի ·

Սիրեալ էաք · սիրեր էինք, սիրուեր էինք · սիրած էինք, սիրուած էինք ։

Սիրեալ լիցիմ, եղէց · սիրեմ, կամ սիրեմ · սիրուիմ, կամ սիրուիմ · սիրած ըլլամ, սիրուած ըլլամ ·

Սիրեալ լիցուք, եղիցուք · սիրենք, կամ սիրենք · սիրուինք, կամ սիրուինք · սիրած ըլլանք, սիրուած ըլլանք ։

Սիրեալ լեր · սիրէ, սիրուէ · սիրած եղիր, սիրուած եղիր ·

Սիրեալ լերուք, եղերուք · սիրեցէք, սիրուեցէք · սիրած եղէք, սիրուած եղէք ։

Սիրեալ լինիցիմ · սիրեմ, կամ սիրեմ · սիրուիմ, կամ սիրուիմ · սիրած ըլլամ, սիրուած ըլլամ · եւն ·

Սիրեալ լինիցիմք · սիրենք, կամ սիրենք · սիրուինք, կամ սիրուինք · սիրած ըլլանք, սիրուած ըլլանք · եւն ։

Սիրեալ իցեմ · սիրած ըլլամ, կամ սիրած ըլլամ · սիրուած ըլլամ, կամ սիրուած ըլլամ ·

Սիրեալ իցեմք · սիրած ըլլանք, կամ սիրած ըլլանք · սիրուած ըլլանք, կամ սիրուած ըլլանք ։

Սիրեալ լինել, գոլ · սիրել, սիրուիլ · սիրած ըլլալ, սիրուած ըլլալ ։

Սիրեալ լեալ, եղեալ · սիրած, սիրուած · սիրած կամ սիրուած եղած, ըլլալով ։

Սիրեալ լինելոյ · սիրելու, սիրուելու · սիրած կամ սիրուած ըլլալու ։

289. Կրական բայն ալ կ'ըլլայ աստանկ՝ ինք իր դեր-բայովը. Լինեալ կամ եղեալ լինիմ, լինէի, եղէ. լինեալ կամ եղեալ եմ, էի. լինեալ կամ եղեալ լիցիմ, եղէց, լինիցիմ, իցեմ. լինեալ կամ եղեալ լինել, գոլ, լինելոյ:

290. Կրական բայը շատ անգամ առաջ ալ կըգրուի. Լինիմ սիրեալ, եմ սիրեալ: Ու դերբան յոգնակի ալ կ'ըլլայ, մանաւանդ կրաւորականը ու չէզոքը. Տնկեալք եղիցին. Հասեալք լինէին:

291. Անցեալ դերբան շատ տեղ ալ ածական անուան պէս կըբանի. ու լեալ կամ լինեալ դերբայէն 'ի զատ՝ մէկալ ամէնն ալ կը հոլովի եզակի ու յոգնակի (բստ 31). Եալ, ելոյ. եալք, ելոց.

Եղեալ, եղելոյ կամ եղելում, եղելով, յեղելոյ, զեղեալ. եղեալք, եղելոց, եղելովք, յեղելոց, զեղեալս:

Գնացեալ, գնացելոյ, գնացելում, գնացեալք, գնացելոց:

Սիրեալ, սիրելոյ, սիրելով կամ Սիրեցեալ, սիրեցելոյ, սիրեցելում, սիրեցելով, 'ի սիրեցելոյ, զսիրեցեալ, սիրեցեալք, սիրեցելոց, սիրեցելովք, 'ի սիրեցելոց, զսիրեցեալս:

Տեսեալ, տեսելոյ, տեսելում. տեսեալք, տեսելոց:

Զենեալ, զենելոյ, զենելում. զենեալք, զենելոց: —

Իսկ լեալ՝ նախդրիւ հոլովները միայն ունի, լեալք, լեալս, զլեալս:

292. Ասանկ ածական դերբան՝ շատ տեղ ալ ող կամ օղ վերջացած բայածականի պէս եղող, ընող կը նշանակէ, ու սովորաբար անոր տեղը կըբանի. Ինչպէս, Չար խորհուրդ՝ խորհեցելումն կամ խորհելոյն յոյժ չար է. փոխանակ ըսելու՝ խորհողին. չար խորհուրդը՝ մտածողին շատ գէշ է:

Ընդ բարբառելոյ. փոխանակ՝ բարբառողի. խօսող մարդուն:

Մասն երթելոյն 'ի պատերազմ. փոխանակ՝ երթողին. պատերազմ գացողին բաժինը:

Աստուածք նմանեալք մարդկան. մարդու նմանող աս-տուածներ:
Ոչ խոստովանեալք, այլ հայհոյիչք. չէ թէ խոստովանող-ներ, հապա հայհոյիչներ:
Բերանոց խոստովանելոց. փոխանակ՝ խոստովանողաց. խոստովանող բերաններու:
Գազանաց գոչելոց. փոխանակ՝ գոչողաց. պոռացող գա-զաններու:
Կանանց՝ զաստուածպաշտութիւն յանձն առելոց. փո-խանակ՝ առողաց. աստուածպաշտութիւնը յանձն առնող կնիկներու:

293. Ապառնի դերբայն սովորաբար էական էմ բային հետ կը բանի՝ ասանկ, համառօտ օրինակով.

Սիրելոց եմ. պիտի սիրեմ. պիտի սիրուիմ.
Սիրելոց եմք. պիտի սիրենք. պիտի սիրուինք:
Սիրելոց էի. պիտի սիրէի. պիտի սիրուէի.
Սիրելոց էաք. պիտի սիրէինք. պիտի սիրուէինք:
Սիրելոց իցեմ. պիտի սիրեմ. պիտի սիրուիմ.
Սիրելոց իցեմք. պիտի սիրենք. պիտի սիրուինք:

294. Ասոր ալ էական բայը առաջ ալ կը դրուի. Եմ սիրելոց, էաք սիրելոց:
295. Ապառնի դերբայն ածական անուան պէս ալ կը բանի, բայց վերջահոլով չունի, հապա միայն նախ-դրիւ հոլով, ան ալ քանի մը բայինը միայն կ'երևնայ.
Գալոց կամ լինելոց չարեացն. գալու կամ ըլլալու չարիք-ներուն:
Զլինելոց իրսն. ըլլալու բաները:
Զգալոցն կամ զգալոցսն պատմել. գալիքը կամ գալիքները պատմել:
Եղեալքն և լինելոցք, զլինելոցսն, ընդ լինելոցսն. ե-ղածները ու ըլլալիքները, ըլլալիքներուն հետ:

296. Վերջահոլով պէտք ըլլայ նէ, լի վերջացած բայածականը կը բանի, որ ըլլալու, ըլլուելու կընշանակէ, և կը հոլովի ըստ 43. Լինելի, լինելւոյ կամ լինելոյ (45), լինելեաւ կամ լինելւով. լինելիք, լինելեաց կամ լինելւոց, լինելեօք կամ լինելւովք. ըլլալու:
Սիրելի, սիրելւոյ կամ սիրելոյ, սիրելեաւ կամ սիրելւով, սիրելիք, սիրելեաց կամ սիրելւոց, սիրելեօք կամ սիրելւովք. սիրուելու. և այլն:

297. Առանց ափնի հոլովի նէ, անորիշ ու ապառնի դերբային կը նմանի. բայց պէտք չէ շփոթել. զոր օրինակ,
Մինչև բարձցին առաւք լինելոցն. ըսել է լինելւոցն, լինելեացն:
Խմել արեամբ վասն ձեր հեղլոյ կամ հեղլով. ըսել է հեղլւոյ կամ հեղլւով, հեղլեաւ, այս ինքն թափուելու, որ դիւր թափի:

298. Թէոր է բային հետ դրուի, ներգործականի կամ չէզոքի պէս ընելու ալ կընշանակէ.
Իմանալի է, պահանջելի է, ըսել է՝ իմանալու է, պէտք է իմանալ, պահանջելու է, պէտք է պահանջել:
Դառնալի է, հրաժարելի է, ըսել է դառնալու է, պէտք է դառնալ, հրաժարելու է, պէտք է հրաժարիլ:

299. Աս լի բայածականը շատ անգամ ող բայածականի տեղ ալ կը բանի, ու երբեմն ալ անցեալ դերբայի տեղ. Լինելի, ըսել է եղող ու եղած. Սիրելի, սիրող ու սիրուած. Լսելի, լսող ու լսուած. Գալի, եկող ու եկած. Տալի, տուող ու տրուած. Խնդրելի, հայցելի, խնդրող ու խնդրուած:
Ասանկ կ'ըսուի, Առնելի գործոյն, գործը ընող. Առնելիք բանին, խօսքը ընողներ. Լսելիք օրինացն, օրէնքը լսողները:
Ձայն փողոյ լսելի եղիցի. այս ինքն՝ լսեալ եղիցի:
Տալ զխնդրելին. Առնել զհայցելին. այս ինքն՝ զխնդրեալն, զհայցեալն:
Վաղամեռիկ լինելոյ որդւոյ իւրոյ արար պատկեր. այս ինքն վաղամեռիկ լինելւոյ, եղելոյ:
Արեամբն հեղլով. Յարենէն հեղլոյ. այս ինքն՝ հեղլւով, հեղելով, հեղլւոյ, հեղելոյ:
Ի սկզբանցն լինելոցն հատուածեաց. այս ինքն՝ լինելւոցն, եղելոցն:
Իշխանութիւն ոչ ունէր իւր առնելոցն. այս ինքն՝ առնելւոցն, արարելոցն:

300. Ող կամ օղ վերջացած բայածականին վրայ մասնաւոր գիտելիք մը չկայ: Սովորաբար անցեալ կատարեալէն կը շինուի ամէն տեսակ բայ բաց 'ի կրաւորականէն. Ամացող, կեցող. գնացող, գացող. լուացող, իմացող, երբեմն լուանող, իմանող. հոգացող կամ հոգող, յուսացող կամ յուսող, պարծեցող կամ պարծենող: Սիրեցող կամ սիրող, սիրող. ատացող կամ ատող, ըրող. կարող կամ կարացող, կրցող: Տեսող կամ տեսանող, տեսնող. տարող կամ տանող, փախչող, Ջենող, ծարթող. առող, առնող. յեցող կամ յենող, կռթնող: Տուող, եկող, երթող, արարող կամ առնող, եդող կամ դնող, կերող, ունող: — Հականներէն ալ կայ միայն Լինող, գոլող, եղող: Ամէնն ալ ընող, ըլլող կընշանակեն:

301 · Շատ տեղ ալ՝ չէ թէ հիմայ ընող կը՛նշանակէն, հապա ընու-թեամբ անանկ եղօղը · ինչպէս, Այր կերօղ և արբեցօղ · Ես չեմ խօսօղ դք · Ամենայն որ կարող էր զօրութեամբ ։

302 · Չեզոք բայերուն՝ երբեմն անցեալ դերբայի ու ՟ի բայածա-կաննին պէս ալ կը՛նշանակէ · Պատսպարիմ, պատսպարող · [illegible] կամ [illegible] ։ Վարժիմ, վարժող · [illegible] կամ [illegible] ։ — Կարեմ, կարող · [illegible], [illegible] ։ Հաւանիմ, հաւանող · [illegible], [illegible] ։

303 · Ուրիշ տեղ ՟իւ ալ կը վերջանայ, ու նոյն է անոր հետ · Բացօղ, բացիչ · սիրօղ, սիրիչ · փրկօղ, փրկիչ · ընակօղ, ընակիչ · արարօղ, արա-րիչ, ըսեր ես, ամէնը մէկ է ։ Բայց ՟օղ ամէն բայի ու ամէն չեզոքի ալ կը՛փակչի · իսկ ՟իչ աւելի ներգործականներու, ու քիչ չեզոքներու ։

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ՄԱԿԲԱՅ

304. Մակբայը բառ մըն է որ բային վրայ պէտք եղած միտք մը կ'աւելցընէ, իմացընելով ընելուն կամ ըլլալուն տեղը, ատենը, կերպը, եւն։ Ածականի եւ ուրիշ մակբայի վրայ ալ կ'ըսուի։ Առջեւիդ քանի մը օրինակով կը տեսնես՝ ինչ ըլլալը հասկընալու չափ։

| | |
|---|---|
| 305. Աստ է. Անդ է. | Հոս է. Հոն է։ |
| Եկ այսր. Նստարուք այդր. | Հոս եկուր. Նստէք հոն։ |
| Անդր մուծին. | Հոն խոթեցին։ |
| Երթիցուք աստի. Ել այտի. | Երթանք ասկից. Ելիր ատկից։ |
| Ելեալ անտի գնաց. | Անկից ելաւ գնաց։ |
| Ո՞ւր էիր. Ուր էրն. | Ո՞ւր էիր. Ուր որ էր նէ։ |
| Ուստի՞ գաս. | Ուսկի՞ց կուգաս։ |
| Իբրեւ լուան. Մինչ կենդանին էր. | Երբոր լսեցին. Երբոր ողջ էր նէ։ |
| Մինչեւ կերայց. Մինչեւ եկին. | Ինչուք որ ուտեմ. Ինչուք որ եկան։ |
| Այժմ ասացի. Ե՞րբ եկիր. | Հիմայ ըսի. Ե՞րբ եկար։ |
| Մերթ երեւի, մերթ ծածկի. | Մէյմը կ'երեւնայ, մէյմը կըգոցուի։ |
| Միշտ, հանապազ ուսանիմ. | Միշտ, ամէն իժիր կը սորվիմ։ |
| Արդ ես վախճանեցաւ. | Հիմաճուկ մեռաւ։ |
| Ապա ասէ. Ապա գիտասջիր. | Ետքը կ'ըսէ. Ետքը պիտի գիտնաս։ |
| Ոչ կամիմ. չգիտեմ. չերկնչիմ. | Չեմ ուզեր. չեմ գիտեր. չե՛մ վախնար։ |
| Չե՛ւ է հասեալ. | Դեռ հասած չէ։ |
| Ոչ եւս այլ շատ խօսեցայց. | Ալ շատ պիտի չխօսիմ։ |
| Չեւ եւս էր եկեալ. | Դեռ չէր եկած։ |
| Չեւ եւս գիտացաւ որպէս արժան է. | Դեռ չգիտցաւ ինչպէս որ պէտք է։ |
| Մինչդեռ խօսէր. | Երբոր դեռ կը խօսէր կոր։ |
| Մի սիրէք. Մի երթայցէք. | Մի սիրէք. Չերթաք։ |
| Ահա եղեւ. Այո տեսի. | Ահա եղաւ. Հա, հրամմերես տեսայ։ |
| Զիա՞րդ գիտէ. | Ի՞նչպէս գիտէ։ |
| Այսպէս ասէ. Ա՛յնպէս արարէք. | Ասանկ կ'ըսէ. Ա՛նանկ ըրէք։ |

| | |
|---|---|
| Եւս մեծ. Յոյժ իմաստուն. | Աւելի մեծ. Խիստ իմաստուն: |
| Կարի բարւոք. Կարի յոյժ. | Խիստ աղէկ. Խիստ շատ: |
| Ամենեւին անշարժ. | Ամենեւին չշարժող: |
| Ու բազում, ու սակաւ. | Քիչ. շատ: |
| Գրեթէ հանապազ. | Գրեթէ միշտ, (սանքի դայմա): |
| Ապաքէն լսեն. Ապաքէն ասիցէք. | Ի հարկէ կը լսեն. Ի հարկէ որ պի-տի ըսէք: |
| Թերեւս արասցէ. | Ըլլայ որ (պէլքի) ընէ: |
| Գուցէ գայցեն. Գուցէ ոչ իցէ բա-ւական. | Ըլլայ թէ գան, չըլլայ թէ չօգտէ: |
| Գուցէ կարծէր. Գուցէ զգաստասցի. | Կարելի է որ (պէլքի) կարծէր. կարելի է որ (պէլքի) խելքը գլու-խը գայ: |
| Մորմոքէին հանապազ 'ի վր̅ բանին. | Աւելի ան խօսքին վրայ կը ցաւէին: |
| Յայտնապէս խօսել. | Բաց խօսիլ: |
| Իշխանաբար գառել. | Իշխանի պէս գառել: |
| Վայրագար կեալ. | Փուճ տեղը ապրիլ: |

306. Ածականներն ալ շատ անգամ եզակի, կամ յոգնակի սեռով, երբեմն ալ չառուորի վրայ՝ քեռով, մակբայի տեղ կ'երթան, ու կերպ մը կը յայտնեն. ինչպէս,

| | |
|---|---|
| Նոր գալ, | Նոր գալ. |
| Ուղիղ գնալ, | Շիտակ երթալ. |
| Բարւոք ընթանալ, | Աղէկ երթալ. |
| Սակաւ կամ շատ սիրել, | Քիչ կամ շատ սիրել. |
| Արդար խօսել, | Շիտակ խօսիլ. |
| Բազում ծառայել, | Շատ ծառայել. |
| Մեծաձայն կարդալ, | Բարձր ձայնով կանչել. |
| Մանր մանր կտորել, | Մանր մանր կտրել. |
| Մերկ գալ, մերկանդամ դառնալ, | Մերկ գալ, մերկ դառնալ. |
| Ողջանդամ ապրել, | Ողջ ապրել. |
| Մաքրապուր չհաւատալի զերծանել, | Մաքուր ազատիլ չհաւատալու կերպով. |
| Գեղեցիկ իմն պատմել, | Աղուոր մը պատմել: |
| Երագս ընթանալ, | Շուտ վազել. |
| Թեթեւս դառնալ, | Թեթեւ դառնալ. |
| Ճշմարտագոյնս գիտել, | Աղէկ մը գիտնալ. |
| Ծանուցս լսել, | Ծանր կամ ծանր կերպով լսել. |
| Մեծամեծս վազել, փքալ, կտորել, | Մեծ մեծ վազել, փռփռալ, ջարդել. |
| Նորք և առժամայնք եկեալ, | Նոր ու ան ատենը եկած. |
| Բազումք՝ փոխանակ ապրեցան, | Շատը՝ փոխուելով ապրեցան. |
| Արջք օրհասականք հզօրագոյնք կը-ռուին, | Մահուան դռանը հասած արջերը խիստ ուժով կը կռուին: |

307. Շատ տեղ ալ անուններու հոլովները մակբայի տեղով կը բանին.

| | |
|---|---|
| Առաւօտու, առաւօտուց, | առտուն, առտուանց. |
| Գիշերի, գիշերաց, գիշերաւ, | Գիշերը, գիշերանց, գիշերով. |
| Կանխաւ, | առաջուց, կանուխ. |
| Փութով, ստիպով, | շուտով, արտորնօք. |
| Ի պարզի, | Երկինքը բաց տեղն. |
| Ի կարճոյ, | կարճ կերպով. |
| Զառաջինն, | առաջ, առջի բերանը. |
| Զնոյն, յորժամ, յայնժամ, | նոյնպէս, երբոր, ան ատենը. |
| Ի զուր, 'ի նանիր, | փուճ տեղը. |
| Ընդ հուպ, ընդ փոյթ, | Մօտ ատեններս, շուտով: |

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

## ՇԱՂԿԱՊ

308. Շաղկապը բառ մըն է, որ բառ բառի ու խօսք խօսքի հետ կը կապէ։ Մէկ քանի օրինակով հերիք կը հասկընաս։

| | |
|---|---|
| 309. Ես և դու և ամենայն բազմութիւնդ. | Ես ու դուն ու բոլոր ատ բազմութիւնը։ |
| Քարոզեցէք և ասացէք։ | Քարոզեցէք ու ըսէք։ |
| Ես և. Ես իսկ. Այլ և ոչխարք. | Ես ալ. ուրիշ ոչխարներ ալ։ |
| Ցուրտ կամ ջերմ. Առէք կամ տուք. | Պաղ կամ տաք. Առէք կմ տուէք։ |
| Գաւազանաւ եթէ սիրով. | Գաւազանով չէ նէ սիրով։ |
| Տացո՞ւք թէ ոչ տացուք. | Տա՞նք մի չէ նէ չտանք։ |
| Եթէ կամիս կատարեալ լինել. | Թէ որ կ'ուզես կատարեալ ըլլալ։ |
| Թէ հնար ինչ իցէ. | Թէ որ ճար մը կայ նէ։ |
| Ոչ ունիմք աստ բայց հինգ նկանակ. | Բան մը չունինք հոս, հապա միայն հինգ հաց։ |
| Թէպէտ և կամէր, բայց ոչ կարաց, սակայն ոչ կարաց. | Կ'ուզէր ալ, բայց չկրցաւ. Թէպէտ կ'ուզէր, բայց չկրցաւ։ |
| Սուղ, այլ զօրաւոր. | Կարճ, բայց ուժով։ |
| Մի լայք, զի չէ մեռեալ. | Մի լաք, վասն զի մեռած չէ։ |
| Լուարուք զի ասացաւ. | Լսեցիք որ ըսուեցաւ։ |
| Գիտաց թէ ցածուցեալ են. | Իմացաւ որ ցածցեր են։ |
| Երեւս եթէ հաճոյ է. | Տեսաւ որ ախորժելի է։ |
| Իսկ նա գնաց. | Բայց (կամ ու) ան գնաց։ |
| Իսկ զի՞ մկրտես եթէ դու չես. | Հապա ինչո՞ւ կը մկրտես, թէ որ դուն չես։ |
| Ապա, ուրեմն, ապա ուրեմն ազատ են որդիքն. | Անանկ է նէ՝ տղաքը ազատ են։ |
| Եթէ ոչ զմեծն, գոնէ զփոքրն արասցուք. | Մեծն ալ չէ նէ, պզտիկը ըլլայ ընենք։ |
| Արդ, և արդ, իսկ արդ զի՞նչ առնիցեմ. | Էյ անանկ է նէ հիմայ ինչ ընեմ։ |
| Արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է. | Հիմայ պիտի հոտած ըլլայ, ինչու որ չորս օրուան է։ |
| Քանզի բազումք յօժարեցին, կամ եղև և ինձ. | Որովհետև շատերը յօժարեցան, ես ալ ուզեցի։ |
| Քանզի ծնաւ, ապաքէն գութ ունի. | Որովհետև ծնաւ, անանկ է նէ գութ ունի։ |
| Մեռանել քան ծառայել, քան եթէ ծառայել. | Մեռնիլ քան թէ ծառայել, քան թէ ծառայ ըլլալ, գերի ըլլալ։ |

# ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՐՈՐԴ

## ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

310. *Ձայնարկութիւնը բառ մը կամ ձայն մըն է, որ մարդուս կիրքը կը յայտնէ, բարկութիւն կամ վախ կամ ուրախութիւն կամ տրտմութիւն, եւն. ինչպէս,*

| | |
|---|---|
| 311. *Ա՛ Թշուառական. ա՜յ Թշուառ.* | *Հա՜յ Թշուառական:* |
| *Ո՜հ անմիտք, ո՜ անմիտք.* | *Հէյ անխելքներ:* |
| *Ո՛հ, կարի է առասպելու.* | *Ո՛ւհ, ամմա առասպել հա՛:* |
| *Ո՜հ սքանչելեացս.* | *Ո՛ւհ զարմանալու բան:* |
| *Ո՛հ, ես մեղայ.* | *Վա՛խ, ես մեղանչեցի:* |
| *Վա՜հ, որ քակէիր զտաճարն.* | *Վա՛խ, որ տաճարը կը քակէիր կոր:* |
| *Ո՛ն եկայք. ո՜ն արիք.* | *Հա՛յտէ եկէք. հա՛յտէ ելէք:* |
| *Հա՜դա առաքինիք.* | *Հա՛յտէ կտրիճներ:* |
| *Աղէ պատմեա. աղէ դու եկ.* | *Հէլէ պատմէ. հէլէ դուն եկուր:* |
| *Վա՜շ քաջիդ.* | *Աֆէրիմ կա՛մ մաշալլահ կորըճիդ:* |
| *Վա՜շ քաջքդ ինձ.* | *Մաշալլահ կտրիճներ:* |
| *Վա՜յ վա՜յ, զի բեկաւ.* | *Օ՛խ օ՛խ որ կոտրեցաւ:* |
| *Բո՜բէ կուրութեան մտացն.* | *Փէ՛հ կէ՛ վա՛յ մտքին կուրութեանը:* |

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ ԼԸՄՆՑԱՒ

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՊԱՐԶ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

### ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ

312. Շարադրութիւնն է բառերը լեզուին օրինաւոր կարգովը շարել ու կապել, որ խօսք ըլլայ։

313. Բան մը խօսինք նէ, առաջ պիտի նայինք՝ թէ որու կամ ինչի՛ վրայ ինչ պիտի ըսենք որ է կամ կ'ըլլայ կամ կ'ընէ։ Որու կամ ինչի վրայ որ պիտի ըսենք նէ, ան բուն բանին տէրն է, ու **ենթակայ** կ'ըսուի. ինչ որ պիտի ըսենք նէ, ան բայն է, որ ըլլալ մը կամ ընել մը կը նշանակէ. ինչպէս,

Ես եմ. Դուն լինիս. Աստուած արար.

**Ես**, **դուն**, **Աստուած** ենթականերն են. **եմ**, **լինիս**, **արար** բայերն են։

314. Բայց մինակ առջանով չըլլինար խօսքը։ Ես եմ, թէ որ հասկընաս՝ **ես կամ**, լմնցած է. իսկ թէ որ հասկընաս՝ **ես բան մըն եմ**, լմնցած չէ, ինչ բան ես [1]։ Դուն լինիս, **դուն կ'ըլլաս**. Աստուած արար, **Աստուած ըրաւ**, լմնցած չեն. ինչ կ'ըլլաս, ինչ ըրաւ։ Ասանկ

---

1 Բայց երբոր ըսուի Ես եմ, մի երկնչիք, միջով լման է. վասն զի կը հասկցուի խօսքերէն, թէ ես ան եմ որ կը ճանչնաք գիտէք։

ընելու համար՝ քովը բան մը դնելու է, որ խնդիր բայէ կ՚ըսուի. ինչպէս,

Ես եմ մարդ. Դու լինիս իմաստուն. Աստուած արար զաշխարհ.

Մարդ, իմաստուն, աշխարհ, բայերուն խնդիրներն են, որ անոնց նշանակութիւնը կը լմնցընեն, ու կ՚ըլլայ լման խօսք։

315. Բայց ամէն խօսք միայն աս երեք բանով չըլլար. շատ անգամ երեքն ալ կերպ կերպ յաւելուած մասեր կամ պարագաներ կ՚ունենան հետերնին. ինչպէս,

Աստուած՝ ամենակարող ճարտարապետն տիեզերաց, որ յաւիտենից էր, իսկզբանէ իմաստութեամբ իւրով արար զայս մեծ աշխարհս և զամենայն զարդ սորա։

Հոս նմանապէս գլխաւոր խօսքը ան է. Աստուած արար զաշխարհ. մէկալ բառերը պարագաներ կը յայտնեն. այս ինքն թէ Աստուած ինչ է կամ ինչպիսի բան կը մտածուի կոր աս խօսքիս մէջ, — ճարտարապետ. ինչին ճարտարապետը, — տիեզերաց. ինչպիսի ճարտարապետ, — ամենակարող. ինչո՛վ ըրաւ, — իմաստութեամբ իւրով. երբ, ո՛ր ատեն ըրաւ, — իսկզբանէ. ո՛ր ու որպիսի աշխարհքը, — զայս մեծ աշխարհս. ու չէ թէ միայն աշխարհքս, հապա՝ և զամենայն զարդ, ու ամէն զարդն ալ. որո՛ւն զարդը, սորա, ասոր, աս աշխարհքիս։

316. Ինչպէս ըսինք, Աստուած անուն բայի է կամ տէր՝ ներգործական բային արար. զաշխարհ ու զմարդ՝ որ ըլլուողն են, խնդիր սեռի են արար բային. այս ինքն անանկ խնդիր մը՝ որ ներգործական բայերուն ամենուն ալ կը յարմարի, որ է հայցական հոլովը։

317. Իսկ կրաւորական բայերուն սեռի խնդիր է բացառական հոլովը։ Վասն զի կրաւորական բայերուն ուղղական անուն բայի կ՚ըլլայ ըլլուողը, ու բացառական խնդիր կ՚ըլլայ ընողը։ Ինչպէս թէ որ աս խօսքը՝

Աստուած արար զաշխարհ՝ կրաւորական բայով դարձընես ասանկ, Աշխարհ արարաւ յԱստուծոյ, — աշխարհ եղաւ ուղղական՝ անուն բայի, յԱստուծոյ եղաւ բացառական՝ խնդիր սեռի։

318. Մէկալ հոլոված բառերէն՝ յոչնչէ, իմաստութեամբ իւրով, նոյն արար բային Բնութեան խնդիր են. այս ինքն անանկ խնդիր՝ որ սեռի խնդիրէն 'ի զատ, կի՛ թէ առանց անոր ալ, կ'առնէ բայ մը իր մասնաւոր նշանակութեանը ու տեղին յարմար զանազան հոլովով։

319. Սեռականները տիեզերաց, նորա, որ կը յայտնեն թէ ո՛ր բանին Ճարտարապետը, որո՛ւն զարդը, կ'ըսուին աշխարհքին ու զարդին յատկացուցիչ. Ճարտարապետն ու զարդն ալ կ'ըսուին յատկացեալ, յատկացուցիչին նայելով։

320. Ճարտարապետն՝ որ կը յայտնէ թէ Աստուած ո՛վ կամ ինչ է կամ ինչպիսի կը մտածուի աս խօսքիս մէջ, Բացայայտիչ կ'ըսուի Աստուծոյ. Աստուած ալ կ'ըսուի Բացայայտելի կամ Բացայայտեալ, բացայայտիչին նայելով։

321. Ամենակարող, իւրով, այս, մեծ, ամենայն, ածականներ են ամէն մէկը իրենց գոյականին՝ որուն որ ըսուած է, այս ինքն Ճարտարապետին, իմաստութեան, աշխարհին, զարդին։

322. Եւն շաղկապ է, որ զայս մեծ աշխարհս ու զամենայն զարդս կը կապէ իրարու հետ մէկ բայի տակ։

323. Իսկ որ յաւիտենից էր, մէջ ընկած ու յարաբերականով կապած ինքիրեն լման խօսք մըն է ան ալ. որ՝ անուն բայի, էր՝ բայ, յաւիտենից՝ խնդիր։

324. Բառերուն օրինաւոր կարգը ու մէկմէկու կապակցութիւնը մէյմը ինչ ըլլալնին լման ու խտակ յայտնի ընելու համար է, որ վերի բաժներովս կ'ըլլայ. մէյմ'ալ մէկմէկու համեմատ ու նման ընելու համար է, որ Համաձայնութեան մասանց բանի կ'ըսուի, ու ան ատենը կ'ըլլայ՝ երբոր մէկմէկէ կախում ունեցող կամ մէկմէկու յարմարուելու բառերը՝ իրարու նման կամ համա-

ձայն են Թուով ու Հոլովով կամ դէմքով, ժամանակով ու եղանակով. Ինչպէս, անուն բայի՝ բայի հետ, Ես խօսիմ, դու լսես, Աստուած արար, Նոքա եմանան, Բաղդամք ղարմացեն. բացայայտիչ՝ բացայայտեալի հետ, Աստուած՝ Ճարտարապետն. ածական՝ գոյականի հետ, Բարձր լեառն, Բարձրոյ լերին, Բարձրոյ լերամբ, լերինք Բարձրունք, լերանց Բարձրանց։

325. Իսկ անհամաձայն կ'ըլլայ՝ թէ որ ըսենք, Եղև բանքն, տիրեցին ազգն. — Բարձր լերին, 'ի Բարձր լեառնէ, Բարձր լերինք, Բարձր լերանց, Բարձրոյ լերամբք։

326. Շարադրութիւնը երկու է. մէյմը Պարզ, որ լեզուին հասարակ ու սովորական կանոններովը կ'ըլլայ. մէյմ'ալ Զեղուր, ան կանոններէն դուրս ու գերազանց։

Հիմայ մենք վերի ցուցուած բնական խելքի կարգով՝ ինչպէս տեսանք որ մասունք բանին գլխաւոր լման խօսքը ու իր պարագաները յայտնելու կուգան նէ, սկսինք առաջ աս մասին մէջ մէկիկ մէկիկ անոնց պարզ շարադրութեան հարկաւոր կանոնները սորվելու նոյն կարգով։

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՆՈՒՆ ԲԱՅԻ ՈՒ ԲԱՅ

327. Դիմաւոր բային անուն բային՝ ուղղական կը դրուի, ու բայը՝ թուով ու դէմքով անոր համաձայն. ինչպէս,

Դու լեր նորա աշակերտ. Մեք Մովսէսի աշակերտք եմք. Մեք գիտեմք զի ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուած.

Անուանս մեր ծառայի ժամանակաւ.

Խորհուրդք թիւրք անջատեն յԱստուծոյ.

Մարդիկն Հայոց ոչինչ հաստատուն.

Բարձր են երկինք, խոր են դժոխք, երկայն է չափ երկրի, լայն է ծով.

Ես պատուեալ եմ. Տէր իմ ծերացեալ է. Դուք յոյժ մոլորեալ էք.

328. Ներկայ ու անցեալ դերբայներուն անուն բային սովորաբար սեռական կը դրուի, թէ և դիմաւոր բայի հետ ալ ըլլան. ինչպէս,

Մինչ զի և հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա.

Մինչև բազմաց իսկ ասել՝ թէ մեռաւ.

Յելանել և 'ի մտանել նորա. Ի կալ նորա յաղօթս.

Նախ ծնանելն, մինչև մտեալ առ նոսա Յովհաննու Մկրտչի.

Տեսեալ արդարոց՝ ծիծաղեցան. Տեսի՝ անզգամաց արմատս ձգեալ.

Ես զձեր արծաթն առեալ և հաճեալ եմ.

Որոյ զնոյն ստացեալ ունիցի.

Բոլոր բարբարոսացն խոստացեալ փախչին.

329. Մնորիշ դերբային, մանաւանդ ուղղականին, անուն բային դերանուն ըլլայ նէ, տրական կը դրուի. ինչպէս,

Մնացից ընդ երկիր քո, երթալ անցանել ինձ յաշխարհ իմ։

Մնտրեաց զմեզ, լինել մեզ սուրբս և անարատս։

Ի գալն քեզ զհետ որբոյն։ Ի կալ նմա յաղօթս։

330. Բնիշ տեղ ուղղական ալ՝ կ'ըլլայ երկու դերբային ալ անուն բային.

Զխորդ մարթիցի՝ լինել բողոքիւն. այս ինքն թողութեան։

Պատերազմել ընկեր ընդ ընկերի իւրում։

Մի ես լինել 'ի սմա բնակիչ։ Մինչև փեղի ես ոչ լինել։

Մինչև չմնալ կամ չմնալոյ 'ի նոցանէ ապրեալ և փախստական։

Մեղաւորք ելով մեք։ Մարդ 'ի մարդոյ առնլով զտէրութիւն։

Մտեալ Յովսէփ 'ի տունն գործել զգործ ինչ իւր, բուռն եհար կինն զձորձոց նորա։

Նկեալ 'ի դէպ նոցա ճշմարիտ առանց զգօնութեան։

Մաչէ, ձին զուլամբ երթեալ, սատակեր։

Ոսկորայք հանդերձ ներամբք տանջեալ, և ամենայն թագաւորաւն զնոյն չարչարեալ։

Նաքէանք յարտասուս հարեալ փղոյն, ոչ ոք կարէր լռեցուցանել։

---

1 Ինչ բանի համար որ առանց ալ կ'ըլլայ առանց ալ ըսենք նէ քերականութեանս մէջ, գիտնալու է որ հեղինակները շատ տեղ երկու կերպն ալ մէկէն կը բանեցընեն մէկ խօսքի մէջ։ Ինչպէս հոս սեռական և ուղղական անուն բայիին օրինակ ըլլայ աս. Եղև բանալ երկնից և իջանել հոգւոյն սրբոյ և գալ ձայն յերկնից. Զորս ելեալ իւր իսկ ինքնին Վրթանէս մատուցեալ հարցանէր։ — Աս բանս մէյմը հոս իմացընելնիս հերիք ըլլայ։

331. Անցեալ դերբայն՝ էական բային է, էր, իցէ եզակի երրորդ դէմքերուն հետ, շատ անգամ սեռական կ'առնէ ամէն դէմքի անուն բային եզակին ու յոգնակին. զոր օրինակ,

### Եզակի

| փոխանակ ըսելու, | կ'ըսուի |
|---|---|
| Ես տեսեալ եմ, | Իմ տեսեալ է. |
| Դու տեսեալ ես, | Քո տեսեալ է. |
| Նա տեսեալ է, | Նորա տեսեալ է. |
| Ես տեսեալ էի, | Իմ տեսեալ էր. |
| Դու տեսեալ էիր, | Քո տեսեալ էր. |
| Նա տեսեալ էր, | Նորա տեսեալ էր. |
| Ես տեսեալ իցեմ, | Իմ տեսեալ իցէ. |
| Դու տեսեալ իցես, | Քո տեսեալ իցէ. |
| Նա տեսեալ իցէ, | Նորա տեսեալ իցէ. |

### Յոգնակի

| փոխանակ ըսելու, | կ'ըսուի |
|---|---|
| Մեք տեսեալ եմք, | Մեր տեսեալ է. |
| Դուք տեսեալ էք, | Ձեր տեսեալ է. |
| Նոքա տեսեալ են, | Նոցա տեսեալ է. |
| Մեք տեսեալ էաք, | Մեր տեսեալ էր. |
| Դուք տեսեալ էիք, | Ձեր տեսեալ էր. |
| Նոքա տեսեալ էին, | Նոցա տեսեալ էր. |
| Մեք տեսեալ իցեմք, | Մեր տեսեալ իցէ. |
| Դուք տեսեալ իցէք, | Ձեր տեսեալ իցէ. |
| Նոքա տեսեալ իցեն, | Նոցա տեսեալ իցէ։ |

332. Նմանն ալ չէ՛ բային հետ

| փոխանակ ըսելու, | կ'ըսուի |
|---|---|
| Ես չեմ տեսեալ, | Իմ չիք տեսեալ. |
| Դու չես տեսեալ, | Քո չիք տեսեալ. |
| Նա չէ տեսեալ, | Նորա չիք տեսեալ. |

| փոխանակ ըսելու , | կ՚ըսուի |
|---|---|
| Մեք չեմք տեսեալ , | Մեր չիք տեսեալ · |
| Դուք չէք տեսեալ , | Ձեր չիք տեսեալ · |
| Նոքա չեն տեսեալ , | Նոցա չիք տեսեալ ։ |

333 · Սեռական անուն բային ու անցեալ դերբայն կամ էականը՝ ետեւ առաջ ալ կը դրուին · Տեսեալ է իմ, իմ է տեսեալ, է մեր տեսեալ, եւն ։ Տեսեալ չիք իմ, իմ տեսեալ չիք, չիք տեսեալ քո, չիք մեր տեսեալ, եւն ։

Չ կամ ոչ մակբայով որ զրուցուի նէ, սովորաբար էականը առաջ կ՚ըսուի · Իմ չէ տեսեալ, քո չէ տեսեալ, նորա չէր տեսեալ, չէ տեսեալ քո, չիցէ մեր տեսեալ, չիցէ նոցա տեսեալ · որոյ չէ կ̅մ ոչ է տեսեալ, կամ որոյ ոչ տեսեալ է ։

334 · Նոյն դէմքով շատ անուն բայեր որ ըլլայ նէ, բայց սովորաբար յոգնակի կըդրուի, մանաւանդ ետքն որ դրուի նէ ·

Փոքր և մեծ անդ են ։ Ցորեանն և հաճար ոչ հարան ։

Ատելի են Աստուծոյ ամպարշտեալն և ամպարըշտութիւն իւր · զի գործն և գործելին առ հասարակ տանջեսցին ։

Մտին Մովսէս և Ահարոն առաջի Փարաւոնի և ասեն ցնա ։

Եղեն իմ արջառ և ոչխար և էշք, ծառայք և աղախնայք ։

335 · Բայց շատ անգամ եզակի ալ կըդրուի, մանաւանդ առաջ որ դրուի ու մօտ անուն բային եզական ըլլայ նէ ·

Եմուտ Նոյ, Սեմ, Քամ, Յաբեթ՝ որդիք Նոյի, և կին Նոյի և երեք կանայք որդւոց նորա ընդ նմա ՚ի տապանն ։

Եղև նորա ոչխար և արջառ յոյժ և ծառայք և աղախնայք, ուղտք և էշք ։

Եկն Ագրիպպաս և Բերենիկէ բազում երևելի սպասուք, և մտին յատեանն։ — Կոտան և զարկին հարբա։

Հանդերձ մարդոյ և ծաղր երեսաց և քայլ ոտից պատմէ զնմանէ։

336. Եզակի անուն բայներ կամ շաղկապով զատուած ըլլան նէ, սովորաբար եզակի կըդրուի բայը՝ մէկը կամ մէկալը հասկըցուելով.

Եթէ յառնիցէ 'ի միջի քում մարգարէ կամ երազահան . . . և ցուցանիցէ նշանն կամ արուեստն . . . մարգարէն այն կամ երազահանն երազոց մեռցի։

Ո՞ ոք քո աստ փեսայ կամ որդիք կամ դստերք։

337. Իսկ ամենուն վրայ հասկըցուելով, յոգնակի ալ կըդրուի.

Եթէ եղբայր ոք կամ քոյր իցեն մերկք։

Ո՞ր հայր գթած կամ ո՞ր մայր ողորմած այնպիսի աղեկիզեն։

338. Իսկ թէ որ այլևայլ դէմքով անուն բայներ ըլլան նէ, որ դէմքն որ կարգով աւելի առաջ է նէ՝ բայը անոր դէմքով կըդրուի. այս ինքն առջի կամ երկրորդ դէմքով, որն որ կայ նէ. ու սովորաբար յոգնակի կըդրուի.

Ես և դու հեծեալ էաք։ Դու և ես մի եմք։ Ես և հայր իմ մի եմք։

Ես և դու և ամենայն բազմութիւնդ աշակերտեսցուք։

Կեցցուք և մի մեռցուք և մեք և դու և ստացուածք մեր։

Պատիւս և շատ պարգևս գտանեմք յարքայից արքայէ և դու և մեք։

Յորժամ դու և նա միայն իցէք։ Դու և որդիք քո ընդ քեզ պահեսջիք։

339. Շատ հեղ եզակի ալ կը գրուի, բայց միշտ կարգով առաջ եղող դէմքովը.

Ես և տուն իմ պաշտեմ զտէր։

Լինիցիմ ես և որդի իմ Սողոմոն փաստապարտք։

Մուտ դու և ամենայն տուն քո 'ի տապանդ։

Մեղար դու և երկոքին բարեկամք քո. զի ոչ խօսեցարուք առաջի իմ ճշմարիտ։

340. Շատ տեղ բայը յայտնի չգրուիր, զօրութեամբ կ'իմացուի, մանաւանդ էական բայը. ինչպէս թէ որ ըսենք, Ես հայր, դու որդի, դա դուստր և նոքա ծառայք. կ'իմացուի ես հայր եմ, դու որդի ես, դա դուստր է և նոքա ծառայք են։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԲԱՅԵՐՈՒ ԵՒ ԱՆՈՒԱՆՆԵՐՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ

341 . Նական բայերը ամէն հոլովով ու ամէն նախդիրներով խնդիր կ'առնեն, հայցականէն 'ի զատ. ինչպէս,

342 . Օրինակ, որ նախդրիւ տրական ալ կ'ըլլայ, ու յոգնակիի տեղ՝ եզական ալ.

Նա եմ ես : Նմանեց նոցա Մարդոյն կամ յՄարդոյն :
Նման է գունն . նման են աչքն : Ի նման է գունն . 'ի նման են աչքն :
Նմանցուք տեառն մերում ծառայք : Նմանջիք դուք մեզ 'ի ծառայս :
Նմանցին գժուարինքն տեառնն : Նմանցին գժուարինքն 'ի տեառնն :
Նմանուք այր : Նման լերուք (59) : Նմանուք յորդւոյ զօրութեան :
Նմանեաց եղբայր եմք ծառայք քո : Նմանք քո նման են և տեառնն :
Նոր չափ երկայնութեան նորա երկոտասան հազար ասպարէզ :
Նմանութիւն նորա 'ի նման կանգուն . — այս ինքն էր 'ի տասն կանգուն (340) :

343 . Օրինակ . Նման ամենայն ինչ : Արդէք լինին օր 'ի նմանէն : Գնեալինն չորեք հարիւր սատեր արծաթոյ է : Նա տասն երկոտասանից :

344 . Օրինակ . Նման է ինչ այդ : Որ նման քոյդ : Նման դու ինձ յորդէ :

Ի լայնութեան՝ կանգուն մէկ (էր)։ Թանձրութիւն նորա շուրջ՝ առ չորս մատունս (էր)։

345. Գործիական. Ամենայն ինչ նովաւ եղև։ Գրան-ջեաւ եղիցի փրկութիւնն մեր։

Թանձրութիւն ծովուն թզաւ (էր)։ Կանգնաւ ի լայնութիւն (էր)։

346. Բացառական. Ի մէնջ ես, թէ ի թշնամեաց մերոց։

Գոյր մեզ օգնութիւն յերկնից։

Ի քառասուն կանգնոյ էր տունն։ Ի տասն դահե-կանէ ձոյլ նորա (էր)։

347. Ստորեշխնդիր. Որ շերեան էին։ Բանքս ճշմա-րիտ ծնելոյն է։

Ի խորանի անդ է։ Այս չեղ էն բանք իմ։ Այս նմա էի։ Ընդ նմա էին։

348. Յաճախ ուղղական խնդիրով կ՚ըսուի, Պարտ է լինել, վայել է լնուլ, արժան էր առնել, դէպ եղև կամ հարկ եղև իջանել, եւն. որ ըսել է, լինելն է պարտ, լնուլն է վայել, առնելն էր արժան, իջանելն եղև դէպ կամ հարկ։ Ու շատ անգամ տրական խնդիր ալ կ՚ունենան. Պարտ է ինձ, վայել է մեզ, արժան էր քեզ։ Ինձ անկ է իշխանութիւնդ. քեզ անկ է առնուլ. չէ մարթ այդմ լինել. ոչինչ պիտոյ է դոցա երթալ։

349. Անորոշ դերբային յոգնակի ուղղական խնդիրը սովորաբար սեռով կը դրուի (59).

Կամիմ զձեզ իմաստունս լինել։

Ընտրեաց զմեզ՝ լինել մեզ սուրբս և անարատս։

Պարտ էր ձեզ լինել վարդապետս։

Յանկայք փափաքելով՝ բաժանորդս լինել և հաղորդս։

350. Երբեմն քէով, մանաւանդ ուղղական անուն բայի վրայ որ ըսուի.

Կամին լինել վարդապետք օրինաց։

Պարտին այսպիսի պատմութեանց լինել պարզք։

351. Տրական բայերը հայցական խնդիր ալ կ՚առնեն

միայն ժամանակի բառերը, ան ալ նախդրիւ տրականի տեղ, մանաւանդ ընդ նախդիրով եղածին տեղը.

Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս. — այս ինքն ընդ ամենայն աւուրս։

Գործս ոչ թէ զմի օր է կամ զերկուս։ Ընդ էր զմէջ օր։

Որպէս ընդ ձեզ զամենայն ժամանակն եղէ։

Եղև ջրհեղեղ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր։

Զամենայն ժամանակս՝ զորս եղև անապատ. — այս ինքն յորս։

Զամառն և զձմեռն նոյնպէս եղիցի. — այս ինքն ընդ բոլոր ամառն։

Եղիցուք անդ տարի մի. — որ է ըսել զտարի մի։

352. Ներգործական բայերը, ինչպէս ըսինք (316), սեռի խնդիր կ'առնեն հայցական։ — Կրաւորական բայերը սեռի խնդիր կ'առնեն բացառական (317), կամ նոյն մտքով գործիական.

Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն։ Որ սիրեն զիս՝ սիրեսցին 'ի նմանէ։

Պատուեմք զհայրն մեր և պատուիմք 'ի նմանէ։

Կատարեսցին ամենայն գրեալքն 'ի մարգարէից կամ մարգարէիւք։

353. Կրաւորականները երբեմն սեռական կամ տրական ալ կ'առնեն, մանաւանդ անցեալ դերբայ որ ըլլան.

Հարեալք սատանայի իմոյ էք։ Ոչ է պարտեալ զոցի ինչ։

Կապեալք խաւարի և կաշկանդեալք երկայն գիշերոյ։

Ոչ է և նոյն իսկ սրբոյն Մաշտոցի էին ասացեալ ամենայնքն։

Իմաստութիւն դիւրաւ գտանի խնդրողաց իւրոց։

Աստուած ձեռին չքննի. հաւաց իմանի, այլ ոչ աչաց տեսանի։

354. Հայցական խնդիրը, թէ որ մանաւոր կերպով մը որոշեալ բան է, ինչպէս դիմորոշ յօդով կամ ուրիշ

բանով մը, զայ նախդիրով կը դրուի. չէ նէ՝ առանց զայի, որ կ՚ըսուի անորոշ կամ աննախդիր հայցական.

Առնու ընծայն և տայ նոցա: Առեալ հաց՝ գոհացաւ եբեկ և ետ նոցա:

Ցուցէք ինձ դահեկան հարկին. և նոքա մատուցին նմա դահեկան մի:

Ած զձեռն քո: Ած ձեռն ընդ մէջ քո:

Արկ զաթոռ նորա: Աթոռ արկին:

Ծնեաց զորդին իւր: Ծնեաց իւր որդին:

355. Միջակ անունները մինակ ինքնիրեննուն որ ըլլան, դերանունները ու յատուկ անունները՝ միշտ յայտնի ու որոշ ըլլալնուն, միշտ ալ զայով կ՚ըլլան հայցական. Տեսանել զոմն, զոք, զամենայն, զիս, զքեզ, զմեզ, ըզձեզ, զինքն, զինքեանս, զնա, զնոսա, զայն, զայնոսիկ, զՄովսէս, զարեգակն:

356. Մին երբեմն աննախդիր ալ կ՚ըսուի. Տեսանէր մի 'ի գազանաց անտի: Արձակեաց նա մի յիշխանաց իւրոց:

357. Նոյնէ ու բայէ մէկ եղած բայերն ալ՝ ներգործականի պէս հայցական խնդիր կ՚առնեն.

Թող տալ զայն կամ զնոսա. Թող արա զաշխարհս 'ի նա. — այս ինքն թող:

Թողութիւն առնել զօրէնս իւրեանց. — այս ինքն թողուլ, թող տալ:

Աւար հարկանել զկապուտ նորա կամ զինչս նոցա. — այս ինքն աւարել:

Հրաման տալ զփարիս: Գան հարին զնա: Ակն ունել զնոյն: Զնա չառնէր փոյթ:

Վրէժ խնդրել զանկանելն իւրեանց 'ի տէրութենէն:

Բուռն հարկանել զմի 'ի յուսոց ծառայն. — այս ինքն ըմբռնել:

Բուռն հարկանել զգործս. — այս ինքն 'ի բուռն առնուլ, սկսանել:

Հարցփորձ առնել զնոսա։ Զջածութիւն իբրեւ գողական համանես։

Խրամակարկատ արարին զայն. — այս ինքն կարկատեցին զխրամ նորա։

Զայն լուր իսկ եղէց։ Զոր յառաջագոյն տեղեակ եմք։

Զոր իրազեկ եղեալ արքային։ Զամենայն ինչ նպաստ լիցուք յընկերացն օգուտ։

358. Լինիմ, եմ էական բայով խոնարհած անցեալ դերբայն ալ (288), ներգործական մտքով, հայցական խնդիր կ'առնէ.

Զփրկութիւն գտեալ լինէին։ Զոր ինքն իսկ իւրովք աչօք տեսեալ լինէր։

Զանօգուտն թէ թողեալ լինիք։ Պահեալ լինէին պահս։

Ընկալեալ լինին պատուհաս։ Լուսին զլոյսն բոլոր՝ յամենեանն լինի կատարեալ։

Նման չէր տեսեալ զնա։ Զբաբելոն իմ չէք տեսեալ։

359. Էական բային հետ ալ բայածականն ալ (298), ներգործական մտքով, հայցական խնդիր կ'առնէ.

Զհամառօտն յինէն պահանջելի է։ Զոր յաջորդաւդ է իմանալի։

Ընտրելի է քեզ այժմ զմի յայտնանէ։

Զայս է մեզ ասելի եւ յաւէտ գործելի։

360. Ներգործական ու կրաւորական բայերը՝ իրենց սեռի խնդիրէն 'ի զատ, կամ առանց անոր ալ, իրենց կերպ կերպ նշանակութեանը ու խօսքին մտքին յարմար ուրիշ տեսակ տեսակ խնդիրներ ալ կ'առնեն այլեւայլ հոլովով ու զանազան նախդիրներով (142) կամ հոլովառու բառերով (152), որ Բնաբան խնդիր կ'ըսուի ըսինք (318)։

361. Նմանն ալ չէզոք բայերը, հասարակ ամենուն

մէկէն մէկ սեռի խնդիր չունենալնուն, միայն բնութեան խնդիր կ'առնեն այլեայլ հոլովով ու նախդիրներով կամ հոլովառու բառերով, տեղին ու իրենց մասնաւոր նշանակութեանը նայելով։

362. Այս նշանակութիւնը գիտնալէդ ետքը, հոլովներուն ու նախդիրներուն ու հոլովառու բառերուն ուժը աղէկ միտք առեր ես նէ, կրնաս ատ բնութեան խնդիրները անսխալ դնել. կանոնով չսորվեցուիր։

363. Ուղղական բնութեան խնդիրը՝ շատ տեղ նախդրիւ տրական ալ կըդրուի, ու յոգնակիի տեղ եզական ալ, ինչպէս էական բայերուն տեսանք (342)։

Արար զիս հայր։ Արարից զքեզ յազգ մեծ։
Օծանել զոք թագաւոր կամ ՚ի թագաւոր։
Ոչինչ համարել։ Յոչինչ համարել. Ընդ ոչինչ համարել։
Զկուռս ոչ կալայ երբէք առ Աստուածն Ճշմարիտ։
Թշնամի դառնալ. Դառնալ ՚ի թշնամի։
Առիւծ ձեւանալ. Յառիւծ ձեւանալ։
Զեօթն աղջիկն, զոր տուեալ էր նորա նաժիշտս։
Զանձնեան պատերազմող և ընդդէմ ունել բարի իցէ, եթէ սիրելիս և բարեկամս։
Զ[illegible]ագոյն և պայծառք երևէին։

364. Ներգործական բայի յոգնակի ուղղական խընդիրը սովորաբար սեռով կըդրուի. Կացո զնոսա իշխանս։ Կենդանիս արար զմեզ։

Նոյ զձեզ դեսպանս։ Առնել զամենեսեան աշակերտս։

365. Կրաւորական ու չէզոք բայերունը սովորաբար բէով. Զարք անուանին։ Այրք շինեցան քեզ պահապանք։ Մեկնեցան ՚ի միմեանց ողջք անարատք։ Կային դատարկք։ Գնային անարատք։

366. Բայց շատ բայեր՝ բնութեան խնդիրի տեղ

ալ հայցական կ՚առնեն, որ համառօտ մը գիտնալու է. ինչպէս,

367. Ե. Սեռականի տեղ հայցական.

Դու զո՞վ առնես զքեզ. — այս ինքն ո՞վ առնես:

Թագաւոր զո՞ ասեն զՔրիստոս. — այս ինքն Թագաւոր ո՞ւմ ասեն:

Զնախանձն որ առ մարդն եղև՝ իմացին զպատճառն. — այս ինքն զնախանձն իմացին պատճառ:

368. Է. Տրականի կամ գործիականի տեղ հայցական.

Որ զգեցուցանէր զձեզ կարմիրս. — այս ինքն ձեզ կարմիրս կամ զձեզ կարմրօք:

Հարցից զձեզ բան մի. — այս ինքն ձեզ բան մի կամ զձեզ բանիւ միով:

Հարցից ինչ զձեզ. — այս ինքն ինչ ձեզ կամ զձեզ իւիք:

Ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ. — այս ինքն նոցա, կամ բազում իւիք:

Արբոյց զպարտէզն երկերիւր սափոր ջուր. — այս ինքն պարտիզին, կամ ջրով:

Զամուր ամուր տեղիսն Հայոց՝ բերդս շինել. — այս ինքն յամուր ամուր տեղիսն, կամ բերդիւք:

Զայս միայն աղաչեսցուք զԱստուած. — այս ինքն առ այս կամ այսու:

Զկշիռ մարմնոյ նոցա ոսկի առնուին. — այս ինքն ՚ի կշիռ կամ կշռով:

369. Ը. Նախդրիւ տրականի կամ գործիականի տեղ հայցական կ՚առնեն սովորաբար ժամանակի, չափի, ձևի, ճամբայի ու ասոնց նման անունները. ինչպէս,

370. Ժամանակի անունները.

Հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց. — այս ինքն յամենայն աւուրս:

Զվեց օր արար տէր Աստուած զերկինս և զերկիր. — այս ինքն ՚ի վեց աւուրս:

Տեսին զգործս իմ քառասնեան ամ. — այս ինքն ընդ քառասուն ամ։

Ծառայեաց ամս եօթն։ Թագաւորեաց ամս տասն։

Պստան չեօրն օր և չեօրն գիշեր։ Լուռ եկաց աւուրս երկոտասան։

371. Չափի անունները.

Բարձրանալ հնգետասան կանգուն. — այս ինքն 'ի հնգետասան կանգուն կմ հնգետասան կանգնաւ։

Արբուցանել ումեք բաժակ մի ջուր. — այս ինքն բաժակաւ։

Բարձին զնշխարսն երկոտասան սակառի. — այս ինքն սակառեօք։

372. Ձևի անունները.

Որ բացական տեսիլն զնոյն օրինակ քանդակեցին. — այս ինքն նոյն օրինակաւ կամ 'ի նոյն օրինակ։

Որ Տարսոն զձև և զօրինակ Բաբիլոնի շինէր. — այս ինքն ձևով և օրինակաւ կմ 'ի ձև և յօրինակ։

Որ ինչ օրինակ վկայեցին։ Աստուածակերպ օրինակ բարձրանալ. — այս ինքն օրինակաւ։

373. Ճամբայի անունները.

Երթիջիք զճանապարհն ձեր։ Գնալ զճանապարհս Թիւրս։

Գնաց ճանապարհ ժամանակս բազում։

Մի երթար ճանապարհ ընդ նոսա։ Եկին իբրև աւուր միոյ ճանապարհ։

Տրտմութեամբ երթային զերկայնութիւն ճանապարհին։

Գնդեցան արքն զկնի նոցա զճանապարհն Յորդանանու։

Հեռացաւ Թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ։

Ի ճանապարհին՝ զոր երթայցես։ Երթան զերկայնաձիգ հրապարակն։

Երթիցուք զուղորդն ։ Օ լեռնլեռնային գնաջիք ։
Երթայր զայս կողմն լերինն ։
Մ՚եծ վայրս խաղացեալ յառաջ երթիցեն ։
Մ՚եծաւ հոգաբարձութեամբ ընթացուք զառա-
պար կենցաղոյս ։
Զարացուցանէ զնա և առաքէ զերկայն ճանա-
պարհն ։
Նա իբրև տեղեակ՝ զուղորդն տանի ։
Առաջնորդէր նոցա զերկայնութի ճանապարհին ։

374 . Գ . Գործիականի տեղ հայցական կ՚առնեն իրենց գոյական անունները կամ ուրիշ նոյն և նման նշանակութիւն ունեցող բառերը , ու յարաբերական ըր՝ որ զանոնք կը յարաբերէ . ինչպէս ,

375 . Իրենց գոյական անունները .
Մ՚եղցց զնոսա մեղս մեծամեծս . — այս ինքն մե-
ծամեծ մեղօք ։
Սէր յաւիտենական սիրեցի զքեզ ։ Անէծ զիս ա-
նէծս ցաւագինս ։
Օ մի սէր սիրեցին զՅիսուս . — այս ինքն միով
սիրով ։
Օ հարուածս թշնամւոյ հարի զքեզ ։
Օ թաղումն իւր թաղեցի ։ Օ պատիժս պատժե-
ցաւ ։
Պսակեցար ՚ի թագաւորէն զանթառամ փառաց
զպսակն ։
Տաճարն Աստուծոյ շինեցի շինուածս փառաւորս ։
Ամաչեցէք զամօթ մեծ ։ Երկեան երկիւղ մեծ ։
Օ անդիւտ կորուստն կորնչի ։ Ընթացս յանդըդ-
նութեան ընթանային ։
Լացին լալին մեծ յոյժ ։ Մ՚եծացաւ մեծութի յոյժ ։

376 . Ուրիշ նման բառերը .
Օ մահ աղուեսու սպանից զքեզ . — այս ինքն մա-
հուամբ ։

Զկէս յանցանաց քոց ոչ յանցեաւ. — այս ինքն կիսով. (յանցանքին կէսն ալ նոյնպէս յանցանք է։)

Վառեցաւ ամենայն այր զզէն իւր. — այս ինքն զինեցաւ զինու իւրով։

Եւ նոքա զնոյն քուն ննջեցին։ Ամբրեցին զմեղացն քուն։

Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ։

Առողջացան զանախտաւորութիւն երկնաւոր։

Պատերազմել զառաքինութեան զհանդէս։

Կորնչել զյաւիտենական սատակումն կամ զյաւիտենական մահն։

377. Յարաբերական դէր.

Տեսի ես զնեղութիւնն՝ զոր նեղէին զնոսա եգիպտացիքն. — այս ինքն որով։

Հարուածք՝ զոր հարցէ տէր զազգս ամենայն. — այս ինքն որովք։

Գիտես զծառայութիւնն զոր ծառայեցի քեզ։ Ի մեղս իւր զոր մեղաւ։

Բժշկել 'ի վիրացն կամ 'ի նետիցն զոր խոցեցին զնա ասորիքն։

Ոչ թողից քեզ զանարգանս դիցն՝ զոր թշնամանեցեր զնոսա։

Ի զարհուրանաց սրտի քո՝ զոր երկնչիցիս։

Յամենայն անօրէնութեանց դոցա՝ զոր մեղան։

378. Շատ չեզոք բայեր ալ, նշանակութիւննին փոխուելով՝ ներգործականի մտքով հայցական կ'առնեն ուրիշ հոլովներու տեղ.

Ամենայն որ բնակեալ իցէ զլեռնակողմնն. — այս ինքն 'ի լեռնակողմնն։

Որ զտեղին բնակեալ նստէին. — այս ինքն 'ի տեղին, 'ի տեղւոջն։

Եսթեր՝ զոր ամուսնացաւ թագաւորն. — այս ինքն ընդ որում։

Խնդացին զմեր 'ի նոսա հասանել. — այս ինքն ընդ մեր հասանել։

Ի բամբասանաց խնայել զլեզու. Խնայել զձեռն յարենէ. — այս ինքն արգելուլ։

Երկչոտն միշտ կանխէ զանհնարինս. — այս ինքն կանխաւ գուշակէ։

Կաց և խրատեաց զզօրութիւն տեառն. — այս ինքն ուսիր, 'ի միտ առ։

Զ՛ինչ ևս պակաս իցեմ: — այս ինքն իւ չ՞ յորմէ՞։

379. Շատ ներգործականներ ալ, չէզոքական մտքի փոխուելով, հայցականի տեղ ուրիշ հոլովներ կ'առնեն. ինչպէս,

Լսել ձայնի, ըսել կ'ըլլայ մտիկ ընել, հաւանիլ։

Տարայք մեզ, համբերեցէք։

Կամել յօրէնս տեառն կամ ընդ պատերազմ, հաճիլ, հաւանիլ։

Տեսանել 'ի նա, 'ի լոյս, նայիլ։

Ուրանալ 'ի հայելոյ, յԱստուծոյ, յօրինաց, խորշիլ, հրաժարիլ։

Անիծանել այլոց, անէծք կարդալ։

Հովուել հօտի, հովուութիւն ընել։

Զգալ ցաւոց, յաղթութեանց, անձին, մտաց կամ խելաց իւրոց, զգայուն ըլլալ։

Յանձն առնուլ կամ յանձին ունել ումեք, իմիք, հաւանիլ, խօսք տալ։

Զմտաւ ածել զնմանէ, մտածել, մտմտալ անոր վրայ։

380. Առնելու տալու բայերը, ինչպէս Գնել, ստանալ, առնուլ, վարձել, վաճառել, տալ, մատնել, սակարկանել, գնոց անունները կ'առնեն սեռական, գործիական, բացառական, ընդ կամ 'ի նախդիրով. Ստանալ կամ վաճառել արծաթոյ, արծաթով, 'ի գնոյ արծաթոյ, ընդ արծաթոյ, 'ի մնաս յխուռն։

381. Զափի, կշռքի անուններն ալ խնդիր կ'ըլլան ուղղական կամ անձնախնդիր հայցական, գործիական, բացառական.

Ունել զբարձրութիւնն տասն կանգուն կմ՛ 'ի տասն կանգուն (363), տասն կանգնաւ, 'ի տասն կանգնոյ:
Շինել զպարիսպն յիսուն կանգուն յերկայնութիւն, կանգունս հարիւր յերկայնութիւն, կանգնաւ յերկայնութիւն, 'ի քսան կանգնոյ զերկայնութիւն:
Հատանել փայտ մի յիսուն կանգուն. Էր աշտարակ մի յիսուն կանգուն շինեալ:
Կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի:
Տային տասն հազար քոռ ցորենոյ, և գարի՝ տասն հազար քոռ:
Պատրաստեցի ոսկի՝ տաղանտս հարիւր հազար, և արծաթ՝ տաղանտս հազար հազար:

---

382. Բայի զօրութիւն ունեցող անունները բայանուն կ'ըսուին, ու ներգործական, կրաւորական ու չէզոք բայի մտքով գտնուելով, ան բայերուն պէս ալ խնդիր կ'առնեն՝ սեռի կամ բնութեան:

383. Բայց ան այլևայլ խնդիրներուն տեղ՝ սեռական ալ կ'առնեն յատկացուցիչի պէս, որը շատ ու սովորաբար, որը երբեմն. որ ասանկ գիտնալու է.

384. Ներգործական մտքովները՝ խիստ շատ անգամ հայցականի տեղ.

Ծննդեամբ զԿային. Ծննդեամբ Կայենի. — Կայէնը ծնանելով:
Արարչութիւն զաշխարհս. Արարչութիւն աշխարհիս. — աշխարհս ստեղծելը:
Գործելեաց զգործս. Գործօնայ գործոյն. — գործը գործողներուն:

Արարիչ զընաւս. Արարիչ ընաւից, ամենեցուն.
— ամէնը ստեղծող :

Դատապարտօղք՝ զՔրիստոս ոչ խոստովանողաց.
— Քրիստոս չխոստովանողները դատապարտողներ. մէկ խօսքի մէջ երկու կերպն ալ :

385. Կրաւորական մաքոմները՝ երբեմն բացառականի տեղ.

Ըմպեամբ 'ի կուսէն. Ըմպեամբ կուսին. —
կուսէն ծնելով :

Վիրաւորք 'ի սրոյ. Վիրաւորք սրոյ. — Սրէ վիրաւորածներ :

Կոխան յազգաց. Կոխան ազգաց, ոտից. — ազգերէ կոխուած :

386. Չեզոք մաքոմները՝ երբեմն իրենց ընութեան խնդիրին տեղ.

Յօժարեցութիւն գործոյ և հրաժեշտ վաստակն.
— այս ինքն 'ի գործ, 'ի վաստակն :

Դաւ՝ զգխմեցուցն չարչարանացն ասէ. — այս ինքն զգխմեցն 'ի չարչարանան :

Ար ելս ծառոյն. Ի յելմն Եգիպտոսի. — այս ինքն 'ի ծառն, յԵգիպտոսէ :

Անտես առնիցէ զփախուստ մեղջերուին. — այս ինքն զփախչելն 'ի մեղջերուէն :

Հաստողին փախչող. Երկիւղածք Աստուծոյ. —
այս ինքն 'ի հաստողէն, յԱստուծոյ :

387. Ան, ս, մասնիկներով ածականները, ու պակսութիւն մը ցուցընողներուն շատը, անխտիր կ՚առնեն բացառական ու տրական, երբեմն ալ գործիական.

Զգէտ գրոց, 'ի գրոց.
Անտես աչաց, յաչաց.
Անփորձ մեղաց, 'ի մեղաց.
Անյայտ տեսողաց, 'ի մարդկանէ.
Անպտուղ սերմանն, 'ի հաւատոց.
Հեռի 'ի տանէ, արդարութեան.
Օտար 'ի մօրէ, հաւատոց.

Կարօտ հացի, 'ի հացէ, հացիւ.

Աղքատ 'ի գիտութենէ, բարեաց, մտօք.

Անպարտ 'ի յանցանաց, այլովքն.

Արտսեր իմաստութե՛ դատաստանի և օրինաց։

388. Նոյնպէս ըէ բայածականը կ'առնէ տրական ու բացառական.

Մերձենալի մարդկան, 'ի մարդկանէ.

Ընդունելի ամենեցուն, յամենեցունց.

Երանելի ամենեցուն, յամենեցունց.

Գովելիք աշխարհի, 'ի մէնջ.

Աչաց տեսանելի.

Ճանապարհ գնալի ոտից և սմբակաց։

389. Շատ տեղ ալ որ և իցէ գոյական անունները խնդիր կ'ունենան քովերնին՝ չէ թէ իրենց, հապա զօրութեամբ եական բայ կ'իմացուի որ յարաբերականով.

Ազս տեսակաւ, այլ ոչ համեմատութեամբ. — ըսել է, ես որ ազ եմ տեսակաւ, պետրոս։

Չափով կեանք. Ծուլութեամբ կեանք. — ըսել է, կեանք որ չափով է, եւն։

Խօսիւք պատարագ. — ըսել է, պատարագ որ խօսիւք լինի, բանաւոր։

Առ 'ի քէն իմաստութիւնդ. Առ 'ի քէն փառօքն. — ըսել է, իմաստութիւնդ որ է առ 'ի քէն, փառօքն որ են առ 'ի քէն։

Անցաւորք են և թագաւորքն և 'ի նոցանէ սպանալիքն. — ըսել է, և սպանալիքն որ լինին հաւ եղեալք 'ի նոցանէ։

Եղբայր առ 'ի հօրէ կամ առ 'ի մօրէ. — ըսել է, որ է հաւ եղեալ առ 'ի հօրէ։

Կոյր 'ի ծնէ. Կաղ յորովայնէ մօր իւրոյ. — ըսել է, կոյր եղեալ, կաղ եղեալ։

Արուեստու կամ յարուեստէ բժիշկ։ Ազգաւ կամ յազգէ Հրեայ։

Տուր բերել զարծաթն հարիւր քանքար. — այս ինքն որ է հարիւր քանքար։

Որդի ամաց ութից. Այրի ամաց իբրև ութսուն և չորից. — այս ինքն որ էր։

Առնուլ սուր երկսայրի թզաւ յերկայնութիւն. — այս ինքն որ իցէ թզաւ։

390. Ածական անուններն ուրիշ բաղդատութեամբ որ ունին նէ[1], սովորաբար քան բառով խնդիր կ'առնեն.

Հատն մանանխոյ փոքր կամ փոքրագոյն է քան զամենայն սերմանիս. բուսանի և լինի մեծ քան զամենայն բանջար։

Թեթև քան զօդ։ Թեթևագոյն քան զարծուիս։

Գերազանց քան զմիտս։ Քան զամենայն վեհագոյն։

391. Երբեմն ալ սեռական կամ տրական կ'առնեն.

Ամենայն նախարարացն աւագ։ Ամենեցուն վեհագոյն։

Օրինակաց գերագոյն։ Եւս վատթար ամենեցուն։ Բարձրագոյն նմին։

Գերազանց մտաց։ Յոյժ գերազանց առ հասումն իմացմանց։

Ոչինչ նուազ էր կոյսն արքային հասակի. — այս ինքն քան զհասակ։

---

1 Ըստ ինքեան բաղդատական ածական չկայ մեր լեզուին մէջ, հապա յայտնի կամ զօրութեամբ քան բառով կամ ուրիշ խնդրով կ'ըլլան հաւասարապէս թէ պարզերը՝ թէ գոյն բառով բարդածները, ինչպէս կը տեսնես օրինակներուդ մէջ։ Ու գոյնով բարդերը՝ տիրապէս բաղդատութիւն չեն բերեր, հապա կը սաստկացընեն միայն. ինչպէս, վարժապետ վեհագոյն, լեառն բարձրագոյն, ծայրագոյն գահ. որ ամենէն վերը ու աւելին կընշանակեն։ Երբեմն ալ բնաւ չեն փոխեր բառը. ինչպէս, Էնն անեղ յանեղագունէն իջեալ հօրէ։

392. Բնիկ տեղ ալ բացառական.

Յայլոցն վերագոյն. Յերձիցն վերագոյն. Ի յօդապատ մարմնոյ 'ի վեր:

Զօրեղագոյնք 'ի սոցունց. — այս ինքն քան զսոսին:

Հին էր ժամանակաւ 'ի նմանէ. — այս ինքն հին քան զնա:

393. Իսկ երբոր առանց բաղդատութեան՝ նմաններու մէջ աւելի կամ պակաս ըսել պէտք ըլլայ նէ, կ'առնեն սեռական, բացառական, նախդրիւ տրական՝ 'ի մէջ բառով.

Յընտիր չիրմաց մրգոց Թաղէա: Մեծդ դիւցազանց:

Մեծն 'ի ձէնջ. անմեղն 'ի ձէնջ. կրտսերն 'ի նոցանէ. ծերագոյնքն 'ի նոցանէ:

Մեծն 'ի մարգարէս. կրտսերագոյն յորդիս նորա. նախդ 'ի վկայս. տկարագոյն յանասունս:

Ի մէջ իմաստնոց իմաստնագոյն:

394. Միջակ անուններն, թէ միայն՝ թէ գոյականի հետ, սովորաբար բացառական խնդիր կ'առնեն.

Անկցի 'ի մի 'ի քաղաքացն այնոցիկ: Ի միում յաւուրց:

Եղիցի բան քո իբրև զմիոյ 'ի նոցանէն: Երկու 'ի նոցանէ: Հինգն 'ի նոցանէ:

Զինչ գտեր յամենայն ընչից քոց: Պիղծ ինչ 'ի կերակրոյն:

Ո՞վ 'ի ձէնջ. որ 'ի մէնջ. մի ոմն 'ի դպրացն. ոմանք յայնցանէ:

Իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ: Ամենայնք 'ի ժամանակագրաց:

Կամ որո՞յ գործոյ 'ի նոցանէ: Ի մասն ինչ միայն 'ի նմանէ:

Միոյ ուրուք կուսակալի 'ի ծառայից տեառն իմոյ:

Ո՞վ ոք իցէ 'ի ձէնջ մարդ: Յո՞ ոք 'ի ձէնջ հայր:

395. Շատ անգամ ալ սեռական ու նախդրիւ տրական կ'առնեն.

Հասանել 'ի մի քաղաքացն ։ Ի միում աւուրց ։
Եղիցին և քո բանք իբրև զմիոյ նոցա ։ Մի ոմն քաղաքացւոց ։
Մի կարծեր ինչ նիւթոց ։ Իբր 'ի պղծոյ իմեքէ արարածոց ։
Ի տան ուրուք իշխանացն ։ Ով է որ պիտանիք իցեն ձեր ։
Իւրաքանչիւր որ սրբոցն ։ — Մի յորդիս ։ Ով որ 'ի թագաւորս ։
Ով որ 'ի նոսա ։ Ոչինչ է յամենայն ախտս չար քան զլրբութիւն ։

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԻՉ

396. Գոյական անուն մը կամ դերանուն մը ուրիշ անուան քով, բաց 'ի խնդիր ըլլալէն՝ որ տեսանք խընդիրներուն գլուխը, կամ յատկացուցիչ է կամ բացայայտիչ: Անոր համար երկուքն ալ մէյտեղ տեսնենք:

397. Երբոր մէկ բանին որուն ըլլալը կ'ուզենք յայտնել նէ, քովը սեռական անուն մը կամ դերանուն մը կը դնենք, որ յատկացուցիչ կ'ըսուի (319), մէկալն ալ յատկացեալ: Աշխարհաբառ լեզուի մէջ յատկացուցիչը միշտ առաջ կը դրուի յատկացեալէն. գրաբառին մէջ շատ անգամ ետքը, բայց առաջ ալ կը դրուի.

Բան քո. քո բան: Ծոց իւր. իւր ծոց. — քու խօսքդ, իր ծոցը:

Արքայութիւն երկնից. երկնից արքայութիւն. — երկնքի թագաւորութիւնը:

Պտուղք ծառոց. ծառոց պտուղք. — ծառերու պտուղներ:

Պտղովք ծառոց. ծառոց պտղովք. — ծառերու պտուղներով:

Գլուխ և ձեռք և ոտք նորա: Ձեր ոգի և շունչ և մարմին: Զհայր քո և զմայր:

Սէրն Աստուծոյ և ընկերին: Սթերք ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց:

Աւուրք չորեքտասան՝ հարսանեացս: Ամենայն զօրքն պատերազմիկք Հայոց:

Առեր զհանդերձն գեղեցիկ քո: Զզօրսն ամենայն՝ Պարսից:

Ի վերայ լերանց բարձանց՝ իւրեանց ։ Ի լերինն բարձու՝ Իսրայէլի ։

Աւուրք ամաց կենաց իմոց չամ աւուրք կենաց ամաց իմոց ոչ հասին յաւուրս ամաց կենաց հարց իմոց ։

Կրտսեր որդւոյն Յազկերտի դայեակն. — այս ինքն դայեակն կրտսեր որդւոյն ։

Առանց բարեգործից հրամանաց անսարկութեան. — այս ինքն առանց անսարկութեան հրամանաց բարեգործից ։

398. Բայց միջակ անուն ու յարաբերականը ս, որ, միշտ առաջ կը դրուին. Այր որդի, որոյ որդին, որոյ ձայնն, որոյ որդիքն, որոց իմաստութիւնն, որոց ոգիքն ։

399. Յատկացեալը շատ անգամ չկրկնուիր նոյն խօսքի մէջ, ինքիրեն կ'իմացուի. ինչպէս,

Ժանիք նորա՝ կորեան առիւծու. — այս ինքն՝ էն չամ էին ժանիք կորեան ։

Ոչ օգտի և խաղաղութեան բանս խօսի, այլ չարի. — այս ինքն չարի բանս ։

Զի էին գործք իւրեանց՝ չարութեան. — այս ինքն գործք չարութեան ։

Աստուծոյ բարբառ է, և ոչ մարդոյ. — այս ինքն ոչ մարդոյ բարբառ ։

Հրեշտակի կարծեցին զաստուածային բարբառն. — այս ինքն հրեշտակի բարբառ ։

---

400. Երբոր մէկ անուան կից դերանուան ինչ կամ ով ըլլալը կամ ինչ մտքով առնուած ըլլալը յայտնել կ'ուզենք նէ, քովը նոյն հոլովով ու թուով համաձայն ուրիշ անուն մը կամ դերանուն մը կը դնենք, որ բացայայտիչ կ'ըսուի (320), մէկալն ալ բացայայտեալ կամ բացայայտեալ. ինչպէս, Վահան զօրավար, ըսել է ան Վահանը որ մարդ է ու զօրավար. Զօրավարն Վահան,

ըսել է այն զօրավարը որ անունը Ահան է ։ Յաթոռն Աստուծոյ՝ յերկինս, ըսել է Աստուծոյ աթոռը՝ այս ինքն կ'ուզեմ ըսել երկինքը. իսկ Յերկինս՝ յաթոռն Աստուծոյ, ըսել է երկինքը՝ որ Աստուծոյ աթոռն է. ու թէպէտ ինքիրեն յայտնի է, բայց հոս աթոռ կը մտածուի կոր, աթոռի պէս առնուած է, ուստի յոյներէնով չմեկնուիր, հապա որ է ըսելու է ։ Ասանկ կ'ըսուի,

Ասանէթ՝ դուստր Պետափրեայ քրմի. Արքայի Դաւթի. Դաւթի արքայի ։

Եղիպտարաւ դստերըն հանդերձ. Հանդերձ կընաւ իւրով Սափիրաւ ։

Մեք քարոզեցաք, ինև և Սիղուանոսիւ և Տիմոթէիւ ։

Ի Դարեհէ արքայէ. Յինէն՝ 'ի կնոջէ սամարացւոյ ։

Նա զԵղիպտարա զդուստր իւր. Զմեղսն ձեր, զոր արարէք, զորթն առի և այրեցի. Թողեալ 'ի բաց զփառսն հայրենի՝ զքահանայութիւն ։

Հողմոյ մահուն, որ ընկենու զծառս՝ զմեզ ։

Շրջեւ զեղբարբք իւրովք՝ զորդւովքն Իսրայէլի ։

401. Շատ անգամ բացայայտիչը՝ այս ինքն, այս ինքն է, այս է, այսէն, մեկնելու բառերով ալ կը դրուի.

Նուազունք, այս ինքն ոգիք իբրև ութ ։

Ի նա հաւատացեն, այս ինքն 'ի Յիսուս Քրիստոս ։

Ի ձեռն վարագուրին, այս ինքն է մարմնոյ իւրոյ ։

Զսուրն, այս ինքն զբանն Աստուծոյ ։

Աղարթօք վարսից, այս է արտաքին զինօք բարեշուք կերպից ։

Հրաշալի պատուով յարգեալ, բանիւ ասեմ և մտօք ։

402. Ասանկ՝ բայ բայի ալ կ'ըլլայ բացայայտիչ.

Յամաքեցաւ խոտն, այս է մեռաւ ։

403. Տեղի և ուրիշ բանի յատուկ անունները՝ շատ անգամ ածականի պէս առաջ կը դրուին, ուստի և սովորաբար անհամաձայն կը դրուին ուղղական.

Եփրատ գետոյ.
Ապար աշխարհին.
Արեգ քաղաքի.
Ովկիանոս ծովուն.
Քասղեւ ամսոյ, 'ի Քասղեւ ամսեանն.
Սերկեւիլ մրգոյ, բարտի ծառոյն.
Ը Սէիր լերամբ, առ Եփրատ գետով.
Ի Սիոն լեռնէ, 'ի Հռոմ քաղաքէ, յԱրարատ գաւառէ, 'ի բարտի ծառոյն.
Ը մոլախինդ արմատն.
Եղեւին ծառոց. մայր փայտիւք. բիւրեղ և դահանակ և սարդիոն ականբք.
Գովեցար ովսաննա երգով։

404. Բայց համաձայն ալ կ'ըլլան.
Սեփարուիմայ քաղաքի.
Առ Հիւդասպաւ գետովն.
Ի Սիոնէ լեռնէ.
Ահեկանի ամսեան.
Սարոյց ծառոց։

405. Երբեմն մարդու անուններն ալ անհամաձայն՝ ածականի պէս առաջ կը դրուին.
Սանատրուկ արքայի, Յուլիոս կայսեր, Բակուր բդեշխի.
Աշխէն տիկնաւ.
Յաւգոստոս կայսերէ, յԱղեքսանդրոս դարընէ.
Ը Քանան մանկանէն.
Արտեմիս դից։

406. Տեղի և իրաց անունները երբեմն եւս ալ կը դրուին անհամաձայն. Քաղաքին Սեփարուիմ, լերինն Կաւկաս, գետոյն Ախուրեան, ամսոյն Ադար, 'ի քաղաքին Երուսաղէմ, 'ի լերինն Սիոն, 'ի լերինն Թաբօր, յամսեանն՝ Նիսան։

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

### ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԵՏ

407. Ածական անունը (9) աշխարհաբառ լեզուի մէջ միայն առաջ կը դրուի, գրաբառին մէջ՝ առաջ ալ ետև ալ. մեծ ծառ, ծառ մեծ, արդար այր, այր արդար։

408. Հասարակ անուան ածականները անմիջապէս գոյականէ առաջ որ դրուին նէ, սովորաբար չեն համաձայնիր անոնց հետ ոչ հոլովով ոչ թուով. այս ինքն չեն հոլովիր անոնց պէս, հապա ուղղական կը մնան. ինչպէս,

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Մեծ ծառ. | Մեծ ծառք. |
| Մեծ ծառոյ. | Մեծ ծառոց. |
| Մեծ ծառով. | Մեծ ծառովք. |
| Ի Մեծ ծառոյ. | Ի Մեծ ծառոց. |
| զՄեծ ծառ. | զՄեծ ծառս։ |

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Արդար այր. | Արդար արք. |
| Արդար առն. | Արդար արանց. |
| Արդար արամբ. | Արդար արամբք. |
| յԱրդար առնէ. | յԱրդար արանց. |
| զԱրդար այր. | զԱրդար արս։ |

409. Ասանկ անհամաձայն կ'երթան շատ տեղ՝ թէ և միջանկեալ բառով հեռացած ըլլան գոյականէն, որ շատ հեղ կ'ըլլայ.

Նշանական պատահեալ վիճակի. Հոմանուտ վի-ճակեալ բնութեան։

Ընչաւոն ելք մատնեալ ատենի. Զանդարձն 'ի չարեաց զմեղաւորէն։

Երկայն կարօտանաց բանից. Պղծալէյն իւրեանց շրթամբք։

Բազում ծնանիցին նմա որդիք. Բազում ունէր ուստերս։

410. Բայց շատ հեղ ալ կը համաձայնին վերջահո-լովներուն, մանաւանդ հեռու ընկածները, որ աշխար-հաբառին մէջ բնաւ չըլլար. ինչպէս,

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Մեծ ծառ. | Մեծ ծառք. |
| Մեծի ծառոյ. | Մեծաց ծառոց. |
| Մեծաւ ծառով. | Մեծօք ծառովք. |
| 'ի Մեծէ ծառոյ. | 'ի Մեծաց ծառոց. |
| զՄեծ ծառ. | զՄեծ ծառս։ |

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Արդար այր. | Արդար արք. |
| Արդարոյ առն. | Արդարոց արանց. |
| Արդարով արամբ. | Արդարովք արամբք. |
| յԱրդարոյ առնէ. | յԱրդարոց արանց. |
| զԱրդար այր. | զԱրդար արս։ |

Ընահիտ՝ ծնունդ է մեծին արին Արամազդայ։

Բանջն և փառաւոր Թագաւորն։

Մեծատուն և հաստարելն և անձեռագործ խորանաւն։

Մեծամեծացն և անբաւ խնամոցն։ Ի պղծոց և 'ի նո-րաձայն բանից։

Փոխարէնս 'ի բարկութենէ եղբօրն առաջնոր-դեաց արդարոյն։

Նորնորէն վերակոչեաց հրաման արքային ։
Հրաշափառագունիւ պարտ էր անցանել բանիւ ։
Ի քաջակորոյ աստի բերմանց ։ Ի դառնագոյն թափէ
զինքն Բագնոյ ։

411. Ինչպէս տեսար, անմիջապէս մօտիկները համաձայնին ալ նէ՝ վերջահոլովներուն միայն կը համաձայնին, և ոչ յոգնակի նախդրիւ հոլովներուն, այս ինքն յոգնակի ուղղականին ու հայցականին. զի անմիջապէս մօտ որ ըլլան՝ չըսուիր սովորաբար մեծք ծառք, արդարք արք, զմեծս ծառս, զարդարս արս ։

412. Բայց հեռու կենօղներուն՝ ատ ալ կ՚ըլլայ խիստ վայելչաբար. ինչպէս,

Երկու աշեղ թագաւորեալք աներևոյթ հրեշտակք ։
Մեծամեծքն և պատուական առաքելք ։
Նա այլ ևս բազումք որ 'ի սոյն յարկին բանք ։
Արձակել 'ի վերայ նոցա նորագործս լի բարկու-
թեամբ գազանս անծանօթս ։
Օ՜ ընտիր ընտիրսն և զգեղեցիկ անօթսն տարայք ։
Ընտրեցէք հնազանդս 'ի ձէնջ արս եօթն ։
Բազումս բարձրբերս և գիշերբերս 'ի նմա տնկեաց
հովիւս ։

413. Գոյական դերանուններուն ածականը միշտ համաձայն գնելու է հոլովով ու թուով. Մխիթարեցելոյս ինձ. փրկելոյս մեզ. զտկարս զմեզ. զկորուսեալս զմեզ. զօտարացեալքս զմեզ ։

414. Բայց չորս թուական անունները, մի, երկու, երեք, չորք, և միջակ անունները երկոքեան, ամենեքեան, էն կամ էնչ, որ, ո՞վ, ով, ու ածական դերանունները և դերանունական ածականները, անմիջապէս առաջ ալ որ գրուին նէ, սովորաբար կը համաձայնին հոլովով ալ թուով ալ, շատը նախդրիւ հոլովներուն ալ. ինչպէս, Մէկ ատն, 'ի միում աւուր, 'ի մէջէ մարդոյ, երկուց

աւուրց, երկուս արս, երկուք և երիւք վկայիւք, 'ի չորից ծառայց. զերկոսին որդիս, ամենեքեան ծերքն, ամենեցուն բնակչաց. առանց իրիք միջնորդի, մի իւիք սաստիւք. որով հրով, յորմէ արարչէ, որոց անասնոց. 'ի չարէ ումեքէ արարչէ, ումանք արք, զումանս եղբարս ։

Նոյն աւուր, այդմ շնորհի, այնու օրինակաւ, այնց ժամանակաց. 'ի սմին աւուր, նովին կամ նովիմբ անուամբ, նոքիմբք պարծանօք.

Իմոյ իմաստութեան, քում հրամանի, քով կամ քոյով ձեռամբդ, 'ի քումմէ ձեռանէ. իմոց բանից, 'ի ձերոց ազգականաց. նորայոցն ախտից ։

Բայց քանի մը հարկաւոր գիտելիք կան.

415. Երկուան ուղղական, եզակի կ'ըսուի Երկու որդիք, երկու արք, երկու պարտապանք. չէ թէ երկուք որդիք ։

416. Միջակ անունը որ՝ նախդրիւ հոլովի մօտ չհամաձայնիր, հապա միայն հեռու, ինչպէս ամէնքը. Որ մատեանքն, զոր օրէնս. ո՞ր մեծատունք, զո՞ր չարիս ։ — Զո՞րս հիւսեցից շարս և տողս բանից ։ Եւ ամենեւին գոյականէ ետև չդրուիր ։

417. Այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն դերանուններուն կարճ նախդրիւ հոլովները չեն բանիր մօտ. չըսուիր՝ այնք բանք, զայնս բանս. նոյնք բանք, զնոյնս բանս. հապա կ'ըսուի այնոքիկ բանք, զայնոսիկ բանս, նոքին բանք, զնոսին բանս ։ Հեռու ըլլան նէ, կ'ըսուի. Այնք ոչ էին լեալ յաջողուածք. զայնս ես արարից. զնոյնս նկատելով ներգործեալ ։

Իսկ վերջահոլովներուն, ինչպէս ըսեր ենք 'ի 128, սովորաբար կարճերը առաջ կը բանին, երկայնները ետքը. թէպէտ երբեմն ընդհակառակն ալ կ'ըլլայ. ինչպէս,

Յայսմանէ տեղւոջէ, այսոցիկ տարակուսանաց, այնոցիկ մարդկան, յայսցանէ 'ի գործոյս ։

Ընդ այդր, ուխտիս այսմ, 'ի տանս յայսմ, տեղւոյն այնմ, 'ի տեղւոջն յայնմ, տեղեացն այնց մարդիկն, զարսն զայնս, յաւուրսն յայնս ։

Իսկ սոյն, դոյն, նոյն, ինչպէս նաև սորա, դորա, նորա, վերջահոլով՝ միշտ առաջ կը դրուին, ամենևին գոյականէ ետև չեն դրուիր ։

418. Իմ, քո, քոյ, մեր, ձեր, իւր, սորա, նոցա, դերանուանական ածականները նախդրիւ հոլովներուն՝ միայն թէ որ առաջ դրուած ու հեռու ըլլան ու դիմորոշ յօդ ունենան նէ կը համաձայնին ․ Աչ զիւրան խրատելով որդիս ․ զքոյն խոհերս ։ Քոյինքն գալոց են ազգք ։ Իսկ մօտ՝ չեն համաձայնիր ամենևին, ոչ առաջ ոչ ետքը, հապա եզական դերանունի սեռականի պէս կը կենան ․ ինչպէս երբեմն վերջահոլովի հետ ալ ․ Բանք իմ, քո կամ քոյ բանք, բանք մեր, ձեր բանք, զբանս իմ, զբանս իւր ։ — Ընդ իմ ձեռամբ, քո ձեռամբդ, մեր թագաւորի, մեր կենացն, նախնոյն ձեր հօր, իւր մարմնոյն, իւր գործոյն ։ — Յետ երթալոյն իմ, զօրութեամբ քո մեծաւ, հօր իւր, ցաւոց իմ, հաւատովք ձեր, 'ի չարեացդ քո ։

419. Իմն, ինչ յոգնակի չունենալնուն, թուով չեն կրնար համաձայնիլ, միշտ յոգնակիի քով ալ եզակի կը դրուին ։ Բայց շատ հեղ հոլովով ալ անհամաձայն կը դրուին, առաջ ալ ետև ալ ․ Բարկութեամբ իմն, ընդ պատենիւք իմն, ոչ առ իմաստութեան ինչ, յետ աւուրց ինչ, իրօք ինչ ։

Բայց առաջ որ դրուին նէ, մինակ խօսքի սկիզբ չեն դրուիր, իրենցմէ առաջ բառ մը կ'ուզեն ․

Մեծ իմն անուն ․
Այսպիսեաւ իմն յարմարութեամբ ․
Օտարոտի իմն դէպ ․
Նա իմն՝ ազնուականի էն ցանկացեալ ․
Փոքր ինչ դատաստան ․
Սակաւ ինչ ժամանակի ․
Իմով ինչ շնորհօք ․
Բազում ինչ աւուրց ․
Ի՛ ինչ և այլ խորհուրդ ․
Ունիք ինչ կերակուր ․
Մի ինչ վնաս առնել ․
Յորժամ ինչ մեղաց պատահէ ․
Ոչ ի թէ ինչ պատճառ մը-

նատու կարծէին .
Եւ ինչ համեմատութիւն ոչ գոյ 'ի նոսա .

Ի վերայ ինչ բանի .
Վասն ինչ պիտոյից :

420 . Ս՞է, երէ—, ո՞ր հարցականը, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, ընդհանուր կանոնին պէս (408) անհամաձայն ալ կը դրուին երբեմն առաջ .

Ս՞ի բանին, մի ուսով, 'ի մի բանէն .
Երկու ամաց, երկու ընկերօք, երկու իրօք .
Ո՞ր ձեւով, ո՞ր աչօք, յո՞ր ազգէ, ո՞ր մեղաց .
Այս նշանի, յայս լերին, այս օրինակաւ .
Այն ժամու, յայն տանն, այն երեսուն արամբ, յայն կողմանէ .

Այս բանք, այս բանիւք .
Այն արք, այն արանց, առ այն արամբք .
Զայդ նշանսդ, յայդ տեղիսդ, յայն գործս .
Սոյն և այսր իրի, 'ի սոյն աւուր .
Ի նոյն ժամանակի, նոյն շաւղօք, 'ի նոյն հօրէ, սոյն խորհուրդք, նոյն բանքն, 'ի նոյն գործս :

421 . 'Նոյն ինքն մէջտեղ մէկ ածականի պէս որ բանի նէ, կրնայ համաձայնիլ ալ՝ չհամաձայնիլ ալ .

'Նորին ինքեան հիւանդին, նմին ինքեան Քրիստոսի .
'Նոյն ինքն տեսուն, նոյն ինքն փրկչին անուամբ .
Ի նոյն ինքն 'ի վերայ այրին . այս ինքն 'ի վերայ նոյն այրին .
'Նոյն ինքն յինէն իսկ առե-լով մասամբն . այս ինքն նովին մասամբն .
Ի նոյն ինքն յԱստուծոյ . 'ի նոյն ինքն 'ի Թշնամեացն . զնոյն ինքն զքահանայսն . զնոյն ինքն կեանս, զնոյն ինքն զօրէնս :

422 . Մէկն ածական գոյականէն ետքն որ դրուի նէ, սովորաբար միշտ կը համաձայնի հոլովով ու թուով, նախդրիւ հոլովներուն ալ . ինչպէս,

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ծառ մեծ. | Ծառք մեծք, մեծամեծք. |
| Ծառոյ մեծի | Ծառոց մեծաց. |
| Ծառով մեծաւ. | Ծառովք մեծօք. |
| 'ի Ծառոյ մեծէ. | 'ի Ծառոց մեծաց. |
| զԾառ մեծ. | զԾառս մեծս, մեծամեծս: |

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Այր արդար. | Արք արդարք. |
| Առն արդարոյ. | Արանց արդարոց. |
| Արամբ արդարով. | Արամբք արդարովք. |
| յԱռնէ արդարոյ. | յԱրանց արդարոց. |
| զԱյր արդար. | զԱրս արդարս: |

423. Երբեմն անհամաձայն ալ կ՚ըլլայ որ և իցէ հասարակ ածականը, մանաւանդ անցեալ դերբայն. Սիրոյն հոգևոր, արեան քոյ սուրբ, տանն արքունի, հրամանաւ արքունի, պսակաւն փշեայ, 'ի տանէ Թորգոմական կամ Թորգոմեան, 'ի վերին իմաստութենէն 'ի սուրբ և 'ի խաղաղարար. 'ի մէջ այդչափ վկայից բազում, երկու մասամբք՝ տկար և զօրաւոր, 'ի զօրայն արքունի, 'ի բանից անտի Յուդայ 'ի զօրեղ և 'ի գեղեցիկ. 'ի տեղւոջ մի սուրբ, 'ի դրախտին եդեմական. գազանք ինչ անհնարին, ժամք հարուստ, բանք սուրբ, բազում վնասք գնացին յաշխարհի հոգևոր և մարմնաւոր. զանգակս ոսկի, փայտս եղևնեայ, 'ի վիշապս մեծ, զօրս կուտէր բազում յոյժ, սրիկայս բազում, զամենայն բլուրս բարձր, չարիս մեծամեծ, ձկունս սակաւ ունէին, դրաստս պատրաստական, արդիւնս բաւական, զայան պիղծ, զպարգևս արքունի, բազում կազմուածս ոսկեղէն և արծաթեղէն:

Երբև զհամբաւ սոն ընթացեալ:
Ի վերայ աշխարհիս Վասպուրական կոչեցեալ:
Ի տեղւոջ միոջ ուժգին ամրացեալ:
Բազում ազգք ընդ քեզ հեծեալ յերիվարս:
Ոսկեհուռն հանդերձից ընդելուզեալ մարգարտով:
Հարջիք զամենայն քաղաքս ամրացեալ:
Նստես երկուս եղբարս արկեալ ուռկան 'ի ծով:

424. Ըսանկ ալ Թուական անունները, Մի հը միջակը, ու ածական դերանուններն ալ կ'ըլլան երբեմն. Յետ տարւոյ մի, աւուրց հինգ, արանց եօթն, ամաց յիսուն և ութ, լտերց հարիւր, ասպարիսօք հինգ, օթիւք հնգետասան, դրամբք հարիւր և քսան, յաւուրց քառասունս:— Միայնաւորի մի, կնոջ մի այրւոյ, զծառով մի:— Բանիս այս, ծերոյն այն, 'ի ժամանակին յայն, դեղովս այս հոգևորաւ, 'ի բանէդ յայդ, յընչիցն յայն:

425. Յետադաս դրականէն ետքը շաղկապով կապած ածական մ'որ գրուի, նախադասին պէս ան ալ շատ անգամ անհամաձայն կը գրուի.

Ըստ հոգևոր մասին և ըստ մարմնաւոր:
Ոչ սակաւ պատուոյ նշանակ է, այլ մեծ և բարձրագոյն:
Նա անտի տասն բանի տեղեկացեալ, կամ ևս աւելի' քսան:
Հանդերձ անմոռաց անուամբ և հուշակելի: Օրինն ժամուն կամ զտասն:
Յամենակալ տէառնէն և յամենակարող. Ի գինուորական կարգէ և յաշխարհական. Դաւիթ 'ի կրօնաւորական կարգէ և Սարգիս յաշխարհական:
Բազում էին մեզ բանք և դժուարապատում:
Դժնդակ վարուց և աղտեղի. Անխարդախ մարդկան և պարզամիտ:
Որչափ գնոց զգեօղն վաճառեցէք, և նա ասէ, այս այնչափ:

Հեշտալուր բանիւք և քաղցրալից ։ Մարդկեղէն իրօք, և ոչ աստուածային ։

Իմանալեօք՝ հոգեկան կերիւք միայն, և մարդիկ՝ հոգեկան և մարմնական ։

Համդերձ չորիւք բիւրուք և աւելի ։

426. Շատ գոյականներու, հասարակ անուն են նէ, ամէնը մէկտեղ մտածելով՝ եզակի կը դրուի շատ անգամ ածականը, թէ և ետև դրուի. ևս առաւել թէ որ նշանակութիւննին ալ մօտ է իրարու.

Բազում ցնծութեամբ և ուրախութեամբ ։

Բարկութեամբ և սրտմտութեամբ և զայրացմամբ մեծաւ ։

Սակաւ հացիւ և ջրով ։ Երկիւղիւ և խռովութեամբ բազմաւ ։

Ընդ որթով և ընդ թզենեաւ իւրով ։

Զմարմին և զարիւն իւր սուրբ կամ պատուական ։

Բայց ամենուն վրայ զատ զատ որոշ հասկցընել պէտք ըլլայ նէ, յոգնակի ալ կը դրուի.

Փոխատուի և փոխառուի 'ի մի վայր հասելոց ։

Եւ զարծաթ և զոսկի կշռեալս 'ի գանձ տան տեառն ։

427. Իսկ թէ որ շատ գոյականները յատուկ անուն են նէ, սովորաբար յոգնակի կը դրուի յետադաս ածականը.

Սաւուղ և Յովնաթան սիրելիք ։ Գաբրիէլ և Միքայէլ մեծք ։

Եզրայ և Նեեմեայ դարձեալք 'ի Բաբելոնէ ։

Դեկոսի և Սաղեսի ամբարշտաց ։

Նախադասը եզակի ալ կը դրուի. Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի. Զօրաւորքն Աբրահամ և զՂովտ ։ — Իսկ յոգնակի առաջ դրուի նէ, բացայայտելիքն հետ կը խառնուի. Արդարոցն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ ։ Երկամբք սրբոցն Պետրոսի և Պաւղոսի ։ Մեհենացն Արտեմեայ և Աթենեայ ։

428. Անեզական գոյականներուն կամ եզակի ձայնով յոգնակիներուն՝ շատ անգամ եզակի կը դրուի ածականը, թէ և հոլովով համաձայն.

Առ հարսն եղելոյ աւետեացն.
Անցաւորիս կենաց.
Նորոյ շնորհաց.
Այնպիսում չարեաց.
Մեծաւ փառօք.
Մեծաւ տանջանօք.
Բացաւ երեսօք.
Բացաւ աչօք.
Յայնպիսում կապանաց, այս ինքն յայնպիսւոյ (33).

Յայլմէ մարդկանէ.
Փառք բազում.
Արհաւիրք մեծ, օրէնք աստուածային.
Զփառսն յաւիտենական.
Վարս անարատ ունել.
Փառացս անցաւորի.
Փառօք մեծաւ.
Մանկտի մանրիկ.
Մարդիկ փափուկ.
Մարդկան եղականի:

Ասանկ ալ որ միջակը, ու ածական դերանունները, ու դերանուանական ածականները.

Վասն որոյ պատճառանաց, որով կամօք, յորմէ պատճառանաց և իցէ, որում տանջանաց:

Այոր շնորհաց, այնմ կենաց, յայսմ կենացս, այսու կենօքս:

Իմոյ յանցանաց, քումդ շնորհաց, մերոյ մեղաց, իւրով կամօք, 'ի քումդ խնամոց, այս ինքն 'ի քոյդ. մեռաւ յիւրում 'ի մեղսն:

Պղծոցս այսմիկ, սանդղոցն այնմիկ. 'ի գիրս յայսմիկ, մեղօքն այնու:

Ի կապանս իմում, 'ի կեանսն քում, 'ի կառս իւրում, 'ի մեղս իւրում, մարդկանն այնորիկ, մանկտւոյ իմում:

429. Երբեմն ալ որ և է գոյականներուն ածականն ալ ասանկ թուով անհամաձայն կ'ըլլայ, մանաւանդ առաջ դրուածը.

Ըստ առաջնոյ բանիցն․
Մեծի դրանց․
Ոսկւոյ աշտանակաց․
Ծանրագունի բեռանց․
Հանդերձելոյ և յաւէժակայ բարութեանցն․
Այնպիսւոյ բազմագունդ միայնացելոյ․
Այնպիսում խոնարհացն․
Այնպիսում ճգնութե՛ց․
Որպիսում պսակաց․
Ի փոքուէ կողմանց․
Ընդ մէջ անդամոցն յօշելոյ․
Ի քարանցն հանելոյ 'ի ջրոյ․
Յազգացն հարաւայնոյ․
Վասն այնպիսի իրաց փոքու․
Զօրօք բազմաւ ։

Ասանկ ալ որ միջակը, ու ածական դերանունները, ու դերանուանական ածականները․

Վասն որոյ իրաց, որով կամիս պատուհասիւք, վասն որո՞յ արդար վաստակոց ։

Այնր պսակաց, այնմ դատաստանաց, զայսու աւուրբք, առ այնու ժամանակօք, յայսմ պատերազմաց, յայնմ ժամանակաց հետէ, յայսմանէ իրակութեանց, յարտաքնոցն յայնմանէ հրաւակաց, յայնմ աւուրն ։

Սովին բանիւք, ըստ նմին բանից, 'ի սմին կողմանց, 'ի նմին աւուրս ։

Մերոյս բանից, քում կամ իւրում ծառայից, ձերով պատուհասիւքդ, յիմմէ ջանից, յիւրում ձեռացն, այս ինքն յիւրոյ (33), 'ի մերում ամի, 'ի քում շարագրածութե՛ս, յիւրում ժամանակս ։

Ջանքս այս, իրքդ այդ, աւուրքն այն, յիշատակօքս այսուիկ, երկոքումբք այսու, թշնամեացս այսմ, զարդ զայդ, զբանսն զայն, յիրս յայս, ընդ ժամանակս ընդ այն ։

Նշխարք իմով, յոսկերաց իւրմէ, յերկոսին 'ի ձեռս իմում, յարարածսն քում, ընդ հարս իւրում ։

430․ Ասանկ եզակի կ'երթայ սովորաբար Ամենայն, երբոր մօտ ըլլալով համաձայնի․

Ամենայնի եղելոցն, ըստ ամենայնի իրաւանցս, այսր ամենայնի առաքինութեանց․ ամենայնիւ

պսքանեօք, այլովք ամենայնիւ վարին արուեստիւք, յամենայնէ յայնպիսեաց անտի, յայնմ ամենայնէ վնասակար գազանաց։

Դրունք ամենայն, գործքն ամենայն, պատգամքս այս ամենայն, զօրացն ամենայնի, այլոց իրաց ամենայնի. լեռնականօքն ամենայնիւ. զգանձմն ամենայն, 'ի գաւառսն ամենայն, ընդ սուրբսն ամենայն։

431. Ընդ հակառակն, գոյական անունները թուական ածականէ ետքն որ դրուին նէ, շատ անգամ եզակի ալ կը դրուին.

Զերկուս բուռնն.
Երիւք հարցմամբ.
Չորք կանգուն.
Յետ հինգ աւուր.
Վեց առն.
Ի վեց կանգնոյ.
Եօթն ամ.
Զեօթն աղջիկն.
Յետ ութ աւուր.
Ինն այր.
Տասն աւուր.
Տասն բանի.
Ի տասն դահեկանէ.
Զերկոտասան ազգն.
Յիսուն արդար.
Յիսուն արդարոյն.
Քառասուն և միոյ ամի.

Հարիւր ոչխարի.
Չորեք հարիւր և երեսուն ամի.
Հազար առն.
Երկուք հազարօք հեծեալ սպառազինաւ.
Երեք հազարք այր.
Երից հազարաց առն.
Ութ հազար հեծեալ սպառազինաւ.
Երիւք բիւրուք վահանաւոր զօրու և չորիւք հազարօք հեծելազօր գնդաւ.
Զերկոսին եղջիւր նորա.
Յերեսին աշխարհն.
Ի չորեցունց կողմանէ։

432. Իսկ առաջ որ դրուին գոյականները, յոգնակի կը դրուին, ու թիւերը հինգէն ետքը՝ մանաւանդ ինչուք տասը՝ նախդրիւ հոլովներուն սովորաբար եզակի կը դրուին.

Արք երկու.
Ամք երեք.
Կանգնոյ երից.
Ամք չորք.
Արք հինգ.
Արս հինգ.
Ոչխարք վեց.
Աւուրս վեց.
Ամք եօթն.
Ամն կամ աւուրս եօթն.
Աւուրք ութ.
Աւուրց տասանց.
Ամն տասն.
Տուփք երկոտասան.
Աւուրս քառասուն.
Հեծեալս եօթանասուն.
Խոյք հարիւր.
Ստերս հարիւր.
Ամք չորեք հարիւր և երեսուն.
Ամաց քսան և միոյ կամ քառասուն և միոյ.
Արք իբրև երկու հազար։

433. Թիւերը վերջահոլով եզակի չեն գրուիր ոչ առաջ ոչ ետև. չըսուիր տասին աւուր, տասին աւուրց, աւուր տասին, աւուրց տասին, հապա տասն աւուր, տասն աւուրց, տասանց աւուրց, աւուրց տասանց։

Մեծ թիւերուն՝ կը գտուի ըսուած գործիականը.
Տասն հազարաւ ընտիր ընտիր արամբք.
Տասն հազարաւ գլխու ընտիր զօրու.
Երկոտասան հազարաւ մարտիկ պատերազմող արամբ.
Չորիւք բիւրու հետևակաւ զօրու.
Մետասան բիւրու վահանաւոր զօրօք.
Ամօք երեք հարիւրով.
Արամբք իբրև վեց հազարաւ.
Հանդերձ զօրօք վաթսուն կամ ինսուն բիւրուն։

434. Նախդրիւ հոլովներուն ալ համաձայն կը գըտուին մեծ թիւերը միայն.

Չորք հազարք գնդապանք.
Չորք բիւրք մատակ ձիք.
Երկուս հազարս մարդս.
Երիս հազարս տաղանդս ոսկւոյ.
Չորս հազարս արս սիկարեանս.
Տուփք ոսկիք երկոտասանք.
Քաղաքք երեքտասանք.
Ազգք չորեքտասանք.

Արք վեց հարիւրք ·
Իշխանք հազարք ·
Արք հազարք երեք հա-
րիւրք ·
Ոչխարք երեք հազարք ·
Զականման երկոտասանս ·
Իոզլինս երկոտասանս ·
Աւուրս քառասունս ·
Ճարմանդս յիսունս ·
Իշս երկուս հազարս ·
Ամս երիս հազարս ·
Զուարակս քսան և երկու
հազարս ·
Հետեւակս հազարս հա-
րիւր քսան ·
Պահեկանս երկուս բիւրս ։

435 · Շատ անգամ ածականի տեղ գոյական մը կը դրուի սեռական յատկացուցիչի պէս ·

Սպասք ոսկւոյ և արծաթոյ · — ըսել է ոսկեղէն և արծաթեղէն ։
Արք զօրութեան · Նահատակք քաջութեան · — ըսել է զօրաւորք, քաջք ։
Երկիր բարութեան · Հարուածք անբժշկութեան · — ըսել է բարի, անբժշկելիք ։
Պարիսպք բարձրութեան · Աթոռ բարձրութեան · — ըսել է բարձր ։
Իրք գարշութեան · Խունկ անուշութեան · — ըսել է գարշելի, անոյշ ։
Դուն թանձրութեան · Տկարութեան միտք · — ըսել է թանձր, տկար ։
Լսօղ մոռացութեան · Մեծավայելչութեան փառք · — ըսել է մոռացկոտ, մեծավայելուչ ։
Վէմ անշարժութեան · Ամն ինչ մրթոյ · Փո-փոխմանն անուն · — ըսել է անշարժ, մրթայն, փոփոխեալ անունն ։
Հօտք բազմութեան այծեացն սեւութեան՝ յօղիս դարձեալ սպիտակութեան · — ըսել է՝ բազում հօտք սեաւ այծիցն յօղիս սպիտակս ։
Գործք բարեաց · Գործք յոռութեանց · — ըսել է բարի, յոռի ։
Զխարդ խրատանց իցեն այսպիսի իրք · — այս ինքն խրատացի ։

Նա քեզ 'ի պէտս արկանել զչափով հանդերձման և զօգտիցն. — այս ինքն որ չափով է (389), զչափաւոր և զօգտակար։

Ունայնութեան հայրենատուր գնացք. — այս ինքն ունայն։

Ոչ յապականութեան սերմանէն, այլ յանապականացուէն. — այս ինքն ոչ յապականացու։

Նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն, և մեք զանեղծութեանն. — այս ինքն զանեղծն։

Երբև զարհամարհ մի և զքամահանաց և զերկէքդանգեան 'ի մէջ արկեալ կոտէին. — այս ինքն զքամահելի։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ որ։

436․ Աս դերանունը շատ տեղ եզակի յոգնակի մտքով ալ կը բանի, մանաւանդ ուղղական ու հայցական․

Գորքա որ կանդ․ բազուկք որ ունէին․ ամենայն մարդիկ որ ըմպեն։

Որդիքն քո զոր դու սիրեցեր․ զգործսն զոր ես գործեմ։

Յամենայն ծառոց՝ որ է 'ի դրախտիդ։

Զաղբերս ջուրցն՝ որ ելանէ 'ի լեռնատանէ անտի։

Պղինձ և երկաթ՝ որոյ ոչ գոյ թիւ։

Նոյնք յորոյ վերայ վկայէ։

Նիկողոսեանքն՝ որով դատապարտեցան։

Նաքինութեանցն՝ որով փայլեցին։

Զաւերողացն կերակրոց՝ յորմէ ամենեքին հրաժարեալ էր։

Յամենայն գործս՝ յորում են մարդիկ։

Նկեսցեն աւուրք՝ յորում թողցեն։

437․ Աս դերանուան յարաբերած կամ ցուցըրած բանը Յարաբերեալ կ'ըսուի։ Որովհետև ըսուած ու ցուցուած բանը պիտի յարաբերէ, սովորաբար յարաբերեալէն ետև կը դրուի, ու իրմով կապուած խօսքին սկիզբը, ինչպէս տեսար հիմա օրինակներուդ մէջ։

438․ Բայց շատ տեղ ալ առաջ ինքը կը դրուի, ետքը յարաբերեալը ետևէն կուգայ․ ինչպէս,

Վասն զի սուրբ է որ եմուտ անդր տապանակն տեառն․— այս ինքն տապանակին որ եմուտ անդր։

Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. — այս ինքն արքայն որ ծնաւ։

Որ 'ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղև. — այս ինքն բանն որ։

Վասն որ 'ի Քրիստոս Յիսուս հաւատոյն. — այս ինքն վասն հաւատոյն որ։

Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին։

Դեմետրիոս և որ ընդ նմա ճարտարք. — այս ինքն և ճարտարք որ ընդ նմա էին։

Իբրև լուան որ յԵրուսաղէմ առաքեալքն էին. — այս ինքն առաքեալքն որ էին։

Դու որ գործէին զամբարտաւանութիւն զսոդոմացւոցն խայտառակեցեր. — այս ինքն զսոդոմացիսն որ գործէին։

Զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր՝ դա 'ի միում ամի կորոյս զերկիրն ամենայն. — այս ինքն զերկիրն ամենայն զոր։

439. Յարաբերեալը դերանուն որ ըլլայ նէ, շատ անգամ յայտնի չըլլուիր՝ զօրութեամբ կ'իմացուի. որ ըսել է թէ յարաբերելի դերանուն մը ու յարաբերական դնելուն տեղը՝ միջակ անուն ․ ու որ կը դրուի, որ ինքիրեն միայն ան կը նշանակէ (125).

Որ այժմ կեամ, ըսել է ես որ։

Որ մեռաք մեղացն, մեք որ։

Ո հովուեսդ, որ ուսուցանես զընկերն, դու որ։

Ո՛վ որ պատուհասեսդ, ո՛ որ զպսակս զայս հիւսեցեր, ո՛վ դու որ։

Որ 'ի Գեթղ էք, դուք որ։

Որ ձեզ լսէ, նա որ։

Որք կամին մեծանալ, նոքա որք։

Նման ալ հոլովները.

Որով դատիս զընկերն՝ զանձն քո դատապարտես. — այս ինքն այնու որով դատիս, որով որ կը դատես նէ։

Ու յանդիման առնել կարեն քեզ՝ վասն որոյ այժմ չարախօսեն զինէն. — այս ինքն զայն վասն որոյ, որ բանի համար որ կը չարախօսեն կոր նէ։

Ու որում ցանկացեալդ էք՝ վաղվաղակի տամ գը-տանել ձեզ. — այս ինքն զայն որում ցանկա-ցեալդ էք, որուն որ կարօտըէր էք նէ։

Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց չիցէ լուեալ՝ 'ի միտ առցեն. — այս ինքն նոքա ո-րոց. որոնց որ չպատմուեցաւ, ևն։

Երանի որոց ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն. — այս ինքն այնոցիկ որոց ոչ իցէ տեսեալ. որոնց որ տեսած չըլլան ու հաւտան։

Ես ինչ ոչ գտի յառնս յայսմիկ զորոց դուք չարախօսէքդ զդմանէ. — այս ինքն յայնց զորոց չարախօսէք. որ բաներուն համար որ կը չարախօսէք կոր։

440. Երբոր ատանկ դերանուն յարաբերեալը զօ-րութեամբ կ՚իմացուի նէ, յարաբերականը կամ միջակ անունը *, որ՝ կ՚ըլլայ որ ան ծածուկ յարաբերեալ դեր-անունին հոլովը ինք կ՚առնէ, կ՚ըլլայ ալ որ չառներ ու ինք իր պէտք եղած հոլովը կը դրուի. ինչպէս երկու կերպին օրինակն ալ քովէ քով դրած կը տեսնես.

Որում խնդրէ 'ի քէն՝ տուր, և որ կամի փոխ առ-նուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս. — այս ինքն այնմ որ խնդրէ, յայնմանէ որ կամի. երկու կերպը մէկտեղ։

Խօսել չհամարձակէին զոր ինչ եղեն. — այս ինքն զայն որ ինչ եղեն։

Առանց նորա եղև և ոչինչ որ ինչ եղեն. — այս ինքն ոչինչ յայնմանէ որ ինչ եղեն։

Դու ոչ մտանես, և զորս մտանեն՝ ընդդէմ կա-ցեալ արգելուս. — այս ինքն զայնոսիկ որք մտա-նեն՝ արգելուս։

Դուք ոչ մտանէք, և որ մտանելոցն էին՝ արգե-լուք. — այս ինքն զայնոսիկ որ մտանելոցն էին։

Դուք ոչ մտանէք, և որոց մտանէին՝ չտայք թոյլ մտանել. — այս ինքն այնոցիկ որ մտանէին։

Զի երևելի կացցեն որ անցանէին ընդ ծով նաւօք. — այս ինքն այնոցիկ որ անցանէին։

Դողացեալ վասն որոյ զաղտն արար. — այս ինքն վասն այնր զոր։

Վասն որ ասեմ թէ, եւն. — այս ինքն վասն այնր զոր ասեմ։

Վասն որոյ առաքեցանն ՚ի Յովհաննէ. — այս ինքն վասն նոցա որք առաքեցան։

Վասն որք ոչ կարեւոր համարին. — այս ինքն վասն նոցա որք ոչ համարին։

Ամենք յորոց անդն կային. — այս ինքն յայնցանէ որք անդ կային։

Մատեայ առ մի ոմն որ անդ կային. — այս ինքն յայնցանէ որ անդ կային։

Նա առ յորոց ածէրն ձեռամբ իւրով պատարագս. — այս ինքն յայնցանէ զորս ածէր։

Որոշումն արտաքոյ բնութեան՝ շունս գործէ յորմէ բաժանեցաւ և առ որում բնակեաց. — այս ինքն զայն յորմէ, և զայն առ որում։

Ոչ գարշիս յումեքէ յորոց արարեր. — այս ինքն յայնցանէ զորս արարեր։

Կողոպտեցին հանին և ոչինչ թողին զոր ընդ իւրն ունէր. — այս ինքն ոչինչ յայնցանէ զոր ընդ իւր ունէր։

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

### ԳԻՄՈՐՈՇ ՅՕԴԵՐ ս, դ, ն։

441. Այս յօդերը, ինչպէս ըսինք ու ցուցըցինք (140), դերանուններու ուժ ունենալով՝ կ՚որոշեն յայտնի կ՚ընեն անորոշ ու անյայտ անունը. ս ու դ, ես, դուն, իմս, քուկդ, սա, դա նշանակելովը կ՚որոշեն. իսկ ն, նա, այն նշանակելէն ՚ի զատ, յատուկ որոշող ու յայտնի ընող յօդ ալ է, և կը դրուի այն անուան՝ որ առաջուց յայտնի է կամ խօսուեր է վրան. կամ թէ և առաջ չէ խօսուեր ալ նէ վրան, բայց մէկ կերպով մը որոշուած ու մասնաւորուած է։ Ինչպէս անյայտ ու անորոշ ծովի կամ հացի ու ձկներու վրայ խօսուի նէ, կ՚ըսուի.

Ամենայն ուխք ՚ի ծով գնան և ծով ոչ լնու.

Ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս։

Բայց երբոր մէյմը առաջուց խօսուած կամ գիտցուած ծովին ու հացին ու ձկներուն վրայ նորէն խօսուի նէ, կ՚ըսուի.

Զինչ արասցուք քեզ և դադարեսցէ ծովս ՚ի մէնջ. առէք ընկեցէք զիս ՚ի ծովդ, և դադարեսցէ ՚ի ձէնջ ծովդ. և առին զՅովնան և ընկեցին ՚ի ծովն, և դադարեաց ծովն ՚ի խռովութենէ իւրմէ.

Առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն օրհնեաց։

Ասանկ ալ անորոշ ու չմասնաւորած մարդով կ՚ըսուի.

Հոգի սուրբ Աստուծոյ գոյ ՚ի քեզ.

Որդի Աստուծոյ զանձն իւր անուանէ։

Իսկ որոշեալ ու մասնաւորած մտքով, թէ և առաջ չէ խօսուեր վրան, կ՚ըսուի.

Սուրբ հոգին իմաստութեան փախիցէ ՚ի նենգութենէ.

Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ միտս.

Այս օձն էր իմաստնագոյն քան զամենայն գազանս. — այս ինքն օձը, օձ ըսուած գազանը.

Յառաջնում ամին Կիւրոսի արքայի Պարսից ՚ի կատարել բանին տեառն ՚ի բերանոյ Երեմիայի մարգարէի, զարթոյց տէր զոգին Կիւրոսի թագաւորին Պարսից.

Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն. — առջի բանն որոշուելու ու մասնաւորուելու համար ունի ն. իսկ ետեւի երկուքը կ՚նշանակեն ան բանը։

442. Ինչպէս 140 թիւը ըսուածէն յայտնի կ՚ըլլայ, յօդը շատ անգամ բառի մը վրայ դրուելով՝ զօրութեամբ մէջ կը բերէ դերանուն մը, անուն մը, ինչուք նաև բայ մը. ինչպէս,

443. Դերանուն.

Ընկալ զփոքրս ՚ի տկարէս, և շնորհեա զմեծդ առ ՚ի հզօրէդ. — այս ինքն զայս փոքր յինէն ՚ի տըկարէ, զայդ մեծ ՚ի քէն ՚ի հզօրէ։

Տեսանեմ զմարդիկս զի շրջին. — այս ինքն զայս մարդիկ որ աստ մօտ են։

Արքայդ Իսրայէլի. — այս ինքն դու արքայ կամ դա արքայ։

Օ այն կերակուրդ. — այս ինքն զայն կերակուր քո։

Ի բոլորեսին յայսոսիկ թուղթսն. — այս ինքն յայսոսիկ թուղթս նորա, իւր։

Աստուծոյն. — այս ինքն աստուծունը, ան որ աստուծոյ է։

Մաքսաւորն և ձկնորսն և առանց դպրութեանն · — այս ինքն այն որ առանց դպրութեան է կամ էր ։

Մարմնովն · հոգւովն · — այս ինքն այն որ հոգւով է ։

Եւ 'ի մէնջս կամ 'ի մէնջն, առ 'ի ձէնջն · — այս ինքն այս որ, այն որ 'ի մէնջ է, եւն ։

Զոր արար Դաւիթ յորժամ քաղցեաւն և որ ընդ նմայն էին · — այս ինքն քաղցեաւ ինքն և որ ընդ նմայն էին ։

Ոչ այսպէսմն · — այս ինքն այն որ ոչ այսպէս է ։

## 444 · Անուն ·

Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զինչ լինիցի · — այս ինքն ընդ չոր փայտն ։

Աշակերտքն Յովհաննու պահեն ստէպ, և քոյքդ կամ քոյդ ուտեն և ըմպեն · — այս ինքն քո աշակերտքդ ։

Այս առակ և դատաւորին · — այս ինքն դատաւորի առակն ։

Ի բարկութիւն որ գովելի է 'ի գրոց, որպէս Մովսէսին · — այս ինքն որպէս Մովսէսի բարկութիւնն ։

Նա է քաւութիւն մեղաց մերոց, և ոչ եթէ մերոցն միայն · — այս ինքն մերոց մեղաց միայն ։

Ընդէ՞ր ոչ բովանդակեցէք զսակ աղիւսոյն ձերոյ որպէս յերէկն և յեռանտ՝ և զայսր աւուրդ · — այս ինքն զսակդ այսր աւուր ։

Բարեաց գործողքն պսակին, չարեացն՝ 'ի հուրն անշէջ մատնին · — այս ինքն չարեաց գործողքն ։

Ոչ էր հաւասար պարզաբար գնոյն և այնպիսի պատճառաւն · — այս ինքն այնպիսի պատճառաւ գնոյն ։

### 445. Նայ.

Պաշարեցին զքեզ որպէս և Դաւիթն. — այս ինքն որպէս և Դաւիթ պաշարեաց ։

Զգործ տեառն գործէ որպէս և ես. — այս ինքն որպէս և ես գործեմ ։

Առնից և արարից որպէս միշտն. — այս ինքն որպէս միշտ առնէի, արարի ։

Զառնելն և զոչն. 'ի բանալն և յոչն. — այս ինքն զոչ առնելն, յոչ բանալն ։

446. Շատ անգամ մէկ անունի յօդը՝ իրմէ առաջ դրուած ածականին, յատկացուցիչին, բացայայտիչին, խնդիրին ու մակբային վրան կը դրուի. ինչպէս,

### 447. Ածականն.

| | |
|---|---|
| Կորուսեալս հոգւոյ. | Երկուցն եղբարց. |
| Կարօտս անձին. | Ի չորիցն հիւթոց. |
| Ահաւոր և մեծս արարածոց. | Յիմուսն անձին. |
| Ամենակալ մեծամունդ տէր. | Իմոցս բանից. |
| Ով քաջդ խոհեմք. | Քումդ կուսութեան. |
| Միածինն որդի. | Ի քումդ լռութեան. |
| Զհինգն ևս փեղկ. | Քոյովդ բանիւ. |
| Աներկեանն ցնծութք. | Իւրումն որդւոյ ։ |
| Ճշմարիտքն երկրպագուք. | |

### 448. Յատկացուցիչն.

Զսրբութեանն օրէնս.

Զինչ օգտեցուցանէ ոմանցն լուսաւորութիւն զհասարակացն անտեսութիւն.

Զինքեանն սպանանէ զփեսայ.

Զնորունն հաւաստութիւն ։

### 449. Բացայայտիչն.

Եպիսկոպոսն անուն 'ի հելլենացի լեզուէ է.

Գեհլաթն գետոյ. Զկուաշն աւան.
Ի Սինն անապատէ. Հայրդ անուն՝ մի է։

### 450. Խնդրերէն.

Նմանութիւն Աստուծոյ է սուրբն և արդարն գոլ հանդերձ խոհեմութեամբ. — այս ինքն սուրբ գոլն և արդար գոլն։

Զինչ իցէ 'ի մեռելոցն յառնել. — այս ինքն յառնելն 'ի մեռելոց։

Յընկեցիկն առնել զնա. — այս ինքն յառնելն ընկեցիկ։

Չարն 'ի չարն գործելոյ առնու զանուն. — այս ինքն 'ի չար գործելոյն։

Ի բարին խօսել և 'ի չարն. — այս ինքն 'ի բարի խօսելն և 'ի չար խօսելն։

Յետ այնչափ ուղղութեանն գործելոյ. — այս ինքն յետ գործելոյն այնչափ ուղղութիւնս։

Վասն Մնտինքայ Նորեւեան անուանելոյ. — այս ինքն անուանելոյն Նորեւեալ։

Զանձնէ անփոյթ առնես 'ի մարդոյ առիւծդ ե-ղելոյ. — այս ինքն եղելոյդ առիւծ։

Յինէնս գործեցելոց. — այս ինքն գործեցելոցս յինէն։

Յորժամ յիսս խորհրդոց լինիք վերահասու. — այս ինքն խորհրդոցս որ յիս (389)։

Յաղագս առ մեզն գթութեան. — այս ինքն զգ-թութեանն որ առ մեզ։

### 451. Մակբայն.

Վաղն առնելով. ցանգն հայելով. — այս ինքն վաղ առնելովն, ցանգ հայելովն։

Զկարին իսկ զոք շռայլեալ. — այս ինքն զոք զկարի իսկ շռայլեալն ։
Միւսանգամն գալստեան դատաստան. — այս ինքն միւսանգամ գալստեանն ։
Զանդն աւուրս. անդն իրաց. — այս ինքն զաւուրսն որ անդ, իրացն որ անդ ։

Նմանկ ալ յատուկ անուններուն սովորաբար ածականին կը դրուի յօդը.

Մեծն Պաւղոս.
Արին Վաղարշակ.
Երուանդեանս Տիգրան.
Քաջին Հայկայ.
Բարերարին Յիսուսի.
Զմեծէն Սահակայ.
Նորն Երուսաղէմի.
Իմն Գրիգոր.
Մերոյն Հայկայ.
Անսուտն Աստուած.
Մեծին Աստուծոյ.
Ի մարդասիրէն Աստուծոյ ։

452. Երբեմն ալ ետևի հասարակ անուն ածականին կը դրուի, երբոր զատելով մը կ'առնուի.

Որ տեառն մեծն և երևելին.
Տէր ամենակալն խնդրեսցէ վրէժ.
Օրհնեցէք զԱստուած բարերարն.
Դառնացուցին զԱստուած բարձրեալն.
Այր լի գիտութեամբ հայոյս և առաւելեալ յունին.
Դարձան որք Իսրայէլի ասպատակեալքն զհետ այլազգեացն.
Արանց խստասրտացդ այդոցիկ.
Յամենայն ազգաց եկելոցն 'ի վերայ Երուսաղէմի.
Զայս յայտ առնէ Դաւիթ մեծն.
Ընկաւ Բաբելոն մեծն.
Ուր էր Ղազար մեռեալն ։

Բայց ետև դրուած Թիւի ու դերանուանական ածականներու չըլլար ըսել՝ Եղբարց երկուցն կամ երկո-

ցունցն, մանկանց եօթանեցունցն, որդի քոյդ, որդւոյ իւրումն, բանից իմոցս կամ քոցդ. — Հապա ըսելու է եղբարցն երկուց կամ երկոցունց, մանկանցն եօթանեցունց, որդիդ քո, որդւոյն իւրում, բանիցս իմոց կամ քոց։

453. Շատ անուններ ևով կապած մէյտեղ որ գրուելին, շատ անգամ առջինին միայն դրուելով, երբեմն ալ ետքինին միայն, ամէնն ալ որոշուած կը սեպուին.

Արկուտն և անձրև.
Աղքատն և տնանկ.
Մանրեցան խեցին և երկաթ.
Ազգն քո և քահանայապետք.
Դպիրքն և փարիսեցիք.
Քահանայապետքն և դպիրք և փարիսեցիք.
Պիղծ և անուանարկ.
Զպտուղ ցորենոյն և գինւոյ և ձիթոյ և մեղու.
Հօրն կամ մօր.
Ի բերան կործանելոյս և չարչարելոյ.
Եկացն և պանդխտաց.
Զխուլն և զհամր, զականին և զկոյր.
Մանրեաց զխեցին և զերկաթ.
Զպղինձն և զարծաթ և զոսկի.
Զմեծամեծս և զփոքունս.
Զբովն ուստի ոսկին և արծաթն հատանի կամ
Զբովն ուստի ոսկի և արծաթն հատանի.
Քստմնեալ լինէին ոսկերք և մարմինք.
Զքաղցրութի և զսաստկութիւնն Աստուծոյ.
Ո՛վ պիղծ և ամենապիղծդ.
Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեանն Աստուծոյ.
Հեզութբ և հանդարտութեամբն Քրիստոսի.
Տան հարց և մարցն.
Հրամանս ետ մոգաց և մոգպետացն.
Ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօքն։

454. Երբեմն ալ աւելի կը դրուի, դոյականին ալ

ածականին ալ, յատկացեալին ալ յատկացուցիչին ալ.

Յարանցս յայսցանէ եկեղոցս ընդ մեզ.
Հան զարդ մտեալդ առ քեզ.
Մատուցանել զայն Թագաւորին երկնաւորին.
Ազգացն առաջնոցն.
Պատմէր զիրսն եղեալսն.
Զաւազանսն մեծամեծսն.
Ի չարէն որդւոյն սատակեցաւ.
Զմիջինն այսոցիկ տեսութեանց ընտրեսցուք զբանն:
Տեսիլս Առաքելոյս.
Ամենայն ժողովուրդն երկրին.
Ի վերայ աշտարակացն քաղաքին.
Զբանակն Եգիպտացւոցն:

Որ բաւական էր ըսել միայն՝ տեսիլ Առաքելոյս, ամենայն ժողովուրդ երկրին, 'ի վերայ աշտարակաց քաղաքին, զբանակն եգիպտացւոց կմ՟ զբանակ եգիպտացւոցն:

455. Երբոր գոյական մը այս, այդ, այն դերանուններէն ետև դրուի, հարկաւոր չէ վրան յօդ դնել. Այս այր, զայն այր, այդր բանի, յայնմ աւուր, այսու օրինակաւ, այդց պարծանաց, յայնց ժամանակաց, այս բանք, այսոքիկ բանք, յայդոսիկ տեղիս, յայնոսիկ գործս:
Բայց կրնայ ալ դրուիլ. Այս երանելոյս, այս կարգաւորութեամբս, այս կրիւքս, յայսմ կենացս, յայսցանէ 'ի գործոցս. յայդմ ահաւոր անուանէդ, զայդ նըշանսդ, այն բնութեանն, յայն տեղին, յայն տանն, զայն ջուրսն, զայն տեղեօքն, այնմ աւետեացն, յայնմ աւուրսն, այնց բանիցն, զայնոսիկ արհաւիրսն:

456. Բայց երբոր գոյականը առաջ դրուի, սովորաբար միշտ յօդ դնելու է իրեն, մանաւանդ ուղղականին ու հայցականին.

Օրս այս ·
Որդիս մեր այս ·
Ժողովուրդս քո այս ·
Ախտիս այսորիկ ·
Ըստ բանիս մեծի այսորիկ ·
Անուամբս այսուիկ ·
Արքս այսոքիկ ·
Արանցս այսոցիկ ·
Խաչունդ այդ ·
Խղթովդ այդուիկ ·
Յերդմանէդ քումմէ յայդմանէ ·

Մատենիդ գտելոյ այդորիկ ·
Ոսկերքդ այդոքիկ ·
Երգդ այդ ·
Այրն այն ·
Մարդոյն այնմիկ ·
Ըստ բանին այնմիկ չարի ·
Ազգաւն այնուիկ ·
Արքն այնոքիկ ·
Արքն այն ·
Յետ աւուրցն բազմաց այնոցիկ ։

457 · Երբեմն առանց յօդի ալ կ'ըսուի, մանաւանդ վերջահոլովներուն, ու թէ որ դերանուանական ածական ունենայ ·

Յաւուր յայսմիկ ·
Յազգէ յայսմանէ ·
Ի տեղւոջ յայդմիկ ·
Ի ջրոյ յայդմանէ ·
Ի ժամանակի յայնմիկ ·
Յօրէ յայնմանէ ·

Ի զաւակէ իմմէ յայսմանէ ·
Եղբայր քո այս ·
Ժողովրդեան քում այսմ ·
Ծառայից քոց այսոցիկ ·
Զմարմին մեր զայս ։

458 · Դերանուանական ածականները իմ, քոյ, եւն (134) մինակ որ ըսուին՝ միշտ յօդով կը բանին ։ Իմս, իմդ, իմն, զիմն, զիմսն, յիմոցն, քոյդ, քոյումդ, քոյովս, քոյովդ, քոյովն, 'ի քումմէդ, 'ի քումմէն, 'ի քոյոցդ, մերովս, 'ի մերմէն, ձերդ, զձերն, ձերոցդ, ձերովքդ, զիւրն, իւրոցս, յիւրոցն, զիւրսն. նորայն, զնորայն, 'ի նորայոյն, նորայովքն, զնոցայսն, եւն ։ Ու ինչպէս տեսար, ամէնքը իրեք յօդն ալ կ'առնեն տեղին նայելով ու ան զանազանութեանը որ ցուցըցեր ենք 'ի 140 ։

459 · Շատ անգամ դիմորոշ յօդերուն տեղը կը

բանին այսր, այդր, անդր մակբաները՝ պարզ նախդրիւ տրականի հետ, աստ, այդր, անդ՝ նախդրիւ վերջահոլով տրականի հետ, աստի, այտի, անտի՝ բացառականի հետ. որ երբեմն այս, այդ, այն դերանուններուն տեղն ալ կը բռնեն ատոնք ամէնը, ինչպէս որ յօդերն ալ. ինչպէս,

Ի տեղի այսր գալ. երթեալ էին 'ի քաղաք անդր, 'ի վաղիւ անդր, յիւրս անդր, առ իւրսն անդր.
Ի դրախտի աստ.
Ի ժամանակի աստ յայսմիկ.
Ի թղթի այդր.
Ի պարտիզի անդ.
Յազգի անդ իւրում.
Ի ժամանակի անդ.
Արքայութիւն չէ յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ աստի էր, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք.
Յերդմանէ աստի իմմէ.
Ի նզովից աստի իմոց.
Ի ժամէ աստի յայսմանէ.
Յազգէ աստի խոտորելոյ յայսմանէ.
Ի հիւանդութենէ աստի իմմէ յայսմանէ.
Ի մերոց, 'ի քոյոց աստի.
Յառնէ այտի յայդմանէ.
Ի տեղւոջէ այտի.
Ի մասանց այտի.
Ի քոյոց այտի.
Ի լեռնէ անտի.
Ի սրտէ անտի.
Ի քնոյ անտի.
Ի սիրոյ անտի Աստուծոյ.
Յիրոյ անտի.
Ի նորայոց անտի.
Ի ծմակին կողմանց անտի.
Ի մեծամեծաց աւագաց քանանացւոց անտի։

460. Յոգնակի հայցականները ու նախդրիւ տրականները ։ յօդ որ առնելու ըլլան նէ, անուշութեան համար շատ տեղ իրենց սէն քէ կը փոխեն ըստ 60. ու կ'ըսուի զբանքս, զէքս, զանարժան ծառայքս, 'ի ծառայքս, առ փրկեալքս, ընդ հողեղէնքս. — փոխանակ ըսելու զբանսս, զէսս, զանարժան ծառայսս, եւն. ինչպէս որ կ'ըսուի ալ երբեմն, զմեղսս զայսոսիկ, զերիս թագաւորսս, յիրսս յայս, 'ի հարսանիսս ։

461. Միջակ անունները ոչինչ, ոչ կամ ո, որ, ու

յարաբերական դերանունը որ, բնաւ ամենեւին յօդ չէն առներ. բնաւ չըսուիր որս էս, որոյդ, որովդ, որուն, որոնցն, յորոյն, զորն, զորսն, եւն. անոնց տեղը՝ եւելի բայերն վրայ կը դրուին յօդերը, ինչպէս հիմայ կարգաւ կը տեսնենք.

462. Ինչ որ որ յարաբերականէն եւ կամ ով, ո, որ, զինչ միջակ անուններէն եւ, կամ անոնց միտքը ունեցող՝ որպէս, որպիսի, որքան, որչափ, ուր, ուստի, յորժամ, երբոր, մինչ, զի, զիարդ բառերէն եւ՝ դիմաւոր բայ մը ըլլայ նէ, ան բայը դիմորոշ յօդ կ'առնէ շատ անգամ, ու էս, դուն, նա, այս, այդ, այն դերանուններուն, կամ աստ, անդ, այսր, այդր, անդր, աստէն, այդէն, անդէն, այժմ մակբաններուն մէկուն ուժը կ'ունենայ ան յօդը. ինչպէս,

Որ խօսիմ ընդ քեզ.
Զոր խորհեցայս առնել.
Գիտէք զինչ ասեմս.
Ես այր տառապեալ զիարդ կամս հիացեալ.
Բան զոր ասեմդ.
Զոր գրեցիդ.
Գիտէք զինչ արարից ձեզ.
Զոր կամիմն.
Զոր ատեամն.
Որում չեմն արժանի.
Զոր քակեցին.
Ողորմեցայց որում ողորմեցայցն եւ գթացայց յոր գթացայցն.
Զոր ինչ շնորհիցեմն.
Որպէս երդուայն.
Ըստ որպիսիս կամիցիմն.
Եւ ուստի եմն գիտէք եւ ուր երթամն գիտիցէք.

Ուստի ելին.
Մինչ երթային.
Զոր պարտէաքն առնել.
Ուր էաքն ժողովեալ.
Մինչ էաքն մարմնով.
Հաստատուն կաց յոր ուսարդ.
Չգիտեմ զինչ խօսիդ.
Զինչ է այդ զի խորդասդ.
Զի կայ մեր եւ քո՝ զի եկիր այսր.
Զոր ընթեռնուցուքդ.
Որպէս էքդ անխմոր.
Քան որչափ էքդ.
Այլ զի յղեցէքդ առ իս.
Զսա զոր տեսանէքս.
Զոր ասեմն նա ոչ գիտէ.
Ուր եւ կոչիմն՝ գնասցես.
Որովք համարիքն ունել.
Որոյ եղերուքն դուք որդիք.

Ո՛վ որ ուսարուքն և ընկա-
լարուք և լուայք և տեսէք
յիս.
Ո՛վ որ տեսանիցէքն.
Որ էջն յերկնից, որդին
մարդոյ՝ որ էն յերկինս.
Որում չէն մարթ լինել.
Ուր չիքն փոփոխումն.
Որ գթայն.
Որ տայն ամենայնի.
Այն որ սրբէն և սրբին.
Ո՛վ որ ուտէն.
Ո՛ւր զիարդ ասէն.
Որ ընթեռնուն՝ 'ի միտ առ-
ցէ.
Մինչդեռ կայրն կախեալ.
Որ եկնն.
Ո՛վ որ ինչ խնդրիցէն.
Այլ ումեք որ նստիցին.
Յորժամ եկնն.
Ո՛վ որ արար Դաւիթ՝ յոր-
ժամ քաղցեաւն և որ ընդ
նմայն էին.
Ոչ զի մեռաւն՝ այլ զի խա-
չեցաւն.

Քան փութացան և առա-
քեաց.— այս ինքն քան
թէ զի փութացան.
Որ ատեանն զիս.
Որք կամինն մեծանալ.
Որ կամն.
Ո՛վ որ ասէս կամ ասէդ՝ այս-
պիսի ինչ է.
Ո՛վ ինչ է այս զոր ասէս
ցմեզ.
Առաւել քան զոր երևիս
մեզ և գիտիս.
Որ եկնս 'ի վերայ.
Որպէս ասացաւս.
Որ էնս.
Որ կամս.
Սոքա որ խօսիմս.
Ո՛վ է որ ասէդ ցքեզ.
Որ խօսիդ ընդ քեզ՝ նա է.
Այդ որ ասիդ.
Ի մէջ դոցա որ կանդ ասա-
դիկ.
Ուր էրդ յառաջն.
Ո՛վ որ ընտրեացդ իւր տէր.
Որպէս և ասացաւդ:

463. Եթէ որ նոյն բառերէն ետև բայէն առաջ՝ անուան բայի կամ խնդիր դերանուն մը ըլլայ նէ, յօդը անոր դերանունը կ՚առնէ, թէ և բայը յայտնի դրուած չըլլայ՝ բայց զօրութեամբ իմացուի (340, 445).

Ո՛վ որ ինչ եսս գործեմ.
Ո՛վ գործ տեառն գործէ՝ որ-
պէս և եսս.— այս ինքն որ-
պէս և եսս գործեմ.
Որ ինևս ընդ ձեզ խօսի.
Որ ինչ յինէնս խնդրեցեր.

Որպէս մեքս լուաք.
Զոր եսդ սիրեմ.
Յոր եսդ խնամեմ.
Զոր եսդ բժշկեցի.
Որ շուրջ զմեւքդ բնակեալ են.
Զոր եմն պատուիրեմ.
Ուր եմն եմ.
Ուր եմն երթամ.
Որ զինմն սիրեն.
Որ յինմն մեղանչեն.
Զոր մեքն քարոզեմք.
Զոր դուդ առնես.
Ոչ գիտեմ զինչ դուդ ասես.
Որ շուրջ զքեւդ են.
Որ իբրև զքեզդ իցեն.
Ընդ որս դուքդ զարմանայք.
Զայն զորմէ դուքդ ասէք.
Մինչ առ ձեզս եմ.
Յորում և դուքս էք բնակեալ.
Որում դուն վկայեցեր.
Զոր դուքն ոչ գիտէք.
Յորս դուքն պանծացեալ էք.
Մինչ առ ձեզն իսկ էաք.
Որոյ իւրն է հանդերձեալքն.
Որ զիւրեանն էին.
Որոց իւրն հրաման տուեալ էր.
Զոր սայս առնէ.
Զոր դայդ մարգարէանայ.
Ոչ տեսանես զինչ դոքայդ գործեն.
Ուր նայն վախճանեցի.
Որպէս նայն Քրիստոսի է.
Որոց նմայն զայն շնորհեալ էր.
Որ ՚ի նմայն ծնեալ է.
Ոչ վասն այլ իրիք՝ այլ զի նմայն չլուան.
Որ զնոյեանն էին.
Յորժամ նոքայն նախատէին.
Որ նոքօքն խրատիցին.
Որ ՚ի վերայ նոցայն մեռաւ.
Որք զայսն կամին.
Որ զայնն առնեն.
Որք զայսոսիկն պահանջին։

464. Ուրիշ տեղ և ուրիշ կերպով, առանց ան բառերէն ետև ըլլալու, սովոր չեն աս դերանունները յօդ առնելու. քիչ տեղ կ՚ըսուի

Դուն գիտես.
Իբրև զձեզդ եմ եւս էի.
Ընդէ՞ր ոչ նայն հարկանէր.
Ո՞չէ զայսն ասեն.
Նա այնքն ոչ դադարէին.
Յայնցն որ ողջոյն տային։

465. Նմանապէս նոյն բառերէն ետև՝ ուրիշ որ և

իցէ անուն բայի կամ խնդիր մ՚որ ըլլայ բային առաջ՝ մօտ կամ քիչ մը հեռու, յօդը անոնք կ՚առնեն կամ անոնց ածականները. ինչպէս,

466. Անուն բայէն.

Ո՛ր Աստուածն առաքեաց.
Որով բազումքն իսկ զեղխանան.
Ուր Քրիստոսն նստի.
Որոյ երեսունն և ութն ամ էր.
Որ 'ի Բաբելոն ընտրելակիցն եկեղեցի է կամ ընտրելակից եկեղեցին է. — այս ինքն ընտրելակից եկեղեցին որ 'ի Բաբելոն է.

467. Խնդիրը.

Ինձ որ տրուպս եմ.
Որ կարօղքս եմք.
Աստ ուր հրամանս առաք.
Ակն քո չա՞ր է զի ես առատս եմ.
Որ ձիթենիդ վայրենի էիր.
Դուք որ չարքդ էք.
Որ ամենեցունցդ ես թագաւոր.
Ուստի արժանդ իցէ ինձ ուրախ լինել.
Որ հուրն ծախիչ է.
Որ կարի վայելուչն իսկ է.
Մի ընդ այն նայիցիս՝ զի նեղն և անձուկ և խիստ է.
Որպէս պարտն է գիտել.
Որ բունքն իսկ են.
Ինքն որ Աստուածն էր.
Որոյ պարտն և պատշաճ էր խնդալ.

Մինչդեռ ալէկոծն ծովածուփ իցէ.
Որ աւարն հարկանէր.
Մինչդեռ այգն կամէր լինել.
Ոչ յամեցուցէ տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամրըն համարին.
Որ խրատն տայ կամ ետ.
Որ ոչինչն ունէին.
Որպէս մինչ յարգն տային.
Ընդ որում անհաշտ թըշնամութիւնն պարտ էր ունել՝ և ոչ բարեկամութիւն.
Որ զԱփրիկոսն կործանեաց.
Որ 'ի վերն քան զՕըրուանն էր.
Որ յԱղրապօլիսն իցէն.
Որ 'ի բանտն տայի.
Որ օրինօքն էին.

Որ Աբրահամուն խօսէր ։ Որ ընդ աջմէն իցեն ։
Որ յաւիտենից եմ ։

468 ։ Ասանկ ալ անորոշ, անցեալ և ապառնի դերբայները՝ դիմաւոր բայէ առաջ որ ըլլան, իրենք կ'առնեն յօդը կամ իրենցմէ ալ առաջ բառ մը ։

Որք ուսուցանելս պարտէաք ։
Այնու զի չնալն եմ ։
Մինչ առնելն կամեցար ։
Ես որ կապեալս եմ ։
Վ՛ որոյ և կապեալս կամ ։
Զոր յօդեալ և ուսեալդ ես ։
Ընդ որում և համարձակեալդ խօսիմ ։
Որ արբեալդ էք ։
Որ հզօրացեալն է ։
Զոր խօսեալն էր ։
Ես զի կապեալն ես էր զնա ։
Որ մեռեալն էիք ։
Զի պնդեալն եկեալն էին յօժարութեամբ ։
Որ ծնեալն իցէ ։
Շատ ևս այն են՝ որ և ննջեցեալքն իսկ իցեն ։
Որ բարձեալն տանէին ։
Որովք մոլորեալն պաշտէին ։
Զոր յայտ արարեալն ասէ ։
Որ ըստ Աստուծոյն հաստատեալ է ։
Զոր Յոհն գրեալ է ։
Որ ամուլն կոչեցեալ էր ։
Որ ընդ նմա 'ի խաչն ելեալ էին ։
Որ բունքն հաստատուն կացեալ էին ։
Որ կալոցս և մնալոցս է ։
Որ նզովելոցն է ։
Որ զլուամբ ածելոցն իսկ է զմեծ վիշապն ։
Որ հարկանելոցն էին զնա ։
Որ նորօքն շահելոցն էին ։
Որ գալոցն իցէ ։

469 ։ Եթէ որ նոյն վերի ըսած (462) բառերէն ետև՝ բայէն առաջ մակբայ մը ըլլայ նէ, յօդը ան մակբայը կ'առնէ, թէ և բայը զօրութեամբ ըլլայ ։

Որ աստս կան ։
Որ այժմս կեամ ։
Որ լինէր որպէս արդս ։ — այսինքն որպէս արդս լինի ։
Որ արտաքոյս եմք այսու ։
Զոր ոչս արար ։
Բարձցի որ այժմդ ունի ։
Որ զկնիդ գայ ։

Որ վաղդ ելեր մեկնեցար ·
Բայց զիարդ այժմդ տե-սանէ՝ ոչ գիտեմք ·
Որ չևդ էք որբեալ ·
Որ ոչդ հաւատաս ·
Որ ոչդ երկնէիր ·
Օ՜ որ ոչդ վայելէ քեզ խօ-սել ·
Օ՜ որ աստն ես ·
Օ՜ որ անդն խոստացաւ ·
Որ անդն կային ·
Օ՜ որ միշտն ասէի ·
Ելից և արարից որպէս միշտն · — այս ինքն որպէս միշտն առնէի կմ արարի ·
Օ՜ որ համապաղն ըմպեմք ·
Որ այնպէսն գնայցեն ·
Որ զհետն երթային ·
Օ՜ որ յանդիմանն տեսի ·
Որ մտադիւրն ծառայեաց ·
Որ ստոյգն փախչիցին ·
Օ՜ որ ինչ մեծամեծ և ողջն ողջն կլանիցեն ·
Որ ստահակն գնայցեն ·
Որ հազիւն ապրեցան ·
Որպէս կանխաւն ասէի ·
Որ ոչն է ·
Որ ոչն ունիցի ·
Օ՜ որ ոչն կամիմ ·
Օ՜ որ ոչն արդեօք յարոյց ·
Որ ոչն անկեալ երկիր պա-գանիցէ ·
Զինչ ոչն գիտէին ·
Որ ընտիրն է՝ որբի և պա-տուականանայ, իսկ որ ոչն՝ այրի և հրդեհի · — այս ինքն՝ իսկ որ ոչն է ընտիր ։

470 · Յօդ առնել կրցող դերանունէ, անմիջապէս մօտ անուան բայինէ կամ խնդիրէ, դերբայէ ու մակբայէ եւս դրուած դիմաւոր բայի վրայ սովորութիւն չէ յօդ դնել · չըսուիր օրինակ իմն, զոր ես գործեմն կամ գոր-ծեմն, ընդ որս դուք զարմանայքդ, ուր Քրիստոս նըս-տին, ինքն որ Աստուած էրն, որ խրատ ետն, որ յաւի-տենից եմն, որ հզօրացեալ էն, որ ամուլ կոչեցեալ էրն, որ հարկանելոց էինն զնա, որ այժմ ունիդ, զոր ոչ ար-դեօք յարոյցն, եւն ։

Բայէն առաջ յօդ առնելու յարմար բառ չըլլալէն՝ կ՚ըսուի երբեմն ·

Օ՜ ինչ խօսիդ ·
Օ՜ ինչ ասէքդ ·
Տեսէք զինչ ասէրն Քրիս-տոս ·

Յորժամ Թշնամի զոք ու-
նիցիմ.
Ընկեր՝ վասն որո՞յ եկիրդ.
Որո՞ւմ կրից համբերեմ.
Որոց խունկսդ արկանէքդ.
— այս ինքն զխունկսդ,
զխունկս ձեր.
Որոց հանգիտապատիւ մեղ
հասէքդ հաւատոց. —
այս ինքն որոց հասէքդ՝
հանգիտապատիւ մեղ հա-
ւատոց.
Որ զաստուածս անարգէնն.
— այս ինքն որ անարգէնն
զաստուածս, անորոշ մըտ-
քով (441)։

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

## ՆԱԽԴԻՐՆԵՐ

471. Երբոր նոյն անունը կրկնուի նէ (65), սովորաբար առջինին միայն կը դրուի նախդիրը.

Զայր այր իւրաքանչիւր.
Զազգս ազգս բուսոց.
Զբարի բարին.
Զծանր ծանր օրինացն.
Զմի մի.
Զոմանս ոմանս.
Ի քաղաքս քաղաքս առ զօրավար զօրավար.
Ի շաբաթու շաբաթու.
Ի տեղեաց տեղեաց.
Ընդ ժամս ժամս.
Ըստ ազգս ազգս.

Ի կեղծս կեղծս կամ կեղծս 'ի կեղծս.
Ի կերպս կերպս լինել կամ կերպ 'ի կերպս լինել.
Ետ մեզ զերկիրս զայս, երկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր.
Տարայց զդոսա յերկիրն բարի զոր երդուայ հարց նոցա, երկիր՝ որ բղխէ ըղկաթն և զմեղր։

472. Երբոր նոյն անունը մէյմը բացառական մէյմը նախդրիւ տրական քովէքով դրուի նէ, սովորաբար երկրորդին միայն կը դրուի նախդիր՝ որն որ ըլլայ նէ. Թէպէտ առաջ դրուած բացառականին ալ կրնայ դրուիլ.

Ի տանէ 'ի տուն կամ տանէ 'ի տուն.
Ի քաղաքէ 'ի քաղաք կամ քաղաքէ 'ի քաղաք.
Ի դրանէ 'ի դուռն կամ դրանէ 'ի դուռն.
Ի կրօնից 'ի կրօնս կամ կրօնից 'ի կրօնս.
Ի կենաց 'ի կեանս կամ կենաց 'ի կեանս։

Կենդանութենէ 'ի կեանս.
Տուն 'ի տանէ, քաղաք 'ի քաղաքէ, տեղի 'ի տեղւոջէ, կողմն 'ի կողմանէ, ամսն յամսոյ, օր յօրէ, ամս յամոյ.

Երբեմն ալ առջինին միայն՝ բացառականին. Յամանոյ ամսն, 'ի նիւթոյ նիւթ, 'ի ժամանակէ ժամանակ.

473. Երբոր նոյն նախդիրը առնելու շատ բառեր մէյտեղ գտուին նէ, սովորաբար ամենուն ալ կրկնելու է նախդիրը.
Տասանորդէք զանանուխ և զսամիթ և զչաման.
Մատնէր 'ի բանտ և 'ի կապանս և 'ի պատիժս.
Յարջառոյ և յէշոյ և յոչխարէ և 'ի հանդերձէ.
Առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս.
Ընդ ծով և ընդ ցամաք. Ըստ փոքուն և ըստ մեծին.

474. Բայց շատ տեղ ալ առջինին միայն հերիք է, մանաւանդ ևով կապուած որ ըլլան.
Զարջառ և ոչխար. Զմտաւորս և բանաւորս.
Ճանաչել զլայնութիւն և երկայնութիւն, խորութիւն և բարձրութիւն սիրոյն.
Այն խաւար մածեալ է զոգւով և մարմնով նորա.
Յոգի և մարմին եաք տրտմեալք. Ի պակասել հանել թափել զոգիս իւրեանց.
Ի ժողովել Պաւղոսի խուրձ ինչ բազում և դնել 'ի վերայ խարուկին.
Սպառեցին նոքա 'ի սովոյ և ծարաւոյ. Ի մեռելոց և կենդանեաց.
Առ հովիւն և տեսուչ հոգւոյ ձերոյ. Առ Պետրոս և Յովհաննէս.
Ելանեմ ես առ հայրն իմ և առ հայր ձեր և Աստուածն իմ և Աստուած ձեր.

Որ Աբրահամու և Յոբաւ և ամենայն արդարովքն։ Ըստ փոքու և մեծի։
Զարմացեալ ընդ ժուժկալութիւն համբերութեանն կարի անհնարին և տոկալ նորա։

475. Կամ, այլ, և ոչ շաղկապներով կապուած բառերուն կրկնելու է.

Զծառայ կամ զաղախին.
Ի հօրէ կամ 'ի մօրէ.
Յերկինս կամ յերկրի.
Ոչ զմարդ անարգէ, այլ
զԱստուած.
Ոչ յերկրի, այլ յերկինս.
Ի հաւատոցն Քրիստոսի,
և ոչ 'ի գործոց օրինաց։

476. Երբոր անուն մը իրմէ առաջ յատկացուցիչ կամ ածական ունենայ նէ, նախդիրը ան յատկացուցիչին ու ածականին վրայ կը դրուի. ինչպէս,

477. Յատկացուցիչին.

Որ զնորին սուսեր.
Զգեցիր զիմ հանդերձս.
Գիտել զտարեաց բոլորմունս և զաստեղաց դիրս.
Մերկեցան յԱստուծոյ գիտութենէն և 'ի նորին օրհնութենէն.
Ի հօր մերոյ ընչից.
Փրկեցաւ յառիւծուցն բերանոյ.
Քաղել հասկ յայլոց անդի.
Զիմ ինչ, զքո ինչ, զտեառն ինչ.
Զայլ ինչ ուրուք և առեալ իցէ.
Յորոյ չիջանելն.
Զորոց կերպարանս.
Յորոց ձեռաց։

478. Ածականին.

Զմեծ թագաւորն.
Զամենայն ծառ.

Ընդունիջիք զանթառամ փառաց պսակն. — այս ինքն զանթառամ պսակն փառաց.
Զտէրունականն ասել առ նոսա բան.
Ի մեծ Թագաւորէն.
Յուղիղ հաւատոց և 'ի սուրբ վարուց.
Ի հարազատէն իւրմէ մեռանել եղբօրէ.
Յաստուածայնոյն գտանեմք ասացեալ պատմութիւնս.
Զբազում տկարաց տունս խորտակեաց.
Ի տղայ մանկանցն բերանոյ զստինս 'ի բաց կորզէին. — ուր յատկացուցիչին ածականին վրայ դրուած է նախդիրը, ու կ'իմացուի զտունս բազում տկարաց, 'ի բերանոյ տղայ մանկանցն:

479. Եւ է որ շատ յատկացուցիչ կամ ածական ըլլայ առաջ նէ, առջինին միայն հերիք է նախդիր.
Յաստուծոյ և սրբոց զօրութենէ.
Յաստուծոյ շնորհացն ազդեցութենէ. — այս ինքն յազդեցութենէ շնորհացն Աստուծոյ.
Զաստուածային սուրբ հոգին.
Զմեծն և հռչակաւոր Հոմերոս.
Յայնմ մեծ տագնապի.
Ի զրահաւոր պատենազէն պղնձապատ վահանացն.
Ի ձերոց ստայօդ և չարաթոյն բանից:

480. Երբոր յատկացեալը չդրուիր յայտնի, կամ երբոր չկրկնուիր նէ, անոր նախդիրը յատկացուցիչին վրայ դնելու կամ կրկնելու է՝ ան հասկցընելու համար, թէ որ երկու յատկացեալն ալ զատ զատ են նէ. ինչպէս,
Մ'ի ոք զանձին և եթ խնդրեսցէ, այլ և զընկերին. — այս ինքն զանձին իրս, զընկերին իրս:
Անխրատ է 'ի յայլոցն ձեռնարկել. — այս ինքն 'ի յայլոց իրս:
Զփարագոյր դրան խորանին և զդրան սրահին. —

այս ինքն և զվարագոյր դրան սրահին . երկուքին մէկ վարագոյր չկրնար ըլլալ, հարկաւ զատ են ։

Խոստովան լինիցին զմեղս իւրեանց և զհարց իւրեանց . — այս ինքն և զմեղս հարց ։

Մ՛ի լիցի ապրեալ 'ի ներքոյ երկնից տուն նորա, այլ 'ի նորայն կացցեն օտարք . — այս ինքն 'ի նորա տունն չամ տանն ։

Զուկն թէպէտ և գայ յառաջ, 'ի գերեզմանի առաջ գայ, և ոչ 'ի կենդանութեան . — այս ինքն և ոչ յառաջ կենդանութեան ։

481 . Ըսինք որ (400) բացայայտիչը հոլովով համաձայն կ'ըլլայ բացայայտելի անունի . բայց նախդիրով հոլովներուն հարկ չկայ ամէն անգամ իրեն ալ նախդիր դնելու, մանաւանդ երբոր մօտ է ։ Աստի կ'ըսուի,

Ըրին զՅակոբ հայրն իւրեանց .
Ո հայրն մեր Աբրահամ .
Ո հայր քո Խոսրով .
Ո Խոսրով հայր նորա .
Ո Տրդատաւ արքայիւ .
Ո ամրոցաւն Երնջակաւ .
Ի Սիոն լեառն .
Յերուսաղէմ քաղաք .
Յերկրին Գեսեմ .
Յակնն տիեզերաց Հռոմ .
Ի Գարեհէ արքայէ .
Ի հօրէ նորա մեծէն Թէոդոսէ .
Յանմահ արքայէն Քրիստոսէ .
Ի քաղաքէն Հռոմայ .

Ո Սահակայ հայրապետէն .
Մինչև ցգետն մեծ Եփրատ .
Ընդ Յակոբ հայրն իւրեանց .
Ընդ Լաբան որդի Բաթուէլի ասորւոյ՝ եղբայր Ռեբեկայ .
Ընդ բանաւոր աշխարհս՝ մարդս .
Կատարեաց առ մեզ որդիս նոցա .
Ընդ Թէոդոսիւ կայսերբ .
Ընդ ընտրեալս 'ի նոցանէ առաքել, զՅուդա և ըզՇիղա՝ արս գլխաւորս ։

482. Նմանապէս ըսինք որ ետև դրուած ածականը կը համաձայնի գոյականին (422), բայց նախդիրով հոլովներուն հարկ չկայ ամէն անգամ իրեն ալ նախդիր դնելու, մանաւանդ երբոր մօտ է։ Աստի կ'ըսուի,

Օ այր հաւատարիմ.
Յառնէ անխրաւէ.
Յայրի անդ կրկնում.
Օ պատմուճան նորա ծաղկեայ.
Օ զօրութիւնս քո զոր արարեր մեծամեծս.
Ի սրտմտութենէ բարկութեան իւրոյ մեծէ.
Օ թագաւոր ծեր և անմիտ.
Օ այր շուտ և գգուշ.
Յերկիր բարի և պարարտ.
Ընդ անապատն մեծ և ահագին.
Օ ազգս մեծամեծս և հզօրագոյնս.
Ըռ արս արդարս և ուղիղս.
Ի ցուպն եղեգնեայ ջախջախեալ.
Ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ։

Իսկ թէ որ ետևի ածականը՝ մանաւանդ հեռուն՝ դիմորոշ յօդ ունենայ նէ (452), գոյականին նախդիրը սովորաբար անոր ալ դնելու է, թէ հայցականի զայ ըլլայ (354) և թէ ուրիշ նախդիր.

Օ լեզու մարդկան ոչ ոք կարէ հնազանդել՝ զչարըն և զանկարգն։
Օ ձեռագործս իւրեանց զամենայն (355)։
Յընկերաց սրբոց հոփոխմեանցն 'ի ցրուելոցն։

483. Բայց երբոր այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն ածական դերանունները՝ գոյականէ կամ ուրիշ ածականէ մը ետև դրուին նէ, սովորաբար միշտ անոնց վրայ ալ դնելու է գոյականին նախդիրը, մանաւանդ զ, 'ի, յ, ց նախդիրները.

Օ օրս զայս.
Օ ժողովուրդս քո զայս.
Օ գեղեցիկ պատմուճանս զայս.
Օ մեծ զայս մարմինս.
Օ երկրաւոր ստորինս զայս

չարութիւն.
Զհուրդ զայդ.
Զտեսիլն զայն մեծ.
Զտեսիլն մեծ զայն.
Զգերաշխարհիկն զայն տօնախմբութիւն.
Զտեղեաւն զայնուիկ.
Զառնէն զայնմանէ.
Զտասն նկանակս զայսոսիկ.
Զամենայն չարիսդ զայդոսիկ.
Զաւուրսն զայնոսիկ.
Զնշանս մեծամեծս զայնոսիկ.
Յաշխարհս յայս.
Յաւուրս նեղութեան յայսմիկ.
Յերկրէս բարութեան յայսմանէ.
Յերկրիդ յայդմիկ.
Յերդմանէդ յայդմանէ.
Յերդմանէդ քումմէ յայդմանէ.
Ի տարւոջն յայնմիկ.
Ի չար հիւանդութեանն յայնմիկ.
Ի պատուիրանացս յայսցանէ.
Ի կարեւորացս յայսոցիկ կամ այսոցիկ.
Ի չարեացդ քոց յայդցանէ.
Ի քաղաքացն յայնցանէ կամ յայնոցիկ կամ այնոցիկ.
Ցտեղին ցայն.
Ցժողովուրդն ցայն.
Ցոսկերսդ ցայդոսիկ.
Ընդ վէմս ընդ այս.
Ընդ առնս ընդ այսմիկ կամ ընդ վիմիս այսմիկ.
Ընդ յարկաւս ընդ այսուիկ կամ ընդ յարկաւս այսուիկ.
Ընդ այրդ ընդ այդ.
Ընդ ամենայն երկիրն ընդ այն.
Ընդ աւուրսն ընդ այնոսիկ.
Ըստ արձանս ըստ այս.
Ըստ ժամանակին ըստ այնմիկ կամ ըստ ժամանակին այնմիկ.
Զտէր զնոյն.
Յորոգայթ 'ի նոյն.
Ի չարիսն 'ի նոյն.
Ընդ ճանապարհ ընդ նոյն.

484. Եւ մակբայը համարակ անուն ածականի հետ ու գոյականի հետ ու որ ըլլայ, ինք կ՚առնէ նախդիրը մէկ բառ եղածի պէս.

Զկոյս զոչ խօսեաւ.
Իբր զոչ ինչ պիտանի. — այս ինքն իբր զոչ պիտանի ինչ.

Յոչ իւր պատշաճագոյնն. Յոչ ընդունելն.
Յոչ երևելեացս. Ի յոչ լսելն.
Յոչ կամաց երթալ. Ասացից ցոչ ժողովուրդ իմ:
Յոչ գոյէ կամ յոչ գոյից. Ընդ ոչ գոյսն.
Յոչ պետս երևեալ. Ըստ ոչ ստորութեան։
Զոչ այնպիսի երևեալն.

Ըսեր ենք որ ամենևին զոչինչ, յոչինչ, զոչ ոք, յոչ ոք չըսուիր (86, 100)։

# ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՐՈՐԴ

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

485. Ուղղագրութիւնը խօսքը շիտակ գրելն է։ Բառերը շիտակ կարդալ ու գրել գիտնալէն ետքը, խօսքն ալ շիտակ կարդալու և գրելու քանի մը նշաններ կան։

486. Առոգանութեան՝ այս ինքն յարմար ձայն հանելու նշաններն են բութ (՝), շեշտ (՛), երկար (´), պարոյկ (՞), որ ոլորակ կ'ըսուին։

487. Բութը դուր ձայն կը նշանակէ, ու ամենևին չգրուիր. ինչու որ մեր գրեթէ ամէն բառը մինակ որ գրուցուի՝ դուր է, ետքի վանկին վրայ կ'իյնայ ու կ'իջնայ ձայնը։ Ասոր հիմայ բութը կէտերուն կարգն է։

488. Շեշտը զարնելու և ձայնը բարձր հանելու նշանն է։ Միայն քիչ բառ ունինք որ ինքիրենը շեշտ ունենայ. ինչպէս հա՛պա, մա՛նաւանդ։ Բայց բայերուն հրամայականները ու ոչ, մի մասնիկները կը շեշտուին. սիրեա՛, լուարո՛ւք, ո՛չ կամիմ, ո՛չ ոք, ո՛չ այդպէս. մի՛ տայք, մի՛ սիրէք, մի՛ մեղանչէք։

489. Նմանապէս ամէն բութ բառերնիս՝ ետևէն իրեն փակչելու և միջատեղ գրուցուելու բառ մ'որ ունենայ, շեշտ կ'առնէ ետևի ծայրը. ինչպէս, վեցերո՛րդ ամիս, մե՛ծ պատուհաս, նա՛ս առաւել, առաւե՛լ ևս, ե՛ս իսկ տեսի, դէ՛մ յանդիման, օրինա՛կ առէք, զգուշացո՛յ

ոչ, կերկցէ՛ մի. — գիտէ որ ան ատէնը հրամայականը ունէ՛, ոչը, մին, իրենց շեշտը կորսնցուցին։

490. Նմանկ ալ անուն մ՚որ կանչուի նէ, վերջը կը շեշտուի. ու երկու որ ըլլան, առջինինը միայն.

Լո՛ւր դու ինձ, իշխանդ.
Հաշտեալ եմ ընդ քեզ, տառապեա՛լդ և խախտեալդ.
Ծառա՛յք, հնազանդ լերուք.
Բայց դո՛ւ, արքայ, տուր իշխանութիւն.
Ազարիա՛ եղբայր, եղբա՛յր Ազարիա.
Բարերա՛ր տէր, տէ՛ր բարերար.
Տէ՛ր տէր.
Յակո՛բ Յակոբ.
Աստուա՛ծ՝ Աստուած իմ։

491. Շեշտն ալ կարդացմունքի մէջ կը զգուցուի, բայց չգրուիր հիմայ։ Հինկու սովորութիւնը կէս հարցականներուն վրայ կը դրէ շեշտը, մէյմ՚ալ շատ երկննալու ձայնարկութիւններու վրայ. ինչպէս,

Հարցանել թէ դու ո՛վ ես.
Հարցանէր թէ ո՛ւր ծնանիցի.
Արամի թէ.
Ա՛յ անօրէն.
Ա՛սա ո՛վ մարգարէ.
Օ՛ն արիք.
Հա՛պա առաքինիք։

492. Երկարը կը դրուի ան ձայնարկութիւններուն ու անուններուն, ուր որ կ՚ուզեն յարմար երկննալու է ձայնը.

Բա՜բէ.
Վա՜շ.
Ո՜հ կարի է առասպելս.
Աւա՜ղ բախտին.
Ո՜վ քանի ահագին են։
Տէր տէր մեր, զի սքանչելի է անուն քո.
Զարմա՜նք մեծ։

Երբեմն շեշտն ալ կ՚օգտէ. վա՜շ վա՜շ, ո՛վ անմտութեանն։

493. Պարոյկը հարցընելու բառերուն վրայ կը դրուի. Ո՞վ, քանի՞, ընդէ՞ր, ուստի՞, ո՞րպէս, ո՞րչափ, ա՞յդչափ, վասն ա՞յնորիկ եկիր, որպիսի՞, որպիսո՞ւմ, հասեա՞լ իցես, կերա՞ր արդեօք, ո՞չ տեսանես, միթէ մա՞րթ ինչ իցէ, միթէ դու մե՞ծ ինչ ոք իցես ։

494. Տրոհութեան՝ այս ինքն բառերը ու խօսքը բաժ֊ նելու նշանները են ենթամնայ ( ֊ ), ապաթարց և մակակէտ ( ' ), բութ ( ՝ ), ստորակէտ ( , ), միջակէտ ( · ), վերջակէտ ( ։ ). Ետքի իրեքը մէկէն կ'ըսուին կէտք ու տրոհանք ։

495. Ենթամնան բառերը տողին ծայրը բաժնելու պէտք կ'ըլլայ, որ տողադարձ կ'ըսուի ։ Եւ տողադարձին կանոնն աս է համառօտ ·

496. Երկու զատ զատ վանկ ընող ձայնաւորներուն մէկը անդին անցընելու է · ինչպէս, մի֊ այն, առնու֊ լին ։

497. Բաղաձայնը մէկ որ ըլլայ, միշտ անդին գրելու է · շատ որ ըլլայ, մէկը միայն անդին տանելու է · բա֊ րի, եր֊ կիր, հանգ֊ չիմ ։

498. Բայց բարդած կամ ածանցած բառ որ ըլլայ՝ շատ բաղաձայնով սկսող, բոլորն ալ հետը մէկտեղ անդին դարձընելու է · նորա֊ նշան, ան֊ բնական ։

499. Մէկ տողին վերջը ու մէկալին ծայրը մնացած բաղաձայններն ալ որ մինակ կըմնան կամ բնական չեն կտրած բառին, հետը կամ մէջը ուր որ ըթով կ'ըսուի՝ ը դնելու է · գը֊ րոյ, ըզ֊ գեստ, ըզ֊ բան, երկըր֊ պա֊ գու, մըտըն֊ ջենաւոր, մըշ֊ տընջենաւոր · տըր֊ տում, ան֊ տրտում ։

500. Ապաթարցը աւելի բանաստեղծները կը բա֊ նեցնեն՝ ուր որ գիր մը կը ձգեն նէ · ինչպէս, ապ' եթէ, նա' ւանիկ, վէմ մ'' ի դուռն, ազնուականի'մ ցանկա֊ ցեալ · առաքեալ 'ի մեզ 'հոգիդ · փոխանակ ըսելու ա֊ պա, աւանիկ, մի, ինմ, զհոգիդ ։

501. Մակակէտը՝ նախդիր ինին ետին կը դրուի. ՚ի Սահակ, ՚ի հօրէ, ՚ի յայրին, առ ՚ի յԱստուծոյ։

502. Մակակէտ կամ ֆշէկ (') կը դրուի ղ կամ լ գրերուն վրայ ալ, բարակ լլուն կարդալու համար. ինչպէս, այղ կամ այլ, Թոյղ կամ Թոյլ, Ջիղ կամ Ջիլ, փիղիսոփայ կամ փիլիսոփայ, Իսրայէղ կամ Իսրայէլ, Աղէքսանդր կամ Ալէքսան, Պօղոս կամ Պօլոս[1]։

503. Կէտերէն բութը կը դրուի բառի մը վրայ՝ ուր որ ձայնը խիստ քիչ կանգ առնելու մը պէս պիտի ընէ, որ բառ բառի չխառնուի։

504. Ստորակէտը կը դրուի՝ երբոր խօսքի մը կտորը խիստ անկատար է, ու ետեւէն բան մը կ'ուզէ։

505. Միջակէտը կը դրուի լման խօսքի մը ետքը, որ ետեւէն ուրիշ կտոր մ'ալ ունի։

506. Իսկ վերջակէտը կը դրուի՝ ուր որ խօսքը ամբողջ լմնցած է, ու տուն մը կ'ըսուի։

Զօրաէն ու օրինակ.

Բոլոր մարմնոյս՝ հոգին է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ՝ միտք են կառավար. և որպէս առ մի մարդ, այսպէս առ բոլոր աշխարհս։

Որ իբրև զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւնն, արդ իբրև զգոյն ՚ի մարմնոյ՝ չկարէ շրջել. Թերևս և ոչ այլ կարասցէ մինչև ՚ի կատարած։

507. Ստորակէտով կը զատուին կոչական անունները, ու միջակէտով՝ ուրիշին խօսքն որ բերենք, որ գըլ-

---

1 Ուրիշ ասանկները և ամէն օտարազգի բառերն ու անունները առանց փչիկի զատով գրելը կամ զատով կարդալը մեծ սխալ է, որ ընդարձակ քերականութեան մէջ ցուցուցեր ենք բուն նախնեաց խօսքերով և վկայութիւններով։

խազրով ալ կըսկսի. Ո՜յ, ողբայ քաջ, այդ այդպէս է։ — Մտիկէր զնոսա և ասէր. Խօղ գրեմ և ցուցանեմ մեծ Թագաւորին։

508. Պարզ յատուկ անուններն ու պատուոյ անուններն ալ գլխագրով գրելու է. Հայկ, Օթէնք, Նչրատխ. Պ.ո Ճոխութինդ։

509. փակագիծ կ'ըսուի աս նշանս ալ ( ), երկան միջանկեալ բան մը մէջն առնել ու զատելու համար։ Բայց կարձերը ստորակետով զատել հերիք է. ինչպէս, Ինդ հանել օգւոյն, քանզի մեռաւ, կոչեաց զանուն նորա որդի վշտաց իմոյ։ — Վուցէ ամաչեսցուք մեք, զի մի ասասցուք թէ դուք, 'ի մասինդ յայդմիկ պարծանաց։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ ԼՄՆՑԱՒ

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ՁԵՒԱՒՈՐ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

### ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ

510. ՄԻՆՉՈՒՔ հիմայ սորվածնիս՝ լեզուին պարզ շարադրութեան հասարակ ու սովորական կանոններն էր։ Բայց երբեմն, այլեւայլ պատճառով ու միտքով, կարգէ դուրս գերադանց բաներ ալ կ'ըլլան շարադրութեան մէջ, որ ձեւ կ'ըսուին, ու անանկ շարադրութիւնը կ'ըսուի ձեւաւոր շարադրութիւն։

511. Այս քերականական ձեւերը հինգ են. զեղչումն, աւելադրութիւն, բակառութիւն, փոխադրութիւն, արտուղութիւն. ու ասոնց շատ կերպ կերպ վարպետ գործածութիւնը կայ գրոց մէջ. բայց մենք ամէն մէկէն խիստ շատ բանուկները կամ երբեմն երբեմն գործածուածները միայն՝ գիտնալու և հասկընալու չափ տեսնենք՝ բաւական է։ Իսկ բանեցնելը՝ խելքով ու չափով բանեցնելու է, որ բանը մութ չըլնայ ու համով գայ։

# ԳԼՈՒԽ ՎԵՐՋԻՆ

## ԶԵՂՉՈՒՄՆ

512. Զեղչումն է՝ բան մը պակաս դնել որ ինքիրեն դիւրաւ կ'իմացուի, կարճ ու կտրուկ ըսելու համար խօսքը։

513. Ասանկ, անուն բային կամ խնդիրը՝ միջակ անուններէն որ ըլլայ նէ, շատ տեղ չգրուիր ու ինքիրեն կ'իմացուի. ինչպէս,

Ոչ իցէ 'ի նոցանէ որ ապրեսցի. — այս ինքն ոչ ոք իցէ։

Եկն առ իս յեղբարց իմոց. — այս ինքն ոմն յեղբարց իմոց։

Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի. — այս ինքն ոմանք յաշակերտաց։

Առ ընդ քեզ 'ի ծերոց ժողովրդեանդ. — այս ինքն առ զոմանս 'ի ծերոց։

Յղեցին և կոչէին զնոսա. — այս ինքն յղեցին զոք կամ զոմանս։

Յերևելի նիւթոց և յազգի ազգի գունոց 'ի միասին խառնել. — այս ինքն ինչ ինչ։

Մի դատիք և ոչ դատիցիք. տուք և տացի ձեզ. — այս ինքն մի զոք դատիք և ոչ դատիցիք յումեքէ. տուք ինչ ումեք և տացի ձեզ ինչ յումեքէ։

514. Անորիչ ու անցեալ դերբային անուն բային շատ անգամ տեղէն ինքիրեն կը հասկցուի.

Զալիսն 'ի նաւն զեղոյր, մինչ գրեթէ լի իսկ լինել. — այս ինքն նմա, նաւին լի լինել։

Զի մի ըստ քո փարախդ արտաքս ելեալ, չար գազան դարձեալ բեկանիցէ զիս. — այս ինքն ելեալ իմ։

Եւ բախեալ զդուրս տանն, մատեաւ աղախին մի ունկն դնել. — այս ինքն նորա բախեալ։

Սպանին զՅովաս յԵրուսաղէմ, թագաւորեալ ամս քառասուն. — այս ինքն թագաւորեալ նորա։

Զի մի յատենի անդ կացեալք, չարաչար առ մեզ վարեսցի ատեանն. — այս ինքն մեք կացեալք։

515. Անցեալ դերբայն էական բային երրորդ դէմքերուն որ դրուի նէ (331, 332, 586), սեռական անուն բային շատ տեղ զօրութեամբ կը հասկցուի.

Զառ 'ի յետոյն մոռացեալ է և 'ի յառաջադէմն նկրտեալ եմ. — այս ինքն իմ մոռացեալ է։

Մինչև զամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է. — այս ինքն մեր լուծեալ է։

Զինչ եղեալ է 'ի մոլի ձերում վասն մեր՝ կատարեցէք. — այս ինքն եղեալ է ձեր։

Զիա՛րդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չիք. — այս ինքն սորա չիք ուսեալ։

Մինչև ստեղծեալ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ. — այս ինքն իմ ստեղծեալ էր։

Որպէս զամենայն ազգ նուաճեալ էր և 'ի հնազանդութեան ունէաք. — այ̃ նուաճեալ էր մեր։

Եդ 'ի գերեզմանի՝ զոր էր փորեալ 'ի վիմէ. — այս ինքն նորա, կամ զոր և փորեալն էր։

Որք էին ժողովեալ 'ի հրէաստան, և զտունն 'ի պղծութենէ անտի դեռ ևս էր սրբեալ. — այս ինքն էր սրբեալ նոցա։

Իբր ոչ եթէ արդէն առեալ իցէ կամ արդէն կատարեալ իցեմ. — այս ինքն առեալ իցէ իմ։

Իբրու թէ անձին զօրութեամբ ինչ կամ քաջութեամբ արարեալ իցէ զգնալդ դմա. — այս ինքն արարեալ իցէ մեր։

Զինչ ունիս զոր ոչ իցէ առեալ. — այս ինքն ոչ իցէ քո առեալ։

Ի տասանորդէ զմասս ձեզ թողեալ լիցի, և զխնամութիւն զամբիդ ՚ի ներքս տուեալ լիցի ցքահանայապետդ. — այս ինքն մեր կամ իմ թողեալ լիցի, տուեալ լիցի։

Եղիցի վասն քո տուեալ զտէրութիւն կամաւորականին. — այս ինքն մեր կամ իմ եղիցի տուեալ։

516. Շատ տեղ ալ բայը չգրուիր ու կ'իմացուի ինքիրեն, ըսեր ենք առաջ (340). հիմայ տեսնենք այլ և այլ կերպը։

517. Անցեալ դերբային էական բայը շատ տեղ չը-գրուիր հետը, ու տեղէն կ'իմացուի բանին ու դէմքին համեմատ.

Մինչև լերինք հաստատեալ էին, մինչև ստեղծեալ զերկիր և զամենայն տիեզերս. — այս ինքն ստեղծեալ էր քո, Աստուծոյ։

Զայրն Մարեմայ՝ որում խօսեցեալ զՄարիամ կոյս, յորմէ ծնաւ Յիսուս. — այս ինքն խօսեցեալ էր կամ էին։

Տուեալ քեզ ընդ այնր վրիժուց զամենեսեան որ կամիցին հաւատալ քեզ. — այս ինքն տուեալ է կամ տուեալ լիցի։

Ասացի ձեզ մինչև եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք. — այս ինքն մինչև եղեալ են, կամ եղեալ է այսորիկ։

Ամենեքեան որ անցանիցեն զօրինօքն՝ տուեալ քեզ իշխանութիւն պատուհասել. — այս ինքն տըւեալ է կամ լիցի։

Եւ իմ հրամայեալ մի ոք արգելցէ. — այս ինքն իմ հրամայեալ է։

Տուր իշխանութիւն. և ասէ Թագաւորն, Տուեալ քեզ. — այս ինքն տուեալ է կամ լիցի։

Ահաւասիկ Ողեփեռն յերկիր կործանեալ, և գլուխ իւր չէ առ՛նմա. — այս ինքն կործանեալ է:

Ոչ կերեալ դորա երբէք և ոչ արբեալ. — այս ինքն ոչ կերեալ է:

Գնացին արք անօրէնք պատմել Թագաւորին, եթէ Յովնաթան մեքենայս կազմեալ, շուրջ զերդաւն պատեալ, յառնուլ պատրաստեալ. — այս ինքն պատրաստեալ է կամ էր:

Զիա՛րդ կարասցուք մարտնչել ընդ այնչափ պընդակազմ գնդի, մանաւանդ զի լքեալք և լուծեալք. — այս ինքն լուծեալք եմք:

Ձայն արար կաքաւ, ժողովեաց զոր ոչ իւր ծնեալ. — այս ինքն ծնեալ էր:

Եւ այրն ծերացեալ ՚ի տեսանելոյ, և վատեալ աչք իւր ՚ի ծերութենէ իւրմէ. — այս ինքն ծերացեալ էր, վատեալ էին:

Եւ ոչ միով իւիք հանգիստ գտաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի նեղեալք. — այս ինքն նեղեալք էաք կամ եղաք:

Ի գիրս հարցափորձից՝ որ առ ամօքն Եզեկիայ եղեալ. — այս ինքն եղեալ էին:

Զարմանային զի ոչ նման արդարոյն ծարաւեալք. — այս ինքն ծարաւեալք էին:

Չև այդ եղեալ, իւրաքանչիւր զընկեր կոչեմք. — այս ինքն չև լիցի այդ եղեալ:

518. Շատ տեղ ալ մէյմը միայն կը դրուի դիմաւոր բայը կամ անցեալ դերբայն, ու պէտք եղածին պէս ինքիրեն կ՚իմացուի ետքը կամ առաջ.

Զոր օրհնես դու՝ օրհնեալ է, և զոր անիծանես՝ անիծեալ. — այս ինքն անիծեալ է:

Եղիցի երկիրն ձեր աւերակ, և քաղաքքն ձեր թափուրք. — այս ինքն թափուրք եղիցին:

Որոց մեղքն յայտնի են և յառաջագոյն հասեալ ՚ի դատաստան. — այս ինքն հասեալ են:

Որ այնչափ պատժոց արժանապարտ իցես, և ահագին ատենին յանդիման լինելոց և ընդ ամենայնի ճշտիւ համարս տալոց. — այս ինքն լինելոց իցես, տալոց իցես։

Ես 'ի հայր, և հայր յիս է. — այս ինքն ես 'ի հայր եմ։

Չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ. — այս ինքն զայրացեալ էր։

Եթէ հրամայէ սպանանել սպանանեն, և եթէ կեցուցանել կեցուցանեն. — այս ինքն և եթէ հրամայէ կեցուցանել։

Ոչ եթէ դուք առաքեցէք զիս այսր, այլ Աստուած. — այս ինքն Աստուած առաքեաց։

Մեկնեաց յինէն. եթէ դու յահեակ, ես յաջ. եթէ դու յաջ, ես յահեակ. — այս ինքն եթէ դու յահեակ մեկնիցիս, ես յաջ մեկնեցայց, ևն։

Որ արբեալդ ես, և ոչ 'ի գինւոյ. — այս ինքն և ոչ 'ի գինւոյ ես արբեալ։

Թէ կամիս և թէ ոչ. — այս ինքն և թէ ոչ կամիս։

Թէպէտ և ամենեքեան գայթագղեսցեն, այլ ես ոչ. — այս ինքն ոչ գայթագղեցից։

Կշտամբեսցէ զքեզ քո բերան, և ոչ ես. — այս ինքն և ոչ ես կշտամբեցից։

Առաւել քան զնոսա ամենեսին վաստակեցի. և ոչ եթէ ես, այլ շնորհքն Աստուծոյ. — այս ինքն և ոչ եթէ ես վաստակեցի, այլ շնորհք Աստուծոյ վաստակեցին։

Դու 'ի նմանէ, և ոչ թէ նա 'ի քէն հատաւ. դու զնա, և ոչ թէ նա զքեզ անգոսնեաց. — այս ինքն դու 'ի նմանէ հատար, դու զնա անգոսնեցեր։

Գովեսցէ զքեզ ընկերն, և մի քո բերան. օտարն, և մի քո շրթունք. — այս ինքն մի գովեսցէ, մի գովեսցեն։

Պատառեցէք զսիրտս ձեր, և մի զհանդերձս. — այս ինքն մի պատառէք:

Երթայք գործեցէք, մի զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ. — այս ինքն մի գործէք, այլ գործեցէք:

Տեսեալ արդարոց ծիծաղեցան, անարատին և արհամարհեաց. — այս ինքն և անարատին տեսեալ:

519. Ասանկ ալ երկու իրեք անցեալ կամ ապառնի դերբայի մէկ եական բայ մը միայն կը դրուի շատ անգամ:

Պատրաստեալ և խորհեալ եմ:

Սուր իւր սրեալ է և զաղեղն իւր լարեալ:

Ոչ երբէք հեղգացեալ եմք յարքունի վաստակս, և ոչ խառնեալ վատութիւն ընդ արութիւն քաջութեան:

Որ ստացեալ և ապրեցուցեալ և սնուցեալ էր:

Խռովեալ և աղմկեալ և զարհուրեալ միտքն էին:

Ընկեցեալ լինէր և քարկոծեալ և թափչաւ ըղգլուխն հարեալ, և այնու վկայ ճշմարտութեանն Յիսուսի եղեալ, և զճշմարիտ մահն նորա մեռեալ:

Որդ իմ զքեզ սպանեալ էր և զդա ապրեցուցեալ:

Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա:

Եթէ չէր մեր աճապարեալ և 'ի փախուստ դարձեալ:

Զև էր զէնումն զենեալ և մատուցեալ պատարագ և ոչ հոգին սուրբ իջեալ, ոչ մեղքն լուծեալ, ոչ թշնամութիւնն բարձեալ և ոչ անիծիցն եղծեալ:

Որ տալոց և հատուցանելոց ես: Գալոց իջանելոց էր:

Մեռանելոց է և յերիր աւուր յառնելոց:

Մարդ լինելոց է և վէմ անուանելոց և 'ի հիմունս Սիոնի դնելոց:

Այս զգենլոց են և արքայութեանն խոստացելոց արժանաւոր լինելոց:

Հնազանդելոյ էին զամենայն ազգս, և ինքեանք անուանիք և հոյակապք լինելոյ քան զաշխարհս ամենայն։

Որ լսելոյն է՝ լուիցէ, և որ արհամարհելոյն՝ արհամարհեսցէ։

520. Շատ անգամ ալ բայը, մանաւանդ էականը, ամենևին չգրուիր ու տեղէն կ'իմացուի. յիշեր ենք 'ի
340. հոս ուրիշ օրինակներ ալ տեսնենք.

Մ՛եք կաւ և դու ստեղծիչ մեր. — այս ինքն մեք եմք, դու ես։

Ըստ Հիպոկրատեայ՝ կեանք սուղ և արուեստ երկայն. — այս ինքն սուղ է։

Եւ ամենայն որ ինչ նոցա, եկին. — այս ինքն որ ինչ նոցա է կամ էր։

Այսօր մաքուր հոգեկիր, վաղիւ մոլի խելագար. — այս ինքն այսօր եմ, վաղիւ լինիմ։

Գոհութիւն երեքսրբենին. Անէծք այնպիսի կրծծի բանից. — այս ինքն գոհութիւն լիցի, մատուսցի. անէծք լիցին, եղեն։

Սուր 'ի վերայ քաղդէացւոցն։ Ահաւասիկ ես 'ի վերայ քո. — այս ինքն սուր լիցի, հասցէ. ես եմ, ես գամ 'ի վերայ քո։

Վա՜յ զիս. եղուկ զիս. երանի զազատեալսն. — այս ինքն վայ ասելի է, համարելի է։

521. Շատ տեղ անորոշ դերբայն ալ մէյ մը գրուելով, կամ ամենևին չգրուելով, զօրութեամբ կը հասկցուի ինչ հոլով որ պէտք է.

Խօսել բան՝ զոր ոչ է արժան. — այս ինքն ոչ է արժան խօսել։

Ի հրոյ էութենէ ասեն զբնութիւն աշխարհիս. — այս ինքն ասեն լինել։

Զպատրաստութիւն սպառազինութեանն հրամայեաց յարքունուստ. — այս ինքն յարքունուստ լինել։

Մեռաւ ամաց քսանից. — այս ինքն գոլով ամաց քսանից կամ եղեալ ամաց։

Յայս ապաստան՝ կամէի նախ առ ձեզ գալ. — այս ինքն ապաստան գոլով կամ եղեալ։

Ինքն երթայր բոկ և ամենայն ժողովուրդն ընդ նմա՝ ձորձ զգլխով. — այս ինքն ունելով ձորձ զգլխով, գոլով ձորձ զգլխովն։

Անկանէր 'ի ներքս սուսեր 'ի ձեռին. — այս ինքն ունելով սուսեր։

Նաւապետն ձեռն 'ի ծնօտի՝ արտասուաց գետս իջուցանէ. — այս ինքն ձեռն 'ի ծնօտի ունելով կամ գոլով։

Կոյս վճարեցաւ յաշխարհէ. — այս ինքն կոյս գոլով, կոյս մնալով։

Այր մի Մատթէոս անուն։ Կին մի անուն Դամարիս. — այս ինքն անուն ունելով, անունն գոլով։

522. Ասանկ կ'ըսուի Բերան 'ի բերան խօսել, Թագ 'ի գլուխ զարդարել, Հիմն 'ի վեր տապալել, գալ 'ի բերան ածել զոք, ձեռս 'ի գլուխ եկանել, բերան 'ի վայր անկանել, կապել զնոսա ձեռս յետս կամ ընդ միմեանս ձեռ ընդ ձեռ։

523. Դրական անունը շատ տեղ ածականին տակը զօրութեամբ կը հասկցուի, մանաւանդ դիմորոշ յօդ դնելով ածականին (444)։

Ծերութիւն պատուական՝ ոչ բազմաժամանակեայ է. — այս ինքն ոչ բազմաժամանակեայ ծերութիւնն է։

Անկիրթն դիւրաւ մոլորի. — այս ինքն անկիրթ մարդն։

Բարկասիրտ գործէ առանց խորհելոյ. — այս ինքն բարկասիրտ մարդ։

Հանցես զպատուականն յանարգէն. — այս ինքն զպատուական իրն կամ մարդն յանարգ իրէն։

Աստուած առաւել ատեայ զմեղքն քան զյանցաւորն . — այս ինքն զմեղք մարդն ։

Որչափ տգեղս առնես զմեզ երկրաւորաւս, գեղեցկագոյնս առնես զմեզ երկնաւորաւն . — այս ինքն երկրաւոր մասամբս կամ կերպիւս ։

Մեծքն շփման և փոքունքն նախանձին . — այս ինքն մեծ մարդիկ, փոքր մարդիկ ։

Ոչ բազմաժամանակեայք են իմաստունք . — այս ինքն ոչ բազմաժամանակեայ մարդիկ ։

Աստուծոյ յայտնի են անգործք մարդոյն . — այս ինքն անգործ իրք ։

Որ հասանէ անքննականաց, փառաւորաց և հրաշակերտաց . — այս ինքն իրաց ։

Որ առնէ զմեծամեծս և զանքննս և զփառաւորս և զհրաշակերտս . — այս ինքն զիրս ։

524. Գոյական ու ածական դերանունները շատ տեղ զանց կ'ըլլուին, ու բանէն կը հասկցուին .

Մի կարասցէ ունել զդէմ. — այս ինքն զդէմ իմ, քո, նորա, մեր, ձեր, նոցա, տեղին նայելով ։

Միենայն բարիք որ յԱստուծոյ առ մեզ ժամանեն և լուսաւորեն զհոգիս . — այս ինքն զհոգիս մեր ։

Պնդեա զմէջ, զօրացիր զօրութեամբ յոյժ . — այս ինքն զմէջ քո ։

Յոտն եկաց Պաւղոս, շարժեաց զձեռն և ասէ . — այս ինքն զձեռն իւր ։

Որ անարգէ զհայր ։ Հայր սիրէ զորդի ։ Կոչէ ըզբարեկամս և զդրացիս . — այս ինքն զհայր իւր, զորդի իւր, զդրացիս իւր ։

Եթէ հրամայէ պատերազմել, ոչ իշխեն անցանել զբանիւ . — այս ինքն զբանիւ նորա ։

Ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն . — այս ինքն զձեռս իւրեանց ։

Պէտք եղև եղբարս եօթն մարդն հանդերձ կա-լեալս ածել. — այս ինքն մարդն նոյա ։
Ընդէր բարկանաս եղբօրն. — այս ինքն եղբօրն քում։
Խօսղ որդւոյն զբարերարութեանդ քո հանդէս. — այս ինքն որդւոյն քում։
Որ համդերձեալն ես թողուլ որդւոցն. — այս ինքն որդւոցն քոց ։
Որ 'ի ձեռին ունէր. — այս ինքն 'ի ձեռին իւրում։
Խօսու լքանէ յօգնականութենէ. — այս ինքն յօգնականութենէ իւրմէ ։
Սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն. — այս ինքն աշակերտաց իւրոց ։
Տացէն զպսակն՝ զոր խոստացաւ սիրելեացն. — այս ինքն սիրելեաց իւրոց ։

525. Նախդիրներն ալ շատ կերպով զանց կ՚ըլլուին։ Ինչպէս, թէ որ բառը զայով, սեով, յիով կամ հոյով սկսած ըլլայ նէ, երբեմն նորէն չդրուիր զ, 'ի. Առին զէնս իւրեանց. այս ինքն զզէնս ։ Սեղանն եւ սրբել. — այս ինքն զսեղանն ։ Սուրբ սեպուհն զՀմայեակ. — այս ինքն զսուրբ սեպուհն ։ Երթիցես յարկս քո. յաւիտեանս. յաւիտենից. յարդէ 'ի ցորեան փոխել. — այս ինքն 'ի յարկս, 'ի յաւիտեանս, 'ի յաւիտենից, 'ի յարդէ ։ Համառօտ ճանապարհն եկն. հարաւոյ կողմանէ. — այս ինքն 'ի համառօտ ճանապարհն, 'ի հարաւոյ կողմանէ ։

526. Երբեմն ալ առջի բառը ղ, ո, ե ըլլայ նէ, ան ետեւինին ալ նախդիրը տեղ կը բռնէ. Ողկեցօ 'ի մեղ հատն. — այս ինքն զհատն ։ Մաքրագոյնք որպէս մարգարէսն. — այս ինքն զմարգարէսն ։ Յայնժամ ժամանակի խնդիր եկանէր արքայն. — այս ինքն 'ի խնդիր եկանէր ։

527. Երբեմն յ, ր գրերն ալ զայի տեղ կը բռնեն աս երկու կերպովն ալ ։

528. Երբոր առջի բառը ետքինին խնդիր ըլլայ ու երկուքին ալ նոյն նախդիրն որ պէտք ըլլայ նէ, ետքինին հարկ չըլլար դնելու, առջինինը երկուքին ալ կ'օգտէ.

Զձեռամբ անկելոյն իւրեանց՝ բռնութեամբ ժողովեն. — փոխանակ ըսելու զանկելոյն զձեռամբ իւրեանց:

Ըսելով զկնի յոլովից առեալն. — փոխանակ ըսելու՝ զառեալն զկնի յոլովից:

Յարի և այս 'ի Բաբելոնէ դարձելոյն. — փոխանակ ըսելու 'ի դարձելոյն 'ի Բաբելոնէ:

Ի Քրիստոսէ պարգևեալ փառսն վայելեսցուք. — փոխանակ ըսելու 'ի փառսն պարգևեալ 'ի Քրիստոսէ:

Ի քուն լինել մարդկան՝ եկն թշնամին. — փոխանակ ըսելու 'ի լինել 'ի քուն:

Ի Ճանապարհ անկանել նոցա. — փոխանակ ըսելու յանկանել նոցա 'ի Ճանապարհ:

Յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի. — փոխանակ ըսելու 'ի ձգտիլ յանչափն:

529. Նախդիրի պէս հոլովառու բառերն ալ (152) շատ անգամ ինքիրեն կը հասկըցուին առանց կրկնելու, նախդիր ունին նէ՝ ան միայն կրկնելով.

Յառաջ քան զիս և զքեզ. — այս ինքն և քան զքեզ:

Երկինք և երկիր վասն մարդոյն, և մարդն՝ պատուիրանին. — այս ինքն վասն պատուիրանին:

Փառաց վասն, ընչից աղագաւ, կամաց կատարելոյ, երկայնակեաց լինելոյ. — այս ինքն կատարելոյ վասն կամ աղագաւ, լինելոյ աղագաւ:

Վայ 'ի վայի վերայ, և գոյժ 'ի գուժի. — այս ինքն 'ի գուժի վերայ:

Վէրս 'ի վերայ վիրաց և ցաւս 'ի ցաւոց յաւելուն. — այս ինքն 'ի վերայ ցաւոց:

Ի վերայ խաչանց իմոց մեռանիմ. յորոց խաչանց արդեօք. 'ի հարթուցելոյն, 'ի փախուցելոյն, 'ի գազանակուր եղելոյն. — այս ինքն 'ի վերայ որոց խաչանց. 'ի վերայ հարթուցելոյն, ևն:

Գթայր 'ի վերայ նորա իբրև հայր յորդւոյ. — այս ինքն 'ի վերայ որդւոյ:

Յերկինս 'ի վերայ քերովբէիցն, և յերկրի՝ անասուն կենդանեաց. — այս ինքն 'ի վերայ անասուն կենդանեաց:

Երթ զհետ արդարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոյ, զսիրոյ. — այս ինքն զհետ աստուածպաշտութեան, զհետ հաւատոյ, ևն:

530. Շատ տեղ ալ նախդիրներուն կամ հոլովառու բառերուն խնդիրը յայտնի չդրուիր ու կը հասկըցուի. ինչպէս շատ անգամ երբոր յատկացեալը չդրուիր կամ չկրկնուիր ու իր նախդիրը յատկացուցիչին վրայ կը դրուի (480).

Կերպարանիմ զԳաւութին. Զքրովբէիցն խորհրդաբար կերպարանիմք. — այս ինքն զիրս կամ զկերպարանս Գաւութի, քրովբէից:

Տգէտ են Աստուծոյ արդարութեանն, և զիւրեանցն խնդրեն կացուցանել. — այս ինքն զիւրեանց արդարութիւնն:

Հայեաց 'ի տառապանս մեր և 'ի նեղութիւնս, և 'ի թագաւորացն մերոց և իշխանացն մերոց և քահանայից և մարգարէիցն մերոց. — այս ինքն և 'ի նեղութիւնս թագաւորացն մերոց ևն:

Ակնածեսցուք 'ի Քրիստոսի պատուիրանէն՝ որ 'ի բերանս նոցա խօսէր. զի եթէ 'ի Պաւղոսին խօսէր, ապա և 'ի Պետրոսին, ապա և յայլոց Առաքելոցն. — այս ինքն 'ի բերան Պաւղոսի, 'ի բերան Պետրոսի, 'ի բերան այլոց Առաքելոցն:

Զարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն նորա և

ընդ ամենայն որդւոցն Իսրայէլի . — այս ինքն և ընդ գեղեցկութիւն ամենայն որդւոցն ։

Ամք քո իբրև զառն ։ Թևք նորա իբրև արծուոյ . — այս ինքն իբրև զամս առն, իբրև Թևք արծուոյ ։

Դարձոյց զսիրտ ամենայն Յուդայ իբրև զառն միոյ . — այս ինքն իբրև զսիրտ առն միոյ ։

Ոչ էին իբրև զԻսրայէլի գործք նորա . — այս ինքն իբրև զգործս Իսրայէլի ։

Մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոյ . — այս ինքն քան զտեսաւորութիւն մարմնոյ ։

Հայեաց 'ի վերայ աբրահամեան զաւակիս , 'ի սրբոյ Սահակայ . — այս ինքն 'ի զաւակի սրբոյ Սահակայ , որ ըսել է 'ի վերայ զաւակի (529) ։

Զոմանս վասն պիղծս դատելոյ , և զայլս՝ վասն բարիս . — այս ինքն վասն բարիս դատելոյ ։

Հանդերձ որք բոլորովին են անշունչք . — այս ինքն հանդերձ այնոքիւք (440) ։

531 . Սակբայներէն ոչ, գ , շատ տեղ չեն կրկնուիր ետևի բայլն , ու կը հասկըցուին .

Ռանի զուրուք մեք ոչ կերաք և արբաք . — այս ինքն և ոչ արբաք ։

Ոչ Թողեր և ցրուեցեր զնոսա . — այս ինքն և ոչ ցրուեցեր ։

Խստացուցին զպարանոցս իւրեանց առ 'ի չլսելոյ ինձ և ընդունելոյ զխրատ . — այս ինքն և չընդունելոյ ։

Որպէս զի չէք յանիրաւութենէ արդարութիւն , այսպէս 'ի ստութենէ ճշմարտութիւն . — այս ինքն այսպէս ոչ կամ չէք ։

Մի աղաչեր վասն դոցա խնդրուածովք և պաղատիր . — այս ինքն և մի պաղատիր ։

Մի ներէք նոցա և Թողացուցանէք . — այս ինքն և մի Թողացուցանէք ։

532. Ուրիշ մակբայներն ալ երբեմն զանց կ'ըլլուին, կամ մէկ կողը կը ձգուի.

Որպէս դու, և ես. և որպէս զօրք քո՝ զօրք իմ. — այս ինքն այնպէս կամ նոյնպէս և ես, նոյնպէս զօրք իմ։

Որչափ մեծ է իշխանութիւնն, դժուարին է մարտն. — այս ինքն այնչափ դժուարին է։

Նա արար՝ մինչ ճեղքեաց խզեաց զմիաբանութիւնն Հայոց. — այս ինքն այնչափ արար։

Որպէս խորհեալ եմ, այն կացցէ. — այս ինքն այնպէս կացցէ։

Այսչափ կամ այն. Եթէ այսպէս և եթէ այն. Երբեմն այնպէս և երբեմն այս. — այս ինքն այնչափ, այնպէս, այսպէս։

Որպէս այժմ, նոյն և յայնժամ. — այս ինքն նոյնպէս։

Մեծին այլազգ ծառայանալ, և փոքուն այլ. — այս ինքն և փոքուն այլազգ։

Հայեաց յայսկոյս և յայն. — այս ինքն և յայնկոյս կամ յայն կոյս։

533. Շաղկապներէն ալ ոմանք զանց կ'ըլլուին, ու յայտնի կ'իմացուին.

Զի թէ թշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի արդեօք, կամ ատելոյն մեծաբանեալ էր 'ի վերայ իմ՝ թաքչէի արդեօք 'ի նմանէ. — այս ինքն կամ թէ ատելոյն մեծաբանեալ էր։

Այսուհետև չես ծառայ, այլ որդի. եթէ որդի, և ժառանգ Աստուծոյ. — այս ինքն ապա, ուրեմն և ժառանգ։

Թէպէտ և զհետ եղև նոցա, չկարաց հասանել. — այս ինքն այլ, սակայն չկարաց։

Թոյլ տուք անցից ընդ երկիր քո. — այս ինքն թոյլ տուք զի անցից։

Ժողովեցան վաղվաղակի զի խորհեսցին՝ զինչ գործ գործեսցեն. — այս ինքն թէ զինչ գործ գործեսցեն։

Էր խռովութիւն մեծ ՚ի մէջ զինուորացն, զի՞ արդեօք Պետրոսն եղև. — այս ինքն թէ զի՞ արդեօք եղև։

Նա ոչ անխտիր ինչ իրք են՝ անտի իսկ յայտ է. — այս ինքն և զի չար և թէ ոչ անխտիր ինչ իրք են։

Որպէս վերստին քննեալ՝ մարթացից ինչ գրել. — այս ինքն որպէս զի։

Այնպէս ծածկեցաւ ՚ի մէնջ, որպէս ամենևին ոչ գիտացաք. — այս ինքն որպէս զի, որ ըսել է մինչ զի ոչ գիտացաք։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԱՒԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

534. Աւելադրութիւն է բան մը աւելի դնել՝ զօրաւոր կամ բացայայտ և կամ զարդարուն ընելու համար խօսքը։

535. Այսանկ անորոշ դերբան, ուղղական ու հայցական, կը դրուի իր բային քովը, հաստատութիւն ցուցնելու համար, որպէս թէ ըլլար ապաքէն, արդարև կամ թէպէտև։

Տալ ետու կնիք և տանն Ստեփանեայ. — այս ինքն ապաքէն ետու։

Ունել ուներ պարծանս, այլ ոչ առ Աստուած. — այս ինքն արդարև ուներ, թէպէտ և ուներ, այլ [illegible]։

Սիրել սիրեն կամ զսիրելն սիրեն, այլ ոչ սերտիւ կամ այլ ոչ սրտացաւութեամբ. — այս ինքն ապաքէն սիրեն, թէպէտ և սիրեն, այլ։

Ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու. — այս ինքն թէպէտ և ամենեքին։

536. Անորոշ դերբային գործիականը ու անցեալ դերբան իրենց բային քով կը դրուին հաստատութեան ու սաստկութեան համար, կամ բանին՝ [illegible] աճիլը ցուցնելու.

Զամենայն ինչ զոր խօսեցի, լինելով լինի։

Զամենայն ծառոց որ է 'ի դրախտին՝ ուտելով կերիցես։

Աճելով աճէին և բազմանալով բազմանային։

Երթալով երթայր և զօրանայր ։ Գնալով գայր և մերձենայր ։

Շինեալ շինէին (զաշտարակն)՚ի պաշտօն դիւաց։

Գողացեալ գողանայ. պահեալ պահեն. հանեալ եհան ։

Յափշտակեալ յափշտակէին յառաջագոյն ։ Յերուսաղէմ երթեալ երթիցէ ։

537. Ով, ինչ, որ միջակ անունները առանց հարկի աւելորդ կը դրուին.

Ոչ ոք այն ոք գայր յորմէ խրթային ։

Յորմէ ոչ ոք երբէք այլ ոք մասն կալաւ ։

Եւ որ ինչ այլ ինչ գեղեցիկ յօրինուածք պատմին. — այս ինքն այլ գեղեցիկ յօրինուածք որ պատմին ։

Որ ինչ անդ դիպեալ էին քաղաքացիքն. — այս ինքն քաղաքացիքն որ անդ դիպեալ էին ։

Եւ ոչինչ էր յաշխարհի՝ որ ինչ ընդդէմ դառնայր հրամանաց նորա. — այս ինքն ոչինչ որ ընդդէմ դառնայր ։

Եւ որ ինչ այլ ինչ պատիւ ունէր. — այս ինքն և այլ ինչ պատիւ որ ունէր ։

Ոչինչ ունիմ իրս ինչ. — այս ինքն ոչ ունիմ իրս ինչ ։

Իսկ այլոց իշխանացն թուի ինձ և ոչ մի ինչ մնացեալ. — այս ինքն և ոչ մի ինչ մնացեալ ։

Եւ ոչ մի ինչ յայսցանէ ամենեւին ինչ ոչ յիշեաց. — այս ինքն ամենեւին ոչ յիշեաց ։

Ամենայն ինչ այնպիսի պարծանք՝ չարութիւն են. — այս ինքն ամենայն այնպիսի պարծանք ։

Որ զամենայն ինչ չարիսդ խորամանգեցեր. — այս ինքն զամենայն չարիսդ ։

Ոչ եթէ առ քեզ ինչ առաքեաց զիս տէր ։

Չեմ ինչ լսելոց ։

Ոչ առ բազում ժամանակս ինչ ։ Ոչ այժմ ինչ կոչեցի զքեզ ։

Եթէ ինչ զդոսա խորամանգել յօժարեսցուք ։
Իբրեւ կամքին իմն թէ փոխեսցուք զնա ։ Յայտ իմն այսպէս առնէր ։
Յանկարծակի իմն եղաք ։ Մտադիւր իմն անսայիք ։

538 . Պոյական ու ածական դերանունները երբեմն կը կրկնուին .

Ես իրաց և գործոց առնն իմանալ ինչ ես ոչ կարեմ ։
Մեք անպակաս յամենայն ժամանակի ... յիշեմք մեք զձեզ ։
Դու որ զամենայն ինչ չարիւք խորամանգեցեր ... դու ոչ ապրեսցիս ։
Եւ թուի այս տխմարաց, թէ չիցէ այս հանգոյն առաջնոյն ։
Այն որ ամենաբարին է բնութեամբ, այլ ումեք չարի պատճառ նա ոչ լինի ։
Զայնոսիկ որ այնպէս մատն եղեն օրինացն՝ ածին սատակեցին զնոսա ։

539 . Շատ տեղ ալ բանի մը հետ աւելի կը դրուին նոյն հոլով, ետև կամ առաջ .

Կինս զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ 'ի ծառոյ անտի և կերայ ։
Ծանեաւ Մանասէ եթէ տէր՝ նա է Աստուած ։
Զայն Մովսէս զոր ուրացանն՝ զնա Աստուած իշխան և փրկիչ առաքեաց ։
Ազգքն այնոքիկ զորս դու ժառանգելոց ես՝ նոքա հմայից և դիւթութեանց անսան ։
Ամուրքդ զոր շինէք՝ այդ ձեզ իսկ լիցին (129) ։
Այն իմաստասիրի ուրախ առնի հայր իւր ։
Եւ երկիւղածաց քոց քաւիչ լինիս դու նոցա ։
Եթէ ինչ յարարածոց՝ որ գեղեցիկ է, այն 'ի բարւոյ արարչէ կարծիցի ումանց ։
Զջնջելն և զճշմարտելն՝ զայն առաջնոյն թողաք ։

Վփրաժիր մանկունս ընտրանաւ՝ զայն յուսումն արուեստականացն տայլն ։

Տեղի բնակութեանն Աստուծոյ լինիցին, այնմ որ ասաց բնակեցայց 'ի նոսա ։

Ի հպարտութիւն ամբարտաւանութեան յեցեալ, յայն որ 'ի հնոց ժամանակաց հետէ ունէին ։

Եթէ ընդ դուռն ընդ որ թագաւոր ելանէ, հանցես ընդ նա աղբ ։

Իբրև լուան նախարարքն Հայոց, այնք որք ունէին զիշխանութիւն ։

Իսկ սուրբ քահանայքն որ անդ դիպեցան յամուրսըն, .. մատուցին և նոքա զպարանոցս իւրեանց ։

Այս ոչ հրամանաւ արքունի է՝ այսչափ երկայնաբան լինել ընդ ձեզ պայքարաւ ։

Մեծ է քեզ այդ՝ կոչել զքեզ ծառայ իմ ։

Նա և այն իմաստութիւն է՝ ճանաչել թէ յումմէ է շնորհն ։

540. Այսանկ ալ յարաբերականին ետևէն աւելի կը դրուին, որ շատ անգամ դիմորոշ յօդի տեղ է անոր՝ որ չառներ (461), կամ յարաբերեալին.

Որ դու միայն կարող ես. Որ ինքն իւր չար է. Որ էր և նա 'ի նոյն ազգէ ։

Պտուղ՝ որոյ սերմն իւր 'ի նմին. Որոց յօժարէին միտք իւրեանց ։

Տէր զօրութեանց՝ որոյ կացի առաջի նորա. Որոյ որդի նորա հիւանդ կայր ։

Տեղիդ՝ յորում կաս դու 'ի դմա. Դու հաւատս ունիս՝ որով պարծիս դովաւ ։

Զարք որոց ոչ էր նոցա թիւ. Աստուածք՝ յորս յուսացեալ էիք 'ի նոսա, զորոց զճարպ զոհից նոցա ուտէիք ։

Որոյ բան հրամանի իւրոյ այսչափ զօրացեալ իշխէ ։

Որոյ կերակուր կամաց իւրոց էր 'ի մանկութենէ անարատ մարմին սրբոց ։

541. Յարաբերական դերանունին ետեւէն շատ հեղ յարաբերեալն ալ կը կրկնուի, կամ ինչ որ է նէ իրօք, կամ ինչպէս որ կ'երեւնայ նէ հոն գրողին մտքին, բացայայտիչի պէս.

Ո՜ որ ստացաւ Աբրահամ զայրն յԵփրոնէ քետացւոյ:
Իբրեւ զՌաքէլ և զԼիա, որ շինեցին երկոքեան ըզ-տունն Իսրայէլի:
Բերէին զհիւանդս և զնեղեալս յայսոց պղծոց, որք և բժշկէին ամենեքեան:
Որում ոչ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել Բելայ, չու արարեալ գնայ:
Յորմէ յաւէնեցանց յայսցանէ ազատ են իմանալիքն:
Ի ձեռն տասն աղքատ և անգիր արանց, որք ոչ ՚ի ձեռն ընչից կամ իմաստիւք կամ զօրութեամբ ջնջորդն իմաստնոցն և հզօրացն յաղթեցին:
Այպն արարի զտկարութիւն ձեր, որք այդչափ բազմութեան զմի թև հաւու ոչ բարձէք:
Հոգւոյն սրբոյ՝ որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն:
Յորմէ զարհուրին յայսմ երբէ ժոռոալէ:
Որոց անուանքն են այս՝ գործակցաց նորա:
Դուք որ մատուցեալ էք ՚ի վէմն կենդանի:
Ո՜ որ ոչ բաւեմ ասել զայնչափ աղէտս տանջանացն:
Որ Աստուծոյ միայն է, զծածուկս ճանաչել:

542. Յարաբերական դերանունն ալ կերպ կերպ աւելորդ գրուիլ ունի. անսովոր ըլլալուն՝ հոս զանց կ'ընենք:

543. Յատկացեալին, բացայայտելիին ու գոյականին նախդիրը (476, 480, 481) շատ անգամ կը կրկնուի եւս գրուած յատկացուցիչին, յատկացեալին, բացայայտիչին, հասարակ ածականին կամ գոյականին վրայ, մանաւանդ հեռու որ ըլլան ու դիմորոշ յօդ ու-

նենամ, կամ գոյականը երկու եւս կապած ածականի մէջ որ դրուի. ինչպէս,

544. Յատկացուցիչին վրայ.

Մի խոտորիցես զիրաւունս զեկին և զորբոյ և զայրւոյ:

Զմիտս կամեցաւ հաճել զամբոխին:

Մի մերձեսցի 'ի պղծութիւնս մարդոյ կամ յանասնոց պղծոց:

Խաղաղութիւն արասցուք ընդ արս ընդ ազգիդ այդմիկ:

Յոգի վախճանեալ մի մտցէ 'ի հօր և 'ի մօր, յեղբօր և 'ի քեռ:

545. Յատկացեալին վրայ.

Կախեաց զՍիկամովրայ զգլուխն: Զքո զբարեկամն:

Զիմ զաչս եբաց: Սատակել զձեր զայր և զկին:

Կապեցէք զդորա զոտս և զձեռս:

Զքո բարերարութեանդ զչափ առեալ: Զամենայն երկրի զիշխանութիւնս:

Ոչ զուրուք բռնացայ ունել զանդաստանս և կամ զայգիս:

Յիւր 'ի փառսն և 'ի վայելչութիւն: Այրեցան 'ի հրոյն 'ի հնոցէ:

Ի փորձութեան 'ի հանդիսի գտաւ հաւատարիմ:

Ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն:

Ըստ իւրաքանչիւր ըստ վրանս ձեր: Զորոյ զվաստակն 'ի բժշկութիւն մատուցանեն:

Զորոյ մեք գիտեմք զհայրն և զմայր: Յորոյ այսօր 'ի գիրկսն գգուեցար:

Զորոյ երբեմն անցանիցէ՝ ոչ գոյ զհետսն գտանել:

Յորոց դուն 'ի խնդիր երթեալ էիր: Ընդ որոց թէ ընդ գեղն զուարճացեալք, եւն:

546. Բացայայտիչն վրայ.

Կոչեաց զԱստուած զորդի իւր երէց։ Կոչեաց զորդի իւր զկրտսեր զՅակոբ։

Յերկրին 'ի Գեսեմ։ Ի լեառն 'ի Նաբաւ։ Մօտ 'ի լեառնն 'ի Նպատ։

Ի Մովսիսէ յառնէն Աստուծոյ։ Ի Հերմոնէ 'ի լեռնէ փոքուէ։

Յերկրէ հեռաստանէ եկին առ իս՝ 'ի Բաբելոնէ։

Անց նա ըստ գետն մեծ ըստ Եփրատ։

Նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ՝ ընդ Յիսուս Քրիստոս։

547. Ածականին վրայ.

Զհպարտութիւն զամենայն։ Զարմն զամպարիշտս։

Զտունս զայս զբարձր։ Զժողովուրդդ զայդ զչար։

Զզօրն զայն զմեծ։ Կոչեա զՍիմոն զոմն։

Գումարէին յերկիրն 'ի հեռաւոր։ Ընդ քաղաքն ընդ ամենայն։

Ասէ ցարմն ցյարուցեալս 'ի վերայ նորա։

Ի տնկոյ խմեքէ 'ի մահաբերէ։ Ի պատուիրանացս յայսցանէ 'ի փոքունց։

Յայրի անդ 'ի կրկնում։ Յաւուր միում յերևելւոջ։

Գտի զոչխարս իմ զկորուսեալ։ Զճանապարհս ձեր չարս և զգնացս ձեր զանբարիս։ Շինեաց զդուռն տանն տեառն զբարձր։

Յերկիր Թշնամեաց 'ի հեռաւոր կամ 'ի մօտաւոր։

Ի ծառայից տեառն իմոյ 'ի յետնոց։ Բուռն եհար զհանդերձէն իւրմէ զնորոյ։

Ի ցուպն եղեգնեայ 'ի ջախջախ։ Յազգ օտար և 'ի չար։

Յազգ անյոյս և 'ի կոխեալ։ Զազգ մի զանդէտ և զարդար։

Զտասանորդս երկրիս մերոյ Ղևտացիքն շրջես- ցին և առցեն զամենայն բովանդակ ։ Զհովիւն հօտից զմեծն ։

Զքորմս քո զերիցունսն ։ Զջուր գետոյն զհզօրն և զյորդ ։

Առի զմուրհակ ստացուածոյն զկնքեալն ըստ հրա- մանի և ըստ իրաւանց և զարձակն ։

Զամենայն սպաս տանն տեառն զմեծ և զփոքր ։

Յամենայն քաղաքսն Յուդայ յամուրս ։ Ընդ ա- մենայն քաղաքս ընդ յոյժ հեռաւորս ։

Զեօթնասուն արամբքն զծերովք ։ Զահագին տեսիլն զայն և զերկիւղալից ։

Զանհնարին հարուածսն և զմեծամեծս յոյժ ։

Իբրև զխիստ ինչ զանծամ և զանկոտոր ։

Զեօթն երինջսն զառաջինս զգեղեցիկսն և զըն- տիրս ։

Ընդ ամենայն անապատն ընդ մեծ և ընդ ահագինն ։

548 . Գոյականին վրայ .

Զամենայն զերկիրս զայս . զամենայն զինչս իւր . զամենայն զկահ և զկարասի նոցա ։

Ածեր 'ի վերայ դոցա զանհնարին զմեղուդ ։ Առ նա զանձինախառն զկրակն ։

Զարքունի զհրամանն ։ Զերկոսին զորդիսն իմ ։ Զայդ ևս զքո բան ։

Իբրև զհաւասարապատիւ զոք ։ Զանչափ զան- քնին զերկիրս կամ զերկինս ամենայն ։

Զահաւոր և զսարսափելի զփրկական զխոր- հուրդն ։

Յամենայն 'ի կեանս քո . յամենայն 'ի թագաւո- րութեան նորա ։

Յամենայն իսկ 'ի թուղթսն . յամենայն 'ի բա- զում մեծութեան իւրում ։

Յերկոսեան 'ի սրահս տանն ։ Յանցաւոր 'ի կեանս ։ Յամենայն յԻսրայէլէ ։

Յամենայն 'ի զուր բանէ ։ Հրաժարեալք յաշ-խարհական 'ի զբաղմանց ։

Յայնչափ 'ի բազում 'ի նախնեաց փիլիսոփայից աստուածոց ։

Յանապատէ եկեալ յերկրէ ։ Ի բարձրաւանդա-կումն կուռ կալով 'ի տեղւոջ ։

Զկարի խոնարհագունիցն բուռն հարկանէ զօ-րինակաց ։

549․ Թէ որ ետև կամ առաջ դրուած ածականները շատ ալ ըլլան նէ, անոնց վրայ ալ կը կրկնուի երբեմն նախդիրը, մանաւանդ հեռու ինկածներուն, թէ և ետև դրուած գոյականին վրայ չկրկնուի ալ, ինչպէս օրինակ-ներուդ մէկ քանիին վրան կը տեսնես ։

550․ Պարզ նախդիրները կամ հոլովառու բառե-րունը՝ աւելորդ կը կրկնուի երբեմն բառին կողմներուն վրայ կամ խնդրոյն կամ անոր ածականին, յատկացու-ցիչին ․

Զո՞ այլ զոք առաւել քան զՀրեայսդ ․ — այս ինքն զո՞ այլ ոք նաև զո՞ ոք այլ ։

Ի քսան և 'ի հինգամենից և 'ի վեր ․ — այս ինքն 'ի քսանևհինգամենից ։

Յինն և 'ի տասներորդ ամի ․ Յեօթն և 'ի տասնե-րորդի ամի ․ — այս ինքն յիննևտասներորդ, յեօթն-ևտասներորդի ։

Զքսան և զինն ազգաց զօգիս ․ — այս ինքն ըզ-քսանևինն ազգաց ։

Զփառս զառ 'ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք ․ — այս ինքն զփառս առ 'ի միոյն Աստուծոյ, որ է առ 'ի միոյն Աստուծոյ (389) ։

Զզուարակն զվասն մեղաց՝ արասցես ․ — այս ինքն զզուարակն որ է վասն մեղաց ։

Գազանաբար յարձակի 'ի վերայ ոչ միայն 'ի մերն յԱրտաւազդայ, այլ և յայլոց ևս ազգաց ․ —

այս ինքն ոչ միայն 'ի վերայ մերն Արտաւազդայ, այլ և այլոց ևն ։

Զխաչեալն 'ի մէջ 'ի յանօրինաց. — այս ինքն 'ի մէջ անօրինաց ։

Զհետ երթային բազումք զՊաւղոսի և զԲառնաբայ ։

Ոչ չոգար զհետ երիտասարդաց զաղքատաց կամ զմեծամեծաց ։

Զիմոց բարուց զկնի հայեցեալ. զօտարի զհետ ոչ երթիցեն. զբարեաց զհետ երթայք ։

Ընդ խթանի ընդդէմ աքացել ։ Ընդ այսր ընդդէմ թերևս ոք յամառէ ։

Ունիցէ կալ ընդդէմ տասն հազարաւ ընդ այնմ որ գայցէ 'ի վերայ նորա քսան հազարաւ ։

Տես և 656 ։

551. Երբեմն ալ նոյն նշանակութիւն ունեցող ու նոյն հոլով առնող նախդիրները կամ հոլովառու բառերը մէկտեղ կը դրուին նոյն անուան վրայ, կամ մէկը անոր, մէկը ածականին, ևն.

Բանակեցան մերձ առ յԵրուսաղէմ. — փոխանակ ըսելու մերձ առ Երուսաղէմ կամ մերձ յԵրուսաղէմ ։

Նստի յերկինս երկնից ընդ յարևելս. — փոխանակ՝ ընդ արևելս կամ յարևելս ։

Ի չար ընդ այն հայելով. — փոխանակ՝ 'ի չարն յայն կամ ընդ չարն այն ։

Եւ հզօրս նորա ոմանս հասուցանելով յազգայինս. — փոխանակ՝ առ հզօրս նորա ազգայինս կամ 'ի հզօրս նորա ազգայինս ։

Եւ 'ի փոքր մի նիզակակցացն յանզգաստութենէ. — փոխանակ՝ առ փոքր մի անզգաստութենէ կամ 'ի փոքր մի անզգաստութենէ ։

Ընդ դերաշխարհիկսդ վարուք և քաղաքավարու-

թեամբ խօսեսցուք առ կրօնաւորսդ.— ուր ածա-կանին վրայ ընդ է, գոյականին առ:

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ.— փոխանակ բարւոյ կամ միայն չար ընդ բարւոյ ըսել հերիք էր:

Յիրաւի պատժեցաւ վասն ընդ անագորոն թշնա-մութեան ընդ մարդոյն ունելոյ.— վասն ունելոյ կամ ընդ ունելոյ միայն հերիք էր:

Զգալի այն ասի, որ ընդ զգայարանաց անկանի.— միայն ընդ զգայարանաց անկանի կամ զգայա-րանաց 'ի ներքոյ ըսել հերիք էր:

Ես զսոսին հաստատուն պահելոյն պատճառաւ.— առ պահելոյն կամ պահելոյն պատճառաւ հե-րիք էր:

Զարմացաւ զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշն:

Զկնի յետ բազում ժամանակաց:

Վասն կամ Սակս այնր աղագաւ.— միայն վասն այնր, սակս այնր կամ միայն այնր աղագաւ ըսել հերիք էր:

552. Նախդիրի և հոլովառու բառի ուրիշ վարպետ աւելադրութիւններ ալ կան անուան կամ դերբայից հետ:

553. Մակբայներն ալ շատ անգամ աւելորդ կը գրուին, նոյնը կամ նմանը.

Մի՛ մնացէք անդ և մի՛ մի քար: Նա որ ընդդէմ մի՛ դարձցի մի՛ իւիք սաստիւք արքունի: Մի՛ դու, արքայ, և մի՛ զայդ այլ առ մեզ ասեր:

Յետոյ ապա հեղձոյց: Յորժամ մինչդեռ նա կա-միցի: Նա յայտ եղև աւադիկ:

Դարձեալ միւսանգամ զքոյն հրաման անդրէն եղծանես:

Ի գերութեան մերում՝ ուր ցրուեցեր զմեզ այսր:

Որ էին անդ ծառք։ Ի տեղիդ՝ ուստի գերեցի զձեզ այտի։

Յամենայն տեղւոջ՝ ուր և երթայցես անդր։

Իբրև զկաւդ 'ի ձեռս բրտիդ, այդպէս էք 'ի ձեռս իմ։

Օրն տեառն իբրև զգող գիշերի՝ այնպէս հասանէ։

Ըստ բազմութեան խրեանց նոյնպէս և մեղան ինձ։

554. Ոչ մակբայը շատ անգամ կը կրկնուի։ Մէկը բայէն առաջ մէկը ետքը՝ սովորական է ու շատ տեղ պէտք. իսկ երկուքն ալ բայէն առաջ՝ ան ալ շատ տեղ կ'ըլլայ.

Ոչ էր նոցա ոչ ել և ոչ մուտ և ոչ գին և ոչ վաճառ։

Ոչ ումեք պատմեցին և ոչինչ յորոց տեսին։

Ոչ ետ նմա պատասխանի և ոչ բան մի։

Չնախանձի և ոչ ընդ ումեք երբէք։

Նաև ոչ մի 'ի նոցանէն ոչ եղծանէին։ Նաև ոչ 'ի միում ոչ վայելեցեր։

Ոչ ումեք ոչ երևէին, բայց միայն Հրէիցն։ Նա և ոչ զմի ոք ոչ գիտեմ։

Այնպիսին հպարտացեալ է և ոչինչ ոչ գիտէ։

Ոչինչ ոչ կարացէ քեզ մեղանչել։

Թուի ինձ թէ և ոչ նոցա չգոյր։ Որում և ոչ հրեշտակք չէին բաւական։

Ոչ պոռնիկք, ոչ կռապաշտք, .. և ոչ յափշտակօղք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն։

555. Միանգամ, գամ մի մակբայները՝ որ, որ ինչ բառերէն ետև աւելորդ կը դրուին՝ սաստկութիւն կամ ընդարձակութիւն մը նշանակելու.

Որ միանգամ յայսպիսի մանկտւոյ ընկալցի։

Զորս միանգամ գտանիցէք։ Որ ինչ միանգամ օրէնքն ասեն։

Որ գամ մի յիմում իշխանութեանս է։ Որ ինչ գամ մի անցք անցին ընդ մեզ։

556. Շաղկապներէն ալ առանց հարկի կը դրուի շատ տեղ՝ բան բանի ետեւէ կլոր կամ շուտ հասկցնելու համար.

Ի միջոյն և 'ի խոնարհ. 'ի միջոյն և 'ի վեր. 'ի քամանամէնից և 'ի վեր. յերկեմենից և 'ի խոնարհ. 'ի քէն և այսր. 'ի քէն և անդր:

Խղեցի քեզ որպէս և կամիս: Զոր ինչ ուրուք և առեալ իցէ:

Որով ուխք և յաղթիցի ոք, նորին և ծառայ է:

Ի յընթանալս խմում և կասխմ: Ընդ ճանաչելն և անծանօթացաք:

Ընդ հրամանին և առնէին: Փութացեալ և մերձեցաւ յիս:

557. Ուրիշ շաղկապներէն ալ մէկ քանին, ինչպէս թէ, եթէ, զի, սակայն, ևն, զանազան կերպով աւելորդ կը դրուին, որ վերցնես ալ նէ՝ բանը ինչ է նէ ան կը նշանակէ.

Յորժամ եթէ տանիցի զքեզ: Անձն որ եթէ վրիպեսցի և մեղիցէ:

Ոչ թէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր, և ոչ բազուկ նոցա թէ փրկեաց զնոսա:

Չէ ինչ 'ի ծածուկ որ թէ ոչ յայտնեսցի: Վասն արդարոյ հազիւ ոք թէ մեռանիցի:

Որ 'ի հանդստեան էն՝ դուն ուրեք թէ յիշեն զԱստուած:

Աղաչէր թէ զմեկնեալն 'ի նոցանէ մի առնուլ ընդ ինքեանս:

Բայց ես ասեմ ձեզ թէ մի կալ հակառակ չարին:

Ասացէք. Ոչ այդպէս, այլ զի կացուսցես 'ի վերայ մեր թագաւոր:

Յանդիմանեաց զԱսա, թէ զի ոչ յԱստուած՝ այլ 'ի մարդ յուսացար:

Խորհէին ընդ միմեանս և ասէին, թէ զի հացս ոչ ունիմք:

Ոչ միայն զի աստուած չէ, այլ և կենդանի չէ։
Թէ չէ ակնառու Աստուած, որպէս զի և չէ իսկ։
Արձակեաց ... բազում պատուիրանաւ, զի զՅուդայ ինքնին 'ի գլխովին զեռամբ արկանել և ըզգունդն ամենայն յայսկոյս յայնկոյս ցրել. անդ կացուցանել զԱշխիմոս քահանայապետ։
Հրաման տուաք զի ... յիւրաքանչիւր տէր դարձուցանել։
Անդ էր ողորմ տեսիլ տեսանել, զի առ հասարակ անկեալ մարդկանն՝ զաղօթս թաւալելով յերկինս մատուցանել։
Մինչ զի ոչ լինել. մինչ զի ոչ ժամանել։
Որպէս զի 'ի լռութեան նստեալ լալ։
Թէ ասացից ձեզ, սակայն ոչ հաւատայք. և եթէ հարցից ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի։
Օր թէ կամէր, թէ չկամէր, սակայն կրեաց։
Գիտացի ես՝ զի սակայն և այս յօժարութիւն օգուտ է։
Չիք հնար, թէ կամիք և թէ ոչ կամիք, բայց թէ մտանեմ։

558. Գրոց մէջ՝ մակբայի ու շաղկապի ուրիշ վարպետ աւելադրութիւններ ալ կայ անորիշ ու անցեալ դերբայից հետ. հիմկու հիմայ այսչափս բաւական ըլլայ։

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ

559. Պակասութիւն է՝ բան մը օրէնքէ դուրս գրո-ղին մտքէն կամ ուրիշ կանոնի մը յարմար դնել։

560. Ըսանք, հայնով եղակի՝ բայց նշանակութիւ-նով շատուր ցուցնող անունները յոգնակի բայ կ'առնեն շատ անգամ, որ կերպ կերպ կ'ըլլայ, ինչպէս առջևի օրինակներէդ կը տեսնես.

Տիրեցին ազգն Սասանայ։ Յարեաւ այլ ազգ որ ոչ ճանաչէին զտէր։

Հարկանէին զունդն մակաբեան։ Ո՞վ են ժողո-վուրդս այս։

Ժողովուրդն ակն ունէր Զաքարիայ և զարմա-նային։

Բանակն Սաղիմաու էին 'ի ներքոյ նորա։

Ամենայն մարդ աչօք բացօք տեսանէին։

Ժողովեցան առ նոսա այր ամենայն որ ապստամբ լեալ էր յօրինաց անտի։

Այր զօրամբ ելանէին տիրել աշխարհին. — որ կը հասկըցուի այր իւրաքանչիւր, ամէն մէկը, ամէն մարդ։

Ահաս իմաստութիւն և հանճար և աստուած-պաշտութիւն. այս են գանձք արդարութեան. — ուր այս եղակի է, բայց առջի բառերը կը ցուցընէ (129)։

Բեղ լցին այդ. Այդ և 'ի մարդիկ երևին. — այս ինքն այդ նախասացեալ բաներդ։

Բերան անզգամաց պատմէն զչարիս . — շատ ան֊
զգամաց բերանը հարկաւ շատ է ։

Խորհուրդ մահկանացուաց զանգիտօղք են. — շա֊
տի խորհուրդը մէկ մը չէ ։

Ի բերանոյ նոցա ելանէն հրամանս մահու և կենաց.
— երկու տեսակ հրաման ու շատի բերնէն ։

Ջուր աղի և անոյշ զամանս ջրաւորացն լնուն . —
երկու տեսակ ջուրը երկու է ։

561. Երբոր եզակի անունի մը հետ՝ հոլովով մը կամ հոլովառու բառով կապուած անուն գտուի նէ, բայը սովորաբար եզակի դրուելուն՝ յոգնակի ալ կը դրուի .

Մակաբէ զօրօքն եկն ։ Մոգպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանէր ։

Երևեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, և խօսէին ընդ Յիսուսի ։

Յուդա Մակաբէ այնպէս գնդաւն, որ ընդ նմա էին, անցուցանէին զժամանակն ։

Ուր էին հասեալ բանակեալ Անտիոքոս ամենայն զօրօք իւրովք ։

Սամբակեանն՝ ի վերին իշխանացն բանակաւն իւ֊
րով ՝ի վայր անկեալ՝ մեզ պատերազմողք եղեն և սատանայ անուանեցան ։

562. Իսկական բային ուղղական խնդիրը յոգնակի որ ըլլայ նէ, բայն ալ յոգնակի կը դրուի շատ անգամ, թէ և անուն բային եզակի է .

Բարկութիւն հօր որդի անմիտ, և ցաւք են ծնա֊
նելեաց նորա . — այս ինքն անմիտ որդին ցաւ է ծնողացը ։

Ալիք՝ իմաստութիւն մարդոյ են . — այս ինքն ի֊
մաստութիւնն է ալիք ։

Ստաց բարբաջանք են աղանդն ։ Երկիրս երկինք եղեն ։

Փառք են առն խոտորել ՝ի հայհոյութեանց ։

Ոչ վայրապար ինչ իրք էին զփարէս յիշել ։

563. Այլ և այլ խնդիր առնող բայերն ու անուն-ները՝ մէկ խօսքի մէջ մէկ խնդիրը առնեն, մէկալը անանկ, ինչուք գոյականը առնեն՝ ածականը անանկ կ'առնեն նոյն մտքով.

Նախ չարչարանացն Քրիստոսի վկայէր, և յետ այնորիկ զփառացն:

Ոչ որչափ երկրաւորացս՝ ունիմք փոյթ յանձինս զառաքինութենէն:

Միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին 'ի տէրութիւնն Արտաշրի քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին:

Զանարժանիցն և զշաղախեալսն հեղգութեամբ կենաց զեկուցանէ:

Նորին ինքեամբ Քրիստոսի Աստուծոյ մերոյ զար-կուցեալ Հրեայքն (352, 353):

Մտաց աչաց իմաստնոց, և ոչ թէ զգալեաւ տե-սանելին:

Նա արդարքն՝ որոց ժամանեն առ նոսա գործք ամ-պարշտաց (540):

Զորմէ և մեռեալ ասեն զնա ընդ Շամիրամայ:

Որում և Արա անուանէին զնա:

Հաւատոյ պատմիչք լինին առաջին սքանչելեացն և արդարութեան նորա և զանիրաւ յանդգնու-թիւնս Հրէիցն (384):

Աշխատութեան կարօտ են և բազում ժամանա-կօք (387):

Թէ և յայսոցիկ անհանճարաբար շաղակրատա-նաց անպարտ ես, սակայն ոչ և այլովք:

Ի միում աւուրցն յայնցանէ (394, 395):

564. Բացայայտիչը անհամաձայն կը դրուի ուղղա-կան, հայցական, զայ նախդիրով բացառական, յատ-կացուցիչի պէս սեռական, կամ ուրիշ հոլով՝ որ բանին

յարմարի, թէ ըլլան թէ չըլլան հետը մեկնական բառերը այսինքն, այս է, ասեմ, իմա. ինչպէս,

565. Ուղղական.

Վաղվաղ լինէր առ Նոսա բազում զօրաց ախտացելոց, ազգ հզօր և պատերազմօղ. — կ'իմացուի՝ որ է ազգ հզօր։

Բռնալ ածելին զհարսն, դուստր միոյ ուրումն 'ի մեծամեծաց. — կ'իմացուի՝ որ էր դուստր միոյ ուրումն։

Ի չորից տարերցս յայսցանէ ոչ զմինն 'ի միւսոյն ստեղծ արարիչն, այս ինքն երկիր և ջուր, հուր և օդ։

566. Հայցական.

Երկու մասամբք տկար և զօրաւոր, զմարմին և զհոգին. — զօրութեամբ կը հասկըցուի, զմարմին ասեմ կամ իմա՝ և զհոգին։

Զերից ժամանակաց ունի զնախագիտութիւն, զանցեալն՝ զներկայս և զապառնին։

Զմենայն տնօրէնութեանցն Քրիստոսի, զմահն ասեմ և զթաղումն և զյարութիւնն։

Իբրև զքարինս էր ոսկի և արծաթ յերկրի մերում, զմաքրութիւնն իմա և զսրբութիւնն։

567. Զայ նախդիրով բացառական.

Զբարւոյն կողմն յԱրմզդէ գնեն, զարջառաց և զոչխարէ և զայլոց պիտանացուաց. — կ'իմացուի՝ զարջառաց ասեմ և զոչխարէ ևն։

Միաբան լինէր ամբաստանութիւն երկոցունց կողմանցն, զառաքինեաց և զյետս կացելոց. — կ'իմացուի՝ զառաքինեացն ասեմ և զյետս կացելոց։

Զայնպիսի օձ 'ի փորի ունիմք՝ որ ուտէ 'ի ներքոյ, զցասմանէն ասեմ։

Լերինքն յորս տապանն դադարեաց՝ վկայեն, ըզհայոց լերանցն ասեմ։

Անմիաբանեցան այլքն 'ի պատմագրաց, զԱփուստ սեմ, զՄագմանլիպէն և զՆաբուդենայ. — ուր մէկը հայցական, մէկալ երկուքը զայով բացառական:

568. Սեռական, յատկացուցիչի պէս.

Ի ժողովրդենէ քումմէ Իսրայէլի. — յԻսրայէլէ ըսելուն տեղը:

Զգետոյն Եփրատայ և զԻդկլաթաւ: Ի լեռնէ Սինի:

Ամբաստան լինէին զզօրավարքն Մուշեղի. — ըղ- Մուշեղէ ըսելու տեղը:

Ի Համանայ որ հաստատեալ կացեալս է 'ի վերայ իրացս այսոցիկ, և երկրորդի հօր մերոյ. — փո- խանակ ըսելու և յերկրորդէ հօրէ մերմէ, որ ըսել կ'ըլլայ՝ որ կացեալս է 'ի վերայ իրացս, որ և երկրորդ հայր մեր է:

569. Ուրիշ՝ բանին յարմար հոլով.

Այոց երկուց շնորհաց առ միմեանս եկեալ՝ կա- րէին ընդ կամեն. — վասն զի անցեալ դերբայն սեռական ալ կ'առնէ անուն բայի՝ ուղղական ալ:

Արձակեաց զաչս իւր զհետ հոմանեաց իւրոց, յա- տրեստանեայսն՝ յիշխանս և 'ի զօրագլուխս. — արձակեմ կ'առնէ խնդիր զհետ ալ, 'ի ալ:

Զոր ինչ արարէք ընդ երկուս Թագաւորսն ա- մովրհացւոց՝ ընդ Սեհոնի և ընդ Ովգայ. — ընդ նախդրիւ ու ընդ վերջահոլով տրականը նոյն են:

Յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ Բառնաբայ և ընդ Պաւղոսի:

Գլխոյն ամենայն բարութեանց՝ զհաւատոյն բուռն հարկանել. — վասն զի բուռն հարկանեմ տրական ալ կ'առնէ, զայով բացառական ալ:

Կոչի ևս յաւէտ ընտանի կոչմամբք, այս ինքն՝ հայր, վարդապետ, փեսայ, և այլ բազում. — վասն զի կոչեմ գործիական ալ կ'առնէ խնդիր՝ ուղղական ալ:

Կերակրել ՚ի բարութեանց երկրին այնմիկ՝ կաթամբ և մեղու, այս ինքն զտեսութիւնն աստուածային. — ներգործ բացառական ալ՝ գործիական ալ՝ հայցական ալ կ՚առնէ խնդիր։

Զորս և տեսողս ասէ մեծի լուսոյն, այս ինքն մարմնոյ աչօք զՔրիստոս. — վասն զի չէզոք սեռական ալ կ՚առնէ խնդիր՝ հայցական ալ (384)։

570. Եզակի ձայնով շատուոր նշանակող անունները, ինչպէս բայ (560), անանկ ալ յոգնակի ածական կ՚առնեն կամ գոյական։

Զօրն նորա անցեալք ՚ի հանդիսի։ Մեծամեծք ժողով մարդկան։

Երկոտասան այր տգէտք և տառապեալք, որք ՚ի նա էին յարեալ։

Սատակեսցի ամենայն մարդ դիմակացք Թագաւորի։

Յարս զօրուն եկելոց։ Ժողովրդեանն հնացելոց, գումարելոց։

Ամենայն ժողովրդեանն ելելոց։ Կրկին առակաւն այլովք։

Ամենայն ումեք մատուցելոց առ նա։

Առ ընդ իւր եօթն հարիւր այր սուսերաձիգս։

Զսպասն արծաթեղէնս։ Զամենայն սպաս ցանկալիս նոցա։

Հօտք և անդեայք բազում յոյժ։ Բոլորումն Հայոց։

Ի բոլորումն վայելչականս։

571. Անանկ ալ յոգնակի դերանուն կ՚առնեն շատ անգամ.

Եւ առ ժողովուրդն զհայսն իւրեանց մինչչև խմորեալ էր, և զզանգուածս իւրեանց ծրարեալ ՚ի կտաւս իւրեանց ՚ի վերայ ուսոց իւրեանց։

Արձակեաց զժողովուրդն ՚ի խորանս իւրեանց։

Զիս օծ տունս Յուդայ՝ իւրեանց 'ի թագաւոր ։

Փախեաւ զօրն 'ի բնակութիւնս իւրեանց ։

Որոշեաց զգունդն երթալ 'ի տեղի իւրեանց ։

Ժողովուրդ քո այդ որ բնակեալ է 'ի լեռնակողմանդ, եթէ ոչ էր ապստամբեալ դոցա յինէն, ոչ էր իմ առեալ զնիզակ իմ 'ի վերայ դոցա ․ այլ դոքա ինքեանք արարին անձանց իւրեանց զայս ։

Եթէ ոք 'ի կարի մերձաւորաց իցէ, զնոյն անցս և ընդ նոսա անցուցից ․ — ուր եթէ ոք մէկ մը միայն չինշանակեր, հապա որչափ որ ըլլայ նէ ։

Արդ երանեցից ժողովրդեան որոց այս այսպէս է ։

Առ ազգ այնպիսի՝ որք դատաւորաց եկեղեցւոյ նստին դատաւորք ։

Ըստ նմանութեան զարուն՝ որ ելեալ էին յերկրէն եգիպտացւոց ։

Զդասուն զայնոսիկ որք անկան ։ Ամենայնի որք ընտրեն հնազանդել ։

Յամենայն եղբօրէ որ ստահակին զնայցեն ։

572․ Ուրաքանչիւր բառին եւս սովորաբար բային դէմքին համեմատ դրուելու են դոյական ու ածական դերանունները քո, մեր, ձեր, իւր եզակի և յոգնակի ․ ինչպէս,

Զաւեա այր իւրաքանչիւր 'ի բնակութիւն քո, Իսրայէլ ։

Իւրաքանչիւր ոք երթայք 'ի տեղիս մեր ։

Նստարուք իւրաքանչիւր 'ի տունս ձեր ։

Առէ կամ առէն իւրաքանչիւր զեղբայր իւր ։

Դարձան իւրաքանչիւր 'ի Ճանապարհաց իւրեանց ։

Բարձէք անտի իւրաքանչիւր ոք քար մի 'ի վերայ ուսոց ձերոց ։

Ի դառնալ ձեր իւրաքանչիւր 'ի չարեաց ձերոց ։

Բայց շատ անգամ առջի ու երկրորդ դէմքի բայերուն՝ եզակի երրորդ դէմք կը դրուին ատ դերանունները ․

Իւրաքանչիւր ըստ երազոյ իւրում մեկնեաց:
Գնացին իւրաքանչիւր յերկիր իւր:
Դարձցուք առ իւրաքանչիւր ժողովուրդ մեր և յիւրաքանչիւր աշխարհ իւր:
Ասացէք իւրաքանչիւր ցընկեր իւր և իւրաքանչիւր ցեղբայր իւր:
Գնաց ճեպեալ էր յիւրաքանչիւր տուն իւր:
Դիք իւրաքանչիւր զսուր իւր յազդեր իւրում և կոտորեցէք իւրաքանչիւր զընկեր իւր: Ազդեցուցէք իւրաքանչիւր զանձն իւր:
Իւրաքանչիւր յընկերէ իւրմէ զգուշ լերուք, և յեղբարս ձեր մի յուսայք:
Օ իւրաքանչիւր ոք ըստ ճանապարհաց իւրոց (կամ ձերոց) դառնեցայց չէք:
Տամ ձեզ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց:

573. Ասոր պատճառն ան է որ իւրաքանչիւրը եզակի ալ է յոգնակի ալ (108, 109), ու զատ առնուելով՝ ամէն դէմք կը նշանակէ: Աս պատճառաւ յոգնակի բայի հետ եզակի ալ կը դրուի շատ տեղ երրորդ դէմքի գոյական կամ ածական դերանունը իւր. Ասէին իւրաքանչիւր ցեղբայր իւր. Ածին ընդ մէջ այր իւրաքանչիւր զսուր իւր. Գնացին այր իւրաքանչիւր ՚ի տեղի իւր. Իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում ժողովեցին. Խնդրեսցեն իւրաքանչիւր ոք յընկերէ իւրմէ:

574. Բարդ ու ածանցեալ անուններուն մէջի եղած գոյականին՝ յատկացուցիչ, ածական ու դերանուն կը դրուի.
Ընկերք մարդկեղէն մարմնոյ. — որ ըսել է կերողք զաղխ մարմնոյ:
Արտադէս ամենայնի կամ ամենեցուն. — գլխող զխրտ ամենայնի:
Կամակատար հօր, կամարար հօր. — կատարող, արարող զկամս հօր:

Զամենայն չարեացապարտ Մենեղաւոս արժակել. — այս ինքն զպարտ, զպարտական ամենայն չարեաց:

Ըստ հրեշտակականն Թափուր տեղի ստորանկելոց. — որ ըսել է՝ առ Թափուր տեղի հրեշտակաց ստորանկելոց:

Պսակ աստեղեայ յերկոտասանից. — այս ինքն յաստեղաց երկոտասանից:

Յաստուածային սիրոյն յաղթելով, այն որ հրամայէն սիրել. — որ գրողին մտքին նայելով՝ ըսել է 'ի սիրոյն Աստուծոյ, այն որ հրամայէ:

575. Ու յարաբերականին յարաբերեալը շատ անգամ ինչ հոլով որ պիտի դրուի նէ ան չդրուիր, հապա կամ ուղղական կրնայ կամ յարաբերականին համաձայն կը դրուի. ու շատ տեղ իրեն բուն դրուելու հոլովը ան դէմքին դերանունը կ'աւելցուի: Աս ոճը աշխարհաբառերնուս մէջ ալ կը գտուի. ինչպէս,

576. Յարաբերեալ ուղղական կեցած.

Եւ բորոտ՝ յորում իցէ արած, հանդերձ նորա քակեալ լիցի. — փոխանակ ըսելու բորոտի հանդերձն. ու սեռականին տեղը աւելցած է նորա:

Եւ տուն՝ զոր յանդիմանեսցէ տէր, մատուսջիք ըստ արանց. — փոխանակ՝ զտուն:

Իսկ տկարք՝ որոց պէտք ինչ էին, ո՞չ արդեօք երբէք վճարեցի. — փոխանակ՝ տկարաց ո՞չ վճարեցի:

Բանն՝ զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ. — փոխանակ՝ զբանն:

Ամենայն այր՝ որոյ էր դատ գալ առ արքայ 'ի դատաստան, բարբառէր առ նա Աբեսողոմ և ասէր. — փոխանակ՝ առ ամենայն այր:

Պսակդ ոսկի և զօրհնութիւնդ զոր ետուք բերել մեզ, ընկալաք. — փոխանակ՝ զպսակդ ոսկի:

Գուբն զոր փորեաց և պեղեաց, 'ի նոյն անկցի 'ի

խորխորատ զոր և գործեաց. — փոխանակ՝ 'ի գուբն, որում տեղ աւելցած է 'ի նոյն խորխորատ:

Նոյն ինքն տէր Քրիստոս միածին որդին Աստուծոյ, վասն որոյ նա խրոխտացեալ է 'ի մարտս, սատակեսցի 'ի նմանէն. — փոխանակ՝ 'ի նոյն ինքն 'ի տեառնէ Քրիստոսէ միածին որդւոյն Աստուծոյ սատակեսցի:

Քրիստոսի, այն որոյ տէրութիւնն յաւիտենից է. — փոխանակ՝ այնր:

Արարչէն ամենայնի, այն որոյ բանիւ երկինք հաստատեցան. — փոխանակ՝ զայնմանէ:

577. Յարաբերեալ յարաբերականին համաձայնած.

Ամենայն այր կամ կին որ մտանիցէ առ արքայ, չիք փրկութիւն. — փոխանակ՝ ամենայն առն կամ կնոջ չիք փրկութիւն:

Այր այն Մովսէս որ եհան զմեզ յԵգիպտոսէ՝ ոչ գիտեմք զի եղև նմա. — փոխանակ՝ առն այնմիկ Մովսիսի. ու ատ տրականին տեղը աւելցած է նմա:

Դու որ մարզպանդ ես աշխարհիս, պարտ է քեզ հոգ յանձին ունել. — փոխանակ՝ քեզ որ մարզպանդ ես:

Թագաւոր որ ունկնդիր է բանից անիրաւութեան, ամենեքեան որ ընդ նովաւ են՝ անօրէնք են. — փոխանակ՝ ամենեքեան որ են ընդ թագաւորաւ որ եւն:

Ամենայն մարդիկ որ ըմպեն զնա՝ յիմարեցուցանէ զմիտսն. — փոխանակ՝ մարդկան:

Վկայեալ յամենայն բնակչաց որ 'ի Դամասկոս Հրէայքն էին. — փոխանակ՝ յամենայն բնակչաց Հրէից որ 'ի Դամասկոս էին:

Դուք որ թողէք զիս, ես մատնեցից զձեզ 'ի սուր. — փոխանակ՝ զձեզ որ:

Ընդոծինք և արծաթագինք որ էին յազգաց օտարաց,

Թլփատեաց զնոսա. — փոխանակ՝ զընտրելս և զարծաթագինս ։

Որ շուրջ զնովաւ քաղաքքն էին՝ առնոյր յաւարի. — փոխանակ՝ զքաղաքսն որ ։

Ամենայնս որոց սպանեալ իցէ և մերձեալ 'ի վիրաւոր՝ սրբեսցի. — փոխանակ՝ ամենայն ։

Ամենայնս որոց ոչ իցեն թեւք և թեփ, պիղծ իցէ ձեզ այն. — փոխանակ՝ ամենայն ։

Զորոյ ես զգլուխն հատի զՅովհաննու՝ սա է. — փոխանակ՝ սա է Յովհաննէս զորոյ ։

Ամենայնս որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նըմանէ. — փոխանակ՝ յամենայնէ ։

Ամենայն ուրուք՝ որոյ իցէ 'ի տան իւր կին այլազգի, երթեալ պահանջեսցեն 'ի նմանէ ժամանակս. — փոխանակ՝ յամենայն ումեքէ ։

Ամենայնս որոց իցեն թեւք և թեփ՝ ուտիցէք, նոյն զայնս ուտիցէք. — փոխանակ՝ զամենայն որոց իցեն ։

Զամենայնս զորմէ ասացից թէ դա մի երթիցէ ընդ քեզ, նա մի երթիցէ. — փոխանակ՝ ամենայն զորմէ ասացից ։

Զամենայն ինչ զոր խօսիցի՝ լինելով լինի. — փոխանակ՝ ամենայն ինչ ։

Զբանն զոր խօսեցար՝ հաւատարիմ լիցի. — փոխանակ՝ բանն ։

Յերկիրն յոր հասեր՝ քեզ լիցի 'ի ժառանգութիւն. — փոխանակ՝ երկիրն ։

Անդ երկիրն ընդ որ մեք անցաք լրտեսել զնա՝ երկիր մարդածախ է բնակչաց իւրոց, և զամենայն ժողովուրդն զոր տեսաք 'ի նմա՝ արք յաղթահասակք են. — փոխանակ՝ երկիրն, ամենայն ազգն ։

Զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից 'ի նմանէ. — փոխանակ՝ յամենայնէ ։

Իսկ եղեն որդիք Յովսեփայ զորս ծնաւ նմա Ասա-

նէթ զՄանասէ և զԵփրեմ. — փոխանակ՝ Մանասէ և Եփրեմ զորս ծնաւ ։

Ի մահիճս յոր ելեր՝ ոչ իջցես անտի. — փոխանակ՝ 'ի մահճացդ ։

Յամենայն տեղիս յոր կամ ուր հասանիցեն գնացք ոտից ձերոց, ձեզ տաց զնա կամ զնոսա. — փոխանակ՝ զամենայն տեղիս ։

Դատաստանացն Աստուծոյ, այն որ չափով և կշռով բաժանէ. — փոխանակ՝ այնր որ ։

Ամբաստան լինի զքաղցր տեառնէն, այն որ ոչ ունի արդարացուցանել զնա. — փոխանակ՝ զայնմանէ որ ոչ ունի ։

Ոչ Թողաւ նոցա բնակել 'ի վերայ երկրի, այնուհետև որք անարգեցին զբնակիչս բարձանց. — փոխանակ՝ այնոցիկ որք անարգեցին ։

578. Շատ հեղ ալ յարաբերականը ինչ հոլով որ պիտի դրուի նէ՝ ան չդրուիր, յարաբերեալին հոլովը կ'առնէ. ու շատ տեղ իր դրուելու հոլովով ան դէմքին դերանունը կ'աւելցուի, որ աշխարհաբառերնուս մէջ ալ կայ. նոյն ատեն երբեմն յարաբերեալն ալ ետև դրուելով՝ յարաբերեալին հոլովը կ'առնէ, որ իրարու հոլովը առած կ'ըլլան. ինչպէս,

579. Յարաբերական յարաբերեալին հոլովը առած.

Չիք ազգ որ ոչ իցեն իրաւունք 'ի դատաւորաց. — փոխանակ՝ որոյ, որում ։

Որդի Աստուծոյ կենդանւոյ, որ տկարանայ առ 'ի ջէն և ոչինչ. — փոխանակ՝ յորմէ ։

Ի վերայ սեղանոյ ողջակիզացն որոյ նոր արարին. — փոխանակ՝ զոր ։

Ջնջեա 'ի դպրութենէն յորմէ գրեցերն. — փոխանակ՝ յորում գրեցերն ։

Յօրէ յայնմանէ յորմէ գերեաց. Յօրէ յորմէ եհան. Յօրէ յորմէ լուաք. — փոխանակ՝ յորում ։

Հատուցէ զաւանդն զոր աւանդեցաւ նմա. — փոխանակ՝ որ աւանդեցաւ։

Ի սմա են սողունք որ ոչ գոյ թիւ. — փոխանակ՝ որոց ոչ գոյ։

Ամենեցուն որոց էք ՚ի Հռովմ սիրելեաց Աստուծոյ. — փոխանակ՝ որք էք։

Նուագարանօքն որովք արարին՝ օրհնել զտէր. — փոխանակ՝ զորս արարին։

Զինչ հրամայեցաւ առնել յայնցանէ յորոց հաստատեցին զսա. — փոխանակ՝ յայնցանէ որք հաստատեցին։

Յաւուրցն յորոց կարգեցի դատաւորս. — փոխանակ՝ յորս կարգեցի։

Պատմեաց զամենայն պատգամսն զոր առաքեաց զնա տէր. — փոխանակ՝ որովք, յորս առաքեաց։

Գթացաւ ՚ի նոսա այն որ ոչ երբէք պակասեցաւ գութ նորա. — փոխանակ՝ որոյ գութն։

Այն որ Մովսէս և Եղիա երբև զծառայս եկեալ կային առ նմա. — փոխանակ՝ առ որում կային։

Ե՞րբ ուսանիցէք զբազմաթիւ անուանս աստուածոցն նոցա, այն որ չէք ուրեք ՚ի միջի և ոչ մի. — փոխանակ՝ այն աստուածոց որոց կամ յորոց չէք և ոչ մի։

580. Յարաբերական ու յարաբերեալ մէկմէկու հոլովը առած.

Մարգարէանայ զոր առ յապա անցք ընդ Սաւուղ անցանելոց էին. — փոխանակ՝ զանցս որ առ յապա անցանելոց էին։

Որոց առ գերութեամբն Մարգարէք՝ առաջին է սա. — փոխանակ՝ մարգարէից որք առ գերութեամբն։

Ապստամբութիւն ուսուցանես ՚ի Մովսիսէ որոց ՚ի հեթանոսս ամենայն Հրէայք են. — փոխանակ՝ ամենայն Հրէից որք ՚ի հեթանոսս են։

Մարգարէքն, որք վասն որոյ ՚ի ձեզ լինելոց էին

շնորհք՝ մարգարէանային. — փոխանակ՝ վասն շնորհաց որք 'ի ձեզ լինելոց էին ։

Ոչ ելի յԵրուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս Առաքեալքն էին. — փոխանակ՝ առ Առաքեալսն որ էին ։

Ցուցանելով զոր 'ի խոնարհութենէն օգուտն. — փոխանակ՝ զօգուտն որ ։

Զոր վասն Կռոնոսի և Աբրահամեան պատմութեանք իցեն՝ ամաչեմ ասել. — փոխանակ՝ զպատմութիւնս որք վասն Կռոնոսի են ։

Յոր նախ բանիցդ՝ յայսմարի յաջորդս. — փոխանակ՝ 'ի բանսդ որ նախ ։

581. Երբեմն ալ յարաբերականը ետեւի բային հայցական խնդիրին կը համաձայնի կամ ուրիշ խնդիրին ալ.

Ըստ ամենայն բանի զոր առաքեսցէ զքեզ տէր Աստուած քո առ մեզ, այնպէս արասցուք. — փոխանակ՝ ըստ որում կամ որով առաքեսցէ զքեզ ։

Բազմադիմի շնորհս բաշխեաց ամենեցուն, զոր և մեծ իսկ քան զամենայն՝ զսէր սուրբ յաննենգ մտաց գիտեմք. — փոխանակ՝ յորս կամ յորոց մեծ գիտեմք զսէր ։

Հանին զնա 'ի խաչ յայն տեղին, զոր ետես Աբրահամ զխոյն կախեալ զծառոյն սաբեկայ զեղջերացն. — փոխանակ՝ յոր կամ յորում ետես զխոյն ։

Տեսեալ զՅովհաննէս յայնպիսի վարս, զոր ոչ բնաւ զայլ ոք տեսին 'ի մարդկանէ. — փոխանակ՝ յոր կամ յորում ոչ տեսին զայլ ոք ։

Զոր սերովբէքն ծածկէին զդէմս յահէ փառաց աստուածութեանդ. — փոխանակ՝ յորմէ ծածկէին կամ յորոյ ահէ փառաց ծածկէին զդէմս ։

Բայց 'ի քաղաքաց ազգացն այնոցիկ՝ զոր տէր Աստուած քո տացէ քեզ զերկիր նոցա. — փոխանակ՝ զորոց զերկիրն ։

Վասն որդւոյն Կարապետին, զոր ոչ ոք 'ի մարդկանէ եղև նման նմա և կամ կրեաց զվրս նորա. — փոխանակ՝ որում ոչ ոք եղև նման և զորոյ վարս ոչ կրեաց:

Մի՛ երկնչիք յերեսաց արքային Բաբելացւոց, յորմէ զարհուրեալ էիք յերեսաց նորա. — փոխանակ՝ որոյ յերեսացն զարհուրեալ էիք:

Յոր վեցթևեան սրովբէքն ոչ իշխէին հայել 'ի փառս .քո. — փոխանակ՝ որոյ 'ի փառսդ:

Տես և 619:

582. Ինչպէս բային ու անուններն համար ըսինք (563), անանկ ալ զանազան հոլով առնող նախդիրներն ու հոլովառու բառերը երբեմն այլևայլ հոլովը մէկտեղ կ'առնեն մէկ խօսքի մէջ, ինչուք բացայայտեալն կամ գոյականը մէկ հոլով ու բացայայտիչը կամ ածականը մէկալ հոլով.

Ամբաստան լինէին .քսութեամբ առ մեծ թագաւորն Պապայ. — փոխանակ ըսելու առ մեծ թագաւորին կամ Պապ:

Որ և առ իս ինքեան եցոյց յայտնապէս: Առ ծովեզերբ միում:

Առ բարձրաւանդակի միոջ բլրով քարագագաթնիւ:

Զի բանս արկցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ, և ընդ Արշակ:

Օրհնեցէք զտէր ընդ երկնայինս նմանեալ դասուց. — փոխանակ ըսելու ընդ երկնայնոցն դասուց կամ ընդ երկնայինս դասս:

Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ՝ արեամբ ներկելոցն:

Ընդ ո՞ր առաւել ոք սքանչասցի. ընդ հօրն, եթէ ընդ որդւոյն:

Ընդ գողութեան անուան և բամբասանօք արկանէ զմարդ:

Հանդերձ երանելեաւն Թաթլաւ տեառն Մա-նանդայ ։

583. Ինքն, որպէս հոլովառու բառերն ալ, միտքը նման նշանակելով, հայցականի տեղ տրական հոլով կ'առնեն երբեմն.

Ճանաչել զՃանապարհս իմ ցանկան իբրև ժողո-վրդեան՝ որոյ զարդարութիւն գործեալ իցէ. — այս ինքն նման ժողովրդեան, իբրև զժողո-վուրդ ։

Տեսի զարմացման տեսիլ, իջանել անօթ ինչ ի-բրև կտաւոյ մեծի. — այս ինքն նման կտաւոյ, իբրև զկտաւ մեծ ։

Ոչ որպէս հրաման տալոյ ասեմ։ Ոչ որպէս հրա-ման ինչ առելոյ ։

Ընտրեալք երկնաւոր Թագաւորին և Աստուծոյն՝ պատկառելիք և պաշտելիք գոն մարդկան, իբրու 'ի նմանէ ընտրելոց և առաքելոց. — այս ինքն իբրու 'ի նմանէ ընտրեալք և առաքեալք, նման ընտրելոց ևն ։

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

584. Փոխադրութիւն կամ փոխանակութիւն է՝ ուրիշ բանի մը տեղ ուրիշ բան մը դնել։ Այս ձեւիս մէջ տեղ տեղ բակառութիւն ալ կը խառնուի, որովհետեւ փոխադրութիւնն ալ ծածուկ մտքով մը կ՚ըլլայ։

585. Այսանկ, գոյական անունը շատ հեղ ածականի տեղ ածականն ալ գոյականի տեղ կը դրուի․ ինչպէս, Պողպատ ցանկութիւն, խաւար խորհուրդ, աղէկը բանք, դառէժ պատուհաս, մանուկ տղայ, գոգ տեղի, հուր կառք, չուան գօտի, չար հանդերձ, չար ժամանակ, չար հասակ, թօք ժամանակ։

Աստուածականն, աստուածայինն, ըսել է երբեմն Աստուած․ ջերմ, ցուրտ կամ ջերմք, ցուրտք, ջերմութիւն, ցրտութիւն․ բազմամբոխ, բազում ամբոխ․ միաբարբառ, մի բարբառ․ խառնաձայն, խառն կամ խառնակ ձայն։ Վասն հեշտի ընթերցողաց․ Ունել յընդարձակի․ Ի բազում ապահովի առնել զոք․ Յապահովս կամ յանհոգս լինել․ Դաւաճանս կրել․ Կենդանեաւ կամ կենդանեօք, առ կենդանեաւ, առ կենդանեօք, ըսել են վասն հեշտութեան, ունել յընդարձակութեան, յապահովութեան, յանհոգութեան, դաւաճանութիւն կրել, կենդանութեամբ, առ կենդանութեամբ։

586. Ինչպէս եմ բային (331), անանկ ալ ընեմ,

եղանիմ բայերուն երրորդ դէմքերուն հետ անցեալ դեր-բայն (288) սեռական անուն բայի կ'առնէ երբեմն.

Եթէ ուրուք յանկարծօրէն քար ձգեալ լինի 'ի ծառ, և պատահիցէ մարդոյ. — այս ինքն թէ որ քար ձգեալ լինի, քար ձգէ 'ի ծառ։

Անդ սպանեալ լինէր նոցա զՏիմոթէոս. — այս ինքն սպանեալ լինէին նոքա։

Զի լինէր արեգական ճառագայթիցն յաշխարհ սփռեալ. — այս ինքն չև սփռեալ լինէին ճառա-գայթքն։

Թերեհաւատից ևս բնակեալ եղիցի 'ի նմա. — այս ինքն թերեհաւատք ևս բնակեալ եղիցին, բնակեսցեն։

Իմ առ բարերարութեան իմոյ արձակեալ լիցի զքեզ. — այս ինքն ես արձակեալ լիցիմ, արձա-կեցից զքեզ։

587. Անցեալ դերբային անուն բային սեռական կը դրուի երբեմն՝ երբոր էական բայի առջի կամ երկրորդ դէմքին հետ կամ յոգնակի երրորդ դէմքին հետ ալ որ ըլլայ նէ.

Իմ 'ի մանկութենէ խմէ համակ 'ի ճակատու և 'ի կուխ ծոծեալ եմ։

Մինչև քո խօսեալ իցես։ Զեր արարեալ և կատարեալ իցէք զամենայն։

Աշխարհն այն՝ ուստի դոցա եկեալ էն։ Ո՜ր էին նոցա սրբեալ։

Որոյ որդւոց իւրեանց բարւոք վերակացու չէեալ իցեն։

Եւ գտեալ լինին Առաքելոցն 'ի նմանէն զպատիւ փառաց։

588. Այսանկ պարզ դիմաւոր բայի ալ կը դրուի սեռական անուն բայի դրոց մէջ. բայց զգուշանալու է։

589. Անորոշ ու անցեալ դերբային երբեմն հայցա-կան ալ կը դրուի անուն բային.

Վասն որոյ փրկիչն ասաց՝ խնդալ զՆուաքեալսն. — այս ինքն ասաց խնդալ Նուաքելոցն, զի խըն-դասցեն:

Որով յայտ է 'ի կարի կարեւորացն զսա գոլ. — փոխանակ սմա գոլ, թէ սա է:

Զամենայն տեսակս բարեաց վերջին լինել աս-տուածային սիրոյն՝ եւ 'ի տեառնէ աւետարանե-ցաւ. — այս ինքն թէ ամենայն տեսակք վերջին են:

Յաղագս 'ի չարն դիւրափոփոխ գոլոյ զբնութիւնս. — փոխանակ՝ բնութեանս:

Հայեր նա ուղիղ, ննջեցելոցն գեղեցիկ պահեալ զշնորհս պարգեւաց. — այս ինքն շնորհաց պա-հեալ, թէ շնորհք պահեալ են, պահին:

Որ թերին էր՝ խօսէր, զամենայն ինչ ընդունայն լեալ զառաջինսն. — այս ինքն ամենայն առաջ-նոցն, թէ ամենայն ինչ առաջինքն ընդունայն լեալ իցեն:

590. Երբեմն ալ անորոշ ու անցեալ դերբային ա-նուն բային խնդիրը պէս հայցական կամ բացառական կը դրուի, որոնց մէկուն մէկը հարկաւ անուն բայի պի-տի ըլլայ.

Պէտ եղեւ բառնալ բերել զնա 'ի զօրականացն. — այս ինքն բերել նմա 'ի զօրականացն կամ բե-րել զնա զօրականացն:

Յետ դարձին 'ի Բաբելոնէ եւ շինելոյ զտաճարն 'ի Զօրաբաբելէ. — այս ինքն յետ շինելոյ տա-ճարին 'ի Զօրաբաբելէ կամ շինելոյ Զօրաբա-բելի զտաճարն:

Յետ սպանանելոյն զնա 'ի նոցունց. — այս ինքն նորա 'ի նոցունց կամ զնա նոցա:

Գուցէ կարծիս ինչ տացէ թագաւորին, իբրու

գտաւ ինչ 'ի Նմանէ կամ 'ի Հրէից անտի զայլն վնասեալ. — այս ինքն ասնն վնասեալ 'ի Նմանէ կամ նորա կամ Հրէից զայլն վնասեալ:

Ահա շնորհեալ է քեզ յԱստուծոյ զամենեսեան. — այս ինքն շնորհեալ է Աստուծոյ զամենեսեան կամ շնորհեալ են յԱստուծոյ ամենեքեան:

Եթէ ոչ յԱստուծոյ էր տուեալ զիրաւունս յաղթութեանն. — այս ինքն Աստուծոյ էր տուեալ զիրաւունս կամ իրաւունքն էր տուեալ յԱստուծոյ:

Որ նախ էր զեկեղեցին շինեալ 'ի Գրիգորէ և զվկայարանսն. — այս ինքն եկեղեցին և վկայարանքն 'ի Գրիգորէ, կամ Գրիգորի զեկեղեցին և զվկայարանսն:

Այս բացառականիս պատճառն ան կ'երևնայ որ գործքին ընողը՝ կրաւորական բայի խնդիր կ'ըլլայ (317), ու աս խնդիրը բացառական ալ կ'ըլլայ սեռական ալ (352, 353). ուստի՝ գործքը ընողը սեռական դրուելուն տեղ անուն բայի պէս (331), բացառական ալ կը դրուի երբեմն խնդիրի պէս:

591. Բայց երբեմն անուն բային՝ անորիշ ու անցեալ դերբային քովի մէկ ուրիշ բային խնդիր ըլլալով հայցական կը դրուի.

Սա զիմաստութիւն՝ քոյր քեզ լինել. — այս ինքն ասա զիմաստութիւնն կամ զիմաստութենէ՝ թէ քոյր իցէ քեզ:

Կամեցաւ զիս՝ լինել թագաւոր. — այս ինքն զիս կամեցաւ զի եղէց:

Ոչ կամեցաւ Սեհոն զԻսրայէլ անցանել ընդ սահմանս իւր:

Կարծեցեալ զգլխն՝ հասանել նմա յօգնականութիւն:

Հաստատեաց 'ի լինել զամենայն. — այս ինքն հաստատեաց զամենայն զի լիցին:

Ուսուցանէ նեռն լինել զասացօղսն ոչ եկեալ մարմնով զՔրիստոս. — այս ինքն նեռն լինել ծանուցանէ զայնոսիկ որք ասեն զՔրիստոս մարմնով ոչ եկեալ։

Տեսանիցէք զերկինս բացեալ, և զհրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն և իջանիցեն. — այս ինքն երկինքը՝ բացուած պիտի տեսնէք։

Ետես բացեալ զդուրս բանտին, կարծէր փախուցեալ զկապեալսն։

Գտանէ թագաւորեալ զԱրտաշէս և ընդդիմացեալ նմա զեղբարս իւր. — ուր զԱրտաշէս, զեղբարս գտանէ բային խնդիր են։

592. Երբեմն դիմաւոր բային անուն բային ալ ուրիշ բայի խնդիր կը դրուի.

Տեսեալ զիս զոր ինչ արարի ՚ի վերայ անօրէնութեան նոցա. — փոխանակ ըսելու տեսեալ զոր ինչ արարի ես։

Որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն. — փոխանակ՝ կամի զի ամենայն մարդիկ կեցցեն։

Նա զերկիրս երկրաւորօքս և զերկինս երկնաւորօք ծանոյց նմա զի գործք ձեռաց նորա են. — փոխանակ՝ ծանոյց զի երկիր և երկինք գործք ձեռաց նորա են։

593. Յոգնակի անուն բայիին, մանաւանդ անեզականին, երրորդ դէմքի բայը շատ անգամ եզակի կը դրուի.

Ազդ եղև նմա բանք խորհրդին։ Այս բանք հաւատարիմ է և ճշմարիտ։

Ճանապարհք նորա առ մեւք է։ Յորում էր ամենայն չորքոտանիք և սողունք երկրի և թռչունք երկնից։ Ոչ էր գրեալ անուանք նոցա։ Ահք որ ՚ի քեն՝ ոչ ես իցէ։

Ոչ գոյր ձայն ոչ էր ընդ նոսա աստուածս օտարս

կամ օտարոտիս. — այս ինքն ոչ գոյին աստուածք օտարք, ոչ էին աստուածք օտարոտիք (59)։

Բազում սասանութիւնս և փլուզմունս տանց լինէր, այլ և մահուանս յոլովից մարդկան ՚ի վերայ հասանէր։

Հաճոյ թուեցաւ բանքն կամ իրքն։ Ել իրքն ՚ի վեր։

Իջցէ իբրև զցօղ պատգամք իմ։ Ամենայն զարդք նորա զերծաւ ՚ի նմանէ։

Անկաւ ՚ի նոցանէ յաւուր յայնմիկ վիրաւորք բազումք։

Սկսաւ մարդիկն բազմանալ։ Կեանք իմ ՚ի դժոխս մերձեցաւ։

Ընդէր տուեալ իցէ կեանս ցաւագնելոց ոգւովք. — այս ինքն կեանք (59)։

Ոչ եկեսցէ ՚ի վերայ մեր չարիք։ Ման էր եղև ընդ քեզ այդ անցք։

Երևեցան նմա սանդուղք լուսեղէնք, որ կանգնեալ էր։

594. Այլևայլ դէմքով անուն բայիներուն բայը կարգով առաջ եղող դէմքին դրուելու տեղը (338), երբեմն մօտ եղօղ դէմքին միայն համաձայն կը դրուի.

Դու և մեծամեծք քո, հարճք քո և կանայք ըմպէիք կամ ըմպէին նոքօք գինի։

Սաղին դու և որդիք քո ընդ քեզ անկցին։

Օ՛ւ մի թշնամեացն և նոքա և դուք։

Արա զկամս զորա և կեաց դու և մեք։

Ոչ դու և ոչ դա և ոչ որ զկնի ձեր գալոց է՝ զայն ՚ի մեզ ոչ կարէ տեսանել։

Այլ թէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի. — որ կը հասկցուի՝ թէ ով աւետարանեսցէ, մեք կամ հրեշտակ։

595. Անորոշ դերբայն՝ ապառնի կամ ստորադասական բայի տեղ ուղղական կամ նախդրիւ տրական դրուելուն տեղը (278, 281, 282), շատ անգամ սեռական կամ վերջահոլով տրական ալ կը դրուի. երբեմն սահմանական եղանակին տեղ ալ (279).

Ի գումարել ամենայն Իսրայէլի յանդիման լինելոյ առաջի տեառն. — փոխանակ՝ յանդիման լինել, առ 'ի յանդիման լինել, այս ինքն զի յանդիման լիցի:

Ի դարձուցանել զԹիկունս իւր գնալոյ 'ի Սամուէլէ. — փոխանակ՝ գնալ, առ 'ի գնալ, զի գնասցէ:

Մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի. — փոխանակ՝ տալ, առ 'ի տալ:

Մինչ 'ի մահ մարտնչէր՝ նախ զանձն ապրեցուցանելոյ:

Գունդս առ գունդս կազմեսցեն՝ հանելոյ զհէնս յաշխարհէ:

Օտարոտի իմն զիս Թուի պատմիչ լինելոյ. — փոխանակ՝ Թուի պատմիչ լինել, Թուի Թէ է, Թէ իցէ:

Զի մի 'ի վհատութիւն ինչ հոգին կարծիցի զայնպիսի իրս յուշ առնելոյ. — փոխանակ՝ յուշ առնել, զի մի կարծիցի Թէ յուշ առնէ կամ արար:

596. Երբեմն ալ գործիական կը դրուի նոյն երկումքով.

Սկիզբն արասցուք ձեզ պատմելով վասն արարչութեանցն. — փոխանակ՝ պատմելոյ, պատմել:

Ի վեր հայեցուցանելով զմիտս նորա՝ ուտելով 'ի պտղոյ ծառոյն. — փոխանակ՝ ուտելոյ, ուտել, զի կերիցէ:

Նիբք աչաց Թէպէտ և սրագոյն լինին զայլս տեսանելով, բայց զինքն անկարանայ նկատել. — փոխանակ՝ զայլս տեսանելոյ, 'ի տեսանել զայլս:

Նեան պատրողական նշանօքն խաբէ զմարդիկ՝

զինքն զօրով Քրիստոս . — փոխանակ՝ զինքն զօր,
թէ ինքն է ; ամ իցէ Քրիստոս ։

397. Նորին ու անցեալ դերբայն երբեմն իրենց անուն բայից պէս (328, 329) իրենք ալ սեռական կամ տրական կը դրուին.

Յապստամբելն նորա ՚ի Նաբուքոդոնոսորայ արքայէ և անցանելոյ զերդմամբքն . — փոխանակ՝ և յանցանել ։

Մինչդեռ պշուցեալ հայէին ընդ երկինս՝ երթալոյ նորա . — փոխանակ՝ յերթալ նորա ։

Իբրև ազդ եղև ինձ՝ նենգութեան յայրդ լինելոյ ՚ի նոցանէ . — փոխանակ՝ լինել նենգութեան ՚ի նոցանէ յայրդ ։

Նոքա ակն ունէին՝ նմա ուռչելոյ կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ . — փոխանակ՝ ուռնուլ նմա կամ անկանել և մեռանել ։

Սրբոյ քաղաքին ամենայն խաղաղութեամբ բնակելոյ, և օրինացն Ճշմարտութեան իբրև զի գեղեցիկ իմն պահելոյ, Սիմոն ոմն անուն առաջնորդէր տոհմին իւրոյ . — փոխանակ՝ սրբոյ քաղաքին բնակեալ՝ բնակելով, և օրինացն պահեալ՝ պահելով, որ ըսել է ՚ի բնակելն, ՚ի պահելն (283, 286)։

Ոնա ինքն յերկիր հոսեալ՝ շալակաւ շրջեցուցանէին, յայտնապէս Աստուծոյ զօրութեանցն երևեցելոյ . — փոխանակ՝ զօրութեանցն երևեալ, երևելով ։

Ի ժողովել բազում ժողովրդոց և ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն առ նա՝ ասէ առակաւ . — փոխանակ՝ և եկեալ նոցա, և ՚ի գալն նոցա առ նա ։

Դարձելոյ մեղաւորի՝ ամենայն հրեշտակաց ուրախութիւն բերէ . — փոխանակ՝ դարձեալ մեղաւորի, ՚ի դառնալ մեղաւորի ։

Իսկ նոցա խլացելոց և կուրացելոց ՚ի Ճշմարտութե-

նէն՝ նախանձէին. — փոխանակ՝ իսկ նոցա խլացեալ և կուրացեալ:

Առաւօտն եղելոյ՝ զսպանեալսն Թաղել հրամայեաց:
Հզօր մարտի եղելոյ՝ բազումք անկան. — փոխանակ՝ այգուն եղեալ, հզօր մարտի եղեալ:
Լուսոյ երեւեցելոյ՝ ոչ կայ մնայ խաւար. — փոխանակ՝ լուսոյ երեւեալ, յերեւել լուսոյ:

598. Նորին դերբայն շատ անգամ սեռականի տեղ ուղղական կը դրուի հոլովառու բառերուն քով.

Վասն ոչ կարել հայել. — այս ինքն վասն ոչ կարելոյն, վասն զի ոչ կարէին:
Վասն զուրբ քաղաքն հարթ յատակ և անմարդի կացուցանել. — այս ինքն վասն կացուցանելոյն:
Յաղագս արդարութեամբ կեալ. — այս ինքն յաղագս կելոյ:
Յետ զերկիւղն Աստուծոյ հայցել. — այս ինքն յետ հայցելոյ:
Զկնի մտանել արեւու. — ի զկնի մտանելոյ:
Առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել Թագաւոր. — այս ինքն առանց լինելոյ Թագաւոր:
Փոխանակ համառօտիւ ասել. — այս ինքն փոխանակ ասելոյ:

599. Երկու անորոշ դերբային ետքինը՝ շատ անգամ ուղղական կը դրուի, ու առջինը ինչ հոլով է նէ՝ ան կը հասկըցուի.

Մի իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին. — այս ինքն է՝ լինելով օրինակ:
Զօր ամենայն տեսանելով զայսպիսի պղծագործութիւն և լսել. — այս ինքն և լսելով:
Հրձիգ առնելով զգաւառս նոցա, քանդել զքաղաքս, ՚ի ծառայութիւն վարել զազգն և համաջինջ ՚ի միջոյ զօրինացն բառնալ զամբարիշտ սովորութիւն. — այս ինքն քանդելով, վարելով, բառնալով:

Եւ լինի այս 'ի բառնալոյ զմեղաց խաւարն և շնոր-հել ոգւոց լուսաւորութիւն . — այս ինքն և 'ի շնորհելոյ :

Ի ձեռն յարութեան, վերանալոյ ընդ երկինս և նստել ընդ աջմէ աստուածութեանդ . — այս ինքն վերանալոյ և նստելոյ :

Եւ ծիծառն (ազդմունք բնականք են) 'ի ձմերոյ երթալոյ, և խորդոյն՝ իմանալ յառաջագոյն ըղ-ձմերունս կարեւորս և վաղվաղ 'ի մարմանդ տե-ղիս փութալոյ :

600 . Անորոշ դերբայն շատ անգամ ուղղական կը դրուի գործիականի տեղ կամ անցեալ դերբայի տեղ .

Սոքա յանձն առին իբր ոչինչ կասկած կամ կար-ծիս 'ի մտի ունել . — այս ինքն 'ի մտի ունելով, 'ի մտի կալեալ :

Մոգէր և ապշեցուցանէր զազգն սամարացւոց՝ ասել զանձնէ թէ իցէ մեծ ոմն . — այս ինքն ա-սելով, ասացեալ :

Հրաժարեալ յեղբարց նաւէր յԱսորիս, փոքրել զգլուխ 'ի Կենքրեայ . — այս ինքն փոքրեալ, փոք-րելով :

Ի բաց թօթափել այսուհետև զամենայն չարու-թիւն, անխարդախ կաթինն փափաքեցէք . — այս ինքն թօթափեալ, թօթափելով :

Միշտ կարօտիմք Աստուծոյ՝ հաստատուն գոլ բնու-թիւն և դիւրաշարժ . — այս ինքն գոլով :

601 . Դադրիլ, ետ կենալ նշանակող բայերուն քով ուղղական բացառականի տեղ կը դրուի .

Ոչ դադարէ խօսել : Ոչ խոտորեցաւ առնել ուղ-ղութիւն :

Խորշէր զօրն մտանել 'ի քաղաքն : Զգոյշ լեր պատմել ինչ նմա :

Արգելուին զմեզ խօսել : Հռոմք 'ի բաց կացին ձեռնտու լինել քրիստոնէութեանն :

602. Իսկ հայցական խնդիր առնող բայերուն քով որ դրուի նէ, հայցականի տեղ ալ կը հասկցուի։

Երբեւ կատարեցին մատուցանել. — ըսել է կատարեցին զմատուցանելն։

Ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց վարկանէին. — ըսել է զծառայելն ազատութիւն վարկանէին։

Թողլին նոքա գալ կալ յաղօթս. — այս ինքն թողլին զգալ կալ յաղօթս։

Ուսո ինձ առնել. Կամեցաւ ելանել. Մոռացան առնուլ. եւն։

603. Ու երբեք ալ կատարեալ հայցական կը դրուի երբեմն անուան պէս (280).

Տէր իմ յամէ զգալ. — նոյն է թէ ըսուի յամէ գալ։

Լուաք զգորա խօսել բանս հայհոյութեան. — ըսել է լուաք խօսել զնա։

Կամիմ զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս ծնանել, տնարարս լինել։

Օ երագեն միայն խօսկացի։ Գոլքն անգէն կամին զընակիլն։

Օ հարկէն լիալ փութացիս։ Փութա զգալն։

Ձանձր յանձն զերթալն։

Լաւագոյն զմեռանելն կամին քան զմեռուցանելն։

Թէպէտ եւ կամի զտալն։

604. Շատ տեղ ալ ուղղական, եւ մանաւանդ գործիական կը դրուի անորոշ դերբան՝ ող բայածականի կամ անցեալ դերբայի մօքով. կամ թէ գործիական՝ ուղղականի տեղ, ըստ 278, 279.

Եթէ սուղ իցէ բանն, ինքու ոչ պարունակող զիմաստս եւ ոչ բաւականապէս տալ զցոյցս՝ պարսաւեալ լինի. — այս ինքն տուող չափ տուեալ զցոյցս։

Կուսան համեստ որպէս զօրինաւոր ոք, եւ ոչ ամե-

նեւին ունել անդուռն բերան նման այլոց կանանց. — այս ինքն ոչ ունող անդուռն բերան։

Ո՛ի քէն պատիւն անգիտողին և հաւասար գոլ անմտին. — այս ինքն գոյողին, եղելոյն։

Մեռանել քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենիս. — այս ինքն կոխողս, կոխեալս կամ կոխել զսահմանս։

Լսեն զԵրուանդայ ըստ հմայից դժնեայ գոլով ական հայեցուածով. — այս ինքն դժնեայ եղեալ կամ դժնեայ գոլ։

Յիշեցէք և զուխտ արեանցն 'ի դորա հոսելով ձեռաց. — այս ինքն հոսող, հոսեալ։

Տեսեր շուրջ զաստուածային սեղանովն պարելով զտղայն. — այս ինքն պարողս, պարեալս կամ տեսեր պարել։

Մի լցի փշովք հեղձեալ, այլ պտղաբերելով ըզպտուղ սիրոյ. — այս ինքն պտղաբերող, պտղաբերեալ։

Մանկունք բժշկաց զորս ճանաչեն ունելով զցաւս անբուժս՝ ոչ ձեռնարկեն առ այնպիսիսն. — այս ինքն զորս ճանաչեն ունողս կամ ունել զցաւս։

Ոմանց աներկիւղից 'ի մէնջ առ ձեզ հատուածելոց և զմերս աղարտելով կարգաւորութիւն. — այս ինքն և աղարտողաց զմեր կարգաւորութիւնս։

Չարախօսեն զմէնջ՝ խազմարարս կարգալով և խռովարարս և խանգարիչս օրինաց թագաւորաց և նորոգ աստուածպաշտութիւն քարոզելով. — այս ինքն քարոզողս։

605. Նորին դերբայն ուղղական, երբեմն ալ գործիական, առանց ուրիշ բայի տակ ըլլալու ալ (278, 279), գլխաւոր բայի տեղ կը դրուի, մանաւանդ սպառնիի ու հրամայականի.

Նայլ փոյթ յանձին կալեալ պահանջել զամենայն հարկս և զհասս, զի մի երբէք բազմասցին. —

այս ինքն պահանջեսջիք, կամ փոյթ յանձին կալջիք պահանջել (606)։

Զի մի լիցուք ցանկացօղք չարեաց՝ որպէս նոքայն ցանկացան, և մի կռապաշտք լինել՝ որպէս ոմանք 'ի նոցանէ. — զի և մի կռապաշտք լիցուք։

Ծառայք՝ հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ տերանց. — այս ինքն լերուք։

Մի բազում վարդապետս լինել, եղբարք իմ. — այս ինքն մի լինիջիք։

Այնքան առատանալ արտասուացն, մինչ զի լուանալ զոտս տեառն. — այս ինքն այնքան առատացան, մինչ զի լուանային կամ լուացին։

Բայց քանզի զհրաման կամ զհրամանաւ ինչ ոչ անցանել ըստ Թագաւորին, սպաս արար մարթանօք զհրամանն կատարել. — այս ինքն ոչ անցանէր։

Որ ճշմարիտ Աստուածն է, զամենայն ինչ զիւր՝ իշխանաւորութեամբ ունի, և զորդին իւր միշտ ընդ իւր ունել. — այս ինքն միշտ ընդ իւր ունի։

Եթէ կարծիցք յանցանաց էին դեւք, ոչ երբէք զմարդիկ 'ի կռապաշտութիւն յօժարեցուցանէին, . . ոչ ընդ աստեղս պշուցանել. — այս ինքն պշուցանէին։

Սակայն և 'ի նոցանէ՝ զոր ինչ հաւաստին կարծեմք՝ առնուլ. — այս ինքն առնումք կամ առցուք։

Եւ զիա՞րդ զակաւամեղն՝ ամենայնիւ ամպարշտելոցն մատնել 'ի սատակումն. — այս ինքն մատնէք կամ մատնիցեմք։

Որքան յայտնիկ ըստ բազմադիմի գործոցն՝ և անուանցն գոլ զանազանութիւնք. — այս ինքն գոն, են զանազանութիւնք։

Եւ այսպէս ուսուցանելով, մինչև մոռանալ լսողացն զամենայն իրս աշխարհականս. — այս ինքն ուսուցանէն։

Զայս ասելով, զի զայն վերագոյն քան զամենայն յարգարեցէ. — այս ինքն զայս ասէ կամ ասէր:
Տեսեալ զինքն մերկացեալ 'ի լուսեղէն զգեստուցն՝ սաղարթապատ լինելով ընդ տնկով դրախտին. — այս ինքն սաղարթապատ լինէր:

606. Նմանապէս անցեալ դերբայն, առանց ուրիշ բայի տակ ըլլալու ալ (284, 286), դիմաւոր բայի տեղ կը գրուի երբեմն.

Երբ գիտացին թէ այրն հրեայ է, միաբարբառ եղեալ յամենեցունց իբրև ժամս երկուս աղաղակել. — այս ինքն մի բարբառ եղև՝ աղաղակել, կամ մի բարբառ եղեալ աղաղակէին (605):
Յայնմ ժամանակի տագնապաւոյթ ստիպաւ դեսպանս արձակեալ, պատուիրակս հանեալ ընդ աշխարհ՝-զի ամենեքեան օժտաբեր ընծայատար լիցին. — այս ինքն արձակէին, հանէին, կամ արձակեցին, հանին:
Նա այնչափ յանդգնեալ, մինչև կանանց հրամայէ մկրտութիւն տալ. — այս ինքն այնչափ յանդգնի կամ յանդգնեցաւ:
Հաւանեալ ամենեցուն մեծամեծաց և փոքունց ազգ առնել ամենայն երկրին՝ զի հաճոյ թուեսցի. — այս ինքն հաւանէին, հաւանեցան ազգ առնել, կմ՝ հաւանեալ ազգ առնէին, ազգ արարին:
Յայսցանէ ընկալեալ համարձակութիւն ամենայն ոք՝ հայր իւր կոչել զԱստուած. — այս ինքն ընկալաւ համարձակութիւն կոչել, կամ ընկալեալ կոչէ:
Նա արդ եղեալ որոտումն յերկնից սաստիկ անհնարին, զի ահաբեկեալ զամենայն ամբոխն. — այս ինքն եղև որոտումն, ահաբեկեաց:
Ասացեալ 'ի հօրէ լինել լոյս, և անդէն եղեալ լոյսն համասփիւռ. — այս ինքն և անդէն եղև:
Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ

'ի քաղցելոյն, տաճիկ ուղտուք արձակէ 'ի Հայս տրս . — այս ինքն քանզի լուաւ :

Եւ սորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ, Թագաւորեալ ամ քառասուն և մի . — այս ինքն սա սիրելի եղև կամ Թագաւորեաց :

Եւ կիսոյն 'ի Նոյանէ զմեծն Սահակ խնդրեալ . — այս ինքն կէսքն խնդրէին, խնդրեցին :

Այն ինչ դադարեալ անձրևին, տօթ եղև . — այս ինքն այն ինչ, իբրև դադարեաց :

Եւ 'ի լինել աշնան՝ կոխան եղեալ մորենի . — այս ինքն կոխան եղև :

Եւ զպատճէն հրովարտակիս այսորիկ յառաջ հա-նեալ եդեալ և տարածեալ ամենայն զգուշու-թեամբ, եթէ Հրէից վարել զիւրեանց օրէնս . — այս ինքն հանեալ դիջիք և տարածեսջիք, վա-րել Հրէից զիւրեանց օրէնս (557) :

Հրամայէր նոյա լուանալ և սրբել, զի արժանա-ւորք լեալ աստուածատես փառացն տեսանելոյ . — այս ինքն զի արժանաւորք լինիցին :

Յօրինականն՝ որ եհարց զնա, թէ զինչ ինչ արա-րեալ՝ զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից . — այս ինքն զինչ ինչ արարից կամ առնիցեմ :

607 . Հայերէնի յատուկ եղած ոճ մըն է որ երրորդ դէմք մէկու մը վրայ բան մը պատմելու ատեն՝ բային և ուրիշ բառերուն դէմքը առջի դէմք կը փոխուի իբրև անոր բերնէն . ինչպէս,

Իբրև ետես՝ Թէ մեռանիմ, կոչեաց նա զծառայսն . — փոխանակ ըսելու՝ Թէ մեռանի :

Իբրև գիտաց՝ Թէ ոչ կարեմ ժոյժ ունել նմա, դար-ձաւ անդրէն . — փոխանակ՝ Թէ ոչ կարէ :

Ընեցին յաշտարակս ամրացեալս, գուցէ գայ-ցեն հեթանոսք և կոխան առնիցեն զմեզ . — փոխանակ ըսելու զնոսա :

Իբրև ետես Նիկանովր՝ եթէ յայտնեցաւ խորհուրդ. նմա, խաղաց պատահել նմա պատերազմաւ. — փոխանակ՝ խորհուրդն, խորհուրդ իւր։

Օտեր աղաչէին, մի 'ի ձեռս հայհոյիչ խուժադուժ հեթանոսաց մատնել զմեզ. — փոխանակ՝ զինքեանս, զնոսա։

Իսկ տիկինն Փառանձեմ իբրև ետես՝ եթէ միայն մնայ, եբաց զդուռն բերդին. — փոխանակ՝ մնաց։

Յանձն իւր տարաբերէր՝ թէ յո՞ ընկեցէ զդառնութիւն թինից. — փոխանակ՝ թափեսցէ։

Գրէր և ցուցանէր՝ որպէս զիւր օգնականութեամբ զգործ քաջութեան նոյ յառաջ մատուցեալ. — փոխանակ՝ իւրոյ։

Եթէ կիսոյ կէս 'ի մէնջ մեռանիցեմք, ոչ դիցեն 'ի վերայ մեր զսիրտ. — փոխանակ՝ մեռանիցի կամ մեռանիցեն։

608. Բայի մը դէմքի տեղ շատ անգամ էական բայը կը դրուի ու ան բային անորոշ դերբայն։ Էական բայը կամ եղակի երրորդ դէմք կ'ըլլայ տրական խնդիրով, կամ ամէն դէմք եղակի ու յոգնակի. ինչպէս,

609. Եղակի երրորդ դէմք՝ տրական խնդիրով.

Որ ինձ լինել այսօր յերկրի անծանօթում. — այս ինքն լինէի, գտանէի։

Որ երբեմն (նոցա) զհետ երամակաց ցռուց արշաւել. — այս ինքն արշաւէին։

Այն ինչ լինէր նոցա հասանել. — այս ինքն այն ինչ, իբրև հասանէին։

Ինձ լիցի պաշտել զԱստուած արարիչ. — այս ինքն ես պաշտեցից։

Կալ լիցի քեզ յուխտի մերում. — թէ կացցես դու։

610. Ամէն դէմք եղակի ու յոգնակի.

Քահանայքն էին մատուցանել զճարպսն. — այս ինքն մատուցանէին։

Իցես լինել 'ի հազարաւորս. — այս ինքն լիցիս, լինիցիս:

Լինին նոքա ասել. Այլ ոչ լինէին տեսանել զնա. — այս ինքն ասեն, ոչ տեսանէին:

Զի թողուլ զչարն և ընտրել զբարին լիցին. — այս ինքն զի թողցեն, ընտրեսցեն:

Յորժամ մտանելն լինիցիմք. — այս ինքն յորժամ մտանիցեմքն:

Եղեն խորհել զվաստակս. Եղիցուք չլինել զանձինս. — այս ինքն խորհեցան, չլինեսցուք:

Եղիցին ականջք քո լսել կամ 'ի լսել. Յայս լեր թևակոխել. — այս ինքն լուիցեն, թևակոխեա:

611. Կրաւորական բայերը երբեմն հասարակ բայի պէս հայցական խնդիր կ'առնեն ան անունը՝ որ անուն բայի պիտի ըլլար, ու ընութեան խնդիրներն անուն բայի կ'առնեն.

Զոր ինչ հրամայեսցարն՝ զայն զմտաւ ածջիր. — այս ինքն որ ինչ քեզն հրամայեցաւ:

Յիրաւի պահանջի ընդ որոց յանդգնեսցեն պատիժս. — այս ինքն պատիժք պահանջին 'ի նըմանէ:

Զարիւն որդւոյն զոր ծնաւ ոք՝ պահանջի, թէ երկիւղին Աստուծոյ ոչ մնուցանէ. — այս ինքն արիւնն պահանջի 'ի նմանէ:

Զուր եմն յԱստուծոյ և ոչ յայլմէ ումեքէ հարցանի (Ադամ). — այս ինքն ուր եմն հարցանի Ադամայ:

Ոչ հրեշտակք հաւատացան զկարգ քահանայութեանն. — այս ինքն ոչ հրեշտակաց հաւատացաւ կարգ քահանայութեանն:

Միձակեցաւ երևակն զաստղին և զվերագոյն գօտի. — այս ինքն աստղին և վերագոյն գօտին միձակեցաւ երևակքն:

Ո՛ սոյն 'ի Պաւղոսէ աղաչիմք. — այս ինքն սոյնս աղաչի՝ խնդրի 'ի մէնջ առ 'ի Պաւղոսէ։

Ո՛ մեծն յանձնեցար շահավաճառութիւն. — այս ինքն մեծ շահավաճառութիւնն յանձնեցաւ քեզ։

Ո՛ ինուորք աշխարհիս մերոյ զհայրենի տէրութիւնն 'ի բաց կողոպտեցան. — այս ինքն հայրենի տէրութիւնն կողոպտեցաւ 'ի զինուորաց մերոց։

612. Անորոշ դերբային, մանաւանդ սեռականին, հայցական խնդիրը շատ անգամ սեռական կը դրուի յատկացուցիչի պէս (383, 384)։

Վասն կնոջ առնելոյ քահանայի. — այս ինքն վասն կին առնելոյ։

Ետուն 'ի գործ արքունի՝ վարձ նաւաց գործելոյ. — այս ինքն նաւս գործելոյ։

Արար աւազանս մկրտութեան՝ կնքոյ տալոյ. — այս ինքն կնիք տալոյ։

Վասն թողութեան տալոյ մարդկան. — այս ինքն թողութիւն տալոյ։

Յետ աղօթիցն և այլոց ուղղութեանց յիշեցուցանելոյ. — այս ինքն յետ յիշեցուցանելոյ զաղօթսն և զայլ ուղղութիւնսն։

Ի ժամու մատուցանելոյ պատարագին. — այս ինքն մատուցանելոյ զպատարագն։

Որ դատելոյն և արդարացուցանելոյն ամենեցուն. — այս ինքն զամենեսեան։

Փորձելն՝ քննելն է անձին. — այս ինքն՝ է քննելն զանձն։

Աբրահամու պատարագէն Իսահակայ. — այս ինքն պատարագէն զԻսահակ։

Ինձ ոչ փոքր է հիանալ, վասն այսր՝ խնդրոյ ունել ձեզ. — այս ինքն խնդիր ունել ձեզ վասն այսր։

613. Լծական, կրաւորական ու չէզոք անցեալ դերբայն, մանաւանդ հոլովածին, ուղղական խնդրին ալ կը դրուի երբեմն համաձայն դերբայն կամ ան անունին որու որ կ'ըսուի նէ :

Աժդահակայ, Մարաց եղելոյ Թագաւորի. — այս ինքն եղելոյ Թագաւոր Մարաց :

Այնպիսեաց չարաց եղելոյն դատաստանն 'ի բնէ ոչ դատարկանայ. — այս ինքն այնպիսի չար եղելոյն :

Վասն որդւոյ իւրոյ, սահմանելոյ որդւոյն Աստուծոյ. — այս ինքն սահմանելոյն որդի Աստուծոյ :

Զոհս եւ յաճախեալ տուէք զկնի ձեր զմերձաւորացն անուանելոյ. — այս ինքն զանուանելոյն մերձաւոր, զայնոսիկ որ մերձաւորքն անուանին :

Ասացուք փոքր ինչ եւ վասն առաջաւորացն 'ի մէնջ անուանեալ պահոց. — այս ինքն վասն 'ի մէնջ առաջաւորք անուանեալ պահոց :

ՅԱրմենէն յայնմանէ կոչեցելոյ մինչեւ ցկողմանս պոնտացւոց. — այս ինքն յայնմանէ կոչեցելոյն Արմէն, յայնմանէ որ կոչէր Արմէն :

Զի եւ 'ի փոքունցն թուեցելոց մի ինչ արասցեն անտես. — այս ինքն 'ի թուեցելոյն փոքր, յայնցանէ որ փոքր թուին :

Վասն իշոյն՝ երեքօրէից կորուսելոյ. — այս ինքն երեքօրեայ կորուսելոյ, որ ըսել է յերից աւուրց հետէ :

614. Ուղղական ու նախդրիւ տրական խնդիրները (342, 363), շատ հեղ եզակին տեղ յոգնակի կը դրուին.

Մի՞թէ այրս աւազակաց եղեւ տունդ իմ: Մնոյ զնա իւր յորդեգիրս :

Զքեզ յորդեգիրս առնէր: Արձակեսցես զնա ազատ 'ի քէն :

Խոր տախտակամածս արասցես զնա ։

Ոչ միայն երանելիս չառնէ, այլ և եղկելիս՝ զայն որ զչար բանսն լսիցէ ։

Զտիւն գիշերս գործէ արբեցութիւնն ։

Զայրն՝ որում զգունդն յանձն արարին, զնոյն դեսպանս արձակեցին ։

Տգեղս ցուցեալ զիս ամենեւին ։ Զնա եդ գլուխ եկեղեցւոյ ։

Զքեզ միածնին իւրոյ հաղորդս և մարմնակիցս և ժառանգաւորս արար ։

Զպարզն առաջի զնէն իբրև դիւրահասս, վասն այնորիկ և օգտակարս ։

Ընդ արշալուրջսն․ ընդ առաւօտս․ ընդ այգս այգուն․ ընդ երեկս աւուրն ։

615․ Գործիական ու բացառական բառերուն յատկացուցիչը՝ շատ տեղ անոնց պէս գործիական ու բացառական կը դրուի․ ինչպէս,

616․ Գործիական յատկացուցիչ․

Հաստատեա զսիրտ քո պատառով միով հացիւ․ — այս ինքն պատառով միով հացի ։

Գնալ սրբութեամբ սրտիւ․ Միամտութեամբ սրտիւ խնդրել․ — այս ինքն սրտի ։

Սատակեցի զնոսա բանիւ բերանով իմով․ — այս ինքն բերանոյ իմոյ ։

Ընդ հովանեաւ աջովդ քով սրբով․ — այս ինքն աջոյդ քոյ սրբոյ ։

Խօսել բանիւք խաղաղութեամբ, բանիւք ողոքանօք, բանիւք սպառնալեօք․ — այս ինքն խաղաղութեան, ողոքանաց, սպառնալեաց ։

Արժանաւոր իւրովք մարգարէիւքն ձայնիւք․ — այս ինքն իւրոց մարգարէիցն ։

Զանօրէնութիւն մաքրեալ ինքեամբ մահուն․ — այս ինքն ինքեան մահուամբն ։

617. Բացառական յատկացուցիչ.

Աչ էր արբեալ նորա այնչափ յօրէ ծննդենէ իւրմէ. — այս ինքն ծննդեան իւրոյ:

Բառնալ յերեսաց երկրէ. Գնալ 'ի ծագաց երկրէ. — այս ինքն երկրի:

Յորդւոց մարդկանէ կամ յորդւոց 'ի մարդկանէ. — այս ինքն մարդկան:

Ի խորոց անդնդոց երկրէ. Ի պտղոյ որովայնէ քումմէ. — այս ինքն երկրի, որովայնի քոյ:

Ի չարախօսութենէ օտար լեզուէ. — այս ինքն օտար լեզուի:

Ի բերանոյ զաւակէ զաւակի քոյ. — այս ինքն զաւակի զաւակի քոյ:

Ի գլխոյ լերանցն առեալ. Անկեալ 'ի կնոջէ Թագաւորէն. — այս ինքն լերինն, Թագաւորին:

Ի տանէ կողմանէ. Յինէն կողմանէ. Ի մէնջ կուսէ. — այս ինքն 'ի տան կողմանէ, յիմ կողմանէ, 'ի մեր կուսէ:

Յամբոխէն բազմութենէ. Ի հօրէ յայտնութենէ. — այս ինքն ամբոխին, հօր:

Ի տէրունական խաչէն զօրութենէ. — տ՟ն խաչին:

Ի մարգարէէս գեղեցկապէս զերծանել կամաց. — այս ինքն մարգարէիս:

Ի կնոջէն քանանացւոյ մեծ զհաւատոյն ասէ. — այս ինքն զկնոջն քանանացւոյ:

618. Բայց յատկացուցիչը ածական որ ունենայ՝ անչհամաձայնիր երբեմն, երբեմն ալ ան միայն կը համաձայնի ու ոչ յատկացուցիչը.

Ընդ հովանեաւ աջոյդ քո սրբոյ. Հեղմամբ արեամբդ քո սրբոյ. Յաջոյ փրկչէն մերոյ և տեառն. — այս ինքն աջոյդ սրբոյ, արեանդ սրբոյ, փրկչին մերոյ:

Հեղմամբ արեան ձերոյ կամ իւրոյ. — այս ինքն արեան ձերոյ, իւրոյ:

Ի Ծոցէ մարդոյն արդարութենէ. — այս ինքն միոյ մարդոյն։

619. Երբեմն ուրիշ հոլովներու ալ կ՚ըլլայ որ կը համաձայնի յատկացուցիչը, կամ նախդրիւ հոլովի քով ուղղական կը դրուի, ու ետքը սեռական դերանուն մը կ՚աւելցուի.

Թեւք քերովբէից երկայնութիւն քսան կանգուն. — այս ինքն երկայնութիւն թեւոց։

Պատրաստեալ հուրն, մինչև ուրուք 'ի նա փըչեալ, վառումն Նորա յայտնի իմացաւ. — այս ինքն վառումն հրոյն, որուն տեղը աւելցած է Նորա։

Սուգ և մխիթարութիւն՝ անուանք Խորենոյ ընթանան յաշխարհի. — այս ինքն սգոյ և մխիթարութեան անուանքն։

Զերկիրն Հայոց այնուհետև եկեալ արքային Պարսից յիւր անուն զտեղիսն անուանէր. — այս ինքն զտեղիս երկրին Հայոց։

Նաև ոչ զյորովայնի զկեանսն կարէ ոք ասել զյօրինուածսն. — այս ինքն զյօրինուածս կենացն որ յորովայնի։

Ընդ հրեշտակին դասակցելով պարս. — այս ինքն ընդ հրեշտակացն պարս։

Սուրբ ուխտաւոր մանուկն՝ զինչ պիղծ մերձենայր 'ի ձեռս Նորա՝ սրբեալ լինէր. — այս ինքն 'ի ձեռս սուրբ ուխտաւոր մանկանն։

Յարաբերական յատկացուցիչին վրայ ալ շատ անգամ կ՚երեւնայ աս բանս, որով կ՚ըլլայ ըսածնիս 'ի 581։

620. Իսկ երբոր կ՚ըսենք Պատառ մի հաց կամ մագաղաթ, բաժակ մի ջուր, բեռն մի փայտ, ևն., չորս կերպ կրնայ իմացուիլ. մէյմը յատկացուցիչ ըստ 618, մէյմը ուղղական խնդիր ըստ 342, 381, 389, մէյմը գործիական խնդիր ըստ 371, մէյմ՚ալ ածական ըստ 585։

621. Երբեմն ալ յատկացուցիչը ու յատկացեալը կը փոխեն հոլովնին, մէկը մէկալին հոլովը կ'առնէ.

Ի չփոր բարբառոյ տալ նմա պատգամս. — փոխանակ ըսելու 'ի բարբառ չփորի:

Զփուշն խլել՝ զցանկութիւն բուսոյն հրամայէ. — փոխանակ՝ զբոյս ցանկութեանն:

Հանապազորդ արտասուօք աւազանին լուանալ. — փոխանակ՝ աւազանաւ արտասուացն:

Հատաւ օգնականութիւն յուսոյ նոցա. — փոխանակ՝ յոյս օգնականութեան:

Ի ժամանակի փախստենէն Շապհոյ. — փոխանակ՝ 'ի ժամանակէ փախստեանն:

Ի դրանէ մարդկանն նենգեալ. — փոխանակ՝ 'ի մարդկանէ դրանն:

Հասարակախառն ինչ բնութեամբ օրինաց. — փոխանակ՝ օրինօք բնութեան:

Ողջ լեր յարքունական տէրութեանդ պարագայց ամօք. — փոխանակ՝ պարագայիւք ամաց:

622. Գոյականին ածականը երբեմն սեռական կը դրուի յատկացուցիչի պէս.

Ոծցին իւղով 'ի մրրոյ պարզելոյ. — այս ինքն իւղով պարզելով 'ի մրրոյ:

Իմով արեամբ վասն ձեր հեղլոյ. — այս ինքն արեամբ հեղլով (297):

Ուռկանաւն արկելոյ 'ի ծով: Զննելի բնութեամբ մարդկայնոյ:

Մկրտեցար արեամբդ քո սրբոյ: Ծնողք սրբոյ աւազանաւն:

Հերձուածականին չարափառութեամբ. — այս ինքն հերձուածական չարափառութեամբն:

Յանուանեալ Թլփատութենէ անտի մարմնաւոր ձեռագործին. — այս ինքն յանուանեալ 'ի մարմնաւոր ձեռագործ Թլփատութենէ անտի:

Որդ զայս տուաք բան սակաւուց՝ ձեզ մխիթար տրտմեցելոց. — այս ինքն զայս բան սակաւ։

Ի մեղադրութենէ աստուածայնոցն և մարդկայնոցս արտաքս զլինքն որչեալ. — այս ինքն յաստուածային և մարդկային մեղադրութենէ կամ մեղադրութեանց։

Օ լեզու մարդկան . . . զլի թունոք մահաբերին. — այս ինքն թունոք մահաբերօք։

Իւրայովքն զօրօք բազմի վառելովք. — այս ինքն զօրօք բազմօք։

Փառաբանչօքն անմահից. — այս ինքն անմահ փառաբանչօքն։

Տարեւորականաց լցեալ զանազան պտղովք. — այս ինքն տարեւորական զանազան պտղովք։

Մեծաբանս մնոտեաց բարբառել. — այս ինքն մնոտի մեծաբանութիւնս, կամ ըստ 435։

Շինեցին 'ի պարիսպս ամուր՝ յաշտարակս հզօրաց. — այս ինքն յաշտարակս հզօրս։

Ընդ արդարս երջանկաց. — այս ինքն ընդ երջանիկ արդարս։

Հեռաւորն լինիցի ընդ ձեզ և ընդ նոսա որչափ կանգունք երկուց հազարաց. — այս ինքն երկու հազար կանգունք։

Յայն աւուրս եօթանց կամ եօթեանցն. — այս ինքն յայն եօթն աւուրսն։

623. Զորորդ հոլովման նախդրիւ վերջահոլով տրականին աւելի համարձակ ու բնականաբար կ'ըլլայ սա բանդ, ինչու որ ոյ ալ ոսմի պէս ամենուն տրական է. ուստի շատ տեղ կ'ըսուի

Յաւուրն առաջնոյ. — որ ըսել է առաջնում։

Իմաստութիւն ոչ բնակէ 'ի մարմնի վարեցելոյ մեղօք։

Նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ։

Ի ձին այրեցելոյ հրով և ծծմբով. Ի յաւանակի նորոյ նստեալ:

Նիզակն արի 'ի ձեռին իւրում աջոյ և յահեկուէն վահան:

Ի մարմնի իմոյ, 'ի սրտի իմոյ, 'ի հեծութեան իմոյ, 'ի ձեռին քոյ կամ քում:

Ի հանգստեան ձերոյ. յերկրորդում ամին իւրոյ. — այս ինքն իմում, ձերում, իւրում:

624. Երբեմն ալ գոյականին հոլովը ածականը կ'առնէ, ու գոյականը սեռական կը դրուի յատկացուցիչի պէս.

Թագաւորեաց ամսօրեայ մի աւուրց. — այս ինքն ամսօրեայ մի աւուրս:

Աջակողմն թևին բեկաւ. — այս ինքն աջակողմ թևն:

Հակառակորդք բազում են գործակցաւ բանսարկուին. — այս ինքն գործակից բանսարկուաւն:

Յիւրմէ բարեսէր առատութեանն. — այս ինքն յիւր բարեսէր առատութենէն:

Յահեկէ զտին երկսայրի. — այս ինքն յահեակ զտէն:

Արգելականք կուսանաց. — այս ինքն արգելական կուսանք:

Ընդ հնգեկան կամարարն կուսանաց. — այս ինքն կամարար կուսանն:

Սատակել զսատակիչն չարացելոց թշնամեացն. — այս ինքն զսատակիչ չարացեալ թշնամին:

Բաշխել նոցա զդահեկանաց տարևորն. — այս ինքն զտարևոր դահեկանն:

Պակասեցաւ ութ հարիւր հազարօք զօրաւորօք պատերազմողաց. — այս ինքն ութ հարիւր հազար զօրաւոր պատերազմողօք:

Ընտրեաց երեսուն հազար արանց զօրաւորս զօրութեամբ. — այս ինքն արս:

Անկան քան հազար արանց . Սատակեաց ութ հազար արանց . — այս ինքն արք , արս ։

Տաց քեզ տասն արծաթոյ կամ երկուս հազարս երիվարաց . — այս ինքն արծաթ , երիվարս ։

Զհազար և զհարիւր արծաթոյ զոր առեր . . . դարձոյց անդրէն զհազար և զհարիւր արծաթն ։

Երիւք սոցին . Յերկուց սոցա . Յերկոցունց սոցա . — այս ինքն երիւք սոքօք , յերկուց 'ի սոցանէ ։

625 . Երբեմն ալ գոյականը ածականի պէս առաջ կը դրուի ուղղական, ու ածականը ետև՝ գոյականին հոլովովը .

Ընտիր ընտիր երիտասարդ վառելովք . — այս ինքն վառեալ երիտասարդօք ։

Եկին յօր հասարակին . — այս ինքն 'ի հասարակ աւուրն ։

Լուեալ 'ի քահանայիցն և 'ի նախարար պատգամաւորացն եկելոց . — այս ինքն 'ի պատգամաւոր նախարարացն ։

Զարթոյց տէր զոգին Կիւրոս պարսկի . Զբորոտութիւն Նեեման ասորւոյ . Զկնի Յովհան մանդակունւոյ . — այս ինքն պարսիկ Կիւրոսի , ասորի Նեեմանայ, մանդակունի Յովհաննու կամ Յովհաննու մանդակունւոյ ։

Առ Աղեքսանդր մակեդոնացւով . — այս ինքն առ մակեդոնացի Աղեքսանդրիւ կամ առ Աղեքսանդրիւ մակեդոնացւով ։

Յարիստոտէլ նրբախօսէն . — այս ինքն 'ի նրբախօս Արիստոտէլէն ։

626 . Երբեմն ալ ածականը առանց նայելու իր գոյականին համաձայնութեան օրէնքին՝ կը դրուի ինչպէս որ յարմարի նէ բային կամ խնդիր առնողի մը .

Առեալ անձնադեղոյն և քաջաղեղան արին Վաղարշակ կորովաբանոյն և հանճարեղի . — սեռական ուղղական մէկտեղ են , առեալ անցեալ դեր-

բային համար, որ ուղղական ալ կ՚առնէ անուն բայի սեռական ալ (328, 330)։

Ատաց աչաց իմաստնոց և ոչ թէ զգալեաւ տեսանին. — վասն զի տեսանեմ գործիական ալ տրական ալ կ՚առնէ խնդիր։

Յառաջնում յարձակել անդ. — վասն զի յառաջին յարձակել ըսեր ես՝ յառաջնում յարձակել, երկուքը մէկ է, յարձակելը յարձակման տեղ ըլլալուն։

Երձ առ մեծիմաստն Նորներսէհ Թագաւորն կացելոյ յայնմ նահանգի. — վասն զի առ ուղղական ալ սեռական ալ կ՚առնէ նոյն մտքով։

Առ մեծի չարչարանօքն Քրիստոսի. Ընդ մեծի մեղադրութեամբ է. Զգալի այն ասի, որ ընդ զգայարանաւս ՚ի ներքոյ անկանի, կամ ընդ ամենեքումբք կամ ընդ ոմամբք կամ ընդ միով. — վասն զի առ, ընդ գործիական ալ սեռական ալ կ՚առնէն մէկ մտքով։

Ըստ ազգի ազգի և պէսպէս տուեցելովք ՚ի նմանէ շնորհացն. — վասն զի ըստ գործիական ալ կ՚առնէ երբեմն տրականի մտքով։

Տես և ՚ի 582։

627. Միջակ անուններուն ու դերանուններուն հոլովները շատ անգամ մէկմէկու տեղ կը դրուին, և առաւել սեռական ու տրական իրարու տեղ կամ գործիականի ու բացառականի տեղ, մանաւանդ ածական որ ըլլան գոյականի մը։ Իսկ մինակ՝ քիչ։

628. Նա դերանունը երբեմն ինքն, իւր դերանուանց տեղ ալ կը բանի.

Զոր նա և նա միայն գիտէին. — այս ինքն ինքն և նա։

Գիտաց Յիսուս թէ կամէին զնա հարցանել. — այս ինքն զինքն։

Եւ Յիսուս ցեկեալն 'ի վերայ նորա. — այս ինքն 'ի վերայ իւր:

Եւ Աբրահամ ցծառայն իւր ցերէց տան իւրոյ՝ ցիշխան ամենայն ընչից նորա. — այս ինքն ամենայն ընչից իւր կամ իւրոց:

Վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա. — այս ինքն եղբօր իւրոյ:

Աղաչէր զնա կինն զի զդեւն հանցէ 'ի դստերէ նորա. — այս ինքն 'ի դստերէ իւրմէ:

Գոհանային զԱստուծոյ հարցն նոցա. — այս ինքն հարցն իւրեանց:

Բայց զգուշանալու է որ ծուռ միտք չելլէ:

629. Ուղղական յարաբերականը որ՝ ամէն հոլովի տեղ կը բանի շատ անգամ, ու շատ տեղ՝ ետեւէն պէտք եղած հոլովովը դերանուն մը կ՚աւելցուի. աշխարհաբառերնուս մէջն ալ կայ աս. ինչպէս,

630. Սեռ. Իբրեւ զանաստուած ոք որ չիք այլ ինչ յոյս 'ի միտս նորա. — այս ինքն յորոյ միտս չիք, ու որոյին տեղը աւելցած է նորա:

Նա՝ որ ոչ գոյ բանք 'ի բերան. — որոց ոչ գոյ:

631. Տրա. Օրհնութիւն է՝ որ մեկին է նմա ամենայն. — այս ինքն որում:

Որ գիտէ՝ կամի, եւ զոր կամի՝ գիտէ. որ առ մերս բնութիւն անհնար է այսմ լինել. — այս ինքն որում անհնար է լինել:

632. Գործ. Այնու որ պակաս գտար, եղեր ամենայն օրինացն պարտական. — այս ինքն որով պակաս գտար:

Որ ամենայն ինչ նովաւ եղեւ, հարկ էր զի նովաւ սրբեսցին. — այս ինքն որով ամենայն ինչ եղեւ:

633. Բաց. Մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ եւս ելանիցեմք 'ի նմանէ. — այս ինքն յորմէ ոչ եւս ելանիցեմք.

Հատանել յազգէ յայնմանէ՝ որ Իրաւունք Աս-տուծոյ տարամերժեալ տրոհեալ է 'ի Նոյանէ . — այս ինքն յորոց տարամերժեալ տրոհեալ է (571) ։

634 . Հայց . Զպսակն որ պարտիք ։ Տեսեալ զայն որ յառաջն ուրանային ։

Զամենայն որ միանգամ կամիջիք ։ Զամենայն որ ինչ ասացի ձեզ ։

Զամուրսդ որ ամրացուցեր ։ Զամենայն բանսն որ ուխտեաց նմա ։

Մեծ էր ատելութիւնն որ ատեաց զնա . — այս ինքն զոր , որով (374 , 377) ։

635 . Ուրիշ նախդիրով հոլովներու տեղ .

Զայն որ նոքա հուպ լինել չիշխէին . — այս ինքն յոր ։

Մինչև յօրն որ ամենայն խորք 'ի վեր գան . — այս ինքն յորում ։

Մի յայնցանէ է որ երկբայութիւն ասի 'ի Նոսա . — այս ինքն յորս ։

Ունիմք շինուածս յերկինս առանց մարմնաւոր ձե-ռագործի , որ ոչ երևին ձեր աչքունիքդ առ Կո-րն . — այս ինքն առ որովք ոչ երևին ։

636 . Որը շատ տեղ չէ շաղկապ ալ կը նշանակէ , որ աշխարհաբառ ալ որ կ'ըսենք .

Աղաչեմ որ զայս ողջ անարատ հասուցանել մար-թասցեն ։

Կամիս որ դու միայն լիցես . — Կ'ուզես որ դու միայն ըլլաս ։

637 . Զի միջակ անուանն ալ (80) որ յարաբերականի պէս կը բանի շատ տեղ , ու անոր պէս ալ ուղղական ա-մէն հոլովի տեղ բանեցուցած կայ նախնեաց լաւ շա-րադրութեան մէջ .

Նա որպէս խուլ զի ոչ լսէ , որպէս համր որ ոչ բա-նայ զբերան իւր ։

Նա որպէս խուլ որ ոչ լսէ, և իբրև զհամր զի ոչ բանայ զբերան իւր ։
Իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծով ։
Իբրև ջուրք բազումք զի ծածկեն զծով ։
Որպէս հանդերձ զի ագանի, որպէս գօտի որ ածի հանապազ ընդ մէջ ։
Կա ինչ զի և 'ի մարգարէսն յիշի, և է ինչ որ միայն 'ի գիրս յայս ։
Կած անտի կին՝ զի անուն էր Նոյա Սողոմայի ․ — այս ինքն որոյ անուն էր ։
Եկն մարախ և խառնիճ՝ զի ոչ գոյր թիւ ․ — այս ինքն որոյ չափ որոց ։
Գոյ աստ այր մի 'ի դրան քում՝ զի իրքդ այդ նովաւ վճարին ․ — այս ինքն որով իրքդ այդ վճարին ։
Եւ զայս՝ զի ոչ համբերեմք մեք տեսանել, գործեալք և մեք ․ — այս ինքն զոր ոչ համբերեմք տեսանել ։
Ի ժամանակի՝ զի հարկանէր զԴարեհ արքայ ․ — այս ինքն յորում հարկանէր ։
Յանդիպի յայնմ ժամու՝ զի մկրտէր զԳրիգոր ․ — այս ինքն յորում մկրտէր ։

638 ․ Մակբայներ ու շաղկապներ ալ կան շատ, որ մէկը մէկալի մօտով իրարու տեղ կը բանին երբեմն ․ բայց ատ իրենց այլևայլ նշանակութիւններն ըսելով՝ բառգրքին կ'մնայ սորվցնելը ։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ

639. Արտուղութիւն է պարզ շարադրութեան բնական կարգէն դուրս ելլելը աղուորութեան մը համար, կամ աւելի ազդու կամ բացայայտ ընելու խօսքը։

640. Շարադրութեան բնական կարգն է առաջ անուն բային դնել, ետքը բայը, ետեւէն խնդիրը կամ մակբայը. անուն բայիին ու խնդիրին յատկացուցիչը կամ՝ բացայայտիչը ամէն մէկունը իր քովը. նոյնպէս ածականները գոյականներուն քովը. ուրիշ խնդիր առնողներուն խնդիրը իրենց քովը, ու նախդիրները ամէն մէկունը իր վրան։ Ասկէ դուրս եղած շարքը՝ արտուղութիւն կը սեպուի։

641. Ասանկ, անուն բային շատ անգամ ետեւ կը դրուի, ու բառերով կը բաժնուի, ու խնդիրն ալ շատ անգամ առաջ կը դրուի.

Իմուտ առնել խունկս և ողջակէզս Յէրու։ Զարմացեալ էր ընդ միտս Պետրոս։

Սատեաւ և յարդարումն երբեմն փորձ մահու։

Հրամայեաց զնա վաճառել տէրն նորա և զկին նորա և զորդիս նորա։

Այնու ևս յայտ լինէր՝ եթէ 'ի ծառայութեան և 'ի հնազանդութեան կայ ակամայ Առաքելոցն սատանայ։

Զինչ ընդհատ 'ի մանկտւոյ իցեմք՝ որ ընդ խաղս տունս շինիցեն, մեք որ գեղեցիկ ապարանս շինիցեմք։

Դու զյանդուգն զլուսն արքայն սատակ զՓարա-
ւոն, որ արկ 'ի ծառայութիւն զժողովուրդ քո մէջ
զՄսրայէն, պէսպէս հարուածովք կշտամբեցեր ։
Նոցա ամենայն ոք չէ հնար եթէ բարիս առիցեն ։
Որ 'ի վեր քան զամենեսեան է, առ այն որ 'ի
խոնարհ քան զամենեսին էր՝ էջ ։
Զմարգարէականն ընդ որ հանապազ անցանէ՝
յիշեսցէ ։
Դանէ յօժարութիւն յորժամ այսր ժողովիցիմք՝
ցուցանիցեմք ։
Եկի զանէծս օրինացն որ վասն յանցուածոց ե-
ղան՝ լուծանել ։

642. Գերբայն ու իր էական բային մէջ այլեւայլ
բառ կը մտնէ, ինչպէս անուն բայի, խնդիր, մակբայ ;
եւն. ու անով կը զատուին մէկմէկէ ։

Նա ծնեալ իսկ 'ի զմին էր ։ Հանեալ չեւ եւս է ։
Նա է օրն լինելութեան նորոգեալ ։ Եւ ժողովս նոցա
խառնեալ ։
Որ էր վասն խռովութեան իւրեք եղելոյ 'ի քաղա-
քին եւ սպանութեան դրեալ 'ի բանտ ։
Բարձրացեալ յոյժ էին քաղաքացիքն ։ Բեզ Նուր
Հրեցի ընդ ձեռամբ անկեալ ։
Նշեցին մնացեալքն Յակոբայ յԱստուած դարձեալ ։
Նա արդարեւ լուեալ մեր ։ Ոչինչ է դորա արժանի
մահու գործեալ ։
Չէր իմ 'ի նոցանէ գտեալ զառողջութիւն ։ Թէ
չէր նախ թողեալ ։
Թէ չէր զմանուկն տեսեալ ։ Մինչեւ ձեր խնդրեալ
ինչ իցէ ։
Չեւ իցէ հաւու խօսեալ ։ Իցէ քերովբէիցն թռու-
ցեալ զթեւս իւրեանց ։
Ընդ ամենեցուն էր համարս տալոյ ։ Չէ զհարկն
'ի դուրս հատուցանելոյ ։
Ընդ էր նաւն թափելոյ զբեռինն ։

643. Այլեւայլ խնդիր առնողներ մէկտեղ որ գանինք, երբեմն մօտին միայն կը տրուի խնդիր, երբեմն ալ հեռուին, ու մէկալը զօրութեամբ կը հասկցուի. ինչպէս,

644. Մօտին խնդիր.

Զքեզ Աստուած հարցն մերոց գովանամ և օրհնեմ:
Յեղեալ անձինք օրհնեն և գովանան զԱստուծոյ:
Կացէք մնացէք պահեցէք դուք առ մեզ զնոյն հաւատ:
Կարիցեմք 'ի դէպ մտանել և ելանել 'ի ճառէս:
Իջմամբն և ելիւքն 'ի խորոց:

645. Հեռուին խնդիր.

Զքաղաքն ապրեալս առաքեցին և այրեցին հրով:
ԶՏիմոթէոս եկին գտին փախուցեալ:
Առեալ գայր զհրաման իշխանութեանն: Առին զըր-նացին զնա:
Առնու ելանէ զլրութեան նորա:
Առնու վարէ զնայ Աստուած զորդիս նոյա: Հեր-ձոյր անցանէր զգունդն:
Խողոքն և զնան Ճարտարքն զգործն խրեանց:

646. Շատ հեղ ալ բայի կամ անունի մը խնդիրը միջանկեալ բառերով կը հեռանայ.

Որ հասարակ աղօթս անկեալ մատուցանէին:
Ընծանօթ հրաման է զտեղիդ խաչուցանել:
Տեսանեմ զմարդիկս զի շրջին՝ իբրև զծառս.— այս ինքն՝ զմարդիկս որ շրջին՝ (637) տեսանեմ իբրև զծառս:
Արար Աստուած այց ողղւոյն Իսրայէլի:
Արկ Հերովդէս արքայ ձեռն չարչարել զոմանս:
Ածէր կամ ոտամբ կամ ձայնիւ առնիցէ:
Զինչ ինչ յոյս և օրհնութիւնքն առնիցեն:
Արգել հայելդ 'ի յստակութիւն լուսոյն լիցին:
Ոչ զօսանալ ձեռաց նախողաց հրամայեցեր օրհ-նեալ գագաթանդ:
Այս ապա աղօթութեանն 'ի նմանէ կատարեալ լինի 'ի գերշաց անտի:

Զհնազանդութեան արարածոցս պատմէ՝ արարչէն։
Մեր սուրբք գի կանգնեալ երևեցաւ 'ի հեթանոսաց։

647. Յատկացուցիչը յատկացեալէն ու բացայայտիչը բացայայտեալէն կը հեռանան՝ մէջերնին բառեր խնալով.

Ձայն ողորմ ելանէր մանկանցն սգացելոց։
Սէր առաւել գոյ 'ի նմա իմաստութեան և հանճարոյ։
Իմ փոքր մի և սասանեալ էին ոտք։
Ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին աչք 'ի նա հայէին։
Ամենեցունց ճարտարապետն ուսոյց ինձ, իմաստութիւն։
Որում և Աբրահամ տասանորդս ետ յաւարէ անտի նահապետն։
Եկն Վարդ ողջ զերծեալ 'ի կապանացն զօրութեամբն Աստուծոյ՝ եղբայր զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի։

648. Ածականներն ալ կերպ կերպ բաժնուիլ ունին գոյականէն, ինչպէս մէկ քանին տեսանք 'ի 409, 410, 412։ — Նմանապէս որ ինչ, որ ոչ իրարմէ կը զատուին՝ մէջերնին բայ կամ ուրիշ բառ մտնելով.

Որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է։ Զոր ունիցի որք ինչ՝ հրամայէ ընկենուլ։
Զոր և ինչ հայցեն՝ առնուն։ Զինչ շնորհս որ տայ քեզ Աստուած։
Որ պարտիցի ոչ ինչ յալքունիս։ Որ անմարմին ոչ է։
Որ լաւ ոչ եկեալ յաշխարհ մեռանէր։
Որ 'ի բնութենէ ոչ ականոյ կալեալ էր զմիգութիւնն։
Ամենայն որ միանգամ ոչ կայր 'ի պատիժս։ Որ ոչն կամիցի ոչ գործել։

649. Ասանկ ալ ոք, ինքն, իրենց դոյականէն կը զատուին.

Է՞ ոք այդր այր. — այս ինքն է՞ այդր այր ոք։

Մի՞ ոք մեռցի այսօր այր յԻսրայէլէ. — այս ինքն մի՞ ոք այր մեռցի։

Ինքն հիմունս արկ նմա Բարզբէալն։ Ինքն հաւանեալ տեղի ետ ծարմնո։

Այլ նա եդ ինքն ’ի մտի իւրում։ Ի չեղ բերիցէք յինքեանս։

650. Այս, այդ, այն ածական դերանուանները շատ անգամ առաջ դրուելով՝ հեռու կը զատուին իրենց դոյականէն.

Այս երիցս անգամ երևեցաւ չքնաղ տեսիլս։

Զայս մեծ և փրկագործ աւարտեալ ’ի մահուն իւր Քրիստոս զխորհուրդ։

Որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ էր։

Հաստատեաց նա զայն որ առ մեզ բարեխնամութիւն։

Զայն որ փոքր մի յառաջ խռովութեամբ լցեալ էր զքաղաքն՝ ուրախութեամբ լնուլ։

Այս այն որ ամենայն զօրութեանց և բարձրութեանց տէրէ Աստուած։

Այն որ ’ի հրեշտակաց անտի այլքն փախստական գնացեալ էին։

Բազում ինչ և մեծամեծ այն էր որ ’ի նմանէ անցք ընդ եկեղեցին անցանէին. — այս ինքն այն անցք էր որ անցանէին։

Զայն որ խառնիճաղանճ զօրս յինքն կուտեալ էր՝ յիւրաքանչիւր տեղիս արձակէր. — այս ինքն զայն խառնիճաղանճ զօրս որ յինքն կուտեալ էր։

Յայն զնոսա բերէր ’ի մարտս. — ’ի յայն մարտս։

651. Նմանապէս սոյն, դոյն, նոյն, որ ոչ միայն վերջահոլով առաջ կը դրուին (417), հապա նախդրիւ հոլովով ալ սովորաբար, երբեմն կը խախտին իրենց սովորական տեղէն՝ զատ առնելով մը.

Աստուած՝ նոյն լոյս տալոյ և առնլոյ. Օրէն՝ մի և նոյն կացցէ ձեզ։

Մարմինն որ անկաւ՝ նոյն և յառնելոց է։ Զնոյն որ զերկինս և զերկիր հաստատեցին՝ նոյն և տախտակս քարեղէնս փորագրեցին։

Անօրէնութեամբն իւրով զոր արար՝ նովին մեռցի։

Այլ ուրեք՝ զնոյն զՔրիստոս սուրբ առնիջիք։

Օտարն որում զգուանն յանձն արարին՝ զնոյն դեսպանս արձակեցին։

Յորդորայն 'ի նոյն անկցին։ Այր միայր 'ի չարեաց 'ի նոյն։ Ընդ այնուհետև ըմբռնողութեան եղեալ 'ի նոյն խորհուրդս. — փոխանակ՝ 'ի նոյն ընդունայն խորհուրդս։

Ընդ ճանապարհ ընդ նոյն ոչ յաւելուցուք տեսանել զնա։

Ի մեղս իւր զոր մեղաւ՝ 'ի նմին մեռցի։

652. Նոյնի մը նախդիրը շատ անգամ իրմէ առաջ դրուած խնդիրին կամ մակբային վրայ կը դրուի, թէ վերջահոլով ըլլայ ան խնդիրը և թէ ուրիշ նախդիրով հոլով մը. Ինչպէս,

653. Խնդիրին վրայ նախդիր.

Զգուշանալ 'ի կռոց զոհելոյ. — այս ինքն 'ի զոհելոյ կռոց։

Ունել զմեծի ողբոց և արտասուաց արժանի սոյա գործս. — այս ինքն զգործս արժանի մեծի ողբոց և արտասուաց։

Յառաքինի գործոյն խոստացեալ վարձուց. — այս ինքն 'ի վարձուցն խոստացելոց առաքինի գործոյ։

Օհուրբ կիզեալն և զհողմով հոսեալն և զժանեօք գազանաց ծախեալն յարուցանես։

Ի բազում բանս խօսելոյ։ Ի բազում արութիւնս քաջութեան ցուցանել։

Յօժարեալք 'ի զդադար 'ի նմին առնուլն : Զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ :

Զառ 'ի յԱստուծոյ հաստատեալ թագաւորութեանդ հրաման :

Զյաւեան ածելն : Ասել զայնժամու պատահիցն : Զյետ մահու կեանս :

Զընդ աջմէ Հօր նստեալն : Զըստ մարմնոյ ծնունդ Փրկչին :

Ի զայնոսիկ մատակարարողէ : Անապատ լեալ յառ 'ի նմանէ փրկութենէն :

Ա— 'ի սպասն յոր կարգեցաւ՝ հ—նելոյ : Որպէս խորթս — 'ի ծննդենէ ա—ջին :

Զյաղագս սորա բանն : Քննեցան 'ի նախ քան զմեզ սուրբ հարցն :

654 . Մակբային վրայ նախդիր .

Զյառաջագոյն ասացեալ պատգամս : Զերբեմն ախորժելի խորհուրդն :

Զանտի վնասն և զաստի օգուտն : Յաստի անտի ծայրիցն :

Զգոգցես կենդանին : Զևս գերազանցն : Յևս զարմանալի կենդանեաց :

Յընդդէմ դառնալ նոցա : Յառաւել զմարդն պատուելոյ : Յզկնի եկելոյս :

655 . Նոյնպէս կ'ըլլայ թէ և նախդիրը առնելու բառը զեղչմամբ յայտնի դրուած չըլլայ ու միայն դիմորոշ յօդով լռելեայն իմացուած ըլլայ ըստ 442 .

Ոչ զսոսկ աղքատն, այլ զհոգւոյն . — այս ինքն զհոգւով աղքատն :

Ի բանիւք յանցանելն, 'ի գործով և 'ի խորհրդովք . — այս ինքն 'ի գործով յանցանելն, ևն :

Ոչ առ մարմնով խոնարհն և ոչ առ մարմնով մաշեալն, այլ առ սրտիւն և հոգւով . — այս ինքն առ սրտիւ և հոգւով խոնարհն և մաշեալն :

Զառ 'ի մէնջն՝ զամենայն կատարեսցուք. Ընկալայ զառ 'ի ձէնջն. — այս ինքն զայն որ է 'ի մէնջ, 'ի ձէնջ:

Մատուցէն զվասն մեղայն և զվասն փրկութեանն. — այս ինքն զայն որ է վասն մեղաց և զայն որ է վասն փրկութեան:

Զդիւրալուրն և զառանց խոր բանիցն յարգեն. — այս ինքն զայն որ է առանց խոր բանից:

Նետիւք խոցոտել զ'ի վերայ պարսպին. — այս ինքն զայնոսիկ որ 'ի վերայ պարսպին:

Լուեալ իմացան զհիւրընկալութեան աղագան. — այս ինքն զայն զի էր կամ զլինելն հիւրընկալութեան աղագաւ:

Զվասն որոյ եկեն սոքա՝ եղծանել. — այս ինքն զայն վասն որոյ եկեն:

Ի բաց թօթափել իբրև զոչ 'ի բնութենէս. — զի իբրև զայն, իբրև զիր՝ որ ոչ է 'ի բնութենէս:

Զառնելն և զոչն. Ի բանալն և յոչն. — այս ինքն զոչ առնելն, յոչ բանալն:

656. Բայց երբեմն աւելորդութեամբ կը կրկնուի Նախդիրը՝ ետև գրուած բառն Նախդիրին տէր եղող խնդրառութեան վրայ կամ նաև խնդիրին վրայ. նոյնպէս ալ մակբայէն ետև գրուածին վրայ. ինչպէս,

657. Բառն Նախդիրին տէր եղող խնդրառութեան վրայ.

Զցուցանել մեզ զհոգւոյ չափ զսէրն: Զառ Դարեհիւ զկռիւն:

Զվերայն զբժշկին պատուիրանս: Զառ 'ի քեզ զապաւինեալ և զյուսացեալ ժողովուրդս քո:

Կամիմ զվասն նորա կշտամբութեան յարմարել զբանս:

658. Խնդիրին վրայ.

Զփառս զառ 'ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք:

Զտանջանս զառ 'ի քէն հալածացեալն:

Զզուարակն զվասն մեղաց . Յարենէ առ 'ի վասն մեղացն սրբութեան . — որ աւելի սովոր կը հասկըցնէ թէ զզուարակն՝ որ է վասն մեղաց , յարենէն յայնմանէ՝ որ է վասն սրբութեան մեղացն :

Յանկարծ բարեօք զուարճացեալ յամենայնից տեղւոջէս՝ անկանիմ յալէկոծութեամբ սահուն եղեալ 'ի ցաւագին կեանս կենցաղոյս :

659 . Մակբայէն ետև դրուածին վրայ .

Զամենեսեան զյառաջագոյն զննջեցեալսն :

Զայսր գալոյն զորպիսութիւն : Ի միւսանգամ 'ի գալստեանն :

660 . Երբեմն ալ առաջ դրուած խնդիրն ու մակբայը ամենևին առանց նախդիրի կը թողուի , ու ետև դրուած բուն նախդիր առնելուքին վրայ միայն կը դրուի .

Յերկինս զհամբառնալն Քրիստոսի մարգարէանայ :

Մի խափանեսցէ ըստ Աստուծոյ զգնացս սրբութեան :

Ի ծանրութենէ մեղաց զաշխատեալքս : Ի նմա եղեալ զիրսն խօսէին :

Եթէ ոչ կալցուք 'ի բաց՝ զաղքատսն 'ի լքելոյ :

Զերկնիցն ժառանգութիւն , ընդ որդւոյն Աստուծոյ զազգակցութիւն :

Ոչ զպարտանոցի խնդրէ կորուսանս , այլ հոգւով և ճշմարտութեամբ զերկիր պագանել :

Յայսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ . — որ կրնար ըսուիլ նաև՝ առ յայսպիսի իրս անհարթս ոչ ուղիղ հայելոյ , ըստ 652 :

Ոչ գնացեր բարկութեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ քեզ հետևողս . — այս ինքն ընդ խոտորնակի քեզ հետևողս , ընդ հետևողս քեզ խոտորնակի :

661. Հայցական յատկացեալին նախդիրը շատ անգամ եւս դրուած յատկացուցիչին կը դրուի, ու յատկացեալը անորոշ հայցականի պէս կ'առնուի (354)։

Պնդեցաւ զկնի նորա ճանապարհ զեօթն աւուր. — այս ինքն զճանապարհ եօթն աւուր։

Եթէ ոք տացէ ընկերի իւրում արծաթ կամ այլ ինչ կարասի զիւր՝ յաւանդ։

Սընել հրամայէ սեղան զմանկոցն։ Սընուցուք պըտուղս զգեղեցիկ ծառոց։

Թագ առ նա զասխացւոյ։ Նմա էր յանձն հանել հարկ զաշխարհին։

Գաւառս բազումս հատէք զիմոյ տէրութեան։ Հանդերձ զմեր զգեցցուք։

Քանի՞ սակառի բարձէք զկոտորոցն լի. — այս ինքն զքանի սակառի կոտորոցն։

Ոչինչ գիտէր բանտապետն զբանտին։ Ոչ ոք 'ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն։

Զունին ինչ զանձանց։ Ոչ խնդրեմ ինչ զձեր։ Որ առաքեալ է՝ չասէ ինչ զիւր։

Միջակ անունը եւս վրան աւելնելին զայ նախդիր չառներ (83), բայց յատկացուցիչին վրայ կ'առնէ, ինչպէս տեսար 'ի 477, ու հիմայ հոս ալ։

662. Շատ անգամ նախդիրները եւս դրուած յատկացեալին միայն կը դրուին.

Այս ժողովուրդ է զոր Թլփատեաց Յեսու, ամենայն ժողովրդեանն ելելոյ յԵգիպտոսէ զարու մանուկ. — այս ինքն զարու մանուկ ամենայն ժողովրդեանն։

Ազգի ազգի զանձինս զթիւ իսկ և զհամար ոչ մարթէ ոք առնել։

Քաղաքի միոյ մեծի զիշխանութիւնն հաւատալ (եպիսկոպոսին)։

Ուղիղ լողութեամբ չլսէ ուրուք զբանս։

Սորին Ասորւոյն և տաճկաստանի քաղաքացն զաշակերտութեամբ շրջել ։

Այլ նոցա որպէս զմորթն զգենումք և ոչ վնասէ, և զմին եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր՝ ոչ վնասէր ։

Զփիղսն վառեալս՝ գնդաց գնդաց ՚ի գլուխ յօրինեալ կացուցանէին ։

Եւ ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնսն ուշ եղին ։

Միոյ ոչխարի եկն ՚ի խնդիր ։ Թագաւորութեան հասանէին յաստիճան ։

Տղայական մնաց մեր յարբունս ։ Շատից յաչաց ելանէին ։

Աստուծոյ յաչաց ելին ։ Հանէ զքեզ առնն յաչաց ։

Արքայից արքայի ՚ի ծառայութենէ մի ելանէք ։

Թեթևագոյն արուեստից պակասագոյն ՚ի գիտութենէն ազգք երկրածնաց ։

Ազգ՝ որոյ ոչ լսիցես զլեզու նորա ։ Որոյ հուր յաչացն արձակիցի ։

Որոյ էիր ընդ աղջկունս նորա ։ Որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա ։ Որոց ՚ի խռովելն՝ այր մի սպանեալ էր ։

Որոց ընդ բարս և ընդ գնացս նախանձէին ։

663. Շատ տեղ ալ հայցական գոյականին նախդիրը՝ ետև՝ դրուած ածականին միայն կը դրուի, ու գոյականը անորոշ հայցականի պէս կ՚առնուի .

Առ քեզ կինամոմոն զանոյշ զկէս այնորիկ ։ Ճանապարհ զարքունի գնասցուք ։

Անհնար համարեցան առնել գիր զաշխարհամար Հրէիցն ։

Խնդրեցէք ՚ի տեառնէ անձրև ըստ ժամանակաց՝ զկանուխ և զանագան ։

Տացէ զուարթութիւն զմտրտումն։ Մեծու-թիւն բազում զհայրենի ժառանգեալ։

Ունեալ զդիւրութիւն զայն։ Կերան հաց նեղու-թեան զզօրաբեկն։

Զգեստ զիւրն զգենուն։ Բան զայդպիսի ոչ հարցանէ։

Գտին անդ այր զոմն՝ մոգ։ Թագաւոր զոմն՝ ասեն զՅիսուս։

Բայց բան զայս կատարեցէք։ Օրինակ զայս գրել։

Նա կերակուրս ժամուս զայն ուտէ՝ զոր և ոչ գա-զանք և անասունք ուտեն։

Բաժանեաց աչս ամենեցուն զնոյն, ձեռս և ոտս զնոյն։

Տեղի մի և զնոյն ցուցանեն երեքեան նորա։

664. Նորեմն ալ առաջ դրուած ածականին չդրուիր ու մինակ ետև դրուած գոյականին կամ երկրորդ ածա-կանին կը դրուի նախդիրը.

Բազում զայրուձի զասխացուցն կուտեալ. — այս ինքն զբազում այրուձի։

Մեծամեծս ևս քան զոյնս՝ ցուցանէ նմա զգործս. — այս ինքն զգործս մեծամեծս։

Յաղել զխոզս և խառնակ զանասունս։ Բալ ինձ բարձրագոյն զիրս նշանակէ։

Նա մեծամեծ զայդպիսի վնասանի առնելով։ Յաղ-թող և զնոր օրհնութիւն երգեսցուք։

Սուրբ զարիւն իւր. սուրբ զորդիսն. սուրբ զկա-նայսն։

Շատ զոք ընդ միմեանս չփոթեաց։ Տեսանել նոր զոմն Եղիսեւս։

Նա կամ ընաւ հայ զոք թողուլ։ Սակաւս զոմանս ընտրեալ։

Նոյն զաղօթսն կատարեմք՝ զոր յեկեղեցին. — այս ինքն զնոյն աղօթսն։

Նոյն զինքն ես վաճառեցի : Նոյն ինքն զՔրիստոսն :

Նոյն ինքն արժանաւոր լինել զԱստուած տեսանել :

Բազում իշխեցելոյն 'ի բանսարկուէն զերծեալք . — այս ինքն 'ի բազում իշխեցելոյն :

Մեծաւ զօրութեամբ բարձր 'ի ձայն աղաղակէ . — այս ինքն 'ի ձայն բարձր :

Բոլորդ 'ի հիքութեան ընկեցայ գոգ . — այս ինքն 'ի բոլոր հիքութեանդ գոգ :

Կամ այլ ինչ 'ի սրբութիւնս մերձենալ . — այս ինքն յայլ ինչ սրբութիւնս :

Նոյն ինքն 'ի հօրէ : Նոյն ինքն յինէն : Նմին իսկ 'ի ցուցէս :

665 . Հոլովառու բառերն ալ երբեմն ան հոլովին յատկացուցիչին կամ ածականին մէջը կ'ընան , ու շատ բառերով անկէ կը հեռանան, ու նախդիրնին կը խախտի .

Յորոյ վերայ պարսպացն ճեմէի . — այս ինքն յորոյ պարսպացն վերայ , 'ի վերայ որոյ պարսպացն , որուն պարիսպներուն վրան ծուռ կուգայր :

Յերկուց միջոյ քրովբէիցն . — այս ինքն 'ի միջոյ երկուց քրովբէիցն :

Զուարճալից հանդերձ բերկրանօք : Դժնդակն հանդերձ մահու :

Իւրեանց վասն խնդրի : Անարժան վասն դիմադարձութեանն : Բոյինն սակս բանի :

Սոցա յորժամ անհնարին բարկութիւն գազանացն եհաս 'ի վերայ :

Ի տանն , յորոյ կոչեցեալ էր անուն իմ 'ի վերայ նորա . — այս ինքն յորոյ վերայ :

Ի պէսպէս փորձութեանց 'ի մէջ անկանիցիք :

Յամենայն նեղութեան իբրև զձեզ և աւելի քան զձեզ 'ի մէջ եղեաք :

Սան և ոչ մի ինչ այնուհետև խիղճ մնաց ու-նելոյ ։

՛Նա զհետ եղեալ Պաւղոսի և մեր՝ աղաղակէր ։
Զհետ երթիցուք խաղաղութեան ։
Զո՞ր հետ ելեալ ես ։ Զմեր կնի ոչ շրջէր ։ Առա-ջի կացուցին նորա ։
Փոխանակ որ մինչև ցայժմ հայհոյութեանցն ։
Ընդդէմ դարձցի քո ։
Ընդ հողմոյն դէմ ։ Հանդերձ Թաւիէր հարազա-տաւն ։

666 . Մակբայներէն երկու բառով եղողները՝ մի-ջանկեալ բառերով կը հեռանան մէկմէկէ .

Մի՛նչ նա **դեռ** կամէր ։ Մուրուքն **դեռ** տակաւին սեաւ **եւս** կային ։
Առ ինչ **ապա** արարեալ ։ Բա՛ն եթէ **ապա** ոք ինչ **ապա** յոք վստահ լինիցի ։
Նա ոչ այսչափ միայն, այլ և՝ **ապա** ևս **ապա** . — այս ինքն այլազգ ևս ։
Ոչէ և **երբէք** հնար դմա գոյր **անգամ** մեռանել . — այս ինքն բնաւ անգամ ։

667 . Ամենք ալ առաջ դրուելու տեղը՝ ետև կը դը-րուին, կամ ուրիշ կերպով բնական տեղէն կը խախտին.

Բնաւ և անուանի իսկ ՚ի ձեզ ընդդէր պոռնկու-թիւն . — փոխանակ ըսելու ընդդէր բնաւ և ա-նուանի իսկ ։
Այլ և փրկէր իսկ ընդդէր զայլս արարածս ։
Նա բնաւ իսկ սուտ ընդդէր կոչիցի ։ Նա գոհա-նային զիմբդ ։
Նա լինի այս որպէս ։ Մեծամեծս որչափ քան ըզ-մարդն իցեն ։
Մեք յորժամ բռնութեամբ կռուեսցուք ընդ աշ-խարհիս, աշխարհս ՚ի բաց քանդի . — փոխանակ ըսելու յորժամ մեք ։

Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ. — փոխանակ՝ յորժամ կոյր կուրի։

Զաղջիկն յորժամ յարոյց, զձեռանէն ունէր. — փոխանակ՝ յորժամ զաղջիկն։

Ըստ որում՝ի լերինն Սինայ և Գամիէլի յորժամ երևեցան։

Մ՚ին մինչդեռ ընկենոյր։ Ջերմ մինչդեռ էր։ Նա որպէս հաւանեալ եմ։

Կասկածեն թէ վնաս գուցէ ինչ մտանիցէ. — այս ինքն թէ գուցէ վնաս ինչ։

Զի մի պղծիցին գուցէ. — այս ինքն մի գուցէ։

Յասուցեալ միշտ են։ Ճանաչեմք զնա ամենեքին գրեթէ։

Որոճայ ոչ. որոճիցէ ոչ. տկարանայ ինչ ոչ քեզ. գրեցաւ իսկ ոչ. եթէ սպանանիցես ոչ. ընաւ և յիշեմ իսկ ոչ. ընաւ և էր իսկ ոչ. բայց գիտէի ոչ զնա. և գիտէր իսկ ոք ոչ։

Որ ոչն կամիցի գործել, և կերիցէ մի։ Որ գործէ ոչ, կերիցէ մի։ Սքանչանայք մի։ Ընաւ և յայտնել մի։ Լեր մի յիննունցն ապերախտից, այլ տասներորդին նմանեաց. — փոխանակ ըսելու մի լինիր։

668. Կամ միջանկեալ բառերով կը հեռանան բայէն.

Զերկիրս շուրջ ջուր պատէ. — այս ինքն շուրջ պատէ։

Յորժամ, որ այժմն բանապանծոյն խրոխտաձայն սիգացող բարձրապարանոց, անկեալ կայ դի անկենդան։

Նա Դ ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն՝ չարչարանէր զիս։

Մի այդքան մեծ քաղաք չէնէր։ Մի, որ ստեղծն զնոսա, ողորմեսցէ նոցա։

Մի, զի չեմք ակն, ասասցուք՝ թէ չեմք 'ի մարմնոյ անտի։

Իսկ ոչ ամենեւին թէ վիշտս ինչ կրիցեն՝ շփոթին։

Զայս ոչ, ասէ, առ պարծել ինչ ունիմ. — այս ինքն ոչ ասեմ առ պարծել։

Եթէ ոչ որ ծնցի. Թէ ոչ որ առաջնորդեսցէ. Ոչ այս եթէ ոչ որ հնազանդեսցի. — այս ինքն եթէ որ ոչ ծնցի կամ եթէ ոչ ծնցի որ, եւ։

Ասանկ ալ չ մակբայը հրամայել բային վրայ կը դրուի՝ ետեւի անորոշ դերբային դրուելու տեղը.

Զգրաստն անկեալ ընդ բեռամբ՝ չհրամայէ անտես առնել.

Ուղւոյն՝ յոր հուպն չհրամայեաց երթալ.

Բանիւ անգամ ոչ հրամայեն հաղորդել ընդ ապականեալսն.

այս ինքն հրամայէ անտես չառնել, հրամայեաց չերթալ, հրամայեն ոչ հաղորդել. կամ աւելի աղէկ՝ չհրամայել կ'իմացուի չտալ թոյլ, չներել, չհամարձակել։

669. Առաւել . . քան, նախ . . քան, մանաւանդ . . քան, մակբայ ու շաղկապները՝ շատ անգամ ներհակ կը բանին՝ քանը առաջ, կամ երկուքը քովէ քով. շատ տեղ ալ առաւելը կը ձգուի.

Քան յանձն իւր, առաւել 'ի նա էր յուսացեալ։

Առաւել քան ընդ ճարտարաբանութիւնն՝ ընդ համարձակութիւն աներկիւղութեանն զարմանային։

Նախ քան բանիւք՝ գործովք փառաւորեսցուք։

Հեշտանայ 'ի տեսութիւն նոյին՝ քան 'ի կերակուր առաւել։

Թագաւորի քան քաղաքին վայել է առաւել զարդարել։

Իսկ մանաւանդ քան ամենայնի՝ խոնարհութեան եւ ողորմածութեանն նախանձաւոր լիցուք։

Քան զաւետիս զբօթ սիրեմք լսել. — այս ինքն առաւել զբօթ քան զաւետիս։

670. ԵՒԵԹ մակբայը սովորաբար ետ կը դրուի. Ոտիւք ևեթ անցից. Երթիցեն արք ևեթ. Կոչեաց ևեթ 'ի գերեզմանէն և յարոյց։

Բայց երբեմն առաջ ալ կը դրուի.

Եւեթ զբարիս խօսել. — այս ինքն զբարիս ևեթ։

Ի ծննդենէն՝ ևեթ մոլութեամբ լեալ. — այս ինքն մոլութեամբ ևեթ։

Եթէ դու՝ ևեթ առ վայր մի կարասցես յանձն առնուլ. — այս ինքն առ վայր մի ևեթ։

671. Շաղկապներէն ԵՒ, ԹԷ, ԵԹԷ, ԶԻ, ՎԱՍՆ ԶԻ, ԹԷ-ՊԷՏ խօսքին սկիզբը կենալուն տեղը՝ անուանէ կամ մակ-բայէ ետև կը դրուին.

Զի մարմինն և նոցա 'ի չորից հիւթոցն կայ. — այս ինքն զի և մարմինն նոցա։

Ոչ արդար միայն էր, յայտ է եթէ զարդարու-թեան և պատուիրանս տայր։

Արդ այս թէ ուստի սկսաւ՝ ասացաք. — այս ինքն թէ այս ուստի սկսաւ։

Սով եթէ լինիցի յերկրի, կամ ժանգ եթէ լինի-ցի, լուիցես յերկնից։

Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա։

Զի կամակար մտօք եթէ յանցանիցեմք, այնու-հետև ոչ ևս պիտոյ է։

Ընդ առաւօտս եթէ սերմանեսցես, ծաղկեսցէ յամառն։

Սակաւիկ մի եթէ 'ի բաց թողացուցանէիր զփր-քումն տէրութեանդ։

Եւ ես ոչ եմ կոչեցեալ մտանել առ արքայ, զի են այս աւուրք երեսուն. — այս ինքն և են այս աւուրք երեսուն զի ես ոչ եմ կոչեցեալ։

Ո՛ն եկայք, և մեք զի ընդ նմա մեռցուք. — այս ինքն զի և մեք։

Իմ զի աղ և հաց կերեալ է յաշխարհին ձերում, գութ և սէր ունիմ ընդ աշխարհն ։

Իսկ զսուրբ քահանայսն վասն զի կապանօք տանէին, յետ երկուց ամսոյ և քսան աւուր հանանէին ։

Զի զայն Թէպէտ և ցանկութիւն շահից հնարեցաւ, սակայն ոչ ։

Մարմնով Թէպէտ ՚ի խաղաղութեան էն առ ժամանակ մի, այլ ոչ ։

Բայէ եւս գնել ասենք՝ մեր լեզուին սովորութիւն չէ ։

672․ Բայց, բայց սակայն շաղկապները Թէպէտէն ետքը դրուելուն տեղը՝ շատ անգամ առաջ կը դրուին․ երբեմն ալ կ՚աւելցուի նորէն այլ, սակայն․

Բայց Թէպէտ և նորա աւերեալ էր ատրուշան մի, ոչինչ զանգիտեաց գալ ։

Բայց սակայն Թէպէտ և ամենայն գործքս այս դժնեայ էին, չև էր ուրուք ձեռնարկեալ յայսմի յեկեղեցին ։

Բայց նա Թէպէտ և ՚ի ներքոյ յոյժ դարմէր զնա, այլ արտաքին դիմօք մեծարեաց զնա ։

Բայց Թէպէտ և յանիծից մոլին ցաւք յաշխարհ, սակայն էն և այլ պատճառք ։

673․ Սակայն, ուրեմն, ապա, ապաքէն, մանաւանդ, շաղկապներն ալ երբեմն եւս կը դրուին անունէ ալ, բայէ ալ, մակբայէ ալ․

՝Նա սակայն ոչինչ Թուլանայր ։ Տես սակայն նմին միաբան ։

Իր սակայն և ՚ի ներքս ։ Բայց մի սակայն կարծիցես ։

Բայց այժմ սակայն հսկեսցուք ։

Ապա և ջուրք ուրեմն ընկլուզանէին զմեզ ։ Զի հաստատութեամբ ուրեմն պահեն զօրէնս ։ Սպանէր ուրեմն ։ Մերժեցայ ուրեմն ։

Զուր ուրեմն վաստակէի ։ Ստոյգ լինին ուրեմն ։

Ահա յայտ է ապա, թէ ևս։ Այս ցուցանէ ապա, թէ ևս։

Որ օր լուան ապաքէն զմէնջ մարդիկ, . . արտասուս բաղում հեղան։

Գուսանաց համբերեմք մանաւանդ քան աստուածային գրոց վարդապետութեան։

Ընդխտացեալ թէ նուաստացուցանէն մանաւանդ։

674. Իսկ անգամ շաղկապը, որ սովորաբար ետև դրուելու է, ինչպէս, Նա հաց անգամ չժամանէին ուտել, Նա թաղելոյ անգամ չէին բաւական, Մինչև օձից և գազանաց անգամ երկիր պագանել, երբեմն առաջ ալ կը դրուի.

Զի անգամ ոսկերք թագաւորացն փոփոխեցան յօտարութիւն։

Մինչ անգամ վասն կաշոյ միոջ խնայ արարեալ՝ թագոյց։

Այնպէս սրանալ՚ի փախչելն, որ անգամ և հետք մի երևեսցին։

Նա անգամ ոչ գիտէր զայրն։ Զոր անգամ և ոչ յիշեմք երբէք զմերն։

Ոչ տասն անգամ արդարք գտան. — այս ինքն տասն արդարք անգամ ոչ գտան։

## ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

675. Քերականութիւնը լեզուին հաստատուն կանոնները սորվեցնելէն ետև, որ երկրորդ մասին մէջ ըրինք, ձևաւոր շարադրութեան ու հայկաբանութեան վրայօք՝ արթընցնող մը միայն կրնայ ըլլալ պզտիկ համառօտութեան մէջ. աւելին ուզողը՝ ընդարձակին մէջ կրնայ գտնել։ Բայց ալ աղէկը ու ալ աւելին սորվելու համար՝ ընտիր նախնեաց գրքերը շատ կարդալու է ուշադրութեամբ. որոնց գլխաւորներն են Աստուածաշունչը, Եզնիկը, Եղիշէն, ու անոնց նմանները։

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ ԿԱՐԵՒՈՐ ԻՐԱՑ

## ԸՍՏ ԹՈՒԱՀԱՄԱՐՈՑ

Ա. վերջացած անունները ինչպէս կ'առնեն դիմորոշ յօդը, 141։
Ածական անուն զինչ է, 9. ուրիշի բաղդատութեամբ ինչ խնդիր կ'առնէ, 390–392. առանց բաղդատութեան չափ մէջ աւելին կամ պակասը ցուցնելու ինչ խնդիր կ'առնէ, 393. — Ածական հասարակ անունը նախադաս ինչպէս կըբանի ըստ հոլովի, 407–413. յետադաս ամէն ածական ինչպէս. 422, 423. 425. Նախադաս և յետադաս՝ ըստ թուոյ ինչպէս, 426–430. — Ածական դերանուանց նախադաս համաձայնութիւնը, 414, 417, 420, 421. յետադաս համաձայնութիւնը, 417. 422. 424. 428, 429. — Ածական գոյականի տեղ, 585. մակբայի տեղ, 306. — Ածականի համաձայնութեան բացառութիւն, 570. ածականի փոխադրութիւն, 622–626. արտուղութիւն, 648–651։
Ամենայն, 110. ըստ թուոյ համաձայնութիւնը, 430։
Ամենեքեան, ամենեքին, 77։
Ամէն կամ ամեն, 110։
Այլ, միջակ անուն, 106։
Այդքան, այսչափ, 107։
Այդքանի, 107։
Ան, ․ մասնիկներով ածականները ինչ խնդիր կ'առնեն, 387։
Անձնիւր կամ անցնիւր, 108։
Աննախդիր կամ անորոշ հայցական խնդիր, 354–356։
Անուն բայի զինչ է, 313. դիմաւոր բային ինչ հոլով կը դրուի, 327. անորոշ ու անցեալ դերբային ինչ հոլով, 328–332. — Անուն բայի զեղչումն, 513–515. փոխադրութի, 586–592. արտուղութի, 641։
Անցեալ ժամանակ բայի, 159. անցեալ անկատար, 159. 272. անցեալ կատարեալ, 159։
Ապաթարց, 494. 500։

Ապառնի ժամանակ բայի, 159, 269, 270 · 274, 275։

Առ, առ՚ի, նախդիր, 148։

Առնելու, տալու բայերն ինչ խնդիր կ՚առնեն, 380։

Առնեմ, արտուղի բայ, 239։

Առոգանութիւն, 486։

Արբի, պակասաւոր բայ, 248։

Բաղաձայն տառք, 3։

Բայանուններն ինչպէս խնդիր կ՚առնեն, 382-386։

Բայից արմատներ, 168 · 181 ծան. · 203 ծան.։

Բայք որ արմատին ու յանգին մէջ ածանցական մասնիկ ունին, 168 · որոնց ան մասնիկը ձգուած է, 206 · չիմ, նչիմ վերջացած բայք, 222 · բայը անուն բայիին ինչպէս պիտի գրուի, 327 · նոյն դէմքով շատ անուն բայիներու ինչ թիւ կը դրուի բայը, 334-337 · այլ և այլ դէմքով անուն բայիներու ինչ դէմք ու թիւ կը դրուի, 338, 339 · Բայից զեղչումն, 340, 516-520 · բակառութիւն, 560, 561 · փոխադրութիւն, 593, 594 · 607, 608։

Բան կամ խօսք, 2 · 6 · 312։

Բառ, 2 · 5 · բառք որ կը փոխուին կամ չեն փոխուիր, 7։

Բարդ ու ածանցեալ անուանց բակառութիւն, 574։

Բացայայտիչ, 320 · 400-406 · բացայայտչի բակառութիւն, 564-569 · արտուղութիւն, 647։

Բացառական հոլով, 56-58 · անսովոր, 68։

Բոլորեքեան, բոլորեքին, 77։

Բութ, 486, 487 · 494, 503։

Գամ, արտուղի բայ, 237։

Գոգցես, պակասաւոր բայ, 259։

Գոյական անուն զինչ է, 9 · թուի մը հետ ինչպէս կը բանի, 431-435 · ինչպէս խնդիր կ՚առնէ, 389 · ածականի տեղ, 435 · 585 · Գոյական անուննին զեղչումն, 523։

Գործիական հոլով, 55 · 58։

Դերանուանական ածականք, 134-139 · ինչպէս կը համաձայնին գոյականի հետ, 414, 418 · 420 · 428, 429։

Դերանուանց (գոյական և ածական) զեղչումն, 524 · աւելադրութիւն, 538-540 · բակառութիւն, 571-573 · հոլովի փոխադրութիւն, 627։

Դերբայ անորոշ, անցեալ, ապառնի, 162 · անորոշ՝ իբրև բայ, 278, 279 · իբրև գոյական անուն, 280-283 · անցեալ՝ իբրև բայ, 284-286 · ընթիմ, եմ բայերուն հետ, 287-290 · ինչ խնդիր կ՚առնէ, 358 · իբրև ածական անուն, 291, 292 · ապառնի՝ եմ բային հետ, 293, 294 · իբրև ածական անուն, 295։ — Անորոշ դերբային զեղչումն, 521, 522 · աւելադրութիւն, 535, 536 · փոխադրութիւն, 595-605 · անցեալ դերբային աւելադրութիւն, 536 · փոխադրութիւն, 597 · 606 · դերբայից արտուղութիւն, 642։

Դէմք բայի, 158 · դերանուանց, 112-115 · դիմաց փոխադրութի, 607։

Դիմորոշ յօդք զինչ են, 140 · ս, դ ինչպէս կ'որոշեն, ն ինչպէս, 441 · գոյականին դիմորոշ յօդը ուրիշ բառի վրայ դրուած, 446–452 · շատ գոյականներու ինչպէս կը դրուի, 453 · աւելի դրուած, 454 · ածական դերանուանց հետ ինչպէս կը բանի, 455–458 · դիմորոշ յօդերուն տեղ ինչ կրնայ դրուիլ, 459 · դիմորոշ յօդ չառնող բառերն որն են, 461 · և ան ատենը ինչ ընելու է, 462–470 ։
Դնեմ, արտուղի բայ, 241 ։
Ե կ՚է, բայից կատարեալին միավանկ եզակի երրորդ դէմքին վրայ, 186 ։
Եզակի անուն, 10 · եզակի չունող անուններ, 11 · երբ եզակի կ'ըլլան, 72 ։
Եղանակ բայի, 160 ։
Ենթամնայ, 494, 495 ։
Երթամ, արտուղի բայ, 238 ։
Երկար, 486 · 492 ։
Երկաքանչիւր, 79, 109 ։
Երկբարբառք, 4 · որ հոլովելու ատեն կը փոխուին կամ ոչ, 17, 18 ։
Զ, նախդիր, 144 ։
Զի, միջակ անուն, 80 · որ յարաբերականի տեղ, 637 ։
Զինչ, 80 · 84 · Զինչ ինչ, 84 ։
Էական բայ զինչ է, 163 ։
Ընդ, նախդիր, 149 ։
Ըստ, նախդիր, 150 ։
Թիւ անուան, 10 · բայի, 158 ։
Թուոյ կամ թուական անուանք, 74 · ինչպէս կը համաձայնին գոյականի հետ, 414, 415 · 420, 424 · 431–434 ։
Ժամանակք բայի, 159 ։
Ի, նախդիր, 145 ։
Իբրև նախադրութեան բակառութիւն, 583 ։
Իմն, 82, 83 · 85 · Իմն իմն, 85 ։
Ինչ, 80 · 82, 83 · զինչ ինչ, 84 · ինչ ինչ, 85 · ոչ ինչ, 86 ։
Իրերաց, 102 ։
Իւրաքանչիւր, 108 ։
Իք, միջակ անուն, 82, 83 ։
Իք, չիք, բայ · 180, 332 ։
Լ վերջացած բայածական, 296 · առանց ւիւնի հոլոված, 297, 299 · է բային հետ, 298 · ող բայածականի և անցեալ դերբայի տեղ, 299 · մինակ ինչ խնդիր կ'առնէ, 388 · է բային հետ ինչ, 359 ։
Լծորդութիւն բայից զինչ է, 167 ։
Լուայ, պակասաւոր բայ, 250 ։
Խնդիր բայի զինչ է, 314 · խնդիր էական բայից, 341–351 · խնդիր սեռի ներգործական բայից, 316, 352 · կրաւորական բայից, 317 · 352, 353 · խնդիր բնութեան ամէն բայից, 318 · 360–362 · ուղղական բնութեան խնդիր, 363–365 · բնութեան խնդիրի տեղ հայցական, 366–377 · անունէ ու բայէ մէկ եղած բայերուն խնդիրը, 357 ·

էական բայով խոնարհած անցեալ դերբային խնդիրը, 358 · էական բայով ալ բայածականինը, 359։
Խնդրոյ նախդրաց և հոլովառու բառից զեղչումն, 530 · խնդրոյ բայից բակառութիւն, 562, 563 · փոխադրութիւն, 611 · 614 · դերբայից խնդրոյ փոխադրութեն, 612, 613 · խնդրոյ արտաւղութեն, 643–646։
Ծանեայ, պակասաւոր բայ, 252։
Կէտք, 494։
Կրաւորական բայ զինչ է 163 · ներգործականէն չորոշուած խոնարհմունքի տեղերը ինչ ընելու է, 188 · հասարակ բայի պէս, 267 · 611։
Կրաւորակերպ չէզոք բայ, 164 · 191, 192 · 211, 212 · 215, 216 · 266։
Համաձայնութիւն մասանց բանի զինչ է, 324։
Հասարակ անուն, 8։
Հասարակ բայ, 165 · 191–193 · 210 · 212 · 215։
Հոլովառու բառք, 152 · անոնց զեղչումն, 529 · աւելադրութիւն, 551 · արտաւղութիւն, 665։
Հոլովմունք անուանց զինչ են, 15 · քանի՛ են, 16 · պարզ հոլովմունք, 16 · 19–38 · խառն հոլովմունք, 16 · 39–47 · զարտուղի հոլովմունք, 48–54 · մէկմէկու կը փոխուին, 69–72։
Հոլովք անուան, 12 · 72 · հոլովք անուան մակբայի տեղ, 307։
Հրամայական եղանակ բայի, 160 · 269 · 271։
Ձայնաւոր տառք, 3 · որ հոլովելու ատեն կը փոխուին, 17 · որ չեն փոխուիր, 18։
Ձև չարադրութեան ինչ է ու քանի՛, 510, 511։
Մակակէտ, 494 · 501 · — կամ փչիկ, 502։
Մակբայից զեղչումն, 531, 532 · աւելադրութիւն, 553–555 · արտաւղութիւն, 666–670։
Մասունք բանի, 5։
Մարթի, անդէմ բայ, 261։
Մէ վերջով որ հոլովման բառերը կ'ըլլան բացառական, 33, 34։
Մէն մի, 104։
Մի, թուական, 74 · անորոշ՝ ը, 103 · մի մի, 104։
Միմեանց, 101։
Միջակ կամ անորոշ անուններն ինչ խնդիր կ'առնեն, 394, 395 · անոնց համաձայնութիւնը, 414 · 416 · 419 · 428, 429 · 450 · աւելադրութիւն, 537 · հոլովի փոխադրութիւն, 627։
Միջակէտ · 494 · 505։
Միւս, 105։
Յ, նախդիր, 13 · 145, 146։
Յանեմ, արտուղի բայ, 245։
Յատկացուցիչ, 319 · 396–399 · յատկացուցչի փոխադրութիւն, 615–621 · արտաւղութիւն, 647։
Յատուկ անուն, 8 · 20, 21–23 · ինչպէս յոգնական կ'ըլլան, 67 · ինչպէս գրելու է, 508։

Յարաբերական —ը եզակի յոգնակիի տեղ, 436 · յարաբերեալի աւելադրութիւն, 541 · յարաբերականի ու յարաբերեալի բակառութիւն, 575–581 · փոխադրութիւն —ը ուղղականին ամէն հոլովի տեղ, 629 · —ը՝ ևէ շաղկապին տեղ, 636:
Յոգնակի ուղղական, 10 · 59 · 61 · 63 · 65 · յոգնակի չունեցող անուններ, 11 · յոգնակի սեռական և բացառական, 57, 58 · հայցական, 60, 61 · 63 · 65 · բառի մը հոլովքը յոգնակիի + ու = կ'առնեն և ինչ կը նշանակեն, 68:
Նա, Նոքա, Նոր դերանունանց տեղը, 628:
Նախադրութիւն, 152:
Նախդիր, 13 · 142 · կրկնուած անուններուն ինչպէս դնելու է, 471 · յատկացուցիչ կամ ածական ունեցող անունին նախդիրը ո՞ւր կը դրուի, 476 · 479 · 482, 483 · բացայայտիչ ունեցող բառին նախդիրը ո՞ւր կը դրուի, 481 · նախդիրներու ջնջումն, 525–528 · աւելադրութիւն, 543–551 · 656–659 · բակառութիւն, 582 · արտուղութիւն, 652–655 · 660–665:
Նախդրիւ հոլովք ինչ են, 14:
Ներգործական բայ, 163 · 268 · չէզոքի պէս խնդիր առած, 379:
Ներգործակերպ չէզոք բայ, 164 · 268:
Ներկայ ժամանակ բայի, 159 · 272, 273:
Շաղկապաց ջնջումն, 533 · աւելադրութիւն, 556, 557 · արտուղութիւն, 669 · 671–674:
Շարադրութիւն, 312–315 · պարզ, 326 · ձեւաւոր, 326 · շարադրութեան բնական կարգը, 640:
Շեշտ, 486 · 488–491:
Ո, ով, 87–90:
Ոլորակք, 486:
Ու կամ օւ վերջացած բայածական, 300–303:
Ոմն, 94–97:
Ո ոք, ով ոք, 98:
Ոչ ինչ, 86:
Ոչ ոք, 100:
Ոյ վերջով որ հոլովման բառերը կ'ըլլան սեռական ու տրական, ու —յէ վերջով բացառական, 46, 47:
Որ, միջակ անուն, 91, 92 · 125 · յարաբերական, 124, 125 · որ ինչ, 93 · որ ոք, 99:
Ուղղ. Նախադրութեան բակառութիւն, 583:
Ու-ն վերջով որ հոլովման բառերը կ'ըլլան սեռական ու տրական, 33, 34:
Ունիմ, պակասաւոր բայ, 254:
Ուտեմ, արտուղի բայ, 243:
Ուցանեմ վերջացած բայք, 203 · ուսկից շինուած են, 203 ծան. · տեղը ինչ կրնայ բռնել, 204 · կրաւորականին, 219:
Ոք, 94–100:

Չափի, կշիռքի անունները ինչպէս խնդիր կ'ըլլան, 381:
Չեզոք բայ, 164· 166· ներգործականի պէս խնդիր առած, 378:
Չոգամ, անսովոր բայ, 238 ծան.:
Պարոյկ, 486· 493:
Պարտիմ, պակասաւոր բայ, 257:
Պիտի, անդէմ բայ, 262:
Սահմանական եղանակ բայի, 160:
Սեռական ու տրական հոլով, 57, 58:
Ստորադասական եղանակ բայի, 160· 172 ծան.· 269· 274, 275:
Ստորակէտ, 494· 504· 507:
Վանկ, 2:
Վերջակէտ, 494· 506:
Վերջահոլովք անուան, 12· վերջահոլով չունեցող անուանք, 14· երբ վերջահոլով կ'ըլլան, 72:
Տամ, արտուղի բայ, 234:
Տողադարձ, 495–499:
Տրոհակք, 494:
Տրոհութիւն, 494:
Ր, բառին բնական նուէ առաջ՝ միշտ ռ է, 49 ծան.:
Ց, նախդիր, 147:
Ցաւէ, անդէմ բայ, 263:
Փակագիծ, 509:
Փշիկ կամ մակակէտ, 502:
Քանի, 107:
Քեան կամ քէն վերջացած թուական անուններ, 75, 76:
Քերականութիւն զինչ է, 1:
Օղ վերջացած բայածական. տես Ող:

# ԳԼԽԱՒՈՐ ՏՊԻ ՍԽԱԼՆԵՐ

| ԵՋ | ՏՈՂ | ՍԽԱԼ | ՃԻՇԴ |
|---|---|---|---|
| 24 | 17 | Ղամոնի | Ղամունի |
| 25 | 6 | անուշ | անոյշ |
| 36 | 25 | յիրաքանչիւրոյ կամ յի-րաքանչիւրմէ | յիւրաքանչիւրոյ կամ յիւ-րաքանչիւրմէ |
| 64 | 18 | է․ բայց | է․ բայց |
| 82 | 18 | խոստովանիմ | խոստովանեմ |
| 109 | 18 | երրորդ կերպ | երկրորդ կերպ |
| 120 | 10 | ուղը | ուղղ |
| 162 | 30 | Նա իմն՝ ազնուականի | Նա՝ իմն ազնուականի |
| 188 | 22 | և որ ընդ նմայն | և որ ընդ նմայն |
| 224 | 23 | այս ինքն և ոչ մի ինչ մնացեալ | այս ինքն և ոչ մի մնա-ցեալ |
| 227 | 29 | (476, 480, 481) | (476, 481, 482) |
| 233 | 9 | ընդ զգայարանացս ան-կանի | ընդ զգայարանացս 'ի ներքոյ անկանի |
| 244 | 28 | ժարդկեղէն | մարդկեղէն |
| 247 | 3 | քաղաքքն | քաղաքին |
| 249 | 9 | յորոց | յորոյ |
| 274 | 30 | ըստ 618 | ըստ 619 |
| 288 | 3 | Զէան որ | Զէաք որ |